

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՅ

ԾՈՎԱՐԻՇՈՒՄ

Ա Զ Ե Ր Ա Յ Ե Ր

891. 99

U - 41

1-3

9P



19 NOV 67

OJAREGIN SEVUNTS

891.99

U-211

19 NOV 2010

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆՏ

-5 NOV 2011

BUXTADA

ԾՈՎԱԿԽՈՐՃՈՒՄ

AZERNƏŞR  
Bədii Ədəbijat Şə'bəsi  
BAKЬ — 1938

ԱԶԵՐՆԵՇՐ  
ԳԵՂԱՐԳԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ԲԱԳՈՒ — 1938 թ.

30 JUL 2013

54844

Թամ. Խմբագիր՝ Հ. ԱՄԻՐԻՆԱՆՅԱՆ  
Տեխ. Խմբագիր՝ ՅԵ. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Մրրագրիչ՝ Մ. ԱՌԱԲԵԼՅԱՆ

## ԾՐԱԾԻՆ ՄԵՍ

Բիբի-Հայրաթի յերկրաբանական բյուրոյի աշխատակցուհի Լիզա Ավակովնան պատրաստվում էր կտրաբան դնալու։ Յերեկոյան գնացքով Մոսկվայից վերադառնում եր Հիմնարկի օլարիչը — Սարդարյանը։ Լիզա Ավակովնան այդ մասին միայն կեսորից հետո խմացավ։ «Այս, Անդրյանչա, Անդրյանչա, նույնիսկ ինձ չի հայտնել . . . գոնե գրեթ, վոր ժամանում եմ՝ այս ինչ գնացքով։ ուշում և հանկարծակի բերել . . . Այդ քեզ չի հաջողվի, յես քեզնից խռամբանել եմ . . .»։

Ինքն իրեն խռանելով, Լիզա Ավակովնան պատշաճ վերագենամի ընտրությամբ եր զբաղված։ Զնայած դրսից նոր եր յեկել, նա կրկին պատուհանից դուրս նայեց՝ յեղանակի գովությունը ստուգելու համար։ Ողն ահասամնատ հանդիսան եր։ Ակացիների մանրիկ տերեփներն անդամ անշարժ եյին։ Արևը վաղուց մայր եր մաել, սակայն վաղոցներում կակուած գետնաձյումը դեռևս տաքացնում եր մարդկանց վոտքերը։



5195-2010

Իրիկնամուստին քաղաքի սռեսքն սքանչելի յիր :  
Թվուամ եր, թե այս այն ժխորով լի քաղաքը չէ,  
ուր մարդկանց, սայլերի, ավտոների յերթեգեկու-  
թյունից բարձրացող փոշին թանձրացնուամ ե ողք,  
ուր շատ հաճախ քմահաճ հողմը մոլեզնորեն ծեծում  
ե տների պատերը, քաղաքացիներին...

Լիդա Արմակովնան ընտրյաց ճելոմակ մետաքսե մի  
շրջադպեստ : Ելեկոտքական լույսը ավրամիլով շրջադպես-  
տի վրա, այն վառեց ծծմբի կանաչավուն բոցով : Լի-  
դային դա շատ դուր յեկալ : Նորից նա դնաց դեպի  
պահաժանը, համեց կրծքին նույսր ժամյակ ունեցող  
մի նոր շապիկ :

Յերբ մետաքսե շրջադպեստը հակնելով նա կանգ-  
նեց մեծ հայելու առաջ, հանկարծ աչքերը լայնա-  
ցան . «Ա՛յս, աստղած կմ, ինչքա՞ն մաշվել եմ . . .  
կազծես այս չորս սլիք յես չեմ հապել . . .» :

Յեզ իսկապես, ճերմակ շրջադպեստից յերեկում  
եր, վոր նրա տերը մի ժամանակ ավելի լիքն ե  
յեզել, քան այժմ : Զնայած զրան, այդ յերիտասարդ  
ինոչ կուրծքը դեռ լիքն եր ու փարթամ, իսկ մեջքի  
միաննելոն իրար հյուսված թելլեցի պես թիսկների  
վրայով ձգվում եյին դեպի ցած : Աչքերը հայելու  
մեջ սխառվում եյին, ցողոմնի վրա նստած ջրի կա-  
թիլի պես ցողք տալիս, ցողք, վորը հատուակ ե յերշա-  
նիկ կամամց աչքերին :

Նրա գեմքի արևելյան թուվս, դրավիչ մաշկը ճեր-  
մակ փոշուց ամենի նրբացաւի : Նա ցուցամատող քերա-  
նում թրջելով, քսեց սև, կոտմարած ունքերին : Յեզր  
ոմեն ինչ պատրաստ եր, Լիդան նորից հայելու  
տուաշ շրջելոց և այս անդամ ինքնից դոհ խպառ :

«Աղվեսիկս, դու իմ աղվեսիկս, յերեվի չպիտես  
նրա մասին . . . Զե՞ս վեց ամսից հետո նա ըույս  
աշխարհ կդա և ճշշտ քո պատճենը կլինի, քեզ  
նման . . .» : Վերջապես ռեդիկուլը վերցնելով, մյուս  
ձեռքում հովչարը, նա զգուշ քայլերով, դիմքին  
մեղմ արտահայտություն տված՝ դուրս գնաց սնից :

Քաղաքն ամենորյա իր յեռ ու գեռմ ելր ապրում :  
Փողոցներում — կրակակների, խանութների առաջ  
մարդիկ խմբված՝ սառը ջրով մեղմացնում եյին  
իրենց ծարապվը : Քաղաքային ձիաքարչի ձիերն իրիկ-  
վա հովից աշխառժացած՝ գետինը տակտով ամբակա-  
հարելով առաջ եյին շարժվում :

Ճանապարհին Լիդային վլոցինչ չեր հետաքրքրում :  
Նրա ուշքն ու միտքը կայարանուումն եր . հյուզոււ-  
թյան մեջ նա վերականգնուում եր այն քաղցր ժամերը,  
յերբ աղջկական թովչամներով վարսիում եր Անդրեյին,  
յերազիտուտ հայտցքով հետեւում նրան, դպալու համար,  
թե վորքան նա ևս անկեղծ ե :

Նրանք հարսանիք չարեցին, ինչպես ընդունված  
եր այս քաղաքում : Ապրենցին, ինչպես միամյաց պա-  
տահած թուզուներն են սիրով ապրում ու վայելում  
աշխարհում իրենց զվարճությունը : Յեզ յերբ Սն-  
դրեյը գործուղվեց Մուկիա, բոլորովին չգիտեր,  
վոր Լիդան հղիացել ե : Նա մտածում եր՝ տանը,  
յերբ նրանք կառանձնանան, Անդրեյին համկարծակիի  
կրեցի : Այս մտքերից Լիդան հուրիւմ եր, ջղածդո-  
րեն շարժում մատները :

Ահա և կայարանը . . . կառամատույցում շրջագա-  
յում եր ծովախորչում աշխատող Արամ Սոհակովիչ

Հովսեփյանը : Նա ևս յեկել եղ Անդրեյին դիմավորեց  
լու :

— Դուք նույնպես այստեղ ե՞ք, Լիգա Ավակայշ-  
նա ...

Առաջին հարցը սուսերեն տալուց հետո, Արամ  
Սահակովիչն ականց հայերեն խոսել :

— Մեծ մարդկանց բաներն եսպես են. մենք վսս  
մի ուրիշ տեղից զայխ ենք, տես ակիք մենքը մեղ դի-  
մավորութեամբ եմ : Մեր պատասխոց բացի, վոչ վոք չի դա-  
լիս... Դրա համար ել յես մեսած, գուռ կենդանի՝  
աշխատիր մեծ մարդ լինել, կամ մեծ մարդու կին :  
Փոքը մարդն ի՞նչ ե վոր :

Լիզայի հետ խոսելիս, նա կարծես իր աղջկա հետ  
եր խոսում : Միջահասակ մարդու այդ հայրական տո-  
նը Լիզային դուր չեր գալիս :

— Յես մի գիրք եմ կարգացել, Արամ Սահակո-  
վիչ, վորտեղ մենքը մեծ ասալես դառնալու ցանկու-  
թյամբ սկսել ե թափառել, սակայն մեծագույն հիմա-  
րի համբակ ե ստացել... Մեծ մարդ դառնալու հա-  
մար միթե զուտ ցանկություններ են հարկավոր յել  
վոչ թե անհրաժեշտ առվաճներ :

Արամ Սահակովիչն արդպիսի պատասխանի չեր  
սպասում : Նա խոկույն զգատացավ : Յեթե Լիզայի  
տեղ մի ուրիշ կին լիներ, թերեւս նրան խխտ վիրա-  
վորեր, սակայն նա գիտեր Լիզայի և Անդրեյի կապե-  
րի մասին, չեր մոռանում ե այն, վոր իր գործերի  
հաջողությունն առայժմ կախված ե Անդրեյից :

— Յես, իհարկե, չեմ ժիւտում, վոր ինչպես մե-  
կը, նույնպես և մյուսը շատ կարևոր են, — չփիճարա-

նելու համար ոլատասխանեց Արամ Սահակովիչը յեկ-  
ձեռքերն ամառային անդրավարտնքի դրանը գնելով,  
սկսեց չորս կողմը գիտել :

Կայարանը ճամբորպներով և դիմավորողներով լի-  
քըն եր : Գնացքի գալուն բոպեներ են մնացել : Լի-  
զան անհամբերությունից հովհարն ավելի արագ եր  
թափառաբուժ : Հովհարը նրանից անջատում ու գեղի  
մոտ կանգնած մարդիկ եր քշում անուշահոտ ոծանե-  
լիքի և կանացի մարմնի բուրմունքը : Այդ պահին Լի-  
զայի համար շատ զուրեկան եր խորասութվել սեփա-  
կան մատքերի ծովում, սավաննել այդ յերազելու խո-  
հը ի թեհրով :

Վոտների ծայրերին կանգնելով, Արամ Սահակո-  
վիչը մարդկանց գլուխների վրայից նայում եր յեր-  
կամուծի ուղղությամբ, չնայած այն կայարանի մոտ  
ծովում եր, կորչում գեղոյի հանելը :

Լիգա Ավակովին ինչուպէ մտքից հանկարծ  
դվարթացավ :

— Արամ Սահակովիչ, յերբ գնացքը զա, յես  
կթագնինմ, իսկ դուք ասացեք, մոր չեմ յեկել...

— Կասոնմ, բայց վախենում եմ խակույն դավաճա-  
նեք ինձ, կանայք այլպես անդութ վարվելու անըն-  
դունակ են :

— Ինչու անգութ, միննույն չե, յես նրան անս-  
նելու յեմ...

— Զե՞, բոլորովին. ուրիշ բան ե, յերբ հենց  
վաղոնից իջնելիս միմյանց են փաթթաթվում, քաղցր,  
քաղցր համբուրվում... Ազնիվ խոսք, ծերուկներիս  
սրտերմ անդամ շարժվում ե այդ տեսարանից :

— Ա՞յս, Արամ Սահակովիչ, դուք ելի ծերուկ դառնա՞ք. այդ վորտո՞ղ է լսված, պոր 39 տարեկան մարդու իրեն ծերուկ համարձի... Խնջրում միտ, ողեւցեք ինձ Անդրեյին հանկարծակիիր բերել:

— Բոլորովին մի անհանդատանաք, Անդրեյ Սերդեյին առանց այդ ել հանկարծակիիր կողա:

— Վո՞չ, Արամ Սահակովիչ, դուք ավելի լավ ե անացեք, պոր յես հիվանդ եմ...

— Ե, ի՞նչու քեփն խմույն միշացնեմ, յես կցանկանայի, պորպեսդի դուք դրկախառնվեք: Յերեք ամիս ե, ինչ միմյանց չեք տեսել... Իսկ դուք հիմա ինչ-վոր խաղեր եք ուղում սարքել... Չի հարկավոր, ի սեր աստծո, այդքան անգութ մի վիճեք:

Լիզան ջղաձիւ մի շարժում արեց և հետհետ դնաց:

— Ահա,— դուքս թուավ նրա բերնից:

Հեռվից բարձրանում եր ոճապատույտ սուրացող գնացքի շոգեկառքի ծուխը: Այդ սրահին Լիզային թվում եր, թե ամբողջ քաղաքն իր նման անհամբեր սպասում ե այդ գնացքին: Նա բոլորովին՝ անհապատակ քայլում եր և այդ չել դդում: Նրա ուշքն ու միտքը կայտանին մոտեցող գնացքի հետ եր: Թալում եր, թե կայտանում ողը հեղձուածիչ ե դառնում...

Նրա մտքերը շոգեմեքենայից դուքս յեկող շուտու պես ցրվում ելին, ապա քամուց քչվածի պես կուտակվում մի կետում: Անդրեյից բացի նրան վոչինչ չեր պրակեցնում: Շուտով նա կերելա... «Տեսնես փոխվե՞լ ե ...»: Այստեղ խառն մտքերի մեջ խորսութված, նա բռնեց Արամ Սահակովիչի ձեռքը յեկ

չրեց դեպի արդեն կանգ առած գնացքը: Յերկու վագոնից դուրս յեկողներին նայեցին—չկար: Արամ Սահակովիչը մեծ քաղաքում ապրած մարդու ճարպկությամբ ճեղքում եր մարդկանց արանքը, շարժվում այնպես, ինչպես մնդիկի կաթիլը վողորկ մակերեւվույթի վրա, առաջ եր շարժվում, շտապ-շտապ նայում ուղելորների գեմքերին, վագոնների պատուհաններին: Լիզան ոետինե մեջը ճոճելով՝ նրան եր հետեւում:

Զորբորդ վագոնի աստիճաններով իջառվ յերեսում անց մի տղամարդ, ապա ձեռքը մեկնելով յերխասարդ մի կնոջ, ողնեց իջնելու: Այդ տղամարդը լայնեղը, սրճագույն գլխարկ և նույն գույնի սլաքը ուներ հագած: Յեկվորի ներքին ծնոտը սուր եր, ձիչտ և ձիչտ աղվեսի դնչի նման: Քիթը դեպի ծայրը սրվում եր, վերջանում բութ հատվածով: Թալում եր, թե մեկը մատով ճզմել եր այդ քիթը յեկվածք թողել:

Ազեղածե ու թալ ունքերի տակ սնդիկի փոքրիկ գնացքակների նման շարժվում ելին նրա մոխրագույն աչքերը: Յերբ աչքերն արագությամբ շարժվում երեն, թմբում եր, թե մի վնչ-վոր բան մն վնասում: Նրա գեմքի սկրա վնչ-վոր խորհրդավորություն կար, վոր շատ հատուկ ե խորամանկ ու սնապարծ մարդկանց: Յեկողը չնկատեց, թե ինչպես հետեւից իրեն մոտեցան Լիզան և Արամ Սահակովիչը:

— Անգրյուշ, — բացականչեց Լիզան ու ցանկացած քննինել նրա գիրկը: Մակարյն Անդրեյը հմտությամբ մի քայլ հետ գնաց:

— Ո՛, բարեւ, Լիդա Ավակովնա, ա՛, դուք, նույնու-  
պես այստեղ եք, Սրամ Սահակովիչ, ինչ նեղու-  
թյուն...

Հաղնակիով խոսելը Լիդային զարմացրեց: Նա  
ակամա նայեց Անդրեյի մոտ կանգնած: յերիտասարդ  
կողը: Նախանձելու չափ նու գեղցիկ եր: Ռուսական  
շեկ մաղեր ու նույնպիսի չեկ զեմք ունեց:

— Ծանոթացեք, խոնդրեմ, իմ որբնական և խակա-  
կան ամուսնու հետ, — ցինդկորեն ասաց Սարդարյանը:

Լիդային առես վրալարերի մեջ ձգեցին: Նա  
ցնցվեց: Ասլա բարձր, տաղնապալից ձայնով հարց-  
րեց:

— Ի՞նչ:

Այդ պահին նրա զրիւնքներն սկսեցին զողալ:  
Անդրեյը դիմացնին առես չառ հեռվեց եր զիտում:

Լիդայի համելարծակիի գալուց նրա զեմքի մկան-  
ներից և վոչ մեկը չշարժվեց:

— Ի՞նչու յեք զարմանում, Լիդա Ավակովնա,  
մի՞թե կարծում եմք, վոր յես միշտ ամուրի պիտի  
մնարք...

Լիդային թվաց, թե Անդրեյն իր հետ հանաք և  
անում և իր թե համելանալով նրա խորամանկությու-  
նը, թույլ ժպտաց: Բայց Սարդարյանը ներողություն  
խնդրեց ու շիկուհեր կնոջ հետ հեռացավ նրանցից:  
Կառքն արգեն պատրաստ եր: Մի վայրկյանում իր  
ուժերը համարելով, Լիդան բարձրաձայն մի կողմ  
կանչեց Անդրեյին:

— Դու լուրջ ես ասում:

— իսկ յե՞ր եմ կոստիկ արել:  
— Աւրեմն ել ժեր առնի չե՞ս դալու:  
— Ի՞նչի համար զամ:  
— Առաջ զալիս եյիր ի՞նչի համար:  
— Ե՛, նու անցած ե...

— Դու, Անդրեյ, կատակ ևս անում, դու իմ սիր-  
ում մի կոտրիր, խոսիր, առա՛, կատակ չե՞ս անում, —  
հոգիած ու կցկոտիք վրա բերեց Լիդան:

— Վոչ, Լիդա, անցածն անցած ե... կարծեմ իմ  
և քո մեջ ամուսնության մասին յերբեք խոսք չի յե-  
ղել:

— Բայց... Անդրյուշա՛...

Լիդան ամբողջ մարմնով սկսեց զողալ: Նրա զեմ-  
քը զումաթափ յեղակ, սիրու ուժեղ թափակ թաղբր-  
ուում եր: Նրան թվաց, թե զետինը չուռ և զալիս,  
ամեն ինչ իր շուրջը խելակորույս պատվում է:

— Ո՛չ... — սարսափահար բացականչեց նու ու  
զետինին փոփեց:

Նոր յեկած կենը — Բայիսան և Սրամ Սահակո-  
վիչը, զոր հեռվեց հետեւմ ելին նրանց խոսակցու-  
թյանը — մոտ վաղեցին:

— Ի՞նչ պատահեց:

— Վոչինչ, ս՛, ընկնավոր կին և, — ասաց Անդ-  
րեյը, իսկ աստամների միջից հաղիվ լոկի հիշոցներ  
բաց թողեց: Դեպքի տեղը հավաքվեցին քաղաքացինե-  
րը: Զուր տերին, շաղ սովին Լիդայի զեմքին: Անդրեյը  
կանչեց Արամ Սահակովիչն և ականջին փափաց:

Անհաճու այդ գեղագիւց ծամոված դեմքով Անդրեյը  
գետնին փռված կնոջից հեռացավ, դնաց դեպի իր կառքը:

Կայարանում պատահած դեպքից հետո Մարդարանում մի կերպ չեր կարողանում վերականգնել իր կնոջ նախկին ուրբախ տրամադրությունը։ Վորքան եւ նա ցանկացավ Ռայխսա Իվանովնային պատահածը ներկայացնել վորքին չնշին մի դեպք, չհաջողվեց։ Գլշերը նաև հանդիսու չքնից, իսկ առավոտյան դեմք մի անդամ չժպտաց։

Ռայխսա Իվանովնան լսում եր ամուսնու բացառություններն ու ցածր ձայնով կրկնում։

— Ինչեցե, լուր դիմավորում չեր . . .

Այդ բառերն արտասանելու ձևից անդամ հասկացնում եր, վոր նա ձիգ եր զործ դնում ներքին հուղարկությունը իւրաքանչիւր համար։

Պատահածը մոռացության տալու նպատակով Մարդարյանը վորոշեց կնոջը մենակ թողնել։ Նա չուապ լվացվեց, հետը բերած թղթերը կաշվե թղթապահում տեղափորեց։

— Ռայխ, յերեկոյան քաղաքում միասին կը ջնիք, մինչեւ դալու ևս լնթեցանությամբ պարագել . . .

Հետո մոտեցավ, զրկեց կնոջն ու համբուրեց։

— Քո մի յեղունգը յես չեմ միտի և մի մի գեցիուհու հետ, ուր մնաց այլ ու բղով . . .

Ռայխայի հայացքը մնաց մի կետի հառած, իսկ ամուսինը դուրս յեկավ տնից։ Այնտեղից, վորտեղ ապրում եր Մարդարյանը, ամբողջ քաղաքը յերեսում եր։ Ահա կիսարուսնի ձեռով ծովախին փոքած քաղաքը։

Յոմաքն աղեղաձև կիսկագծել և ծովը։ Ոյստեղ այդ փակառիծը բացվում է, իսկ այնտեղ, հորիզոնից այն կողմը, փակվում։ Մարդարյանի առաջ նորից բացվեց ամբողջ քաղաքի տեսքը։ Ահա նրա արևելյան մասում կանգնած են հոկա, յերկնասլաց ծխնելույզները։ Նրանց բերնից ծուխը քուզաներով դեպի վեր ե բարձրանում, իսպազ յերկնքում գորշ կտալ գործում։ Բարձրացող ծխի զույնով Մարդարյանը տարբերում եր գործարանները։ Նայթաղուիչ գործարանների ծուխը միմյանցից տարբերվում է։ Մի ծխնելոյզից բարձրանում և ծծմբագույն ծուխ, մյուսից՝ սկզբանում։

Յերկաթպիծը յերակների նման ձկվում եր դեպք գործարանները։ Զաված հայթը, այս քաղաքի բարիցը՝ այդ յերակներով զնում և աշխարհի չորս կողմը, ամենուրեք տարածում քաղաքի համբավը։

Աշխարհում բաղմակին քաղաքներ, զյուղեր ոգալում են այս քաղաքի տված բարիքով։ Նա մի սիրու և, վորից սկիզբ և առնում ու ձյուղալորիվում յերակների մի ամբողջ սիստեմ։ Գործարանների խիտ ցանցից յելանելով, յերկաթպիծն առաջին իսկ կայարանում յերկու ճյուղերի յե բաժանվում, իսկ հետո . . . համար մուտքում ե հեռու ծովերի, ովկիանոսի ափերին։

Յերկաթպիծի հարավային կողմում ծովի մակերես վույթին հավասար փուլել և քաղաքի կենտրոնական մասը։ Մարդարյանի կանգնած տեղից այդ մասի աները կողք-կողքի դրած գործ, անհրապույր, յերբեմն խորանարդի, յերեմն ել ովրիզմայի ձև ունեցող առարկաների ելիքն նմանվում։ Թվում եր, թե քաղաքը

յամաքած մի լիձ ե, վարի կալոցին աղեկց սւովով գծերով ճաքճիլել ե: Այդ սների արանքից, սակայն, աչք եյին ծակում յեկեղեցների գմբեթներն ու մըշկիթների մինարեթները:

Սարդարյանը թուուցիկ կերպով նայեց այդ բոլոր բին, առաջ մի կետի վրա կանդ առավ: Իսկույժն նա զղաց, վոր հայացքը հառեց այն կետին: Այդ կետը նրան հեղեցքեց յերեկուա վեպքը:

Նա ճեղ եր գործ զնում Լիզային բոլորովին չհիշել: Յեկ զլա համար հայացքը պատում եղ չորս կողմ, ցանկանում եր միտքն զբաղեցնող մի ուրիշ հետաքրքիր բան դանել: Ապա նա դանդաղությամբ ականց առաջ գնալ:

Փողոցը, վորտեղով Սարդարյանն անցնում եր, յերկու կողմից յեղերված եր խանութներով: Ամառ ժամանակ այդ խանութներում սեխ, ձմեռուկ, դեղձ, թուղ և այլ մրգեր եյին ծախում վիսկ ճմեռը՝ նամիթ, շաքար, չորացրած մրգեր... Խանութներից մեկի առաջ կանայք հերթ եյին կանդնել: Նրանցից շատեցն ամփոփված եյին չաղբաների մեջ, վորանելք ծալապատիկ նստել եյին մայթի վրա: Սարդարյանին թվաց, թե նրանք վորեւե մեկին բամբասում են: Այդքան ցածր եյին խոսում ե զլուխները միմյանց մոտենում, ասես թուշուների նման միմյանց կոցից հատիկ եյին վերցնում: Բայց եղի Լիզայի հետ պատահածը պվսից չեր հետանում: Սարդարյանը գնում եր, բայց վորքերը նրան չեյին հպատակլում: Լիզան դոնէ ուրիշ հիմնարկությունում ծառայեր, մի կերպ տանելի յեր: Հապա ինքն ինչպէ՞ս նայի այն կնոջ դեմքին, վորին մի ժամանակ վաղաքչել ե... Նրանց

կառլի մասին, ձիչու ե, քչերը դիտելին, բայց ինչ-վոր անախորժ զզացմունք ծանը բեռի պես ձնչում եր նրան: Խորասուղված արդ մոքեթի մեջ, նա յերբեմն զտտապարտում եր իրեն այն բանի համար, վոր Մուկվայում միտ մանր հանգամանքներին ուշապրություն չըլարձեց: Իմլ այժմ, յեթե հանգիպի լիվայի մորը, ի՞նչ սիետք ե ասի, ինչպես արդպարանա... Հարցեր եյին, վոր անընդհատ տարբեր տեղերից դաւիս, մեխավում եյին Անողեյի գլխում: Մյուս կողմից նա մի ուրիշ դժվարություն եր ստեղծել. Ռայիսային նա Լիզայի մասին վոչինչ չեր ասել: Այժմ նա պատկերացնում եր այն կոտրը, վոր որդ սովորել սիետք բինի:

Այս խոհերով տարված, նա առաջ եր զնում:

Բիբի-Հեյրաթի մոտերքում նա հանդիպեց հորափոր վարպետ Սարդարյանին:

Սարդարյանը թեթև բարեվելով, ցանկացավ անցնել, սակայն Սարդարյանը նրան կանգնեցրեց:

— Եղ յի՞ր ես յեկել, Անողեյ Սերբեյիսիչ:

— Յերեկ յերեկոյան:

— Հա, ուրեմն նոր լուրեր շատ կլինեն: Ծովախորչի մասին ել նոր խարար բերած կլինես: Եստեղ ամեն ինչ թարապեց:

— Ի՞նչը թարսվեց:

— Զե՞ս լսել, բա քու սոսմը չինիի: Ալեքսանդր Միհումյովիչին քանոտարկել են:

Սարդարյանը գերասանական ճարպիլությունը աչքերն ավելի լայն բացեց, Սարդարյանի թմեից քաշեց, մոտեցրեց իրեն:

— Խալ, եղ ի՞նչը համար են բանտարկել:

— Յես հաստատ չեմ իմանում, չառ բան են պատճում... Որինակի համար, մեր մեջ ասած, Աղքաբան-դըր Միկայլովիչը մեղ հետ 1903 թվից աշխատում է, հանաչում ելինք ինչպես լավ ինժեների... Հիմա դե ո՞վ գիտե, մի գուցե նա յերկու յերեսանի յե, ինչպես մեր Աղքան ե ասում:

Եղակես եմ լսել, մի գուցե ավելի խիստ հանցանք ունի:

— Այլպես, այլպես... Խալ տեղը նոր մարդ չե՞ն բերել:

— Ո՞ւմ բերեն: Որինակ, ասենք, թե եղ մարդը դու յես, նրա գործը կարո՞ղ ես կատարել:

— Իհարկե վոչ, իհարկե վոչ:

— Յես, որինակ, ի՞նչ եմ վոր, ինձ նման հազար վարպետ կա, բայց մասս մեխով ծակել եմ, ուռել ե: Յերկու որ ե գործի չեմ գնում, մի գուցե մեկին զրին տեղու, նա յել հորի հետ ծանոթ չեղավ, գործիքները թափեց հորի մեջ, միշացրեց... Եսպես ել նրա գործը: Ծովը մեծ ե, հարկավոր ե խմանալ, թե վորտեղից ուկել չուցնել, վոր նամի՞թ դուրս դա... Դե, յես դնամ: Շտապում եմ դոքուրի մոտ, գուցե մատիս մի ճար անի, ցալին անց կենա, թե չեղեներն աչքերիս քուն չի պալիս:

— Սպասիր, — Սարգսյանի բզուզից բոնելով սասաց Անդրեյը, — հանքում քննություն չե՞ն կատարել:

— Ի՞նչի համար, յե՞ք:

— Զատոնեկուն ձերբակալելուց հետո:

— Եղ մեկը չեմ կարող ասել, մի դուցե կատարել են, մի դուցե չեն կատարել: Միայն եղքանն եմ ինձանում, մուգ բանտարկել են:

Սարգսյանի այլես շտպանեց: Հենց վոր նա հեռացավ, Սարգսյանը շարունակեց ճանապարհը նույնպիսի տրամադրությամբ, վիճակին ունեցել եր մինչև Սարգսյանին հանգիստելը: Նրա դիմքի վրա հայտնված կեզծ զարմանքն ու տաղնապն իսկույն չքացան: Թագինակով ճակատի քրտինքները արբելով, նա յինքն իրեն սասաց «Զարմանալու վոչինչ չկա, հենց գրան եղ սպասում եմ...»: Նա հասավ յերկրարանական բարձրության վրա առջև քաց արին իր առանձնահենյակի դուռը, իսկույն հիշեց այդ սենյակում կատարված գեղաքերը և նորից թափիծը պատեց նրան: Նրան հետեւյին մի շարք աշխատակիցներ: Բոլորն ել ցանկանում եյին վարիչի բացակայության ժամանակ կատարված աշխատանքի մասին զեկուցում տալ, նոր ծագած հարցերը պարզել: Վորմանք ել ուղղակի հետաքրքրությունից դրվագած առանձնահենյակն եյին մտնում, խմանալու, թե վարիչն ինչ նորություններ երեքել: Սարգսյանը վորմանց ժպտում եր, վորմանց ել դադլած լսում, անհամբեր սպասում իսոսակցության վերջին: Ինժեներ-յերկրաբան Արգումանյանը կազմել եր ծովախորչում չահաղործման համար նախատեսնը՝ ված հրապարակի յերկրաբանական եռքիդը: Սարգսյանին վորհարինող ինժեներ վոլկովը վոչնչացնող

քննադատության եր յինթարկել այդ եսքիզը և ահաս  
մտքի արդյունք համարել։ Արդումանյանը յեկել եր  
դանդատվելու։

— Անդրեյ Սեբաստիոնիչ, դուք յերեկ լավ հիշում  
եք ակադեմիկ Շեստավի յելույթին այդ հրապարակի  
մեջլրաբանաձկան կառուցվածքի մասին։

— Ինչու յեք կարծում, վոր յես ամեն բան հի-  
շում եմ։ Շեստավը կարող եւ այլ բան ասած լինել,  
իսկ դուք ուրիշ բան կազմած լինեք և յերեկ այդ  
պատճառով ել ընկեր Վոլկովը չի ընդունել ձեր ես-  
քիզը։

— Այսուհետեւ պատահում, սակայն Շես-  
տավը յելույթը յես գրի յեմ առել… Եսքիով  
կած է նրա գրութների հիման վրա։

— Դրա մասին մենք հետո կիսունք… Հիմա…  
հրմ… — Անդրեյը նայեց չորս կողմ, հետո հոնքերը  
խոժոռելով ասաց։

— Սա ի՞նչ միջանցիկ քամի յե, վասկեցեք այդ  
դուռը։ Մենք, ընկեր Ալյուստանյան, ձեզ հետո հետո  
կիսունք։ Հիմա յես շտապ գործ ունեմ։ Մյուսներին  
նույնպես խնդրում եմ մենակ թողնել ինձ, հետո,  
հետո… Անաստոլի Վատիլիչ, դուք մհացեք, — զիմեց  
նա Վոլկովին։

Ինժեներ Վոլկովը, բավականության ժպիտը գեմ-  
քին, աթոռն ավելի մոտեցրեց Սարդարյանի ահ-  
ղանին։ Մյուսներն իսկույն դուրս գնացին։ Սարդար-  
յանը նրանց յետելից դուռը վասկեց, տեղում դինկո-  
րականի նման չուռ յեկայ։

— Ի՞նչպես է ինժեներ Զատոնոկու դրությունը։

Ինժեներ Վոլկովը, վորի մազերի մեջ արդեն ձեր-  
մակն եր հայտնվել, հայցքը սեղանի մի կետի հա-  
ռած, մատիտավ անխմատ գծել եր քաշում…

— Այժմ կոնկրետ վորեւ բան առել չեմ կարող, —  
զրաբանից սև սաթի գույնի վրասկը յախամորճը հա-  
նելով, սպասախանեց նա։ Այդ պահին նրա քունքերի  
վրա յերակներն ել ավելի լայնացան։ Ճակատի մաշ-  
կը արագորեն շարժվում եր ու կնճիռներ ստեղծում։  
Փարթամ ու վայելուչ հասակը նա կուչ եր ածել,  
աթոռի վրա կորացրել, իսկ գեմքին խաղում եր այն-  
պիսի մի ժայռ, վոր հատուկ է իրենց արժանապատ-  
վությունն իրացող մարդկանց։

— Յես զարմանում եմ, վոր այսքան ժամանակ  
դուք չեք պարզել լնզհամուր դրությունը։ Վերջապես  
չե՞մ վոր դա մեզ ել և վերաբերում, — ձայնը բարձրաց-  
նելով ասաց Սարդարյանը։

— Ինչպես ձեզ այսպիսի, յերբ մարտիկ Զեկայում  
են նստած, դա այնքան ել հեշտ գործ չե։

— Մի՞թե ձեղ նույնպես այսակը չեն կանչել։

— Յես ինժեներ Զատոնոկու արագքների համար  
պատասխան տալ չեմ կարող։ Յեվ լոնցանը բարեն…  
ամեն ինչ կարգին եւ գնում, — խորամանկորեն ժպտա-  
լով պատասխանեց Վոլկովը։

Դրսում արեց չիկացնում եր յերկաթները։ Խո-  
ղովակներով յեկող ջուրը տաք եր, անդուրեկան։  
Սարդարյանը մի բաժակը ջուր խմեց։ Քրուինքն առա-  
տորեն թափում եր նրա ճակատից։

Վալկովի հետ նա յերկար խորհրդակցեց : Նրան  
պատմեց Մոսկվայում ամառամիկ Շեստովի հետ  
ունեցած խորհրդակցության մասին :

— Բոլորն եւ անհայտ ջրերում են լողաւմ : Նավ-  
թային արդյունաբերության կենտրոնական վարչու-  
թյան աշխատակիցներից մեկը կասկած հայտնեց, վոր  
ցարական կառավարությունը ծովախորշի ցամաքաց-  
մանը յերբեք լուրջ մատեցում է ունեցել : Յես նրան  
Զատոններու եսքիզը ցույց տվի : Իմիջիալոց հիշեց-  
րի այլ մասին, սակայն նա ձեռքը թափարեց .  
«Աղոստիներն եւ յերգել սովորեցին . . .», — ասաց նա :  
Ակադեմիկին վոչինչ չափացի, վորովհետեւ ինձ  
թվաց, վոր նա հակված եր սրաշապանելու եսքիզը,  
հարցնում եր նրա մասին և ըստ յերեսութին լավ  
կարծիք ուներ : Ինձ ասացին, վոր Լենինը գնահատում  
է նրա մատուցած ծառայությունը : Բավական ե . ինչ  
պնուի եւ լինի, պետք է աշխատել ծովախորչի ցամա-  
քացման գաղտնաբերը վարկաբեկել, հանել մարդկանց  
պլուխներից : Յեթե այլ չհաջողվի, կիմսորենք չարիքի  
փոքրագույնը — կիսունենք ցամաքացվող տեղամասի  
ուղղությունը : Այսուր յերեկոյան յես անպատճառ  
կանցնեմ կուլիյելի տեղակարի մոտ : Այժմ ցանկա-  
նում եմ իմանալ, թե ծովախորչում ինչ է կատարվել :

Յերբ Վոլկովը Սարդարյանի առանձնասենյակից  
դուրս յեկավ, դրասենյակում աշխատողները զլուխ-  
ները բարձրացրին ու հայտքով նրան հետեւցին :  
Վոլկովը շատ բարձր տրամադրության մեջ եր : Դա  
յերեւում եր նրա ձեռքերի շարժումից, հեղնախառն  
ժալտից :

Այստ որն Արդումանյանը յերկրորդ ամպամ վորձեց  
Սարդարյանի մոտ պնակ : Նա առանձնասենյակ մտավ  
մի զսպված ներքին զայրություն : Յեվ յերբ դուռը բաց  
արեց, լսեց նույն պատասխանը .

— Էնկեր Արդումանյան, մենք ձեզ հետ  
ժամանակ կգտնենք խոսելու, յես հիմա պիտի գնամ  
նավթմկոմի նախագահի մոտ՝ այդ բալոր կարեսը խըն-  
դիրների մասին խոսելու : Յանկանում եմ լոնել ծո-  
վափում : Յես կարծում եմ, վոր ձեզ առ Զատոններու  
գծագրությունները վորոշ չափով նման են իրար, —  
հանկարծ ավելացրեց Սարդարյանը :

— Այսու, դա և ակադեմիկից կարծիքն ե , յես  
այդ գծագրություններից ոգտվել եմ :

— Բայց դուք յերեկ լսել եք, վոր Զատոններին  
կալանքի տակ ե :

— Այս :

— Ուրիշուն :

— Ի՞նչ եք կարծում, նա մեղավո՞ր ե :

— Յես դատավոր չեմ : Յեվ չդիտեմ ինչի համար  
են ձերբակալել նրան :

Սարդարյանն աշխատում եր առիթից ոգտվելու<sup>5</sup>  
անտողակի սպառնալիքներով ուրիշ Սարդարյանին՝  
հրաժարվելու իր նախագծից :

— Իսկ յեթե նա ձերբակալվել է չենց այլպիսի  
գծագրության համար, ի՞նչ կատեք մայեստիք, — դեմ-  
քին ավելի լրջություն տալով չարունակեց նա :  
— Յես ձեզ չեմ հասկանում : Չե՛ վոր ցամաքաց-  
ման գաղտնաբերը յերկար պատմություն ունի . դրա  
շաբաթը լսելոք մարդկի 39 տարի յե , ինչ մտածում են :

Դեռևս 1883 թվին ծովախորշը հայտարարվել է նավ-թով հարուստ մի տեղամաս։ Դեռևս յերկրաբան Պաց-լիմիչն է խոսել այդ մասին։ Ի՞նչպես հասկանալ այս բոլորը։

Արգումանյանի համառ փաստարկումները Սար-դարյանին դուք չեկան։ Թղթապանակը մի կողմ դնե-լով, Սարդարյանը դուռաց։

— Այո՛, այդ հիմար Պացլիմիչի պատճառով և, վոր յարական կառավարությունն ուժ միջին ուռութիւն գրել ու նավթի տեղ ջուր ստացել։ Մենք կուրորեն հետեւել ենք նրա ասածին։ Յեզ դրա պատճառը Զա-տոռնակին է յեղել, իսկ դուք շարունակում եք հետեւել Զատոռնակուն։ Յես վերջացրի, ապաստ եք…

Արգումանյանն իրեն դապել չկարողացավ։

— Դուք ինչպես յերեւում ե… դրա մասին յես կառավարչի հետ կխոսեմ…

Հուղմունքից նա չկարողացավ իր միտքն արտա-հայտել. արագությամբ դուրս գալով, առանձնատենյա-կի գուռն այնպես ուժեղ վրակեց, վոր գուան վերևից կրածեսի մի կտոր վայր ընկալ… Կողքի տենյակում աշխատող գծաղրուհիներից մեկը տեղից ցատկելով բացականչեց։

— Ո՛յ…

Այդ դուռը յերբեք արդպես՝ ուժեղ չեր փակվել։ Սարդարյանի սեղանին դրված ելին մի շարք գծա-դրեր, թղթեր, զրություններ… Դուռն ուժեղ փակե-լուց առաջացած քամին այդ բոլորը որքեց ու ցրեց հատակին։ Պատից կախած գծաղրերից մեկը, կորի ծայրը դնդասեղով չեր տմբացված, չուռ յեկալ, պո-

կելով և մյուս անկյան գնդառեղը։ Սարդարյանը յու-րաքանչյուր կտոր թուղթ հատակից բարձրացնելիս հայհոյում եր Արդումանյանին։

Առանձնատենյակից դուրս գալուց հետո Արդու-մանյանը չեր կարողանում համոզատանալ զայրութից։ Նրա յերկար ու բարակ մատները դողում մյին։ Հա-յացքը մի բանի վրա կենտրոնացնել չեր կարողա-նում։ Նա մի քանի անգամ բոլորովին անհպատակ ձեռքը տարապ դեպի սեղանի արկղները, հետ քաշեց, ապա թղթապանակը վերցնելով, դուրս յեկալ փողոց։

Սարդարյանը վորուեց հենց այդ յերեկոյան գնալ կառավարչի մոտ՝ Արգումանյանի հարցը վորոշելու։

— Քեզ ել այժմ ծակը կկոխեն, հետո տեսնենք ինչպես ես լեզուգ այդքան յերկարացնում, — սպառ-նաց Սարդարյանը։ — Գնա՛, ուր կուղես դնա՛… սրի-կա՛…

### III

Քաղաքի վրա մեղմորեն իջավ հաղվագեալ մի դով յերեկո։ Հարավից յեկող զեփյուռը խաղում եր ծովի ջրերի հետ, համբուրում նրա հայելու նման հարթ մակերեսվույթը և ծովից խոնավությունն իր աներե-վույթ թեսվելով տարածում դովակարոս քաղաքի վրա։ Քաղաքացիներն իրենց պատուհաններն ու վարագույր-ները բացել եյին, վորպեսզի այդ թարմաշունչ հավը մտնի տները, վորտեղ ցերեկը տովթ եր ընեռում։ Բաղմա-

թել քաղաքացիներ դուրս եյին յեկել փողոց, վայելու ծովագինյա քաղաքի հաղվաղեալ յերկոն:

Քէջ հետո լուսինը բարձրացավ քաղաքի վրա: Լուսնի շողերը խառնվում եյին չեկ ավաղին, ինչպես առաստ կաթն և խառնվում խմորի հետ...

Յեվ մարդ ցանկանում եր մանուկի պես թաղվել այդ ավաղի մեջ, փորիկել այն, թաց շուրժերով համբուրել այդ ավաղը, վորն այնքան դուրեկան եր: Փողոցների յերկու կողմով ժապավենառնե ճգլող դեսնածյութը, վոր ցերեկվա արեկ տակ կալդում եր, իր վրա ցանած ջրից կարծրացել եր ու լուսնի ըռյուի տակ ցոլում եր դանդաղահոս գետի նման:

Դործարաններից բարձրացող ծխի քուլաները ցրվում եյին հեռու, հեռու: Ծխի փոքրիկ ծվենները հակա քուլաններից պոկվելով, մի պահ զանցաղորեն վեր եյին բարձրանում, սակայն հովի աներեալույթ ձեռքը մեղմությամբ չոյելով, տղղում եր նրանց ընթացքը, ուղարկում մեծ քուլանների հետեից, ապա ցրում յերկնքում:

Ծովը հեղությամբ, մայրական քնքանքով որուրում եր իր սիրա լողացար փոքրիկ նախակներին: Զրի կոհակները պալիս եյին, յերկչուությամբ համբուրում ցամաքի շրթերը և, կարծես մեկից վախենալով, կըրկին բաց ծովը վախչում:

Լիդային այդ յերեկոն չեր կարող հրապուրել, վերաբորանքն ու կակիծը նրան փակել մյին անյակի չորս պատերի մեջ: Նա դավացած դեմքով դուիս:

— Միենույն և, մայրիկ, ուզում ես արտիս սառույց դիր, նա չի հովանա: Միրսո ասես սուր դանակով վերափորված լինի... Ա՛յս մայրիկ...

— Ի՞նչ և պատահել վոր, աղջիկս: Հարստություն չենք ունեցել, վոր կորչի—տիսրես, պալատ չենք ունեցել, վոր փուլ դա — տիսրես: Ել ի՞նչու յես արտիս ծանրություն տալիս: Յես ել եղանակ չառ մատածկոտ եյի, բայց քո հոր մահից հետո իսկի չեմ մատածում: Նա յել եր չառ մատածում, ի՞նչ տարավ ես աշխարհից... Զույր և, հոգյակս... Մարդս վոր կա, ևս աշխարհում աղավնու նման մի թոշուն և, կդա, կիսաղա, անց կիկնա... Արի, սիրելիս, արի դուրս գանք, չնչի այս մաքուր ողը, թարմացիր: Անդրեյը նրա հետ ապրութը, նաև գալու յե, արի, արի դուրս գանք...

Մայր ու աղջիկ դուրս յեկան տնից: Լիդան փողոցում մի բառ անդամ չասաց: Այլևս չկար այդ կնոջ հատուկ յերիտասարդական աշխուժությունը: Մայրը նրան խրատներ եր տալիս, սակայն չըխեր, վոր աղջիկս տիսրության պատճառն արգանդում մեծացող յերեխան եր: Նա յեր, վոր ամենից չառ ցամի եր պատճառ: Լիդան մոր հետ առաջ եր չարժվում ու մտածում այդ դրությունից դուրս գալու մասին: «Ա՛յս, ինչով եմ մեղավոր, ախրդուն իմանայի, թե ինչ վատություն եմ արել...»: Բայց ո՞վ կարող եր այդ հարցին պատասխանել: Այդ գիտեր միայն Անդրեյը, վորի հետ խոսելը ցամ պետք է պատճառի: Բայց և այնպես նրան հարկավոր եր տեսնել, նրանից հարցնել իրեն լքելու պատճառները: Լիդան մոր թերին հենված, տան ուղղոթյունը ցույց տվեց:

Մայրը հասկացավ :

Քեզ հետո նրանք նորից տանն ելին :

— Այս, հոգյակս, դու իզուր ափսով մաշտմ ես : Յես քեզ հայատացնում եմ, Անդրեյը նրա հետ չի ապրելու : Եղ վոր յերկու ամալս ընթացքում նրան և կպել, իրեն ամբողջովին նվիրել նրան, լավ հասկացիր, վոր դա պառնիկ ե...

— Ինչ իմանամ, մի գուցե ինձնից ել լավն ե:

— Զե, չե... Լսված բան չե, վոր լամը յերկու ամավա մեջ համ ծանոթանա, համ ել հանձնվի...

Մայրը վոչինչ չեր խնայում աղջկանն առուրդ տրամադրություն, անտարբերություն ներշնչելու համար :

Այդ բոլորի ազլեցության տակ եր, վոր Լիզան ցանկություն ունեցավ շարունակել իր աշխատանքը : Աշխատանքի ընթացքում նա Անդրեյից բացատրություն վկահանջնի, կստիսի պատմելու բոլորի, բոլորի մասին : Կստիսի պատմասիանելու՝ արդյոք, ինքնի արժանիքը յեր այդ աստիճան ստորացման :

Յեզ մի որ, վաղ առավոտյան, նա զարթնեց, քաղցր մրդով թեյ խմեց ու պատրաստվեց աշխատավայրը դնալու :

Զնայած նա հոգեպես ընկճված եր, բայց և այսպես գրավիչ եր : Նրա մոտով անցնողը, լիներ այդ տղամարդ թե կին, չեր կարող մի հայացք չձգել նրա վրա :

Լիզան այժմ ըլջապատի կարծիքի մասին չեր մտածում : Վաս եր հաղնկում և յերբ ծանոթ մարդու յեր հանդիսում, կուչ եր դալիս, խուսափում նրա-

նից : Իր ներսում վիարիայելով բացառքություն ստանալու հույսը, քանի մտավնում եր յերկրաբան-նական բյուրոյի չենքին, այնքան նրան սիրուն ամվելի արագ եր խորում... Ի՞նչ կառեն աշխատակիցները իրեն, ի՞նչպես կնայեն : Այդ հարցերից յուրաքանչյուրը, ինչպես առեղջ վերքի մեջ, ցավ եր ստանացնում :

Լիզան զեռես չղիտեր, թե իր բացակայության ժամանակ վնաչլիսի վրակոխություններ ևն կատարվել : Միայն այն ժամանակ, յերբ ցանկանում եր գեազի իր ուղանը զնալ, հայտարարությունների տակոսակի վրա վակցըրած մի թուղթ նրա ուշադրությունը գրավեց : Նա մոտեցավ : Իր մասին հրաման եր գրված : Բայտ այդ հրամանի նա վորսադրվում եր ծովախորչի ցամաքացման աշխատանքների գրասահնյակը :

Մի գող անցավ նրա մարմնով : Վոչ մի բառ բերնից դուրս չժողով : Նա չըջլեց ու դուրս յեկավ : Դըրսում, հենց գուան հետեւ, նրան հանդիպեց Արդումանինը :

— Ի՞նչպես ես, Լիզա, նոր աշխատանքիու տեղն ի՞նչպես ե...

— Հեղինո՞ւմ ես :

— Ի՞նչո՞ւ :

— Զգիտեմ ինչու, յես քեզ վատ բան չեմ արել :

— Բայց՝ սպասի՛ր... Լիզա... ի՞նչ ե յեղել...

Լիզան կիսով չափ թերմեց ու մասով, անտարբեց հայացքով Արդումանյանին նայեց .

— Վոչինչ, կարող ես հանդիսա մնալ :

Ու դնաց, առանց հետ նայելու :

Արզաւմանյանը չկարողացավ հասկանալ Ախոյի  
վերաբերմունքը։ Նա վոշինչ չփառեր այն բոլորի  
ժաման, ինչ կատարվել եր վերջին որերը։ Բնդհա-  
նքապես նա նման խնդիրներով քիչ եր հետաքրքրո-  
վում։ Յել այդ բոլորն իր պատճառներն ուներ։ Նա  
մնաց Ախոյի հատեկց նայելիս ու չփառեր՝ զղջա՞ւ,  
վոր հարց տվեց, թե՛ հենց արզագես ել հարկավոր իր։

## IV

Սարդարյանը յերկու անգամ զնացել եր նավթ-  
կոմի նախագահի մոտ, պորպեսպի գործին վերտ-  
րելու մի չափը ինդիքներ պարզի։ Այդ անհետա-  
ծգելի, հրատապ խնդիրներից եր յիշ Արդումանյանի  
հետ պատահածը։ Սակայն նրա յերկու այցելություն-  
ներն ել իզուր անցան։ Նավթկոմի նախագահը կու-  
սակցության կենտկոմում ինչպոք կարեվոր գործե-  
րով եր զբաղված։

Հետեւյալ որը նա փողոցում հանդիպեց իր տե-  
ղակալին — Վոլգովին։ Վորոշեցին ծովափ գնալ —  
զբոսնելու։ Հարվարդեալ եր պատահում, յերթ յերկու  
ընկերները միմյանց հանդիպելուց վորեւ տեղ չգնան։

— Հիմալի յերեկո յե, Անդրեյ Անդրեյիվ՛չ,  
յեկեք ծովափ գնանք, թոքերս ժանգութեցին այն-  
քան գրասենյակում, տանը նստեցի։

Անգրեյն ուշաղբությամբ լսում եր ընկերոջը և  
զլիով հավանության շարժումներ անում։ Հետ նա  
խսեց.

— Այսպիսի յերեկոներին մարդ բանաստեղծ է  
դպտնում։ Զգիտեմ նկատել եք՝ զլուքան յեղա-  
նակը խաղաղ ե, անգորք, դուրեկան, այնքան մարդ  
ավելի յե խորասուզվում իր մտքերի մեջ։ Յս իմ  
տրամադրությամբ պարծենալ չեմ կարող։ Մարդու  
սիրո յերեմն մորթած հայի պես թպրտում ե։ Տան-  
ջային այն ե, վոր մարդ չի կարողանում իր ցանի ու-  
րիշին պատճել... Որինակ, Արդումանյանի հետ պա-  
տահածը։ Ո՞ւմ պատճես, վոր սիրող մի քիչ հովա-  
նու...»

Սարդարյանը դիտեր, թե ինչպես պետք է սկսել  
խոսակցությունը։

— Իմ կարծիքով, Անգրեյ Անդրեյիկիչ, նրան  
տեղն ու տեղը հարկավոր եր հակահեղափոխական  
անվանել, դա նրա բերնին վականք կղներ։

— Այո՛, համարյա այլպես ել արված մ, մենք,  
հայերս, մի առակ ունենք՝ «Որին խոսքը եշին կասեն»։  
Այդ առակը ճիշտ ե։

— Բայց և այնպես նա կուսակցական ե և տե-  
ղում միջոցներ ձեռք առնելն ավելի լավ կլիներ։ Բջջի  
քարտուղար՝ հորափոր վարպետ Սարդայանին վաղո-  
րոք հարկավոր ե նախապատրաստել, այլ կերպ օրան  
դուրս չի դա։ Նա մեզ լսվ ե ճանաչում ու հարզում։  
Ի դեպ, նա այստեղից այնքան ել հեռու չե, յեթն  
ցանկանում եք, հենց չիմա կարող ենք նրա մոտ  
անցնել։

— Պիտեմ, պիտեմ վորտեղ և առլում :

— Ավելի լով :

Նրանք կտոք նստեցին :

Վոչ արելք սլուկե չողելը, վոչ զումի գերող շույտում ծովախին խարխխված հին բարժաների տեսքը փոխել չելին կարողանում : Ինչուս բուեր, մոտեղեմքերով նրանք նայում ելին ծովախով անցնող հազարահին : Սարդարյանին թվում եր, թե այդ նազերը լուս հեծեծում են, իրենց վասախոր անցյալը հիշելով կուչ գալիս, կողերը սղմում . . .

— Միշտ այստեղով անցնելիս նայում եմ այդ բարժաներին ու սիրտս ցավում ե, — ծովի կողմը նայելով ասաց Սարդարյանը : Վոլկովն ինքն ել այն կողմը նայելով ու վոչինչ ցավալի չգտնելով, համեմայն դեպս սպիտով համարեց ալելացնել :

— Ի հարկե, լավ տնտեսավարը սառնարտությամբ անցնել չե կարող : Շատ ցավալի յե : Մի ժամանակ կայտառ պատանու յեռանդով սրանք ճեղքել են ծովի կուրծքը, ամեն տղղությամբ ըողացել, մարդ բերել և ահավասիկ՝ ծերության խարիսխ են ձգել :

— Վոչ, ցավալին ել հենց այն ե, վոր նկանցից չատերը յերիտասարդ հասակում են ագում խարիսխ ձգել . . .

Սարդարյանը քիչ եր խոսում : Նա շատ մտածում եր Սարդարյանի հետ ունենալիք խռամեցության մասին : Ի՞նչուս սկսի, ի՞նչուս պատճառաբանի այցե-

լությունը : Սարդարյանն այն մարդկանցից չեր, վոռնք բոլոր կանոններով հրավիրված հյուրը լինելով հանդերձ, յերկու խոսք ասել չեն կարողանում :

Փողոցը, վրաբեղ ավլում եր Սարդարյանը, զանգված մը քաղաքի ծայրամասերից մեկում : Այդ ծայրամասի տների պատուհանները ցերեկները վարկված ելին լինում, իսկ շատ սենյակներ ել բոլորովին արեի յերս չելին տեսնում : Այդպիսի բակերից սովորաբար դարձահոտություն եր վրչում : Տնտեսերիցը չելին ել մտածում կոյուղի անցկացնելու մասին : Մինչեւ հեղափոխություն բակի կենցու մաքրելը, դուրս տանելը սովորաբար կատարում եր ապրողներից մեկը, վոր շատ յերեխաներ ուներ և որվա հացի վորու հազիկը եր հայթայթում :

Այժմ, հեղափոխությունից շատ կարճ ժամանակ անց, դեռ խորհրդային շինարար ձեռքը չեր դիպել այդ ծայրամասին :

Սարդարյանն աշխատում եր վերհիշել, թե մեկ ել վո՞ր թվին և ինչո՞ւ համար մը այդ ըրջանը յեկել : Յերբ կառքը կանգ առավ մի ցածը տան առաջ, նրա մոքը թելը կտրվեց : Տան գարբասի գլխից կախած նաևթի լամպը գեգույն լույս եր տալիս : Բակը մտնելու համար հարկանշոր եր անցնել/դարձատիկ վորքիկ անցքով : Վոլկովը մի ձեռքով գլխարկը բոնեց, իսկ մյուսով զուրը ավելի լայն բացեց, վորպեսզի հանկարծ չորերը չքավեն դռանը : Նրան հետեւեց Սարդարյանը :

Սարդարյանը նրանց սիրակիր ընդունելություն ցույց տվեց :

— Այ հասկանում եմ, խռամեան հյուղեր, բարով

յեկա՞ր... իսկույն յերեվում ե, վոր բանիոր դաստակարի կառավարություն և... Համեցեք, համեցեք...

Սարդարյանն իսկույն հանգամանքն ովասարություն:

— Իհարկե, բանվորի կառավարություն ե: Եղ զո՞ր կառավարիչն առաջներում վրայր բանվորի տունը:

Այս ու այն անկյունից աթոռներ դաշն, դրին սեղամի շուրջը:

Յերկու մամուլ հաստակի վրա միմյանց հետ խաղում ելին, իտկ մեկը, վոր ընդամենը մի քանի ամառական եր, պառկած թափորի վրա՝ ձեռքերը ովում շարժում եր: Մի յերխուսարդ տղա ցուցամատով խաղում եր պառկած մահկան հետ: Վոլիովն այդպիսի աենյակում առաջին անդամն եր լինում: Յա զբաց, վոր սենյակը խոնավ ե. կարծես քիչ տուաշյալությունը անելիս են յեղել: Տան ողը հեղձուձիք:

Սարդարյանը նստեց աթոռին և ուղղակի ակաց դործից:

— Այդ լավ ե, վոր բանվորի կառավարություն ե, բայց ինչ կանես, յերբ դեռ շատերը կան, վոր դործը խանդարում են: Մեր մեջ ել գործին խանդարող մարդեկ կան: Դու մի ուղիղ ճանապարհին, վլուխտ քաշ առաջ ես դում, իտկ մեկը հանկարծ վեշից ըստում ե, չի թողնում, և կուսակցական ել ե: Խոսք Արդումանյանի մարդին ե:

— Վո՞ր Արդումանյանի:

— Աքամի:

— Հա՞՛, ասա՞՛, ասա՞՛, տեսնենք...

Վոլիովն ոչչի տակապը տան սարքավորմանն եր

նայում: Լուս նստած յերխասարկը թողեց մանկանը, նա ուշադրությունը լարած լսում եր Սարդարյանին, մհեմենի ել հայացք գցում վոլիովից վրա:

— Ինժեներ Զատոնսկուն բանտարկել են, վորով հետեւ նա՝ ցանկացել ե մեր խորհրդային փողերը ծովն ածել, — հանդիսատ տոնով ակսեց Սարդարյանը: — այս, ինչպես ցարական փողերն ե ծովն ածել: Արզումանյանն ել նրանից հետո նյու մաման մի եսքիդ ե կարգմել: Իմ բացակայության ժամանակ Անստովի վասիլիչը մերժել ե ցամաքացման այլ նախառութիծը: Վերագառնալուց հետո նա ցանկանում եր ողտակործել գործին անտեղյակ լինելու: Սակայն չուտ զմի ընկնելով, մերժեցի, վորի համար և ամենակոպիս հայհոյանքներ ստացաւ:

— Այս, այս, բոլորն իմ ներկայությամբ կատարվեց, — զլուխը ոմքոմքացնելով համաձայնից վոլիով:

— Հիմա յես յեկել եմ քեզ մոտ, — իբ խոսակցությունն առաջ տարավ Սարդարյանը, — վորպեսողի նրա վեմ վորոց միջոցներ ձեռք առնես. ոճի վզուխը վոր չկտրես, շատերին կկծի: Բոլորն ել գիտեն, վոր կառավարությունը նախիմային արդյունաբերության մեջ միանձնյառ զեկավարություն ե հաստատել: Զեհթարկինը հենց այլ ոլորենքի խախուսմն ե: Այդ բոլորի համար ել դուք նրան պատժեցիք, թե չե յես ստիպված կլինեմ դործից հեռանալ:

Սարդարյանն իր յեռանկյունի միրուքը ձախ ակի մեջ առած վոլորում եր... Սարդարյանի դեմքին

չելք նայում : Բայ յերեվույթին նաև շատ շուտ եր հասկացել հյուրերի գալու նպատակը : Լուռ նստած յերիտասարդը ևս կարծեա կըսահել եր գործի եցությունն ու հետեւում եր Սարդարյանի դեմքի արտահայտությանը, դպում, վոր ծերակն վր մհջ վնչչվոր բանի շուրջը շատ լուրջ մտածում եւ : Նազիթի բամպը աղոս լույս եր սփոռում Սարդարյանի դեմքի և արծաթաղույն մազերի վրա :

— Անդքեյ Սարդարյանին, յես մինչեւ մոլ կուղեցի իմանալ՝ Զատոննակու գլխում խելք կա՞ , վեհ . . .

— Յես բան չեմ հասկանում :

— Ասում եմ ելի, հիմա ինձ եսպիսի մի բան հասկանալի չե — բացատրիք : Եղ Զատոննակին քո ասելով մեր ժամանակ բուրժուանելի համար վնասակար աշխատանք և կատարել : Եղ մեկում նաև մալոդեց : Եղալես չի՞ : Հա, հիմա բուրժուա չկա, հիմա ինչո՞ւ ալեաք և միասակար աշխատանք կատարի :

Սարդարյանը չեր կարծում, վոր վարպետն այդպիսի յեղակացություն կհանի : Հանկարծակի ծովող ուղղու նման եր նրա խոսքը : Սարդարյանին այլ կերպ թվաց : Նա կարծեց, թե այն, ինչ Արդումանյանի մասին ասաց, արդին քննունից և այժմ այդք բոլոր խոսակցությունն իմիջիայլոց ե : Բայց նաև մտքում պատրաստած պատասխան ուներ, վորը և ուսմբի նման նկատեց :

— Բուրժուաների համար մի գուցե հիմարությամբ ե արել, իսկ այսոր նա ակնհայտ կերպով վնասարարություն և անում :

Այստեղ ոգնության յեկալ վոլկովը :

— Յես միանկամայն համաձայն եմ Անդրեյ Սերգեյինիչի ասածին : Վորպես կաստ կարող եք վերցնել № 1 հորը : Ինչո՞ւ ջուր տվեց :

— Այս, այս, № 1 հորը, լավ հիշեցրեց . ինչո՞ւ այդ հողամասը ցամաքացվել է : Պարզ չե՞ , վեր դա վնասաբարության հետեւանք է : Տարիներով աշխատել են, միլիոններ ծախսել և վերջն ի՞նչ դուրս յեկամելնույն ծովի ջուրը, իսկ այդ ջուրը միշտ ել կար :

Վերջին նախադասությունը Սարդարյանն ասաց ծաղրանքով : Նրա աչքերն ավելի եյին կուչ յեկել, ճակատի կենտրոնում խորշումներ ատեղծվել : Խոսելիս ցուցամատը սեղանին եր խփում : Խոսակցության ժամանակ դժվար մոլ հասկանալ՝ Վոլկովը բուլոր կետերում եղ Սարդարյանի հետ համաձայն ե , թե՞ ուրիշ կարծիք ունի : Ծխամորհից բարձրացող ծխի հետև միանդամայն դժվար եր դիտել նրա դեմքի արտահայտությունը :

Սարդարյանը համաձայնվեց, վոր № 1 հորի հրապարակը ջրաբեր հրապարակ է, սակայն մի՞թե բուրժուաները խելառ են յեկել, վոր սկսել են այդ տարածությունը ծովի ջրից պատել :

— Մեկը մյուսին չի բունում :

Խոսակցությունն ըստ Եյության Արգումանյանի շուրջն եր պատվում : Յեթե հաստատվելիք, վոր ինմեներ Զատոննակու վերցրած ուղղությունը սխալ ե յեղել, ապա Արդումանյանը, վորպես նրա կողմանակիցը, պետք ե պատժվելիք :

— Յեթե մեղավոր չե, ինչո՞ւ բանտարկեցին, — կորուկ կերպով ասաց Վոլկովը :

Տիրեց խոր լոռւթյուն։ Սարգսյանը խորհատազվեց մտքերի մեջ։

— Դա՛, —բացականչեց Սարգսյանը, —շատ դժվար է մարդկանց հասկանալը։ —Մարդու զլուկս պայմում է, հենց վոր սկսում են նման բաների մասին մտածել։ Մենք կուլում ենինք բուրժուաների դեմ, մենք ուղղում ենինք ամեն ինչ մերը դարձնելու հիմա յիշ, յերբ ամեն ինչ մերն են, ելի կարդին չեն աշխատում։ Դրանք ի՞նչ են ուղղում աշխարհից, յես չեմ հասկանում։ Աղջի, Սառա՛, թեյ բեր, թենկուղ յեղանակը տաք են, բեր մի-մի բաժակ թեյ խմենք։

Հյուրերը հրաժարվեցին թեյից։

— Շատ շնորհակալ ենք, — յերկուսով միասին ասացին նրանք։

— Դու ևսեղ կասկածելու վոչ մի հիմք չունեա։ Փատու են, վոր Սարգսյանյանը դատարարության մարդու տեսակետներն են պարզաբանում։ Ամեն ինչ պարզ են։ մենք քեզ մոտ ենք յեկել, վոր դու, վորպիս կուսբջի քարտուղար, նրան պատժի յենթարկես։ Դե՛, մենք դնացինք, բարի դիչեր, — այս ասելով Սարգսյանը սեղմեց Սարգսյանի ձեռքն ու դուրս յեկավ տնից։ Նրան հետեւից վոլկով։

Հենց վոր հյուրերը դուրս դնացին, Սարգսյանի մոտ նստած յերիտասարդն սկսեց հաբակը տալ։ Նա ցանկանում եր ամեն բան իմանալ։ Սարգսյանը պատմեց հյուրերի մասին։ Յեղիտասարդում վկասով հավանության նշան եր անում ու նոր հապցեր տալիս։

\*\*\*

Կուսակցական ժողովը շատ աղմկու եր։ Հորավորման հրատարակի վարիչ Արամ Սահակովիչը վոտնեցի մաստներին կանոնած՝ առաջարկեց Արմումանյանին վտարել կուսակցությունից։ Այդ առաջարկի առթիվ խիստ աղմուկ բարձրացավ։

— Նա դեռ ընդհատակում եւ աշխատելու մեջ մեղքի համար։

— Եդ վո՞ր մեղքի համար։

— Սպասիր, սպասիր ընկեր Հովսեփյան, ախրյերկու մարդ վոր մի տեսակի սխալ են վործում, դու դեռ չի նշանակում, վոր յերկուսն ել մի բնավորության տեր մարդիկ են, — առնկյունից առանց նախադահի թույլտության կանչեց մի բանիոր։

— Իհարկե, իհարկե, Արամ Սահակովիչն ել, Սարգսյանն ել միրուքներ ունեն, բայց այդ դեռ չի նշանակում, վոր միմյանց նման են։

— Լավ, դործի մասին խոսեցեք, ի՞նչ վործ ունեք իմ միրքի հետ։

Արզումանյանը խորը շունչ քաշեց, ջղայնությունը զսպելով վեր կացավ տեղից և ուղղակի դիմեց Սարգսյանին։

— Քանի վոր բան չես հասկանում գործից, թող դոնե մենք աշխատենք։ Սիրտս ուղղակի ճաքում ե քո այդ վիպարերմունքից։ Գոնե իմացիր, թե քո շուրջն ինչ ե կատարովում։

— Մինչև հիմա իմացել եմ, հիմա մի դուցե ծերությունս խանդարում ե, ո՞վ դիմու աշխարհիս բանը։

Հորսակոր Ավե Բաբան, զեղնած, այսուակրները դուրս ցցված մի մարտ, տեղից կանչեց։

— Մենք նամի՛թ ենք ուստամ ե՞ , նա'վի՛թ ե հաղկառվոր... Չուրն ի՞նչներիս ե պետք : Փառք ալլահին , ծովը քմներիս տակ ե : Քրտինք թափո՞ւմ ենք , թե վոչ . այո՛ , թափում ենք , աղնիվ ե՞նք աշխատում , թե վոչ . այո՛ , աղնիվ ենք աշխատում... Ե վար սալամ , մենք նամի՛թ ենք ուստամ , մենք գլխ չենք , ո՞յս մեր քրտինք - արյունը տանք , ջուր հանենք : Իմ դլուխն իսկը չի մտնում , վոր եղ ծովի մեջ խակական նապի՛թ լինի :

Համարյա նույն մաքերն ազտահայտեց հորախոր վարովեա Շետապոլովը : Վերջին ամիսների ապարագում աշխատանքը նրան տաստիկ դայրացրել եր : Ժողովում մթնոլորտն ավելի ելեկտրականանում եր : Բոլորն ել մտահոգված եյին հարցի ճիշտ պատասխունը գտնելով :

Սակայն յերկար , կրօոտ խոսակցությունից պարզ եր , վոր Արդումանյանը պարտվել ե : Նա զգում եր , վոր իր փաստարկումները վոչ մեկին չեն համոզում : Այդ կրծում եր նրա ներսը , դիպչում նրա արժանապատվությանը , վորն ամենաթանկադինն է մարդու համար : Նա մասներով դեպի հետ սանրած մազերն եր քրքրում... Նրա աչքի առաջ պատկերացավ Սարդարյանի հրավոր դեմքը , կծու , թումավոր ծիծաղը , և մի սարսուռ անցավ մարմնով...

Ժողովի որը , յերեկոյան , լուրջ հասավ Սարդարյանին : Նա առամների արաներից ականջ ծակող հայհույանքներ առնեց , բայց ձբավականացավ զրամով : Վորոշեց նամիթկումի նախագահի մոտ վնալ , նոր սրտոտի մասին խոսել :

— Վո՞չ , Արդումանյան , այլես հավետյան խորտակած ես : Դու իմք ես վլոր , չնչին մժեղ , անվողնաշար արարած... Փոքրիկ հարվածից դորացիր , ընկալր , ինչպես վոքրիկ չյուղը թույլ քամուց... Հիմա դեմ , ուզ կուղես...

Սարդարյանն իրենից շատ գոհ եր :

## V

Տանն վնչով ել պարապելիս լինել Ռայխան , չեր կարողանում մոռանալ կարարանում պատահածը : Ամեն անդամ այդ հիշելիս ցնցվում եր : Սկզբի յերկուորը նա զբաղվեց տան կահկարասիները կարգի բերելով : Աչքի յեր ընկնում նախակին տանտիրուեցու պահանջողությունը : Այդաեղ կարելի յեր գտնել նուրբ ձեռագործներ , պատերին կացրած զմայլելի նկարներ , վորոնց մեջ արևելքի դույներն աչք եյին շլացնուած : Պատուհաններում դրամած եյին բազմաթիվ ծաղկիներ , վորոնք ամինամ լինելուց դեղնել եյին : Ծնողհանդապես տան մեջ ամեն ինչ , բացի արևելյան նկարներից , գույնը կորցրել եր : Անկարգությանն ավելի ևս նախատել եյին Սարդարյանի յերկու հորեղբոր տղամանը , վորոնք ասլրել եյին տանը , թողել այն , գնացել գյուղը : Ռայխան նկարներով ծանոթացաւ Անդրեյի հոր , մոր հետ , նրանց մասին լսեց լիրենից՝ Անդրեյից : Այս բոլորը նրան համուռում եյին , ուզ Սարդարյանը կարված չի յերել վորեւե մեկի հետ : Բայց

Համարյա ամեն առավուտ, յերբ Անէլելին դործի յեր ճանապարհում, չեր անցնում մի ժամ, նորից նրա կարիքն եր դդում, նորից ցանկանում եր նրանից հարցնել կայարանում վայր ընկած կնաջ մասին:

Մի որ Սարդարյանը տում յեկալ չսիրազանց բարձր տրամադրությամբ: Գրկեց կնոջը, համբուրեց, սկսեց խաղալ, ինչպիս յերեխայի հետ: Հանկարծ նա վաղեց դեպի պատուհանը, դլուխը հանեց դուրս:

— Ռայիսա՛, Ռայիսա՛, արի՛, արի՛ այստե՛ղ, չո՛ւստ, չո՛ւստ, թե չե՞ չես տեսնի:

Ռայիսան թողեց ձեռքի բաժակնելով:

— Դու հո չե՞ս կոնճել...

— Շու՛տ, ակսոսում եմ, չես տեսնի:

Ռայիսան ամուսնու մեջքին հենվելով, դուրս նայեց:

— Ահա՛, նայի՛ր, Ռայիսա, տես ինչպես աստղերը յերկնքում թանկադին դոհարների պես պաղպում են: Այն լուսառատ աստղի մոտ գտնվող փոքր աստղը իմն է: Յես նրան շատ փոքր հասակումս եմ ընտրել և մինչև հիմա նա ուրիշների նման չի դահավիժել, չի կորել յերկնքի անհունության մեջ: Ուր ել դնում եմ, վորտեղ ել ապրում եմ, այդ աստղը ինձ հետ է, միշտ ինձ հետ... Այո՛, նրանցից շատերը կայծակի արագությամբ կորչում են տիեզերքի անհունության մեջ, իսկ իմս մնում է: Ո՛, զիշեն անշուշտ համանալի յե: Տես, քաղաքն ել յերկնքի նման իր աստ-

դերն ունի: Պատրաստվիր, պատրաստվիր տնից դուրս գնալու: Այսպիսի զիշերը յես տանը չեմ կարող նստել: Գնանք, զիշերվա այս թարմ ողը ծծենք: Գնանք մակույկով զրոսնենք... Վաղո՞ւց, շատ վաղուց յես զիշերվա այս պահին ծովում չեմ յեղել: Դե՛, պատրաստվիր հոգիս, մի ուշանա... Զե՞ս շտապում, յես քեզ կտանեմ:

Սարդարյանը կնոջը ձեռքերի վրա բարձրացնելով տարապ մյուս աենայելը:

— Անդրեյ, խելա՞ռ ես, ինչ ե:

— Շատապ, շտապ: այնպիսի չոր հագիս, վոր ծովի վրա չմրսես: Մակույկ, սիրոս մակույկ և ուղղում...

Նա յերկու մասով կնոջ մաղերն ելի քաշում, այտը կամթում, խողանակով սրբում եր նրա շորերը և իր թե չխանալով խողանակը քսում մերկ կղակին:

— Յես քեզ հեռու կտանեմ և դու զիշերը կտեսնես մեր այս քաղաքը: Դու կզգաս, թե վորքան դեղեցիկ և այս զիշերը: Արևելյան գեղեցկուհու նման ցերեկը տեմքին դովչ քով և գտում, իսկ զիշերը, յերբ միայն ատառերն են նայում — նա ցույց եւ տալիս իր հրաշակելիս ովելությունը: Դե՛ս, շուտ, շուտ սլերջացրու:

Ամուսնու այս արտակարու ուրախությունը շատ տարորինակ եր: Նրան թվում եր, թե այսպիսով ամուսնու ցանկանում է արմատախիլ անել այն սառնությունը, վոր նրա մեջ ստեղծվեց այս քաղաքը վոտք դնելու առաջին իսկ որը: Սկզբում նա հավատում եր Սարդարյանին, համողված եր, վոր նա սի-

բում ելու իրան : Այսմյանց հետ վասպվելու առաջին իսկ որից նրան թվում եր, թե ձեռք ե բերել այն, ինչ ցանկալի յեր : Այդ որից ասես նա ընկել եր մի հարթ ճանապարհ : Այդ ճանապարհը, սակայն, շատ շուտ խորդ ու բռնությունը յեկավ :

Նա ցանկանում մը գանել այն կնոջը, իմանալ ինչ իրենից ծածուկ ե պահպաժ, ինչ մինչ իր գալի և յեղել : Չեր կարողանում տանել խղճի խայթը, միշտ մտածում եր, վոր ինքը դուցե մեկին դժբախտացրել ե, վոր մեկը, վորը դուցե և վոչնչով մեղալոր չե, տուժել ե իր չմտածված քայլից : Մյաս կողմից նա չեր կարողանում վասահանալ, վոր այդ նույնն իր հետ ևս չի պատահի : Ի՞նչով հավաստիանալ : Նա յերեք չելք ցանկանա յերկար ժամանակ խարսխած զբության մեջ մնալ :

Այս մտքերն իրենք իրենց, անհայտ տեղերից թելերի պես դայիս, նրա մտքի իջիկին ելին կծկվում :

Տանը մենակ մնալով նա հիշողությամբ քրքրում եր իր անցյալը : Անցյալի առանձին գեղքեր նա դատում եր այսորվա առումով : Ամենից շատ նրա միտքը զբաղվեց շատ մոտիկ անցյալով : Նա հիշեց իր ամուսնությունը : Միայն մի քանի հանդիսում, միայն մի քանի ծանոթների զբական խորհուրդ, և ամեն ինչ վորոշված ե : Նա ամուսնացալ : Ինքն ել չնկատեց, թե վորքան շուտ կատարվեց ամուսնության ակտը : Առյիսան ժամանակ չունեցավ հաշիվ տալու, թե ուր

և դնում, ի՞նչու : Արտօնի համար դեռ ամբողջովին չեր զղջում, բայց և այլես այն տրամադրությունը չուներ, ինչ ունեցել եր : Այս, ինչպես կուկեր յերես առ յերես հանդիսել այն կնոջը, հետը խոսել, պարզել ամեն ինչ :

— Անդքեյ, ի՞նչու, ասա՛, ի՞նչու դու Մոմկացում ամուսնացար :

— Այ քեզ հա՛վց : Այրելիս, լավ իմացիք, վոր մարդու համար միւնույն ե՝ թե վորտեղ նա կմեռնի : Յերբ ձեռքի մի փունջ մանուշակ ե ընկնում, չես հարցնում, թե վորտեղ ե աճել այդ, Մոմկացում, թե ջերմացունչ հարսավում . . . Միայն թե այդ մանուշակը բուրավետ լինի . . .

— Իսկ յերբ այդ մանուշակը թոշնում ե, կորցնում ե իր բուրմունքը, միւնույն ե, թե նրան վորտեղ կպցես, չե՞ :

— Ի՞նչ ես ուզում ասել :

— Վոչինչ, դու մի բան ասա՞ինձ՝ յես քեզ հետ ամուսնանալով մի ուրիշին ցա՞վ չեմ պատճառել :

— Ե, դու հին պատմություններ ես սկսելու : Յես ել, յերբ վոտքը դնում եմ այս հողին, վորը մարդկեկ չեն ստեղծել, ասես շատերի աչքն եմ հանում : Ի՞նչ արած, քեզ հետ հ'լ այդպես կարող ե լինել, մարդկեկ կարող են նախանձել :

— Քո կարծիքով մարդկանց նազատակը միայն ինձ նախանձե՞լն է :

Բայիսան այլես դադարեց նախապատրաստվելուց, ձեռքի շորը մի վողմ դրեց :

— Ի սեր աստծո, դու շուտ պատրաստվիր :

— Բարյ, անկենդ ասաւ, դու ի՞նձ սելքում ես :

— Ավելի, քան ի՞մ աստղին :

— Իսկ նրա՞ն :

— Վորի՞ն :

— Այ նրան, վոր կայարանում ուշադնաց յեղավ :

— Դու զժվե՞լ ես, Ռայխան, ի՞նչ կապ կարող եմ ունենալ մի միջնորդ հետ, վորն իր մեջ կանացի հասպուրանք չունի : Նա պարզապես իմ գործակարն եր, վորին յես փոխադրեցի այլ աշխատանքի :

Ռայխան շարունակեց հագնովել : Վորպեսպի ծովի վրա չմըսի, նա հաղապէ ձերմակ ոճիքով աև չըջառակեսու, ապա գլխին դրեց ծղնոտե լայնեղը գլխարկ :

«Այլուս հրաշալի յես», — ինքն իրին ասաց Անդրեյը :

Տնից դուրս դավիս նրանց մի ապա մտահացավ :

— Սարդարյանի տունը վո՞րն է :

— Յես եմ Սարդարյանը, — չուս գալով պատասխանեց Անդրեյը :

— Լիզան ե ուղարկել, ասել ե՝ կտանես, կտասք Անդրեյին...

Սարդարյանը քարացածի պես մնաց կանդնած :

Վոչ մի խոսք ասել չկարողացավ : Նա լուս չուս յեկավ, վորպեսպի դուռը փակի : Դուռը զժվար եր փակվում : Ողտովելով հանդամանքից, Ռայխան փոքրիկ աշշեց մի կողմ, ապա հարցրեց :

— Վո՞ր պահեղ և ապրում էլիզան :

— Ե՞հ, ենտեղ, — ցուցամատով մի ուղղություն ցուց տալով պատասխանեց տղան :

— Վո՞ր վողոցում :

Այդ պահին Սարդարյանը դուռը փակել և գլխահակ գեպի նրանց եր գալիս : Փոքրը չկարողացավ Ռայխանին պատասխանել :

— Վաղը ժամը 12-ին կդաս ինձ մոտ, մեր տուն, լո՞վ...

Փոքրիկը գլխով համաձայնության նշան արեց :

— Դե, գնում :

Մի քանի բոսկ յերկուսի միջ վոչ մի բառ չփոխանակվեց : Գնում և մին վողք-կողքի, բայց լուռ :

Միայն նըմանց վոտքերի ձայներ եր լսվում : Թվում եր, թե դմում մի ծանոթ մարդու հուզարկալորության : Սարդարյանը չշմածի նման եր միայն ակզրի բոսկներին, իսկ հետո մտքում պատարաստում եր սարսպող հարցերի պատասխանը :

— Նա ի՞նչ ծրար ե ուղարկել, — յերջապես հարց Ռայխան :

— Յես վ՞նչ դիմում, յերեկ դործին պերարերող :

— Գործին վերաբերություն, այդ վո՞ր պորձին, չե՞զոր նա այլևս ձեղ մոտ չի աշխատում :

— Ի՞նչ ես դու ամեն բանի այդպիսի կասկածանքով նայում : Ահա քեզ, ա՛ռ, վերցրու...

Այս ասելով Անդրեյին վհնչ-վլոր մի թուղթ պատռեց, ունեն դցեց:

— Ի՞նչու յես բարկանում :

— Ինչպես չքարկանամ, յերբ գործին վերարեսող թուղթն ել՝ աստանան գիտե ինչի տեղ ես լցնուենում :

— Իսկ յեթէ գործին վերարեցող ե, ի՞նչու յես պատռում . . .

— Ո՛, այս կանայք վորքա՞ն սլրովտող են, վորքա՞ն սրտամաշ . . . Այսենք թե ճիշտ այնպես ե, ինչպես դու յես կարծում, ի՞նչ կա վոր, թող վինի: Մարդկի չէ՞ վոր իրենց կատարած հանցանքն իրենց ուսերի վրա պիտի կրեն: Հանցագործության աղբյուրը դնությունն ե, մայր բնությունը: Յեթե նա մարդ ասածդ չստեղծեր, լայլ կաներ, իսկ ստեղծել և կարճ կյանք տալը սպական հանցագործություն չե: Թող մարդը հավխենական կյանք ունենար, այն ժամանակ հանցագործությունն անհերթիլ լիներ, իսկ վինչքան մենք ապրում մենք . . .

Ռայխային թվուամ եմ, թե բոլորովին անծանոյ մի մարդ եր կանոնած իր առջև:

— Դու հեռու տեղեր մի զնոտ, ի՞նչ գործ ունես բնության հետ: Քեզ մոտ սովորություն ե դառել, հենց վոր քեզ ուղում մեն մեղադրել, դու հեռու տեղեր մես վազում: Ասա այն, վինչ վոր ազտիւդ մեջ կա: Ասա, ի՞նչու վորոշ մարդկի սրտարաց չեն մընում, ի՞նչու կեղծուամ, ծիծաղում մեն այնտեղ, վորտեղ հարկավոր ե լալ, ի՞նչու վորոշ մարդիկ սիրում են ստել . . .

Այս հարցերից հետո Ռայխայն լոեց: Մարդարյանը յերկար պատճեմ եր, խոսում . . . Ռայխայն նրա խոսակցությունը չեր խանդարում, լուս հետեւում եր նրան, իսկ թե ուր եր տանում, վճաշու այլ վորդցով են դնում և վոչ թե մյուսով, նրան չեր հետաքրի-քը ըլքում . . . Այդ սովորությունը Ռայխայի մեջ մասմբ ամրացել եր հարազատ մոր մահվանից հետո: Խորթ մայրը նրան հրամաններ եր տալիս, վորոնք ինչ կերպ ել տաղում և լիներ, պետք ե կատարովելին: Գործը թերզի թողմելը վոչ մի կերպ արկարացնել չեր լի-նի: Մի անդամ արդ նույն խորթ մայրն առաջարկեց վորդցի վրա դանովով սրտուհանների ապահովեները մաքրել: Ապակիները սառցի հաստ չերտով ելին պատահ: Ռայխայն ցանկացավ իմանալ, թե ինչու հա-մար ե մաքրում, քանի վոր մի քանի բուգելից հետո նրանք նորից սառցով կծածկվեն: Միայն այդ հարցի համար նա ծեծվեց, խիստ ծեծվեց . . . Յեկ այդ որից նա սովորեց յենթարկվել, սակայն սրտում ատելության թունյն կուտակվել: Այժմ, չնայած նա Սարգարյանին կյանքի մասան արյալիսիր մխամիս հարցելը եր տալիս, ինքն ել սրտում շատ բան ուներ, վոր ուրիշն չեր առում: Միշտ, յերբ նա ինքն իրեն եր խոր-հում, չեր կարող չտիրել:

Մարդարյանը Ռայխայի արամարդությունը բարձրացնելու համար ամեն ինչ անում եր:

— Վերջապես մենք չենք գնում քեռուս տղին թա-ղելու, դնում մենք ծովի վրա դրուելու, մի քիչ սիր-տըդ լայն բացիր:

— Դու յես մեղավորը, ովոր յես տիխուր եմ:

— Այո, յես կարող եմ քեզ ուրախացնել, ինչպիս ծաղյածուն և թագուհուն ուրախացնում, կարող եմ արատեղ եղ, այս փողոցի մեջ, փառվել քեզ, անվերջ համբուրել քո լաղուր աչքերը, կարող եմ քո հրամանով նետվել ջրի մեջ, շորերով լողալ յերեք արշին տարածություն, հետ դառնալ ու ժայռավ քեզ... Քո հրամանով յես կարող եմ, մերջապես, կարող եմ, այս հենց արատեղ, այս մայթի մյա, նատեղ և միայն որի որդներից վողորմություն հայցել:

Ռայխան այլևս ծիծաղը դապել չեր կարողանում: Նրանք հասել եյին ծովափինյա փոքրիկ այդին, վորը ծովից մի պատով եր բաժանված:

Այն որեցին, յերբ քամի, յեր լինում, ծովից ջուրն աղմկով հարութում եղ այդ պատին, ծեծում. նրա կողերը, վեր սլանում և ուժասպառ ցրիւմ...

Այդ որը ծովը հանդիստ եր:

Ծովը յերթեմն այնքան աճողո՞րր և լինում... Այդ աճողորդության պահին թվում են յեթե մասովդ աճում իսկեւ նրա մասին յեթե մասին յեթին, բարսով, շատ բարակ արակու նման կջարովի:

Մի շարք մակույկներ ափից վոչ այնքան հեռու լողում եյին, անվնդհատ որորսինով: Նրանց թվին մեկը ես ավելացավ — Սարդարյանի մակույկը: Թիւալարելու համար յերկումն ել վենտրոնից մոտ եյին նտոֆել: Թիստարում եր միայն Սարդարյանը: Թիերը ջրից բարձրանում եյին ու տակտով իջնում:

— Ջշոկի, չչափ...

Այնքան սքանչելի՛ յեր ծովի ջուրը: Ռայխան կունում եր, մատները զցում ջրի մեջ: Եերբ նրանք ափից բավական հեռացն, Անդրեյը դադարեց թիւալարելուց: Նավակը մկնեց ճոճվել...

— Տե՛ս, մեք կյանքին եղ այսպիս, այս ջրանդի սկես խաղաղ պետք ել լիներ: Բայց, թույլ տուր յնու ելի բնությունից խոսեմ, բնության մեջ վոչինչ խաղաղ չկա: Մենք այժմ ջրի հեղությունից զմայլմած, նրա վրա ժամանակ ևնք անցկացնում, հիանում նրա տեսքով: Յեկ մենք խանդարում ենք նրա հանդիսուը: Սակայն կարող ել պատահել, վոր մեք հանդուռության համար նա բարկանա... Այն ժամանակը վրարձրանան համա ալլիքները, մեզ մահ կապատճան... Այն պահին դու յերեկ կը բարձրիս, որմություն իկանչես... իսկ յես կթիւվարեմ, վորքան ուժերս ներում են... մինչեւ իմ նավակը ջրով կը ցիի, մինչեւ նաև կրառ զի այս ջրերի անհունության մեջ... Խորսակելուց հետո կլողամ, կրողամ մինչեւ վերջին ուժերս հատվեն, մինչեւ չոչ չոչասպառ լիլինեմ և գուցե՝ առի դուզո դամ...

Ռայխան ցանկանում եր առանց վորեկ հարց տալու հառկանալ նրա առածների իմաստը, բայց վոչինչ դուրս չեր գալի՛ս:

— Բայց զիստե՞ս, Ռայխան, վորքան դժվար ենակի խորսակումից հետո լողավը: Միայն այն միտքը, վոր դու բնիոքն ես հմկա մի միամիտքի, վորը քո աչքի առաջ ինորստակինեց, վոր դու նրանից շատ - շատ փոքր ես, վոտքերդ կապում ե, սարսափ ներշնչում...

— Հառլ, ի՞նչի համար ես այդ բոլորի ասում, —  
արդեն չհամբերեց Ռայխան :

— Դուքը չի՞ պահես :

— Վոչ թե դուքը չե՞ պահես, այլ տղում եմ վամ-  
նակ՝ դրանք ի՞նչի համար են, ի՞նչպես պետք է հաս-  
կանալ...

— Հենց այսպես, սրաի զեղումներ են : Ասացի,  
վոր վաղուց ե, ինչ ծովի վրա չեմ յեղել : Հիմա  
ծովն ինձ հուղում ե : Նամի՞ր շուրջը, տես ինչքան գե-  
ղեցիկ ե արջապատով, տես, ըստմինը յեղիրումն ե, մնոկը  
յերկնաբռամ : Խոկ մյուսը՝ ծովի մեջ, տես... ծովը և  
լոմիչքն ինձ վրա նույն տպավորությունն են թողնում :

— Յես տում եմ ուղում դնալ...

— Դու աղոքեն ճանձրանո՞ւմ ես : Այսքան ժամա-  
նակ քեզ հետ վոչ մի տեղ չեմ գնացել, իսկ այժմ դու-  
ճանձրանո՞ւմ ես առաջին խոկ որիր : Գոնե չնչիր այս  
մաքոք ողը : Զգո՞ւմ ես ծովի յուրահասուվկ բուր-  
մունքը :

— Ամեն ինչ գտում եւ տեսնում եմ... բայց յես  
մի քեզ... չգիտեմ, թե ինչ եւ ինձ հետ մըստարիում :  
Դնանք տուն...

— Բայց և այսպես գիշերը շատ լավն ե...

— Դու, կարող ե, բանաստեղծ ել ե՞ս :

— Մի ժամանակ գրում եյի, այո, բայց հետո  
թողեցի...

— Հետաքրքիր և միքանիսը կարդալ...  
— Հուշատետրումս կար...  
— Խակ դու հուշատետր սրահո՞ւմ ես :

Այս հարցին Սարդարյանը չպատասխանեց : Նա  
խկույն վերցրեց թիերն ու թիսավարեց : Ռայխանին  
թվաց, թե վիրանց մի վտանգ և սպանուամ : Նախակին  
յերկու վիտքմում ջուրը վիրավորում եր, նաև վայրը  
ճոճմում... Այսդ հանկարծակի վրափխությունը կատար-  
վեց իր հարցից հետո... ի՞նչ պատահեց :

Թիերի ճողիյունի հետ լույսը եր Սարդարյանի  
արագացած չնշառությունը : Ռայխան տեսնում եր,  
թե ինչպես ամուսնու ձեռքերը ծաղիում են, հանկարծ  
ճոշմում... Նա շտաբում եր :

— Ի՞նչ պատահեց քեզ :

Վոչ մի սրատափիան : Կարծես իր մոտ քիչ առաջ  
նստած ուրախ, վիխիսովիայով, կատակող Անդրեյը  
չեր, այլ կողմնակի մի մարդ, վոր նրան շտապ ափ  
եր ուղարկում հացնել : Շտապիկը թիերը ջրի մեջ չե-  
մին խրսխամ, քայլում ելին ջրի մասկերեն լույթին...  
Նրանք կարծես, վերսահաս փոթորկից ելին փախ-  
չում...

Ռայխան նորից շանկացավ իմանալ այդ շտապու-  
ղականության պատճառը, բայց վոչինչ դուրս չե-  
կամկալ : Այսպես եր Սարդարյանը : Նա իր սրտում շատ  
քանիք ուներ, վոյ չեր բաժանում և վոչ մեկի հետ :  
Դրանցից շատերը մատցինել են վր հուշատետրի մեջ :  
Նա կյանքում անկեղծ է վերաբերվել միայն այդ  
տեսողի հետ : Սակայն մի տարրուց ավել ե, ինչ նրա  
մեջ վոչինչ չեր դրել : Անդամ նա մոռացել եր տես-

րի գոյսության մասին : Հանկարծ , միայն հանկարծ հիշեց , վոր Մոսկվա դնալու նախորյակեն մի քանի գրքերի հետ այդ տեսքն ել ավել եր Լիզային : Իր անհյակում նա չուղեց թուղնել , վորովհանառն , ով դիտե , ինչ կարող ե պատահել . . . Հետը տանել չեր կարող : Տանը հորեղբոր յերկու յերկու վորովհանելոն վորովհանը ևին ապրում , վորոնց վոչինչ չեր կարելի վորովհանը : Միան յելքը Լիզայի մոտ թողնելն եր : Հուշատեսուրը կարկապել եր մի չարք ուրիշ գրքերի հետ յեղ վաստահել , վոր Լիզան յերբեք չի բանա այն : Այն ժամանեակ իրավունք ուներ Լիզային վաստահանալու , ով գիտեր , մե այսպես ե պատահելու : Ո՞վ գիտե , գուցե Լիզան արգեն վայել քրքրել և այդ կապոցը , վտել հիշատակարանը , ամեն լինչ իմացել : Այն ժամանեկ լիներ՝ դրանից վախենալու վոչինչ չկար : Այժմ Սարգարյանի սիրու գող ընկալ :

Հասան ամի : Սարգարյանը մի բուռ թղթարքած հանեց , նախակի տիրոջը տվեց : Զհաշինց , չիմացավ վորքան եր վճարածը : Իսկույն տեղում չուռ յեկալ ու վերցրեց Ռայխայի թեկը : Բայիսան նրա հետեփեց հասնել չեր կարպանում :

— Ի՞նչու յես այդքան շտապում . . .

Իմաստես , ի՞նչ պետք ե անելոր հիմար , ի՞նչու յեր շտապում : Յեթե ուղիղ զնա Լիզայի մոտ , շատ անհարմար բան կատացվի : Այն կապոցն այնուեղից դուրս բերելու համար ուրիշ միջոց ե հարկավոր : Պետք ե հարմար առիթ վիճակել և յերբ Լիզան տանը չե , մորից մի կերպ ստանալ : Բայց ինքն ինչպես յերեկու նրա բարի մորը , ի՞նչով արգարանս , վոր նրա աղջկանը թողել է , ուրիշի հետ կապվել . . .

Մինչեւ նա մտքերի այս կծիկն եր քանդում , արդեն տուն հասան : Դիշելը յերեկոյի պես հանգիստ եր . . . իսկ Սարգարյանի հոգին վորովհարելում եր : Կրոգումանյանի նկատմամբ տարած հաղթանակը նրան յեթերը բարձրացրեց , նրա ներսում չտեսնված կրակ վառեց : Բայց այս դեպքը սառը ջրի պես մարեց այդ կրակը :

Ռայխան աղջած եր : Նա նոր միայն համգանում եր , վոր մինչ ամուսնությունը Սարգարյանին չեն ճանաչել : Լավ ե աղջած , վոր մի որվա ամուսնական կյանքը մարդկանց ճանաչելու տեսակինից տասն անգամ ավելի արժե , քան յերկու տարի նրա հետ մանդալը , ժամանակ անց կացնելը : Տարորինակ հանդիսավոր քաղաքային կայարանում , այդ որվա ծրարի պատուելը , ամուսնու ել ավելի տարորինակ ուրախությունն ու հանկարծ մտքերի մեջ խորասուղիւթեալ , — այս բոլորը շատ խորհրդավոր եյին թվում նրան :

## VI

Ռայխան վորոշեց ծանոթանալ իր նոր հարեվանների հետ : Առավտյան քակում նա հանդիպեց սեղ սաթի պես մազերով միջահասակ մի կնօջ : Կնոր բարձրի տաշտից հանում եր արդեն ըլացած շորերը , թոկից կախում : Թոկի կամացուկ որորվում եր : Կնոջ թեվերից գոլորչի յեր բարձրանում և արելի տակ ծիածանի գույն ստանալով՝ չքանում : Մինչև թո-

կի կեսը նու շորեր կախեց, կեսում սկսեց չորս կողմէն նայել: Նրա ձեռքի տակ յեղած շպիլկաները վերջացել ելին:

— Հարեւանուհի, յեղեք բարի, մի քանի շոլիկա տալիք, — դիմեց նաև Ռայխային:

— Խողոված, — առաջ Ռայխային և անից շոլիկանից մի ամբողջ շարան գուրս բերեց:

— Շատ շնորհակալ եմ: Մեր մարդին հազար անդամ տանը եմ «Քեր, բեր»: Միշտ գալիք առ, ասում «վայ, Լեյլա, մոռացա, մյուս անդամ»: Յես եղ ես վերջին տարիներս բաղարի յերես չեմ տեսել: Ինչո՞ք դնամ, ամենն ինչ իրենք տալիս են, առենք, վոր չտան ել, անից գուրս յեկողը չեմ, յերեխասիրոջ բանն ես ողես և լինում...

— Քա՞նի՞ յերեխա ունեք:

— Վեց:

— Վեց յերեխա՞ . լուկ մոքքիկ անյակում ի՞նչպես եք բնակվում, — զարմանքով հարցրեց Ռայխանին:

Լեյլան ուսերը վեր քաշեց, հայացքը դեմքին հառեց:

— Բա ինչ անենք, խոստացել են նոր քնակարան տալ:

Ռայխան Լեյլայից հարցրեց մյուս կեցվորների մասին: Բանից պարզվեց, վոր արդ բակում վոչ մեմին ել Ռայխայի ամուսնու հետ հարեւանություն չի արել:

— Նա մենակ մարդ առ, եր զործին, իրեկունն ուշ գալիք առ, մանում տեղը, առանիսով վաղ դորս դաշիք, դնում...

Լեյլայի ամուսինը՝ իմանլարը, վոր յերկար առ ըլիներ Բիբի-Հեյրաթի նաւթահորերում եր աշխատում, նույնպես Սարդարյանին չեր ճանաչում: Բակի մյուս ապրողներից մեկն ատամնաբուժուհի յեր, յեղ լեյլան պատմեց, վոր նա յերեք մարդու յե գնացել և վոր ատամնացավով հիվանդի պատրվակի տակ նա ուրիշ հաճախորդներ ել ուներ: Լեյլան պատմում եր, վոր նմանորինակ հիվանդներն ատամնաբուժուհու մաս սովորաբար մնում եյին մինչև լուսաբացը: Դարձանի չմնաց և այն, վոր մի անդամ նույն բակում ասլրուղ Սիրանի և ատամնաբուժուհու միջև կոխի Ֆեր յեղել: Պատավ Սիրանը միքանի անդամ նկատել եղ, վոր իր միակ վորդին՝ չոփեր Վաղոն, բըժըշկուհու տանում և, ով գիտե, ուրբ: Նա նկատել եց, վոր միջտ, յերբ Վաղոն զիշերներն ուշ ելր տուն գալիս, վոր հետ բերում եր բժշկուհուն: Պատավը կառկածել եր և մի սուսիս նրան ոմբողջ բակում խայտառակ արել:

— Ի՞նչ ե, զուցե նպատակ ես դրել իմ տղի հետ կապվել... Գլխիցդ հանիր, նյաչառ, նա քեզ ընկեր չի... Դու հազար մարդու հետ կյանք ես անցկացրել, հիմա յել յերեխիս ես վչացնում... Յերկաթով քեզ դադել և հարկավոր, նյաչառ, աշխարհում ել հարդ չմնաց... — ասել եր պատավը բարձր, վորքան կարող եր բարձր ձայնով:

Լեյլան մեկմեկ պատմում եր բակում պատահած գեպերը: Նա մոռացավ պատմել վոռկերիչ Շտեմերի կնոջ և հողային աշխատանքների կապալառու Սանթուրի կապի մասին: Այդ կապի մասին վոռկերիչ Շտեմերը յերբ խմացել ե, իրը թե բոլոր տեսակի

թանգարժեք մասանիները, շղթաները, վզկապնեցը  
վերցրել եւ, հետո թե՝

— Գնա նրա մոտ, մի դուցե նա ինձնից հա-  
րուստ ե, քեզ լավ կտահի... .

Բայց կենը նրան սպառնացել ե, ասել՝ կդնա կեն  
բաժին, կբանդատվի: Գանդատի անունը՝ լսելիս,  
Շահմըն փրկ թե կնոջն ասել ե.

— Ինչ ուզում ես արա, միայն թե գլուխս մի  
ցալցնի եւ գանդատներովդ, պատարանովդ...

Լեյլան միայն յերեք ընտանիքի մասին վոչինչ  
չասաց: Դրանց թվում՝ իրենց, Սարդարյանի և մեկ  
եւ մի թիթեղագործ բանվորի ընտանիքի մասին:

Ռայիսան գարմանում եր կեյլայի սուր հիզղու-  
թյան վրա: Այրէ հանդեպումից հետո նրանք աստի-  
ճանաբար բարեկամացան: Ռայիսան շատ հարվա-  
դեալ եր նրան վորեե բանի համար դիմում; բայց  
ինքն ամեն կերպ ոգնում եր: Բայց հարկանուհու  
միջոցով Անդրեյին ավելի լավ ճանաչելու փորձերը  
ևս անհաջողության մատնվեցին: Պարզվեց միայն մի  
հանդամանք, այն, վոր Անդրեյն իր ասլրելու տեղումն  
ել ինչ-վոր անձանաչելի մարդ եր մնացել...

Մի որ կեյլայի հետ այդ կարգի խոսակցություն-  
ներից հետո Ռայիսան ճնշող արամագրությամբ  
տուն մտավ, վերցրեց թուղթը, հորը դրեց.

«Այրելի հայրիկ:

Ինչ խոսք, վոր հարասիլ ջերմաշունչ ե:  
Ինչ խոսք, վոր այս յերկիրն իր հետաքրքիր  
կողմն ունի: Բայց... այն որից, յերբ վոտք  
դրէ այս կողմերը, սիրուս ել, ինչպես թուղուն,

դրի վանդակի մեջ: Ամեն ինչ կարգին ե գնում,  
մեր ամուսնական կյանքում արտաքու կարգի  
վոչինչ չկա:

Եսո նոր եմ զգում, թանգարին հայրիկ, թի-  
կորքան պատսսխանառու բան ե կյանքդ մի բոլո-  
րովին անձանոթ մարդու հետ կապելը, յես այդ  
նոր եմ զգում: Արդյոք, դղում եմ, վոր այլքան  
շուտ կապվեցի մեկի հետ, վորին այնքան ել լավ  
չելի ճանաչում...: Ի՞նչպես պատսսխանեմ այդ  
հարցին: Ինձ գոնե թվում ե, վոր կատարածու-  
քայլը գովասանքի արժանի չե: Ճիշտ ե, յս կար-  
ծես թե գաղարում եմ կարիքի մասին մտածելուց,  
բայց ի՞նչիս ե պետք այդ արտաքին անհողու-  
թյունը:

Այնուամենայիւլ մի կարծի, վոր գրու-  
թյունս չափազանց վատ ե: Խնդրում եմ իմ մա-  
սին չմտահոգվես: Յես ապրում եմ, կարելի յե  
ասել, վոչինչ: Դու դրիր ձեր մասին: Արդյոք,  
կարողանում ես բոլոր կարիքները հոգալ:

Բարեներով՝ ձեր Ռայիսա:

Նամակը ծրարի մեջ դնելով, Ռայիսան յերկար  
խորհում եր՝ արդյոք, արժեօն նման նամակ ուղարկել,  
անհանգստացնել հորը, վորն առանց այն ել իր այլ-  
քան շուտ ամուսնանայուն դեմ եր: «Վոչինչ, թող  
իմանա...»:

Բայց ծրարած նամակը նա վերցրեց և անվրդուլ  
ակղուտմ յերկու, իսկ հետո մի քանի մասի բաժանեց,  
ուղա կտորներն ավելի մանրացնելով, մոխրամանուց  
այլից: Նա վորոշեց մինչեւ այն կնոջը տեսանելը հո-  
րը նամակ չգրել: Երան թվում եր, վոր այդ ինը-

Հըրթավոր դեպքի հետեւում թագնված չառ բան կա:

Ռայխան Լելայից հարցվեց կայսրան յեկամծ կնոջ մասին, բայց նա վոչինչ չդիտեր: Գիտեր միայն, վոր մի քանի անգամ Անդրեյի տունը թիստեմ մի աղջկէ ե յեկել, իսկ թե ով ե նա, առաջին և հայտնի:

— Ինչ կերպ ել լինի, յես նրան կը տանեմ...

Այն փոքրիկ տղան չեր յեկել, վորսկեսդի նրանից հասցեն խմանա, ստիպված այդ կնոջ՝ Լիզայի հասցեն խմանալու այլ յելք պետք եւ պորտնել: Բոլորովին զարտուղի կերպով նա այդ խմացավ իրենից՝ Անդրեյից: Անդրեյն այդ հասցեն տալով, չնայած իր խորամանկությանը, չկարողացավ հասկանալ, թե ինչ չտմար ե...

Ռայխան գողալով այդ հասցեն թղթի մի կտորի վրա գրեց, վարպետների ջնուանա: Նրան թվաց, թե գողովածուն և անոնմ, այնքան անսովոր եր այլպիսի բաների...

Բայց ամբողջ հոգով նա ձգտում եր խմանալու այն, ինչ իրենից թագցմել յել թագցուում և: Ինչ կերպ ել ուղում եւ լինի՝ միայն թե խմանա:

## VII

Պատուհանի տակով հագար ու մի մարդ և անցնում: Ամեն մեկից մի կամ յերկու բառ ստար արշավու նման սրատուհանավ ներս և թուչում և անկ-

ոնում: Լիզան վակուց սակարել եր այդ ոտնք, առավաճանալի, կը կուտար խռաքելին:

Մի որ առավոտյան նրան արթնացրեց ոյսուղայիւների ձայնը:

— Այ թե հրանի թութք... առավոտովայ թութք...

Ամեն ինչ փոխվեց, սակայն այդ ձայներն ելի նույն են ու նույնը: Միշտ ել այդ ձայները Լիզային չի չեցնել ելին տալիս իր մանկությունը: Այն ժամանակ ել միրդ բերողներն այդպես խանդով կանչում եյին, գովարանում իրենց ապրանքը: Լիզան փոքրիկ զամբյուղը վերցրած, զուրս եր վազում, ինչքան ցանկանում, զնում եր: Խաղողի վաղկուրզնալին ողում պահում եր, բերանը ներքելից մոտեցնում ու հատիկները մեկ առ մեկ պակուում... Խաղողի հյութի պես քաղցր եր նրա մանկությունը:

Տարիները «թութ» կանչող դյուղացու ձայնի պես յեկան ու անցան: Նոր կարդիք տանզանիցին, մարդու սկսեցին նոր խոհերով սրպել: Վորոնը են, սակայն, իր նոր խոհերը: Նա միշտ արգանդում աճողի մասին եր մատածում: Զե՞ վոր նաև հոր կարիք եւ զգալու, ինչպես հասկացնել, վոր հայրը թողել ե իրեն, մի ուրիշի հետ կապվել: Այսպիսի խոհերի մեջ վորքա՞ն եր ցանկանում Անդրեյին տեսնել, խոսել հետը: Յեթե նա չի խղճում իրեն, զոնե թող խղճա նրան, վոր աշխարհ պիտի գտ, սրպիք, մհծանա:

Մյուս կողմից ի՞նչ կասեն մարդիկ, վորոնք ճանաչում են Լիզային...

— Ոչ, ծանր և աշխարհիս բանը, — ինքն իրեն ասաց նա, վերցրեց մի դիրք, վորսկեսդի կարդա, սակայն վոչինչ դուրս չեկավ, տառերը մեկմեկու հետ

միացած սև դժեր եյին կազմուամ : Ես չկարողացավ  
թափանցել գեթ մի նախակասության իմաստի մեջ :  
Դիրքը նա չպատեց , մոտեցավ կապույտ շորով ծած-  
կած զրասեղանին , ջղայնությամբ մի քանի տող բան  
գրեց , կարդաց . . . իր զրածն ել , ինչպես հարկին և ,  
չհասկացավ : Բայց և այնպես ծրաբեց , դրավ մի  
կողմ : Յերեկոյան մի փոքրիկ տղայի կանչեց իր մոռ .

— Արտուշ ջան , դու ճանաչում ես Անդրեյ քե-  
ռու տունը :

Արտուշը կլիսով հավանության նշան արեց :

— Այս թուղթը , Արտուշ ջան , կտաս Անդրեյ  
քեռուն :

Արտուշը ծրաբը վերցնելով ուղում եր վաղել ,  
ռայց Լիդան նրան կանոնեցրեց :

— Լավ , յեթե մտու կը ին լինի , չտաս , կկանչես ,  
դրսում կտաս . . .

— Լավ , լավ , — սպասասխանեց փոքրը և աշխու-  
ժությամբ վաղեց դեպի փողոց :

Լիդան սրտատրով սպասում էր Անդրեյին : Յերբ  
Արտուշը վերաբարձավ , հարցրեց նրանից :

— Մենակ ինքն հ՞ր :

— Զե , մի կին ել կար , ուրիշ տեղ եյին գնում :  
«Կլարկա՞» , թե կլաստով , ուն կողյութեա՞» , — ինքն  
իրեն մտածում էր Լիդան : «Յեթե կարդա , անշուշտ  
կլպա . . .» : Յեկ սպասում էր : Հենց վոր միկուլը  
ծեծում էր , նո վեր եր թռչում , սիրաը սկսում էր  
արագ խփել : «Ահա . . .» , — մտածում էր և վաղում  
դեպի գոտուք :

Հետավելայիվելով , նա սպասում եր հետեւյալ ժա-  
մին , բայց հետեվյալ ժամն ել առաջինի պես խաբու-  
սիկ եր լինում : Ճարահատյալ նա նստում եր պատու-  
հանի մոտ ու դուրս նայում : Նա անցորդմալին հա-  
ձախ շիոթում եր Անդրեյի հետ : Այդ պատճառով  
նրա սրտի բարախումներն ալելի եյին արագանում ,  
արյան ուժեղ շրջանառությունից մարմինը տաքս-  
ում էր , դլուխուր տաքսությունից ծանրանում :

Նամակն ուղարկելուց մի քանի որ հետո Լիդան  
նույն տեղից փողոցին եր նայում : Փողոցում մի կին  
Լիդայի ուշադրությունը դրավեց : Անկյունից դուրս  
դարձով , նա գլուխը բարձրացրած , տների համարներին  
եր նայում : Կինը շատ պարզ եր հաղնված : Բայց այդ  
պարզ շորերի մեջ ել նա զեղեցիկ եր : Հասնելով Լի-  
դայինց տանը , ոտար կինը դլուխուր բարձրացրեց , նա-  
յեց դարբասի վրա փակցրած համարին՝ ներս մտավ :  
Քիչ հետո դուռը ծեծեցին :

Ներս մտավ ոտար կինը , բարեկեց : Լիդան լարում  
եր իր հիշողությունն իմանալու համար , թե վորտեղ  
եր նրան տեսել :

Ծանոթ դեմք եր : Մի վորենե տեղ տեսել եր այդ  
կնոջը : Մի քանի վայրկյան , և նա հանկարծ հիշեց ու  
ցնցվեց : Ասես մեկի հրամանով Լիդան մատը մեկնեց  
դեպի դուռը :

— Ահա ! , հետ զնացեք , անումոթ , զնացեք . . .

— Քաղաքացուհի , դուք դեռ չդիտեք , թե յես  
ինչ նպաստակով եմ յեկել :

— Ո՞ւ չեմ ուղում ձեր նովատակը, զուք ստոր  
եք, ձեր նովատակն ել ստոր կլինի, զուք դեռ հա-  
մարձակություն եք ունեցել այստեղ գալու...

Լիբան կանդնած տեղը դողում եր: Նրա աչքերից  
ասես հրո կայծեր եյին ցայտում: Թշում եր, թե այդ  
կայծերն ահա, ահա կըորբոքին ու մի ահանդի հրդեհ  
կըստին:

— Գնացե՞ք, զնացե՞ք, հեռացե՞ք, — այս անդամ  
Հուսահատ բացականչեց Լիլան:

Նրա ձեռքերը ծալվեցին: Թուլացած վայր ընկավ  
աթոռի վրա և սկսեց լսել:

Ռայխան վորոշել եր դիմանալ ամեն ինչի, մի-  
այն թե պարզել վործը:

— Սպասեցեք, զոնե խմացեք ինչի համար եմ յե-  
կել, ինչ պետք ե ասեմ...

— Դե, լավ, ասացեք, — արցունքների միջից  
չշնչաց Լիլան, — ասացեք, բայց դուք ինձ խելադար  
եք դարձրել: Յես այժմ այս աշխարհում մ' կամ և  
չկամ... ինդրեմ, ասացեք... ասացեք, ի՞նչ եք ու-  
դում վեճնից...

— Ինչու յեք ինձ վրա բարկանում, յես չեյի  
ամուսնանա, յեթե իմանայի, վոր դրանով մի ուրի-  
շին դրախտացնում եմ: Բայց այնտեղ՝ Մոսկայում,  
ո՞վ կարող եր ինձ հայտնել, վոր իմ այդ քայլով  
այս հեռավոր յերկրում մի ուրիշի սիրո կոտրում  
եմ... հարցնում եմ, ո՞վ կարող եր ասել... իսկ  
Սարդարյանի հետ յես պատահմամբ եմ ծանոթացել:  
Ինձ ծանոթացնողը, Նավթգլխարչության ինժեներ

Եկուղնին, ձեր մասին մի խոսք անկամ չառաց, ի՞նչ-  
ով կարող եյի իմանալ...

Բայցիսայի մեղմ, թափ ձայնը, համազեցուցիչ  
խոսակցությունը Լիլային սափակցին, ասածին բովենե-  
րի թշնամական գիրքը փոխել: Առաջին խոկ նախադա-  
սությունից նա կարծես զլաց, վոր այդ կինը յեկել և  
վոչ թե խանդից, այլ խոճից զրոված:

— Նա մինչև հիմա յել ինձնից թաղուն և պահում  
այն, ի՞նչ ձեր յեղեկուսիդ մեջ ե յեղել:

— Այս<sup>o</sup>, չի<sup>o</sup> ուղում ասել:

— Այս<sup>o</sup>, չի<sup>o</sup> ուղում...

— Ինչ կա վոր, յերեվի ամաչում ե, վոր ինձ  
նմանաղջկա հետ կապ ե ունեցել: Աստված յօմ, ինչ-  
քան յիս ստոր մամ յեղել, անորհուք... Ռւրեմն ամա-  
չում ե անունս տալուց: Ասկա ի՞նչ արեց յօմ նամակը,  
վոր կիրակի որդի ուղարկել եցի: Կարդաց:

— Վոչինչ չառաց: Ավելի ճիշտ նա պատռեց, զեն  
զցեց:

— Ո՞, սրիկա՛, թունախոր ոձ... Դեն ձգե՛ց, չկար-  
դաց... Լա՞վ եյին այն ժամանակները, միշտ չորս  
կողմու պատույտ եր գալու, հիմտ հանկա՛րծ վասա-  
ցա... Մաշեց յօմ հոգին...

— Դուք այդքան միք տանջի ձեղ... Յես յեկել եմ  
խմանալու՝ ինչքան ժամանակ եք ապրել, ինչպես են  
հյուսվելել: Ձեր հարաբերությունները... Պատմեցեք  
մարդամասն:

— Ե, ի՞նչ պատմեմ, ամեն ինչ պարզ է, — իսո-  
րը հասաչելով պատասխանեց Լիլան:

5—Ծովալսորշում

Ուայիսուն նըստ ձեռքը բուհելքով, խնդրոց.

— Նու, պատմեցեք, զա չո դժվար չե... Պատմեցեք ձեր հարաբերությունների մասին:

— Ամեն ինչ՝ ամեցավ, — տիսուր սասաց էխան, — յես ափսոսում եմ, վոր նրա մանուկն ահա այսուղ աճում ե:

— Ի՞նչ եք ասում:

— Այո՛, յերգուրդ ամիսն ե: Նա կտեսնի, մոր ուրիշի յերեխաները մորից բացի մի հարազատ ել ունեն, վորին հայր ևն կուցում, վակ ինքնն ո՞ւմ պիտի հայր կոչի... Յես սարսափում եմ այլ մտքից և չդիտեմ կապրեմ, արդյոք, կընամ մինչեւ այդ...

Ռայիսան այլես հանդիսում նստել չեր կարողանում: Հաղպաներ տառնուղ առված մարդու նման նա հայացքը մի վրեց մյուսներ մը մոխազդում, անհանգիստ շարժումներ կատարում:

— Յես նզանից վրեժ կհանեմ, հրեշ, ուրիշն խորել ե լինձ...

— Այո՛, դժվար ե, շատ դժվար խարսխած զբության մեջ լինելը: Յես կյանք մանելիս յերբեք, յերեք չեմ կարծել, վոր այլպիս վկանի, վոր ամուսնական կյանքս այսպիսի դասնությամբ կսկսի... Յես հիմա կարող եմ ձեղ պատմել, թե ինչպես ոկալեց այլ բոլոր:

Հաղին լսելի ճայիռով նա պատմեց այն բոլորը, ինչ իր և Սարդարյանի մեջ յեղել եր: Յերբեմն այս կամ այն դեպքը հեշելիս նու վողմորթում եր, այինքան բարդում...

Ինչպես մշուշից հետո բացվում մն սորմեր, բարձրաւարդարիները, ցույց տալիս իրենց խմբական

լեռկ կամ կամաչափատ զեմքը, այլպիս ել այստեղ, իլղայի պատմածից, Անդրեյի զեմքն ավելի պարզ եր դառնում...

Լիդան պատմեց նաև իր պատանեկության մասին: Յեզ քանի մոտենում եր իր պատմության վերջին, այն ավելի հետաքրքիր եր Ռայիսայի համար:

— Խնդրում եմ, մի բաժակ ջուր տոլեք, — Լիդային ընդհատեց Ռայիսան:

Նա յերկու կում խմեց, հետո թե՝

— Շարունակեցեք, կոկորդս չորացել ե...

Լիդան դեռ յերկար ժամանակ պատմում եր:

— Թող այդպիս լինի. յես խարսխել եմ, բայց վրեժինութիր կլինեմ...

### VIII

Հեղափոխությունից առաջ քաղաքի յերկրորդական փողոցներից մեկի վրա յեր գտնվում ժամադրության վարպետ Ավագի աշխատանոցը:

Յածլեկ խանութի ճակատին փակցրած թիթեղի վրա գրված եր՝ «Փամացույցների նորոգում — ուղիղ մեխանիզմ». — Շահնազարպվ»: Դրվածի ակդրում յեկ վերջում՝ յեղուու ժամացույց եր նկարված, մեկը հոռմեական, իսկ մյուսն արարական թվանշաններով: Վարպետ Ավագի դործն անպակաս եր: Այսուղ նորոգելու ելին բերում այնպիսի ժամացույցներ, վոր վաղուց պիտի ե տեսն նեսովեյին: Բայց վորովհետեւ

հրանց փոխարինելու համար առիշտ չկրաքար, վարողակ  
մի կերպ համաձայնվում եր նորոգերու:

— Կարելի առ, վոչինչ, բայց շատ աշխատանք առ  
պահանջում: Վրեն ակի մի քար չկա, այ ծեր տները  
շենիի, սպ հո՛, մաղն եւ առջացած, վիճակը ժան-  
դուած... Ինչպես յերեվում առ ջրի մեջ եք քցել,  
վոր ևսպես խարսր առ զանել...

— Չե, վարողակ, յերեխան և ձեռքիցը վայր  
զցել...

— Հո՛, դե վոր յերեխան առ վելք զցել, աշխատ-  
անք շատ առջում, վրան մի կարգին քար  
չկա...

Այդ խոսակցությունները սովորութար վերջունում  
եին նրանով, վոր ժամացուցը մնում եր վարողակի  
մոտ: Պատրաստելու համար վարպետը ժամկետ եր  
հշանակում:

Խանութում հաճախորդների համար հատուկ մի  
տարուրեալ կար: Ժամացուցը պատրաստ եր թե  
վոչ, մինույն է, վարպետը հաճախորդին առաջար-  
դում եր հատել, «դրսի աշխարհի» մասին բանելը պատ-  
մել: Նա խանութից հարդարյուսում դեպքերում եր  
զուրս գալիս: Փոքրիկ խոչըրացուցը մի աչքին  
հաղցրած, նա հաճախորդին բազմաթիվ հարցեր եր  
տալիս: Սիրում եր խոսել քաղաքականությունից,  
նշանակոր մարդկանցից: Մի խոսքով իր հաճախորդին  
ել վարպետը ցանկանում եր ուսումնառիրել ճիշտ  
այնպես, ինչպես ձեռքի ժամացուցը:

Յեթե մեկը պատահամբ ասեր, վոր առնը հի-  
վանդ ունի, վարպետը կիմանար հիվանդության

պատճառները, առվողություննը, նույնիսկ հիվանդի  
ջերմաստիճանը: Մի խոսքով բժիշկը հիվանդության  
հանդամանքներով այնքան չեր հատաքրքրվում, վոր-  
քան վարպետ Ավաղը: Բոլոր հարցերը տալիս եր և  
պատասխանները լսում առանց գլուխությացուցից  
բարձրացնելու: Այսպիսով իր խանութից գուրս չդա-  
լով, վարպետը գիտեր, վոր նավթատերերը մերժել  
են բանվորների պահանջներն աշխատավարձի բարձ-  
րացման վերաբերյալ: Գիտեր, որինակ, վոր Բալա-  
խանու, ուրժագույնը վերջացավ բանվորների ոպային,  
իսկ Բերի-Հեյրաթում Միքաղելը վոչ մի կերպ զղիջնց:

Իր հաճախորդների մեջ կային, ինչպես վարպետն  
եր ապում, և քիթը ցից մարզիկ: Ամեն կերպ վար-  
պետը խուսափում եր արդարիներից պատվեր վերջ-  
նել:

— Մարդ կա, ովհանի հիմա շահի վող տաս, վոր  
մի քաղցր խոսք ասի, մարդ ել կա, լեզուն շաբաթ:  
Եղակես մարդու հոգին սրազը առ լինում, աչքերը  
պայծառ... Վասիկը են գետից, վորը վոչ խչչում առ,  
վոչ թշում, — խորիսաստ կերպով կրկնում եր վար-  
պետը:

Իր մշտական հաճախորդներից նա ամենամեծ սե-  
րը և հարգանքը տածում եր զենքի ինժեները Զատոն-  
ովին: Այդ մարդը վարպետի մոտ միայն մի քանի  
անգամ եր յեկել, բայց նրան վրա մեծ տպավորություն  
եր թողել:

— Աերը ժամացուցի շուշի նման բան ա: Այ՛,  
վերցրու ևս շուշին, մեկ մեջ ողակից, տես մանուշ  
ա՞, չի մանուշ չե՞... ևսքան շուշի մեջ պիտի ման  
պատ, վոր մեկը մանի... Մարդու ել հոգես, մարդու

սիրտն ել շատերին չի կողչում : Մարդուս սիրտը հա-  
ղաւին տեսնում առ, մեկի վրա կանդ առնում ...

Վարարեսի սիրտը կպել եր Զատոռնակում :

Մի որ Զատոռնակու ժամացույցը վարպետի մոտ  
բերեց մի վոսկեհեր, լուսաչյա աղջեկ :

— Ես ժամացույցը վո՞նց և լճոկել ձեռքի, — գլու-  
խը ժամացույցից բարձրացնելով, հարցընց վարպե-  
տը : Ա՛, Ալեքսանդր Միխայլովիչի աղջիկն ես, հա՞...

Մինչ վարպետը ծիծաղը գեմքին խսում էր, աղ-  
ջեկը մատը բերանում դրած աղահությամբ նայում  
եր ցուցակիղիում դրած վոսկե մատանիներին : Նա  
մատանիներից բացի, խանությում վոչինչ չեր տեսնում :

— Ինչ ե, գուրու ե դարձ՞ս :

Կատյան, —այսպես եր աղջկա անումը, —դժոխվ  
համաձայնության նշան արեց :

— Դե մատղ թեր, տեսանենք համապատասխան  
մատանի կա՞ , թե վոչ :

Կատյան իր ձեզմակ ձեռքը մնակնեց վարպետին :

— Ինչքա՞ն սկսիկ մատեր ունես :

Կատյան վոչ մի խոսք չասաց : Նա անչափ շփոթ-  
վել եր անսպասելի առաջարկից : Յերկար վորոնումնե-  
րից հետո վարպետին հաջողվեց մատանիներից մեկը  
հաղցնել Կատյայի ցուցամատին :

— Դե ; Ֆլ չհանես, հայրիկին կասես, վոր յես  
եմ նվեր սպիզ ...

Կատյան մնացել եր տարակումած : Չեր հալա-  
տում, վոր վարպետը կարող ե մատանի, այն ել  
վոսկե մատանի նվերել իրեն : Յերբ վարպետն ասաց՝  
«Քնառ», նա կրակածում էր, թիւմամ եր, թե կատակ

ե անում : Իսկ յերբ համոզվեց, վոր դա կատակ չէ,  
դուրս յեկալ, տաղեց վարպել :

— Աղջիկ, — հանկարծ յանց հետեւյից : Վարու-  
թին եր կանչողը :

— Աղջիկ, հետ արի այսուեղ :

Կատյան վաստ նախազգացումով հետ յեկալ :

— Դու վորտե՞ղ ես սովորում, — խոչորացույցը  
մի կողմ դնելով հարցրեց վարպետը :

— Գիմնազիայում :

— Հա՞ . . . Ասի հս սովորո՞ւմ :

Կատյային թվաց, թե վարպետի խելական նախ-  
առակը մատանին հետ վերցնելն է : Այդ սպատճառով նու-  
նորից աղահությամբ սկսեց դիմել ցուցամատը, վորի  
վրա պապզում եր խելական վոսկեն : Բայց և այսպես,  
նու վարպետին պատասխանեց .

— Թույլ չունեմ :

— Հա՞ . . . Այ դա լավ ե, դրքեր չա՞սո ունես :

Կատյան և պատասխանում եր իրեն ուղղած հար-  
ցերին և ահհամբերությամբ սպասում այդ տանջող  
հարցասիրության վերջին :

— Գրքեր չա՞սո ունես, — նորից հարցրեց վար-  
պետը :

— Շա՞տ :

— Այդ լավ ե, անշուշտ ուու դրքեր շատ կունե-  
նաս, չե՞ վոր հայրը ինժեներ ե, դրագետ, խելոք,  
լավ մարդ . . . Դու ինչո՞ւ մեր Լիդայի հետ չես ըն-  
կերակցում :

— Իսկ ո՞վ ե նա :

— Իմ աղջիկը, քեզ նշան մի աղջիկ, եպուց կըսառ,  
կծանոթացնեմ : Անդաման կըսառ, ժամը 12-ին նա

այստեղ կլինի: Հենց քո հասակին եւ: Հոր, դե զնա՞:

Մյուս որը նիշտ վոր Կատյան յեկալ եւ խանություն տեսավ իր հասակակից, սեվ աչքերով, սեվ մաղերով մի աղջկո, վորը մատներով խաղում եր իր հյուսերէ հետ: Կատյան խանություն պանդնած աղջկան բարեկամական մի հայացք ձգեց: Այդ հայացքով նու կարծես ասաց. «Ա՛, այդ գո՞ւք Եք...»:

Աղջկները չպասեցին, վորպեսպի վարպետն ինքն ծանոթացնի: Բարեկամաբարպ ժպտալով, միմյանց ձեռք մեկնեցին:

Դրամից հետո Լիզան ու Կատյան միմյանց հետ հաճախակի ելին հանդիպում: Նրանց ընկերության սկզբնական ըրջանն արհեստական եր թվում: Կարելի յեր կարծել, վոր այդ տարբեր ծառերի ճյուղերը յերբեք միմյանց հետ չեն միանա, յերբեք նրանց մեջ ետքական անկեղծ բարեկամաթյուն չի տաելծնի:

Հաճախ Լիզան Կատյայի մոտ ելր զնուամ, զրքեր վերցնում, կարդում: Վարպետը յերբ տանն եր վենում, աչքի մի անկյունով միշտ հետեւմ եր աղջկանը, ուրախանուամ... Լիզան իսկապես վորը ընդունակ աղջկներից եր: Նա չառ չուստ տալուրից ուռաւելինը, ընտելացան Կատյային յել նրա ընկերությներին: Իսկ յերբ Լիզան դնուամ ելր Կատյայի մոտ, Կատյայի հայրը ժպիտը դեմքին յերկուտիմ մլ հարցեր եր տալիս: Յերբեմն այնքան հարցեր ելին լինուամ, վոր յերկու ընկերությներն ել չելին կարողանուամ պատասխանել: Սովորաբար նման զեստերուամ Կատյայի հայրը՝ Ալեքսանդր Միխայլովիչը մի ռեփը ելր պատասմ եւ ասուամ,

— Ահա՞ , այստեղ վկանեք իմ հարցիւ պատասխանը, մարդկիլ իմելըն ասուծուց չեն տամասամ, բոլորը դրքերում եւ դրված:

Պատահում եր, վոր յերկու ընկերութիւները նստում ելին, կարդում, ամբողջ որը կարդում, մինչև վոր հարցիւ պատասխանը կգտնվի: Ալեքսանդր Միխայլովիչը կործի յեր գնում, տուն դալիս, որվա թերթերը նայում, իսկ աղջկները դեռ կարդում ելին...

— Նու, ի՞նչ դառավ, գտա՞ք...

— Արդեն, արդեն զիտենք, հայրիկ:

— Լավ, ո՞վ ե յեղել այն մարդը...

— Նազուենը. նու Մակեդոնացու նման ցանկացել եւ արիել յերկարդունուը: Բայց յես մի բան չեմ խմանում, հայրիկ, Ֆրանսիայուամ ինչպիսի՞ հող կա:

— Համարյա այնպիսի հող, ինչպիսին մեր յերկուում կա: Այսուեղ ել ցորեն, դարի, խաղող յեզ ուրիշ շատ հացահատիկայիններ ու մրգեր են բանում...

— Ինչո՞ւ նազուենն ուրիշի հողեր եր ուղում իւղել:

— Ե՛, սիրելիս, յեթե պետությունները խաղալ ապրեն, իրենց յերկուր րերքը կըսալարարի, կոկ այն, վնչ չի բավարարի, ուրիշը կդման: Բայց կյանքն ենակի ե տոեղծնիւ, վոր մեկը մյոււից ցանկանուամ եւ շատ ունենալ, հարցուատ լինել: Այ, մեր Բիբի-Հեյրաթում շատ արդյունաբերողներ կան: Նրանցից յուրաքանչյուրին, յեթե նապիթ հարկապոր լինի միայն ապրելու համար, ապա մի հորից տուացած նապիթը մինչև իրենց կյանքի վերջը բարձական,

ե : Յայց բոլորն ել ցանկանում են վոչ թե մի, այս  
շատ հորեր ունենալ : Հիմա ցամաքը քիչ ե, առանում  
եք, ծովն ել չորացնում ենք նրանց համար :

Աղջիկները չելին բավարարվում : Նրանք նոր  
հարցեր ելին տալիս : Ալեքսանդր Միխայլովիչը հա-  
ճախի եր պատմում ուրիշ յերկրների մասին, իսկ վեր-  
ջին ժամանակներս մկնեց ամելի շատ պատմել ծովի  
ցամաքացման մասին :

— Ուրեմն այնպես պետք ե անեք, վոր ծովում  
ել չուր չիլիլ, հա՞ :

— Չե, աղջիկս, ծովում ջուր շատ կլինի, մենք  
միայն նրա մի մասն ենք չորացնելու . . .

Վորքան ել Ալեքսանդր Միխայլովիչը մանրամա-  
սըն եր պատմում, չեր կարողանում աղջիկների հար-  
ցասկրությանը բավարարել : Ի՞նչպես կարելի յե ծո-  
վը ցամաքացնել : Աղջիկների վառվուն յերեվակա-  
յությունն անգամ այդ բոլորը պատկերացնել չեր կա-  
րողանում : Նրանք վորոշեցին մի անգամ ցերեկով  
դնալ ծովի ցամաքացումը տեսնելու :

Որը ջինջ եր : Յերկնքում ամպի կտոր անգամ  
չկար : Գարնանային արեւի կենարալ ճառագայթները  
շրջապատում ամեն ինչ վերակենդանացրել ելին,  
կյանքի կոչել : Ինչքան ել ծանր ու անտանելի լի-  
ներ կյանքը, այդպիսի որերին մարդու մեջ հարա-  
տեկ ապրելու զգացմունք ե առաջանում : Մարդ ցան-  
կանում ե միշտ ծծել այն ովը, վորն այդքան ջինջ ե,  
գարնանային զովությամբ շաղախախած : Ծերումներն  
անգամ, սորոնք սիաղուց մահվան դուռն են ծեծում,  
իրենց մեջ ապրելու ուժ են զուռմ : Յեվ մի պահ

թվում ե, իմ կյանքը վերջ չունի, վոր ամեն ինչ  
ահա արդ դարձնային որվա ովես դուրսկան ե, դմայ-  
լեցուցիչ :

Լիզան այդ տարին առաջին ան լում ճեղմակ դպիսու-  
հ ճերմակ կոչելիներ ել հաղել :

— Յես վախենում եմ կոչելներս փշանան, —  
կատայային դիմելով, ասաց նա :

— Զեն միշտաւ, յերեւի այստեղի ճանապարհ-  
ների նման սովորական ճանապարհ ե :

Նրանք յերբեք Բիբի-Ճելբաթում չելին յեղել :

Կատայայի մայրը՝ Աննա Վասիլեվնան ավելորդ  
չամաքնեց վերջին մոմենտին աղջկանը նախագու-  
շացնել .

— Կատայա, կմքահս, մի ավելորդ բան մը հա-  
գիր : Գարնանային որերը շատ խաբուսիկ են լինում . . .

Կատայան մոր առաջարկելինը յերբեք չեր մեր-  
ժում : Այդ որը մեայն առաջին անգամ առարկեց մո-  
րը .

— Մենք հիմա կդանք, այստեղ շատ չենք մնա . . .

Շուտով նրանք հասան, Բիբի-Ճելբաթ : Զարմանա-  
լի բան՝ Բիբի-Ճելբաթում սպասածից շատ մարդ  
կար : Այսուղ վոչ միայն մարդիկ, այլ աներ ել կա-  
յին : Տներն ել շատ նման ելին կիուայի հոր նկարա-  
գրած զյուղական խրճիթներին : Տները հավի վան-  
դակների ովես դրվել ելին սորալանջին : Նրանց պա-  
տուհաններն ել խկական պատուհանների նման չեն,  
այլ փոքրիկ անցքեր՝ ջարոված ապակիներով ու  
թղթերով ծածկված : Պատշտամբների պատուհանների  
ջարոված ապակիների տեղ թիթեղ ել խկական : Յու-  
րաքանչյուր պատշտամբից մի խորոշակ եր միւռում . . .

Զարմանալին այն եր, վոր փոված լվացքի մեջ սպիտակեղենն շատ քիչ կար:

Տների առաջն անանցանելի ցեխ եր: Այսու մի վորքիկ ազջիկ գուրս յեկալ տնից, վաղեց փողոց: Ազջիկը աշխուժորեն թռչելուում եր լճացած ջրի ու ցեխի մեջ ընկղմված կղմինդրի կտորների ու քարերի վրայով: Զգիտես վո՞ր անկյունից գուրս յեկալ և ազջկանը հետեւեց մի քսոսու շուն... Ազջիկը մտավ հարհվան սունը, իսկ շունը շուռ յեկալ և նայեց կատյալի ու կողմը:

— Նա հիմա մեզ վրա կհարձակվի, Լիուա:

— Հաղիվ յիբեն և սրահում, ուր մնաց, վոր մեզ վրա հարձակվի: Նա կուզեր, վոր մի կտոր հաց տայինք, բայց ախտոս չկա: Տես, պոչը շարժում ե...:

Արեի պայծառ շողերն այլիլի այլանդակում ելին այդ թաղը, վորովհետեւ պատկերն այլիլի սրարդ ելին դարձնում: Գիշերները, դոնեն, այդ թաղի այլանդակ տեսքը թաղվում եր խավարի մեջ: Այդ թաղից թեթել քամու հետ մի տեսակ անախորժ բուրմունք եր դալիս, քթախոտի պես դրդում աղջմինդրի հոսառությունը:

— Յես զարմանում եմ, թե մարդիկ ի՞նչպես են ապրում այս կենցոյի մեջ,—զլուխի թափահարելով առաց կատյամ:

— Ճար չունեն, սովորում են, — հորից սովորած բառերով պատասխանեց Լիզան: — Մեր զլուխում մի աշակերտ կար, վորն այստեղ եր ապրում: Քաղաքում ապրողներն ու շանում ելին դասերից, իսկ նա բոլորից

չուտ եր զալիս և բոլորից ել լով եր սովորում: Ի՞նչ են պատմում նրա մտախի: Բոլոր առարկաներից հինգ եր ստանում... Նա ինձնից յերկու գասարան բարձր եր. ախ, ի՞նչպես եր նրա անունը... Բնարն ել, յերիտերյիր, չէչոտ եր:

— Նա հիմա չի սովորում:

— Զգիտում այժմ սովորում եւ, թե ուղիւ գործի յի: Նա միշտ մի լուս չեր հաղնիում, յիշելի կարիքածություն կը սովորում:

Շուտով նրանք ուրիշ նյութի անցան: Բայց Կայան խելույն չկարսպացան մտանալ Ավույլի սրարժածը: Ի՞նչպես կարող և այլպիսի տեղն ապրողը հինգ ստանալ: Պողիցմերատերի սուման հարդի բողոքը առարկաներից հինգ եր ստանում, այն ել, իհարկե, հոր խաթրու համար: Նրա մտախն սոսամ ելին, վոր յեթի ուրիշը լիներ, յերբեք ել չեր ստանա: Իսկ այսպիսի տեղն ապրություն, բանվորի սովա, և բոլոր առարկաներից հինգ եր ստանում: Շատ զարմանալի յի, — մտածում եր կատյամ:

Եերկու ընկերու հինգ արքեն հորերի աշանքով ելին զնում: Հորերում ժելոնկաները բարձրանում ելին, հետո հանկարծ բացվում, և կանաչապուտն նավթը թափվում եր յերկաթից պատրաստած լայն կիսախողովակների մեջ: Նավթը վրավում եր ու անողմուկ հոսում: Ամեն անգամ ժելոնկան բարձրանուիս կամ ինելիս, յերկաթալարերից հյուսած հասութություն ճռնչում եր, կարծես զժողովում լիբ ծանր:

Խառաւնքից : Փորձող մի քանի հորերից անընդհատ ժամանել ելին լսվում .

— Արա բաց թող ե' ...

— Աչքերդ չե տեսնո՞ւմ ...

— Ի՞նչ ես մրավում , քաշի ե' ...

Այդ ձայների , աղմուկի ժիորի մեջ ի՞նչպես են միմյանց համախում : Վոչ մեկը չի մաքրում իր ուսներին , վեշչերին կողմած կեղղուը , ցեխը : Տների առաջ ցեխ , անելքի ներսը կեղտում՝ բարձրական չե , այսուղ ել ցեխի մեջ եւ գտնվում : Կատյան խորհում եր , թե ինչու մարդկանց մի մասն այդպես և ապրում ե վոչ այնպես , ինչպես վրձնիք ...

Ընկերուհիները զգուշությամբ անցնում եյին խոռովաճախերի , այս ու այն կողմ թագիթաված պատրի կտորանքների կողքով : Լիզան ըրջազդեստի վեշերը վեր եր բարձրացրել ճիշտ այնպես , ինչպես գետով անցնող կանայք : Նա վախենում եր , վոր ըրջազդեստի փեշերը կկպչեն ժամուռած իսողովակներին , կամ նորթոտ սյուներին :

Կատյան ուշադրություն չեր գարձնում վոչ չորերի և վոչ ել ընկած խողովակների վրա : Նա շտապում եր իմանալու , թե ինչպես են հսկա լեռները բերում թափում ծովի մեջ , վորովեալի այն ցամաքը : Յեվ նա մտքում հաշվում եր այն հսկայական թիվը կաղմող քառակուսի մետրերը , վոր հարկավոր են ծովը ցամաքացնելու : Ինչքա՞ն հող եր հարկավոր , վորպեսդի ծովն խսկապես ցամաքիցի :

Քիչ անց նրանք արդեն ծովակիումն եյին : Սակայն , սա ի՞նչ ե , բոլորովին չի յերեվում , վոր ծովայն , սա յամաքացնում են : Հարավայինին կողմում միայն մի բարժա յէ կանոնած , իսկ նրա մոտ՝ ծովակին , մարդկանց ինչ-վոր բարձրություն ե հարվաքին :

— Հայրիկն ա'յ , յերեվի հնատեղ կլինի և բուրում մեղ կրացատրի :

— Մեղ տեսնելիս կղարմանա , կուրսիսամա ...

Բարժայի մոտ խոնդած ամբոխի մեջ գլուխը վախթած մի մարդ եր կանոնած : Նա չեր խոսում , գլուխը ձեռքերի մեջ առած , վոտքերի վրա հաղիվ եր կանոնում : Նրա թերից բանած յերկու հողին տաքատաք խոսում ելին ու ստեղ-ստեղ ցույց տալիս վիրավոր գլուխը : Ճերմակ վախթաթանը կարմրով եր ներկ-վոր գլուխը : Ճերմակ վախթաթանը կարմրով եր ներկ-ված , ըստ յերկույթին վիրավորված դիմի վերքից ար-յունը շարունակում եր հոսկ :

— Այսինի գաղանային վերաբերմունք չի լի-նի . . . Մեղամորին հայրկապոր և գոտնել , տեղնուառեղջ սպանել , — ասաց մաքուր հագնալած մի յերիտասարդ :

— Ապասիր , սպասիր , չունչը քեզ պահի , եղաքես մի տաքանա , լավ մտածիր , թե ի՞նչ ես կոտրասում , — մեջ մտավ հասակավոր մի բանիոր : — Մեկին սպա-նելով աշխարհս դրախտ չես շինելու . . .

— Ի՞նչի համար քեզ ծեծեց :

Հասակավոր բանվորի խոսելու խաղաղ տոնը շա-տերին զողոեց : Աղմուկ բարձրացալ :

— Սպասեցիք , սպասեցիք , յես հալա մի խոսք չասած , զուք եստեղ հարսանիք ե՞ք սարքում , մի լոեցեք . . .

Վերադաշտութեածը խեղպված ձայնով պատասխանացր.

— Եւ՛ կտորի հաց ի ուսում, յեկալ՝ թե վեր կաց գնա բարժան։ Յես ել առի հացս ուսում, զնամ . . . Նա յել՝ թե եստեղ զաստնիցա չի, հետո չըեց . . . Յես ել՝ իլին, ել չեմ հիշում ինչու խորից . . . Ո՞յ, պատիւլս . . .

Կատյան ու Ավուն կամպնել մեխն քարի պիտ յեղ չառ լավ տեսնում էյին, թե կենարունում կանգնած մարդուն և թե նրան չութը խմբածներին։ Նրանցից վոչ մեխն առջիկների պիտ ուշադրություն չդարձրեց։

Հասակավոր բանվորը տված հարցի պատասխանաւուց հետո դարձավ մյուսներին։

— Տեսնում եք, ուրեմն մեկին սպանելով բան չի գուրս դա։ Մարդը 12 ժամ աշխատում է, բայց հաց ուստիլու ժամանակ չունի։ Հարկավոր մը, ուրեմն, մտածել, թե ուրեմն, մինչև յերբ ենք անսառների հման գործ անհլու։ Աւրեմն, հարկավոր և մտածել, վոր 8 ժամից ամել չաշխատներ, այսպես։ Յեթի մենք բոլորս մի քանի որ գործի գուրս չդանք, ուրեմն, մեղ ի՞նչ կարող են անել . . .

Հասակավոր բանվորից հետո ուրիշներն ել խոսեցին։ Քանի զնում, աղօնումն ասինքի յեղ չառամում։

Կատյան հավաքվածների մեջ մնառում եր հորը։ Բայց հայրը չկար։ Քիչ հետո յերեաց յեղ նա։ Նա դուրս յեկավ փոքրիկ տնակից, զնաց զեպի խըմբած բանվորները։ Մինչ նրա տեղ հասնելը, բանվորներից մեկը Զատոններուն ցույց տալով, ասաց.

— Ավելքունելը Միխայլովիչը նրան կարգին հայտ հոյեց, բայց դրանով ինչ դուքս կըս։ — Միջոցներ ձեռք կառնենք, անհոգ յեղեք, — բանվորներին մոտենալով, ասաց Ավելքունը Միխայլովիչը։ Յես կպահանջեմ, վորպեսպիս նա դուք կը հանովի։

— Հայրիկ, հայրիկ, — լոգեվուլած կանչեց կայտանի։

— Արանք վո՞րտեղից հայտնալեցին, ի՞նչու յեղ յեկել, — աղջիկներին մոտենալով, հարցրեց Ավելքունը Միխայլովիչը։

— Պապա, մենք յեկել ենք ծովի ցամաքացումը մեսնելու . . .

— Այսուեղ վոչինչ չկա, գնացե՞ք, զնացե՞ք տուն, հետո ուրիշ որ կգաք . . .

Կատյան ակնապիչ հորն եր նայում։ Հայրը յերեկը այլպես բարկացած չեր յեղել։

Աղջիկները յեկել ելին այսուղ արտասովուր մի բան տեսնելու, իսկ բանից վորտս և զալիս, վոր այսուղ վոչինչ չկա։ Նրանց համար թերես արտասովուր մեր բանվորների հուզմունքը, արնաշաղախ մարդը, վոր նրանց հուզմունքի պատճեռուն եր։

Իր կյանքում առաջին անգամ կատյան հորից իիսու վիրավորվեց։ Յերբեք, յերբեք նա այլպես անստարելը չի յեղել վեպի իրեն, և կատյան մտքում պատրաստվում եր հոր հետ հաշիներ անենելու։ Նա մտքում հոր հետ արդեն վիճարանում եր, այնովին քրաղներ առում, վոր հայրը պատասխան չի գըստ հում . . . Թող, թող միայն յերեկոյան տուն դա, կատյան զիտե, թե ինչպես միրժառու մինի։

Բանվոր Աղիյեղի ծեծիլը բողոքի միտինդի աւովիթ գործածավ։ Միտինդին միացան ծովափիկ նաև մաս-  
հորերի բանվորները։ Մինչեւ ուշ յերեկո այս ու այն-  
ուշ բանվորները համապատասխան էին, պահանջում էին,  
վորագետի հաղաքին աշխատանքների վարիչ Քոչարյա-  
նը պաշտոնավորի արքի, դաստի արքին։ Միտինդներն  
ուղարկութիւնի մեւ չարք ուրիշ խնդիրներ ևս առա-  
ջազրելու համար։

Տվեք նրան մեր ծեռքը և մենք նրան ցուցի  
կտանք, թե ինչ և նշանակում ծեծել բանվորին, —  
ասում էին նրանք, վորոնք ինքնապասասատանի կողմ-  
նակից եին։

Այնպիսի առավորություն եք ստացվում, վոր  
մեկը պետք է գտնի Քոչարյանին և առ այդ տաք  
գլուխների ձեռքը։ Բանվորական շարժման թշնա-  
միներն ել ցանկանում եին պետքին ազգային  
գումարում տալ, բանվորների ուշադրությունը  
շեղել ընդհանուր պայքարի խնդիրներից։ Բայց  
նավթագործների ճնշող մեծամասնությունը վճռարար  
բողոքում եր ակրող կարգերի դեմ, իրենց կենսական  
խնդիրների արագ լուծումը պահանջում։

— Բավական ե, վորքան մեր շահերը վոտնատակ  
են տմել, վորքան մեզ անասունի տեղ գրել։

Քանի գնում, ցասումն ավելի ուժեղանում եր։  
Կատարվածի մասին լուրը ատարածվում եր մերձա-  
կա Հանքավայրերը և քննության նյութ դառնում ա-  
մենուրեք։

Նույն որը, յերեկոյան, այն հասակավոր բանվո-  
րը, վորք միտինդում առաջարկում եր Քոչարյանին  
դատի տալ, մտավ Աղեքունուր Միտինդիչին սուսնձ-  
նասենյակը։

— Մենք եսորվա դեպքի առթիվ ժողով ենք հրա-  
վիրում։

— Ի՞նչ։

— Ժողով, Աղեքունուր Միտինդիչին...

— Վո՞րանեղ եք ուղում հրավիրել։

— Յեթե ցանկանում եք, յես ավելի ուշ ձեզ  
մոտ կգամ, միտինդին կդնանք։

Ինժեներ Զատոնակին հասկանում եր, թե ում հետ  
գործ ունի։ Հաստատ գիտեր, վոր նրան ժողովի յեն  
հրավիրում բոլշևիկները։ Յեվ նա վորոշեց գնալ,  
վորովհետեւ Քոչարյանի հետ պատահած դեպքի  
նկատմամբ իր և բոլշևիկների հայացքների մեջ տար-  
բերություն չեր տեսնում։ Իսկ հետո իրենց ի՞նչպես  
կդասավորվեն, ի՞նչ կստացվի, դրա մասին ինժեներ  
Զատոնակին չեր մտածում։

Ժողովը հրամայիրված եր նաև միտահորերի արան-  
քում գտնվող, վայսից կառուցված փոքրիկ կրպա-  
կում։ Այդուղեղ նատաճները միմյանց հաղին եյն նը-  
մարում։ Լամպի աղոտ լույսի տակ, վիստախավարն  
մեջ, մեկը վեց կացավ և ցածր, բայց լաելի ձայնով  
սռաց։

— Այսորվա դեպքը մեզ բոլորիս համբերությու-  
նից հանեց։ Մենք յեղան նման ենք աշխատում, տանջ-  
վում և ելի վերջը մեզ հետ վարվում են ճիշտ այնպես,  
ինչպես անասունի հետ, վորին կարելի յե և՛ բանացնել

և ծեծել։ Մի հանձնաժողով պիտի ընտրել, վորագեռաց զի դնա «Սորմովո»-ի վարչությունը և մեր պատշաճներն առաջակրի : Քոչարյանին դուրս անելը բավական չեւ... Ասենք նա ինը սրանից հետո գործի չի դա : Նա հիմար չի, կղղու, վոր յեթե հատեղ յերեա, կննդանի տուն չի դնա : Բայց մենք պիտի պահանջնենք, վոր նա դաստի տրովի... չա՛, մի թղթի վրա գրեցեք մեր պահանջները :

Զատոնակին ուրախությամբ հանձն առավ այդ և դրում եր այն, ինչ թելադրում եր վարպետ Ալի Բաբա Ողլին :

«Ծովախորչի բանվորները զայրութով են հիշում մարտի 1-ի դեպքը : Մենք այլու չենք կարող տանել հողային գործերի վարիչի և նրա պաշտոնակիցների կամայականությունները : Մենք վճռաբար բողոքում ենք, վոր հաց ուստեւ համար մարդկանց ծեծում են : Մենք պահանջում ենք՝

1. Հողային գործերի վարիչ Քոչարյանին դատի տալ .
2. Ուժ ժամկա բանվորական որ մասցնել :
3. Բարձրացնել աշխատավարձը .
4. Բանվորներին ապահովել արտահագուստով...» :

Ցուրաքանչյուր կետ գրելիս, ժողովում գտնվողները միմյանց եյին նայում, ցանկանալով միմյանց համաձայնությունն ստանալ : Գիշերվա ժամը 3-ին միայն ժողովը վերջացավ :

Ժողովականները տարբեր ուղղությամբ ցրեցին :

Յերկնքում ամպի մի քանի կտոր արագությամբ թուզում եյին : Լուսինն ել, կարծես, նրանց հետ նույն արագությամբ թուզում եր հեռու, հեռու...

Զատոնակին տուն չգնաց, մնաց գրասենյակում : Անհանդիսա քնից առավոտյան նրա վլուխը ծանրացել եր, աչքերի տակն ուռել : Մկանող որը նրա համար նշանակալից եր : Աշխատանքից հետո յերկու բանվորի հետ միասին յերեկվա ժողովի վորոշումները պետք են ներկայացներ «Սորմովո»-ի վարչությամբ :

Առաջին անգամ այդպիսի ջրապտույտի մեջ ընկերում, նա զգում եր, վոր շատ անախորժությունների յե հանդիպելու : Մակայն ինչ ուզում է լինի, այդ աղաղակող անարդարության կողքով անցնել չի ուղարկում : Զատոնակին ամբողջ որը մի բանի վրա կենաւրոնանալ չեր կարողանում : Գրասենյակից դուրս եր դալիս, զնում ծովափի, ծովափից վերադառնում գրասենյակի : Տեղի անտեղի նայում եր քարտեղներին, թըղթի վրա կցկտուր հաջումներ անում, թողնում այն, ուրիշ բանով զրադշում : Գրասենյակում աշխատող զծարգողներին նա նկատողություն արեց, ինքն ել չիմացավ ինչի համար : Քանի մոտենում եր աշխատանքի վերջը, նա ալելի յեր զղայնանում, ուզում եր, վոր ժամանակը չուտ անցնի : Ժամը յերկուսի մոտերը տասնապետերից մեկը յեկալ նրա մոտ, դուռը զգուշությումբ բանալով, հարցրեց .

— Ալեքսանդր Միխայլովիչ, «Կազակը» տեղ համակ, կարելի՞ յե Յօ-լու տեղամասում քատարելիկ :

Ալեքսանդր Միխայլովիչն առաջը վուած թղթուց

գլուխը չբարձրացնելով, հավանության նշաններ առեց: Հետո պարզվեց, վոր «Կազմակ» բարժան պետք է դատարկվեր վոչ թէ ՅՅ-րդ, այլ ԱԱ-րդ հրամարակում: Զատոնսկին տասնապետին չկանչեց, չհայ-հոյեց, ինչպես այդ կարող ելին ուրիշներն անել: Թքելով, նա ինքն իրեն չչնջաց.

— Նու, ստուգան նրա հետ, ինչ յեղալ, յեղալ:

Յերեկոյան նա բանվոր Աղաջանյանի հետ ուղեկվորվեց դեպի «Սորմովո»-ի վարչությունը: Մյուս բանվորը, վորը նրանց հետ միասին պետք է լիներ, ձկից թունավորվել եր ու չկարողացավ դնալ: Ճանապարհին Զատոնսկին մտքում պատրաստում եր այն, ինչ պետք է ասի:

«Սորմովո»-ի վարչությունը գտնվում եր քաղաքի կենտրոնական մասում:

Վարչության գրասենյակում նրանք գտան Բեսոլամյանուն — վարչության կառավարչի տեղակալին: Բեսոլամյանին պաշտոնաթող սպա յեր: Ռազմական ծառայությունը թողնելով, նա մտադրվել եր վորոշ գումար ուղղել ու փառքի տիրանալ: Այդ իդքն իրազորելու համար նա ջանք չեր ինայել: Բեսոլամյանին լիքը, նրբամորթ գեմքով, չող մաղերով, կապույտ աչքերով և պարթեկ հասակով գեղեցիկ աղմամարդ եր:

Յերբ նա քաղաքում քեշ թէ շատ ծանոթություն տուղծեց, լուրեր ստարածեցին, թէ Բեսոլամյանին իր մարմինը վաճառքի յէ հանել: Յեկ այդ լուրերն արդարացի եյին: Դեռևս բանակում յեղած ժամանակ նա նախորշել եր՝ գերել հարուստ կանանց՝ իր մարմինը ծախելու համար:

Իր ստոր ցանկությունները կենսագործելու ժամանակ նրա մեջ բնաւոր կեղծալորությունն ավելի խոր արմատներ եր ձգել: Խարդախություն, մարդկանց վոտքերի տակ ստղալ, կեղծալորությունն, — ահա նրա բնավորության հատկանշական գծերը: Բեսոլամյանու զեղեցիկ մարմնում ձևակերպվել, մեծացել եր այլանդակ մի ներքինչյարհ: Հենց այդ հատկանիշները գործի դնելով, նա կարողացել եր մի վոչ փոքր գումար ուղղել և «Սորմովո»-ի վայրութերից մեկը զանալ: Ծովախորչի ցամաքացցման մասին ուստամածները նրան բոլորովն հանդասություն չեյին տալիս: Ինչպես նկարագրում ելնեն գործի մասնագետները, այդ չորսացող հողամասը չտեսնալած հարրատություն և ունենալու: Յեկ Բեսոլամյանու սիրութովուում եր, յերբ մտքում պատկերացնում եր դեպի յերկինք սլացող սև վասկու անսպառ շատրվանները: Նա մտքում հայհոյում եր ցարական պնդադլում մինչառներին, մանուշանդ ներքին դորձերի մինիստրին և ահա թէ ինչի համար:

Ծովախորչի մասին կնքած պայմանագիրը Բեսոլամյանուն դուր չեր զայիս: Բայ այդ պայմանագիր, ծովի ամրող նախակծված մասը սիետք եր ցամաքացին, նոր միայն թուլլարքեր այն շահագործել: Իսկ, ըստ Բեսոլամյանու, առ վոչ այլ ինչ եր, յեթէ վոչ տխմարություն:

Յամաքացման աշխատանքները վերջանալուն վոչ մի կապիտալիստ, վոր փող եր զրիլ, այնքան չեր չտապում, վորքան Բեսոլամյանին: Ուրիշների համար ի՞նչ կար վոր: Նրանք ուրիշ տեղեր ել շահա-

կործակող տեղամասեր ունեցին և շտափելու կարիք չկար; Գործի գցված հորերը լավ կովերի նման կըթ-վում եյին; Խոկ թեսպամյատնու տառը նոր եր բարձրանում յերկնակամարը, պարզ եր, պոր նա շահա-դրսութամարդ եր աշխատանքի շտափ արվարտութով:

Ահա այլ մարդուն եր, վոր պետք և դիմեցին Զատոնսկին և Աղաջանյանը: Զատոնսկուն տեսնելով, Բեսոլամյատնին տեղից վեր կացավ, ձեռքը մեկնեց.

— Ո՛, Աղեքսանդր Միխայլովիչ, սա ի՞նչպես և պատահել: Բարեկելուց հետո ոսլայած վզկապը խնամ-քամ ուղղելով, Բեսոլամյատնին ընկղզվեց բազկաթո-սի մեջ:

— Պատրաստ եմ ձեզ ծառայելու:

Աղաջանյանին նա կարծես չտեսավ: Զատոնսկին դառնարով դեպի Աղաջանյանը, մի աթոռ ցույց տվեց, խոկ նստեց Բեսոլամյատնու սեղանի դիմաց:

Զատոնսկին խոկույն սկսեց պատմել ոյժ, ինչ մտքում վար տապալութանից պատրաստել եր:

— Յերեկ ցերեկիւմ ժամը 11-ին, թե ամենի ուշ, չես հիշում, բանվոր Ալիյեին աշխատանքի ժամանակ հաց և հանում և սկսում ուտել: Այդ պահին նրա մոտով անցնում է կառավարիչ Քոչարյանը: Զգիտեմ նրանց մեջ ինչ խոսակցություն և տեղի ունեցել: Յես միայն այն տեսու, վոր Քոչարյանը Ալիյեին հրեց: Այդ ժամանակ Ալիյեի ձեռքի հացն ընկավ: Նա ցան-կացավ բարձրացնել հացը: Քոչարյանն ել նրա հետ

միասին կոացավ և գետնից վերցրեց յերկաթի մի կտոր ու նրանով Ալիյեի վկանին զարկեց: Այդ բոլորն այնքան արագ կատարվեց, վոր հարվածը կանխելու մասին մտածել անգամ չեր կարելի: Ալիյեի ձայնի վրա բանվորները հավաքվեցին: Ալիյեվը ծանր վիրա-վորված եր: Այդ զեպքը բոլորին եւ հուզեց: Բոլորը գործը թողած, ժողովներ գումարեցին: Շուտով մեր գործը թողած, ժողովներին միացան Միրովիկ և Լեսանովովի բանվոր-բանվորներին միացան Միրովիկ և Լեսանովովի բանվորները: Այդ ժողովներում բանվորները պահանջներ առաջադրեցին: Ահա պահանջները:

Այս ասելով Զատոնսկին դիշերը զրած թուղթը մեկնեց Բեսոլամյատնուն:

— Մեզ հանձնարեցին այդ պահանջները ներ-կայացնել վարչությանը և պատասխան ստանալ, — նույն հանդիսա տոնով շարունակեց Զատոնսկին:

Մենյակում լուսվյուն տիրեց:

— Յես այդ պահանջները գիտեմ:

— Մեր պահանջները, — զարմացած հարցրեց Աղաջանյանը:

— Այո՛, ձեր պահանջները, — գլուխը տմբած բաց-նելով պատասխանեց Բեսոլամյատնին:

Աղաջանյանը և Զատոնսկին միմբանց նախեցին:

— Ինչո՞ւ յեք զարմանում, ներկայումս վոչ մի-այն ձեր, այլ ամբողջ Ռուսաստանի բանվորների պա-հանջները մի տեսակ են: Առանց կարդալու յել կարող եմ առել, թե ինչ և դրած այդ թղթի մեջ: Բայց յես զարմանում եմ, վոր զուք նույնական, Ալեքսանդր Մի-խայլովիչ, նույնական խոտնովում եք նման դորձերին...

— Յես չեմ կարող լուել, յերբ աչքիս առջեկ անարդարություն և կատարվում: Վո՞րն և Ալիյեվի

մեղքը, ա՞յս, վոր նա մի կտոր հաց եր ուզում ուտել:

Բեսպամյատնին ձեռքում մի կապույտ մատիտ եր խաղացնում:

— Դուք ինչպես եք ուզում, վոր ձախ յերեսներիս խմբք, այն ել դեմ անենք հա՞ — ձայնը բարձրացնելով ասաց Աղաջանյանը:

— Յես քեզ հետ չեմ խոսում, քիթե մի խոթիր այնտեղ, վորտեղ դու հարկանվոր չես, — մատիտը սեղանին գարկելով ասանեց Բեսպամյատնին:

— Ինչպես թե ինձ հետ չեք խոսում, յես ձեզ մոտ դործով եմ յեկել:

— Դու, ա՛յ, կարող ես դուրս գնալ, շտապի՛ր, յես քեզ հետ խոսելիք չունեմ:

Զատոնսկին իսկույն տեղից վեր թռավ:

— Դուք այլպես խոսելու իրավունք չունեք: Նա ինձ հետ ե յեկել, մենք միասին ենք: Այդ դեպքում հետեանքների համար դուք պատասխանառու կլինեք:

Բեսպամյատնին այլպիսի վերաբերմունքի չեր սպասում:

մեկը բաժակը ձեռքին մոտեցավ պատուհանին, սակա

դառնալով՝ պատուհանից ինչ-վոր իրեր հանեց, հետո  
գնաց սենյակի խորքը:

Այդ պահին մթության մեջ, վողոցից մի անձ-  
նավորություն գաղտադողի մոտեցավ պատուհանին և  
գրանից շտապ մի փայլուն իր հանեց: Ապա անցավ  
պատուհանի տակ գտնվող արդեն սաղարթակի  
ակացիներից մեկի տակի: Նա հայացքը մի վլայրկյան  
անդամ չեր հեռացնում պատուհանից և կարծես ան-  
համբեր վնչ-վոր բանի յեր սպասում: Բավականաչափ  
յերկալը ժամանակ անկախում վորչ մի տուկնից չերե-  
վաց: Բայց ահա թափշապատ կիսամթության մեջ  
կրկին մեկը շարժվեց վեպի պատուհանը:

Փողոցում գտնվող մարդը, վոր մինչ այդ կար-  
ծես քարացել եր իր տեղում, մի արագ շարժում արեց  
և ձեռքի իրն զգուշությամբ ուղղեց գեղի պատուհա-  
նը: Սակայն փողոցի անկյունից մի ուշացած անցորդ  
անցավ: Յերեսի այդ եր պատճառը, վոր անծանոթ  
մարդը կրկին կուչ յեկավ ակացիի տակ և գրափ-  
նում թագցրեց ձեռքի իրը: Նա մի քանի քայլով հե-  
ռացավ թափտոցից, ապա՝ յերբ շրջապատում ամեն  
ինչ նորից խաղաղվեց, նույն զգուշությամբ վե-  
րաբարձավ այնտեղ: Նա հանկարծ աշխատմացավ,  
վայրկյանաբար կռանալով, մի աղյուսի կտոր վլերցը-  
րեց և ամբողջ ուժով չպատեց բաց պատուհանից  
ներս: Աղյուսն, ըստ յերկույթին, գիւղչելով ապակյա-  
իրի, գիշեց այն: Հենց այդ ձայնի վրա կանացի մի  
սիլուետ գծադրվեց պատուհանի մոտ: Ատրճանակի  
յերկու կրակոց հետեւցին իրար: Լսվեց կանացի մի  
աղյուղորմ ճիչ: Շրջապատում ինչ-վոր անսովոր

աղմուկ բարձրացավ։ Մի ակնթարթ անց, պատուհանի տակ կանգնած մարդը չքացավ։ Փողոցում ամեն ինչ խաղաղ էր ու անվրդով։ Կարծես արտասովոր վոչինչ չեր պատահել։

Լիդան կիսամերկ դրությամբ խորքի սենյակը վագելով, մորը գտավ արյունաշալախ, գետնին լուկած։ Գնդակնելը կպել մյին պառավի կրծքին, վորտեղից այժմ առաստ արյուն եր հոսում։ Մինչ հավաքված հարևաններն ընդհանուր շփոթի մեջ կը պարզելին յեղելությունը, ուշաթափված Լիդային ուշքի կրերելին, նրա մայրն արդեն մահվան դեմ իր վերջին, առանց այն ել թույլ ուժերն եր լարում։ Շատ կարճ ժամանակից հետո յերկու տղամարդ Լիդայի մոր արդեն անշնչացած դժակը տեղափոխեցին խորքի սենյակը։

Ո՞վ եր այդ անհայտ չարագործը, ի՞նչ նպատակներ եր հետապնդում նա, — վոչ վոք չկարողացավ իմանալ…

### III

Բազմաթիվ խարդախ խաղեր ու վորտպայթներ նյութելու մեջ փորձված Սարդարյանն արդեն յերկուրութ անգամն եր, այս անգամ բոլորովին նոր սբարմաններում, հարվածներ հասցնում ինժեներ Զատոնակուն։ Յեթե հեղափոխությունից առաջ ինժեներ Զատոնակու հետ նա հաշվներ էր հարդարում, վորտպայթներից ամեն ինչ էր գործում։

Ճշմարտության կողմնակից եր և իրենց իրավունքների համար մարտնչող բանվորների համակրողը, ապա այժմ, հեղափոխությունից հետո, նա գործուներ մի նոր Զատոնակու հետ, վորտ ուներ իր յերիտասարդ հետեւրդները, վորոնք արիարար կռվում ելին նավթային նորանոր չերտեր յուրացնելու, խիզախ նախագծումներն իրականացնելու համար։

Զատոնակու յերկրորդ բանտարկությունը ոգտագործելու ուղիներ եր վորոնում նա։

Սարդարյանն աշխատում եր ջուրն ամելի ու ամելի սպառորել։ Յեկ այդ առնչությամբ ել նա մտածում եր զնել Արգումանյանի հարցը։

Սարդարյանը վորտչել եր Արգումանյանի մասին, բացի Սարդարյանից, գոմեզարդիել և նավթկոմի նախագահին։ Մինչ այդ նա աշխատում եր, ինչ կերպ ել լինի, Զատոնակու բանտարկության մասին նավթկոմի նախագահի կարծիքն իմանալ, նոր միայն վորտուչել նրա մտա գնալու կամ չգնալու հարցը։ Յերկար խորհրդածություններից հետո յեկավ այն յեղակացության, վորտ ինչ կերպ ել լինի, միենույն և նավթկոմի նախագահի մոտ գնալու յե։ Սակայն ինչպես գնալ, յերբ չես հմանում, թե ինչպես կընդունալ։ Սարդարյանը համեմում եր, վորտ այդ գործում փոքրիկ սիսալ կարող եր ամեն ինչ չուռ տալ, փչացնել։ Նա վաղուց, շատ վաղուց գիտեր, վորտպաշտությունը դիմանագիտության մեջ հաղթանակի կենա ե։ Նա վորոշեց մենակ, առանց վորկովի, զնալ նավթկոմի նախագահի մոտ։

Նավթկոմի չենքում մեծ թվով մարդիկ ելին հարդարել։ Այդադր կային նավթային հողամասի

վարիչներ, վորոնք յեկել ելին զանգատվելու փոր-  
ման խողովակների, պակասության մասին։ Կային և  
հին բանվորներ, վորոնք յեկել ելին անձնառիւն դոր-  
ծերով։ Նրանք յերկար նաևարանների վրա նաևած՝  
ծխում եյին։

Սարդարյանը պատշգամիք մտնելով, չելք լիմանում  
վորսեղ տեղավորվի, վորսի ազատվի նստածնե-  
րից միքամիսի ուսումնասիրող հայացքնց։ Այդ հա-  
յացքներն ասես ասեղի նման ծակոտում եյին նրան։  
Նա դպուչ, անձայն մտեցավ պատուհանին ու  
սկսեց դիտել նախադահի առանձնասենյակի դուռը։  
Մեկը շտապ ներս մտավ ու համտրձակ կանչեց։

— Ո՞վ ե վերջնը։

Ներս մտնողին տեսնելով, Սարդարյանն ինչ-որ  
տարորինակ շարժումներ արեց, ասես մեկը յեռացող  
ջուր լցրեց նրա դիմին։ Շատ անհարմար ելք, բայց և  
այնպես նա ստիպված եր պատասխանել։

— Յես եմ։

Յեկողն Արզումանյանն եր, վորը մի ցրված հա-  
յացք նետելով շրջապատի վրա, շուռ յեկավ ու սկր-  
մեց ձեռքում խաղաղնել գծառքը թյունների, մի փա-  
թեթ։ «Ռեքեմն նա յել ե յեկել . . .», — շուռ գալով  
ինքն իրեն ասաց Արզումանյանը։

Սարդարյանը ևս շուռ ել յեկել և պատու-  
հանով բեպի փողոց եր նայում։ Նա բոլորովին չեր  
սպասում, վոր հենց այդտեղ կհանդիպի Արզումանյա-  
նին։ Յեկ ինչպես դողության մեջ բռնված, չեր  
իմանում, թե ինչպես հանդարձուեցներ իր ներսում  
ամիելի ու ամելի բորբոքվող մոմուրիկը։ Նրան ամիելի

անհանգստացնում եր, վոր Արզումանյանն այսուել  
իրեն ոտարի նման չել զգում։ Դեռևս պատշգամիքի  
մյուս ծայրին Արզումանյանը բարեկամորեն ժպտաց  
ծերուկ պահակին, ինչ-վոր բան հարցրեց։ Ասրա հս-  
մարձակորեն ներս մտավ, նույն համարձակությամբ  
հարցրեց այն, ինչ իրեն անհրաժեշտ եր։

Սարդարյանը յերբեմն դադտագողի նայում եր  
Արզումանյանին և հենց վոր նա փոքրիկ շարժում  
եր կատարում, հայացքն իսկույն փոխադրում եր  
ուրիշ տեղ։

Արզումանյանի ձեռքում յեղած թղթերն ամենից  
շատ ելին հետաքրքրում Սարդարյանին։ «Գուշե այդ  
գծապինն ե», — մի պահ սարդարի մտածեց Սար-  
դարյանը։

Զեխտես ինչու նրա մանրիկ աչքերն ավելի արագ  
ելին թարթվում . . . Տոթից, թե մեկը լինելին մտքից նրա  
ճակատին քրտնքի կաթիլներ յերեկացին։ Նա չղային  
շարժումներով անընդհատ սրբում եր ճակատի քըր-  
տինքն ու ավելում տրորում թաշկինակը։ Մինչ այդ  
Արզումանյանը մի հասակավոր բանվորի հետ պա-  
տշգամիք անկյունում դրույցի յեր բանվել։

Սարդարյանն արդեն յերբորդ անդամն ուղեց  
դուրս գալ, գնալ։ Նրա մանր աչքերը թակարդ ըն-  
կած մկների ոլես դես ու դեն ելին վագում։  
Հենց այդ պահին նավթկոմի նախադահի  
դուռը բացվեց ու դուրս յեկամ այնտեղ գտնվող  
մարդը։ Հերթը Սարդարյանին եր։ Անվստահ քայ-  
լերով նա ներս մտավ։ Հանրապետության նավթային  
կոմիտեի նախադահը նրա բարեմն իսկույն չընդունեց։

իր բարեկի պատասխանիլ չստանալով, Սարդարյանը շվարած մնաց կանգնած : «Ահա ակալում ե», — մտածեց նա : Վերջապես նախադահը սեղանի վրա դրած թղթերը մի կողմ հրելով, դրուիր բարձրացրեց :

— Բարեկի, բարեկ, — Սարդարյանին մոտից մինչև պլուխ նայելով, վերջապես պատասխանեց նորիսադահը . — նստեցեք : Նա նստած տեղից վեր կացավ և ձեռքերը զենյուրական անորոշմարտիկի դրախտնը խոթելով, հարցրեց :

— Ինչպէ՞ս են գործերը, — և պատասխանի չսպասելով, արևլացրեց . — Այդ ի՞նչ ե, ինժեների հետ անհաշտ եք, առանձնասենյակից դուրս եք վոնդում, վրան բղավում . . . Այդ յերբանից եք այլպիսի արքայական դիրքի տիրացել : Զլինի կարծում եք, վոր գուռք աշխատում մօք ի՞նչ-վոր մասկիտավայրում վիանովին հանդինք . . . Ի՞նչո՞ւ յեք կանդնել, նոտեցեք :

Նախադահը Սարդարյանին այնպես եր նայում, վոր կարծես նախորոք զիտելո, թե ինչի համար եր յեկել, ինչ պետք ե ասեր : Նրան տեսնողը կասեր, վոր այս մարդը մի հայացքով կարող է թափանցել մարդկանց ներքնաշխադահը, իմանալ, թե ինչի մասին են նրանք մտածում : Արդամ մի հայացքի մեջ կար այն ուժը, վորը հարկավոր մօք մարդկանց ուղ լինելը վորոշելու համար : Յեկ թվում եր, թե այդ մարդը յերբեք, վոչ մի դեսկում չի պաշտպանվել, այլ ծընված և միշտ հարձակվելու համար : Առաջին անդամն եր, վոր Սարդարյանը դեմ տո դեմ խոսում եր նրա հետ :

Նախադահի հարցելով նոր միծ զինուշուաթյանը միամբ եր պատասխանում : Ամբողջ խոսակցության ժամանեակ նա չեր կարողանում մոռանալ Սարդարյանի թերթի տակ յեղած գծագրերը : «Մի՛թե վարդորոք պայմանակալովել մն . . .», — ինքն իրեն մտածում եր Սարդարյանը և սբուտերովի սպասում ընդունելության վերջին :

— Ասացեք, ինողեմ, ի՞նչպես ե դպիւմած նոր հոգածասերի հետարկության աշխատանքը :

— Յերեկի դուք ինձնից լավ եք իմանում :

— Այս, տեսնում ե՞ք, չես իմանում : Այլապես չեցի հարցնի :

— Դա կապված է ծովի հետագա ցամաքացման հետ :

— Իսկ նոր տարածության ցամաքացման հարցը դուք լուծեցի՞ք :

— Յես իմ կարծիքն արդեն հայտնել եմ, ընկեր կուլիյես : Իմ կողմից ներկրացրաց կառուցվածքամին քարտեղի վրա չորրորդ շերտի 250-րդ հորիզոնականի ուղղության մասին բացառիկ պարզությունը է առված : Յես յենթագրում եմ, վոր 250-րդ հորիզոնականը յերկու հնարավոր ուղղությունն ունի : Առաջինը՝ 250-րդ հորիզոնականն անցնում է ցամաքացման յենթակա 51-րդ ծովային տեղամասով : Յերկուրորդ այդ նույն հորիզոնականն անցնում է 56-րդ, 57-րդ և 58-րդ ծովային տեղամասերի հասման վեհությունիւնիք : Ինժեների Զատոռնակու կարծիքով այդ հորիզոնականն անցնում է 87-րդ ծովային տեղամասով :

Կուլիյելը մշամակտոմայն համպիստ եք: Այլ բար-  
դատրությունների ժամանակ նա վերհիշում եր ծո-  
վախորչի այն մասը, վուր պիտք և ցամաքացվեր, և  
վոր աշխատանքը հետացներու համար այն բաժան-  
ված եր քառակուսիների, վորոնցից յուրաքանչյուրն  
իր համարն ուներ:

— Յել ձեր կարծիքով ինձեներ Զատոնսկու տե-  
սակետը սիսա՞լ եք:

— Իմ կարծիքով՝ այս: Դուք ինքներդ դատեցեք,  
ընկել կուլիյել: Քանի մենք մոտենում ենք Շին  
գյուղին, այնքան ավելի շատ ենք հանդիպում ապշե-  
րոնյան կրաքարային շերտերին: Յել դիմեք ինչ,  
յս իմ անկեղծ կարծիքն եմ հայտնում, ինչ վերաբե-  
րում ե ծովախորչի արդյունաբերական հեռանկարին,  
ապա մինչև տղամատարլած մշակումը ցույց մ տա-  
լիս, մոր նամիթը ծովախից արնքան ել մոտ չե: Այդ  
յերեւոյթի բացատրությունը պետք մ պնտել Բի-  
բի-Հեյքաթի յերկարամյա շահագովծման մեջ: Զի կա-  
րելի աչքաթող անել, վոր նրա հին տերերը — Զու-  
րավովը, Նորելը, Ռոտշիլդը, Միրզաբեկովը և ուրիշ-  
ները ծովափի 150 նամիթահորից մեկ միլիարդ փութ  
նամիթ են հանել: Պարզ չե՞ մոր այդ ուժապատ և  
արել այն հողամասը, վորի համար հիմա այսպես  
ուժեղ պայքարում ենք:

Հեգնական մի ժաման պարուրել եր կուլիյելի  
դեմքը: Այժմ նա ուղիղ նայում եր Սար-  
դարյանի աչքերի մեջ, դլուխն անընդհատ տըմբ-  
ութբացնում:

— Այդպե՞ս, այդպե՞ս, հետո՞:

— Յես չասացի, վոր իմ և Արգումանյանի միջն  
տեղի ունեցած վեճերն ել այլ հարցի չուլըն եցին:  
ինձ համբերությունից դուրս բերեց վաղուց ի վեր  
դատապարտված հայացքների պաշտպանությունը:  
Միթե կյանքն ինքը ցույց չտվեց, վոր Զատոնսկու  
վերցրած ուղղությունը վոչ մի կերպ չի արդարաց-  
նում իրեն: Նրան յես իմ սենյակից դուրս չեմ արել,  
ընկեր կուլիյել, մեր մեջ հասարակ վեճ և յեղել:

— Այո՞ :

— Այո՞, ուրիշ վոչչինչ:

— Լա՞վ, այդ թողնենք: Դուք Մոսկվայից եք  
յեկել, այնտեղ ինչպե՞ս և դրվում ծովախորչի ցա-  
մաքացման հարցը:

— Կոնկրետ ո՞ւմ կողմից:

— Խոսքս ակագեմիկ Շեստովի մասին մ:

Հասավ ամենածանր ըուղեն: Սարդարյանն իրեն  
ծուղակի մեջ եր զգում: Բայց հիշեց, թե իր տեղա-  
կալին ինչպես ե հայտնել Շեստովի կարծիքը, և  
այն այստեղ շուռ տվեց:

— Նա իմ յենթագրություններին դեմ չե:

— Իսկ վորտեղից այդ գիտեք:

Այս վերջին հարցը ասես գնդակի պես ուղղված  
եր Սարդարյանի սրտին:

— Այդ բանը յս հենց նրանից իմացա:

Նավթիկոմի նախագահի ունքերը հանկարծ վեր  
բարձրացան: Առհասարակ նա ամենայն հեշտությամբ  
խաղաղնում եր դեմքի բոլոր մկանները, մանավանդ  
հակատի մկանները: Իսկ յերբ նրա յերկու ունքերը

միասին վելու եյլին բարձրանում, դա նշան եր, վոր վորևե բանից խիստ զայրացած եւ:

— Ինձ թվում ե, վոր գուք մի քիչ ո՞իշտ չեք խոսում: Յերեվի կարծում եք, վոր կուլյենին ամեն ինչի կհայլատա: Զեր այդ վերաբերմունքը չեիտեսմ ինչի արդյունք ե: Ահա ձեզ ակաղեմիլ Շեստովի կարծիքը՝ ծովախորչի ցամաքացման մասին, հենց այսոր ևմ առացել, և զիսի՞ք, մի քիչ նման չէ ձեր ասածին:

Սարդարյանի մորմնով մի անդուրեկան հոսանք անցավ: Նա յերբեք չել յենթաղրում, վոր ակաղեմիկի կարծիքն արդքան շուտ պաշտոնապես կհաղորդվի այստեղ:

— Լսեցեք, տեսեք, թե ակաղեմիլ Շեստովին ինչպես ե գնում հարցը: Բայց ավելի լավ կլիներ, վոր Սրբումանյանն ել ներկա դժուվեր, նա պետք ե դար:

Սարդարյանին թվաց, թե իր վոտքերը դրին սառցի միաւ: Անդուրեկան եր, այո՛, անդուրեկան, հենց Սրբումանյանի մոտ նախատիւլ: Բայց ինքն ի՞նչ կարող եր անել: Նա նույնիսկ չառաց, սի՞ր Սրբումանյանը դրսում սպասում ե: Կուլիյել նայեց ժամացույցին, տպա զնաց դեպի դուռը:

— Արդեն ուշ ե, թերեւ նու յեկած կլինի, — դուռը բանարով, տպաց կուլյելիլ:

— Ա՛, ընկեր Սրբումանյան, յես ձեզ ևմ սպասում, ներս յեկեք: Այժմ շարունակինք: Ահա, ուրիմըն, ակաղեմիլ Շեստովի ասածները:

Կուլյելը բառերը միմանցից անջատելով, սկսեց կարգաւ իր սեղանի արկղից հանած թուղթը:

«Յելիկ կազմել են ծովախորչի ցամաքացման պլանը, դիմումուրը խնդիրներից մեկն ե յեղել վորոշել, թե վորտեղով ե անցնում չորրորդ չերտի 250-րդ հորիզոնականը: Այստեղ այդ մասին յերկրաբան Սարդարյանի կողմից յերկու կարծիք ե հայտնվել: Նա գտնում է, վոր 250-րդ հորիզոնականն անցնում ե ծովախորչի 51-րդ տեղամասով: Հետո նա վրբ թե նոր ավյալների վրա հենվելով, այդ ուղղությունն ավելի հեռու—դեպի արևելք ե տարել և յեկել այն յեղակացության, վոր այստեղ մի շարք նաևթարեր շերտեր են հատում: Մինչդեռ մյուս յերկրաբանը — Զատոնսկին գտնում է, վոր 250-րդ հորիզոնականն անցնում է 87-րդ ծովային տեղամասով: Սրանք միմյանց հակառակ կարծիքներ են: Յևս հակված եմ համաճայնմելու Զատոնսկու հետ: Յերկրաբանական տվյալներն ասում են, վոր Սարդարյանի յենթադրած ուղղությամբ — 51-րդ տեղամասով այդ հորիզոնականը չի անցնում: Զեմ կարող համաձայնվել և այն կարծիքի հետ, վոր իր թե 87-րդ տեղամասում 250-րդ հորիզոնականն անցնում է կրաքարերի չերտի կամ արդին խակ չահագործված շերտի մյուսով»:

— Սխալ չե ասված, վոր ծերության տարիներին վոմանք կորցնում են առողջ դատելու ընդունակությունը, — ատամների արանքից տպաց Սարդարյանը:

— Վոմանք ել յերիտասարդ հասակում առողջ դատելու ընդունակությունից միանգամայն զուրկ են լինում, — հեղնական ժայռու դեմքին հարեց Արդումանյանը: Այս ժայռից նրա չեչոտ դեմքի մկանները աշխատով չարժինցին: Ակաղեմի-

իլի կարծիքը բաեցիս, նրա աչքերը պատրացին, շնորհագույն գույնունեց դեմքը, վորի զրա կարելի յեր կարտաւլ — «Հիմա ի՞նչ կառեք, բարեկամա»:

Նավթկոմի նախագահը կարգալը վերջացնելով, զննող հայացքով նայեց նստածներին: Աթուի մեջ ալելի խրվելով, նու ձեռքը բարձրացրեց.

— Լսենք վերջը:

— Միենույն եւ, ընկեր Կուլիյես, Սարդարյանի հսկալ Շեստովի հեղինակությունն եւ դրու չարժե:

— Լսենք մինչև վերջը:

— Միենույն եւ դրա վերջը նման եւ մինելու մկրին, — արհամարհանքով վրա տմից Սարդարյանը:

— Ապա ինչու ելլիք պնդում, սուր ակադեմիկը համարդծիք եւ ձեզ: Միթե տասն որվաս վնիժացքում նա այդպիսի կարեռ հարցի մասին կարող եր եր կարծիքը փոխել: Այս կարծիքը նա հայտնել եւ Միության նավթային տնտեսության դիմավոր վարչության նիստում... Իսկ ձեզ, ինչպիս գուրք եք հաջության նիստում... Իսկ ձեզ, ինչպիս գուրք եք հաջության ուրիշ բան եւ ասել, հա'... հա', հա'... դուրսում, ուրիշ բան եւ ասել, հա'... հա', հա'...

Սարդարյանը ցանկանում եր ուրիշ առարկություններ անել, սակայն կուլիյեսը նրան ընդհատեց.

— Ահա թե ինչ եւ դրում ինքը — Զատոնսկին: «Թույլ տվելիք միանդամ ընդմիշտ լուծել այդ խնդիրը ինձ բոլորունին հարկաւոր չեն այն ծախտերը, վոր կապված են ծովի ցամաքացման հետ: Ինձ թույլ տվեք 87-րդ հողամասում փոքրիկ մի կղզի ստեղծել և հետախուզական մի բուրդ կանգնեցնել...»:

Առարկություններն իղուր կլինեցին: Սարդարյանը գրում եր, թե ինչպիսի արագությամբ կորցնում ե

իր վատաքի տարիի հողը: Զատոնսկի վիճակը նոր պիճառաբանությունների առիթ եր տարիս, այլ առաջարկում եր ամեն ինչ փորձով ստուգել...

— Այս, գիտության մայրը՝ վորձը, միակ միջոցն ե, վոր հնարավորություն կտա ստուգելու յեղած հայացքները:

Արգումանյանի այս բառերը նետի նման խոցում ելին Սարդարյանին: Այս բառերն արտասանելուն պես նու տեղից վեր կացավ, դնուց դեպի պատուհանը:

Կուլիյեսը շարունակում եր Սարդարյանին դաստակ, ինչպես մեծը՝ փոքրին:

— Բոլորս կարող ենք սխալվել. և բոլորովին ամոթ չե, յերբ մարդիկ սխալվում են: Ամոթ, հազար անգամ ամոթ նրանց, վորոնք զիտակցում են իրենց սխալը և չեն խոսուցանում այն: Խորհուրդ չեմ տալիս այդպիսին վիճել: Դուք ոգնեցեք սիերականդելու ծովախորչի քարտեղը: Յեթե կարող եք՝ դանք Զատոնսկու գծադրած կառուցածքային քարտեղը: Արգումանյանը բոլորովին չե վիրավորվի, յեթե ասեմ, վոր տվյալ դեպքում յես ակադեմիկը Շեստովին ապելի շատ եմ հայտնում, քան իրեն: Շեստովն ել իր հերթին հավատում ե Զատոնսկուն: Ուրեմն, ինչ կերպ ել լինի, քարտեղը հարկավոր ե գտնել:

— Այդ մասին հարցորեք իրեն՝ Զատոնսկուն:

— Այդ յես գիտեմ, բայց և այնպես ձեր ոգնությունն ի՞նչում կկայանա:

— Լավ, յես ի՞նչ կարող եմ անել:

— Գնացեք, բայց մտածեցեք ձեր մոտակա անելիքների մասին: Մինչև Զատոնսկու հարցի պարզվեցը դուք կատարեցեք այդ աշխատանքը:

կուլյելի այս խռովելքից հետո Սարդարյանը  
չէր ցանկանում արդտեղ, ութ մի ընպի նստել: Ին-  
չո՞ւ կուլիյելին այդ բոլորը հեղնանքով եր ասում:  
Մի՞թե նա կարողացել է թափանցել իր ներսը, մի՞-  
թե նա ալրեն հասկացել եր լարած վորովայթների  
երությունը: Սարդարյանը վախճանում եր վորմեն բան  
մտածել... Նա պարզապես հիմար զբության մեջ եր:  
Բայց և այնպես, իր մեջ ուժ հավաքելով, նա հա-  
ղով լսելի ձայնով ասաց.

— Յես ձեր պահանջը կկատարեմ, սակայն թույլ  
տվելք արդին իսկ ցամաքացված մասի վրա հետա-  
խուզական հոր կանգնեցնել: և սիռչ թե ինչ-վոր կողի  
կառուցել:

— Լսի, այդ մասին կմտածենք:

## IV

— Յես ի՞նչ իմանայի, գոնե նախազգուշացնեյիր:

— Ի՞նչ նախազգուշացնեյի, մի՞թե չեյիր ահօ-  
նում, վոր նամակները գաղտնի յեն և ուրիշին  
տալ չեր կարելի:

— Ուրիշին—այս՝ Անդրեյ Սերգեյեվիչ, բայց...  
վոչ նրան: յիս վո՞րտեղից իմանայի, վոր ձեր հարա-  
բերությունները վատացել են, վոնե մի փոքր ակ-  
նարկելք, հայտնեյիք, վոր նրա կողիքները ձեղ  
դուք չեն դալիս, և յիս վոշինչ ցույց չեմի տա: Դուք  
վիճեցիք իմ առեղ, կարո՞ղ եյիք իմանալ: Յեթե մինչեւ  
Մոսկվա դնալը մի բան պատահած լիներ, յեթե յես

խմանայի, պիու մինչ այդ ձեր յերկուսի մեջ աև կա-  
տու յե անցել, հազիվ թե ձեր գըածներից մի տող ան-  
դամ ցույց տայի, յերկվում եմ:

— Ուս, սատանա կանայք: Նրանք լնդունակ հն  
հազար ու մի տեսք ընդունել, անմեղ հրեշտակ ձեւ-  
նալ... Սակայն ինչպես յես այդ չեմ խմացել...

Վոլկովն իր անրաժան ծխամորձը ծծելով, կա-  
տարած սխալի համար այնքան եր ափստառմ, վոր  
չեր նկատում, թե ինչպես ձեռքում յեղած թղթի  
կտորները ճմբվում են... Նա մինչ այդ նամակների  
մասին յերբեք չեր մտածել:

— Քո կողմից դա կասերյալ ապուշություն ե  
յեղել, — զայրացած ասաց Սարդարյանը և տեղից լին  
կացավ:

— Սպասիր, Անդրեյ Սերգեյեվիչ, մի՞թե զրամույ-  
վերջացավ, չե՞ վոր հիմա նա կարող է այդ նամակ-  
ները մեր դեմ ողտազործել...

— Կարող ե, այսու, կարող ե, — ավելի զայրա-  
ցած պատասխանեց Սարդարյանը, — և ծառից յեր-  
երու տեղեւ պոկեց, պատահեց ու գեն նետեց:

— Յես ի՞նչ իմանայի, ամեն անգամ նամակ  
ստանալիս, խնդրում եր, վորպեսպի կարգալուց հետո  
տամ իրեն: Յես ել տալիս եյի: Յեվ յերբեք հետ չե-  
յի պահանջում: Ո՞վ գիտեր, թե արդպիսի բան եր  
պատահելու:

Նրանք դուրս յեկան քաղաքային այլուց:

Վոլգովն ակտեց կրանքի մասին վնչպոյ տարրամ փիլիտայություններ անել, բայց Սարդարյանը նրա կողքին բռթելով, ընդհատեց.

— Լար ամ ես, արի մանենք այստեղ, — նա մատով ցույց տվեց գինեստունը — մռացիր ցավերդ, միշենույն ե, անցածը հետ չետ տա: Հարկարվոր ե նոր բան մատօնել...

— Ինչ, որինակի համար:

— Կիմանան, զնանք:

Նրանք յերկուսով մտան նկողը: Նկուղում ծուխը մարդկային քրտնքի հոտի և խոնավության հետ խառնված՝ ողջ հեղձուձիչ եր դարձել: Ռւտեղու համար համարյա վորչինչ չկար: Մի քանի հոգի հոտած խմտւմ ելին ու ծխում: Նկուղի առաստաղից կախած ողափոխիչը հազիվ շուռ եր գալիս, կարծես զուտ նրա համար, վորպեսզի ծխախոտի ծուխը խառնի մաքուր սպի հետ: Սարդարյանը և Վոլգովը տեղավորեցին մի անկյունում դրված սեղանի շուրջը և դիմի պատվիրեցին:

Յերբ Սարդարյանը մի քիչ տաքացել եր, սկսեց գանգատվել իդական սեղից:

— Սկզբում ցույց են տալիս, վոր իրը թե սիրում են քեզ, բայց յերդվում եմ իմ պատվով, իմ արեւով, վոր յերդեք, յերբեք կինը մարդուն մաքուր սիրով չի սիրում: Ո՞վ կասի, թե բոլոր տղամարդիկ սողնիվ են: Բայց կամայք տասն անգամ ասինչի, անսաղնիվ են: Նայիր, տես նրանցից մեկն ինչ ե դրում տղամարդկանց մասին: Սարդարյանը ծոցի դրանից

խնամքով ծալած մի թուղթ հանեց, առա սկսեց կարդալ:

— «Շատ զարմանալի յեն տղամարդիկ: Զգիտեմ, դուցե կանայք ավելի զարմանալի յեն, սակայն յես այժմ ուղում եմ խոսել տղամարդկանց մասին, այն ել այն տղամարդու, վորին յես ավելի լավ եմ ճանաչում, վորը սակայն կեղծել ե, ստեղ... Նա շատ հաճախ եր կրկնում, թե ինքը միայն յի անգամ ե սիրել, այն ել—ինձ միայն: Յես դրան կը հարվատայի, յեթե իմ ձեռքը չընկներ նրա հուշատերը, վորտեղ դրված ե նրա ավելի ուժեղ սիրուման: Յես դրանից շատ զարմացա: պատճառը — նա ինձ ել իբր թե սիրում եր նույն թափով, ինչ թափով սիրում եր ուրիշներին: Ֆրանսիացի հանճարեղ գրող Մոպասանն ասում է, վոր պատահում ե՝ տղամարդիկ սիրում են մեկ անգամ և պատահում ե՝ նույն թափով սիրում են մի քանի անգամ: Տղամարդն առհասարակ սիրում ե այն, ինչ կա, մոռանում ե այն, ինչ հետու յե, անցել ե: Սիրելի յե նրան այն երակը, վորն իր հետ ե, շաշափելի յե, զգալի յե՝ նրա ներկայությունը և վորից նա բավարարվում ե: Յերբ հեղանում ե՝ նրանից, նա միայն ակիտում ե: Սիրում ե մինչև այն ժամանակ, քանի դեռ չի բաժանվել նրանից, քանի դեռ իր ակիում զգում ե աղջկա կամ կնոջ ձեռքի ախորժալի ջերմությունը: Ասկայն, յերբ գնացիք սուլոցը նրան հրշեցնում է, վոր չկա այն աղջկալը, նա մի քանի ըստի նորից ե պատկերացնում իր ժպտում, կամ թախծալի աղջկան և անգամ իդեալականացնում նրան...

Սակայն...

ԳԵ՞ վոր, ինչպես հանրահռչակ Հյուղոն և ասում, ամեն իրեալ տեսանելի մարմնացումի պետք ունի: Ուրեմն... չքանում և այն սիրելի աղջկա յեզ կնոջ դեմքն ու արցունքու աշերը, վորին մի քանի բոպե առաջ այսպես սրտահույզ սեղմելու կրծքին... Այդ պահին աղջիկը նրա մոտ տեսանելի մարմնացում չունի: Գնացքը սրտնում և արագ յեզ կտրում բարձաթիվ վերտեր: Այդ վերտերից ամեն մեկում տղամարդը մոռանում է իր սիրելի կնոջ յուրաքանչյուր շարժումը, նրա համրությունը, ժայխու...

Շատերի մոտ դա սրիկայության և համում: Նրանք մոռանում են վոչ միայն իրենց սերը, այլև այն, ինչ մոռացել և այդ սիրո հետեանքով... ինչո՞վ եք համոզված, վոր վաղն այդ սրիկան ձեզ հետ ել նույն կերպ չէ վերաբերվելու...»:

Այստեղ Սարդարյանը դրուխը բարձրացրեց, թուղթը շտապ կրոպանը դրեց:

— Մնացածը քեզ չի վերաբերվում:

— Իսկ ո՞վ և զրովը:

— Հիմար, նամակի տանից սիրով հասկանայիր, մի՞թե չկարողացար կուահել...

— Նու, նու, ավելի վատ: Յես արդեն հասկանում եմ: Ավելի վատ: Նա նույն կերպ կարող ե և ձեր ուղարկած նամակի բավանդակությունը հայտնել, հասկանում եմ:

— Վո՞չ:

— Ի՞նչ վոչ:

— Վո՞չ, վո՞չ, չեմ թողնի, վոր նա այդ ևս անի: Յես բախտ չունեմ, իմիր... Ամենք մեց դառը բախտակի կենացը:

Սարդարյանը բաժակը դիմից վեր բարձրացրեց և ավելի բարձր ձայնով գոչեց.

— Մեր դառը բախտի կենացը:

Նրա ձեռքը գողաց. կարմիր գինին կաթիլներով թափվեց սեղանի վրա:

— Յես կյանքում շատ բան եմ տեսել: Կցանկանայի նույնքան ել դու տեսնես: Յեվ այն, ինչ սրանից հետո սիրով տեսնեմ, ինձ համար սարսափելի չե: Ի՞նչ ունեմ աշխարհում՝ վորպեսզի մտածեմ: Ագարակներ, կալվածքներ, վործարաններ, հանքեր չունեմ: Սերունդ ևս չունեմ... Յեվ հիմա, յերբ յերկուսս խորտակվելու ճանապարհին ենք կանգնած, յես բոլորովին չեմ սարսափում. խմենք մեր դառը բախտի կենացը...

— Ո՞վ ասաց, վոր խորտակման ճանապարհին ենք կանգնած, — վախկուությամբ հարցրեց Վոլկովը ծխամուրճը բերանից հեռացնելով:

— Ինձ համար վոչինչ: Այս, քեզ համար, քեզ համար դա քիչ դժվար կլինի, յերեխաներ, տուն, տեղ ունես:

Վոլկովը գլուխը սեղանին հենած ձեռքին դրեց:

Սարդարյանը նրա ձեռքը ճակատից վերցնելով, մի բաժակ գինի ևս մեկնեց:

— Վերցրու, վախից ցամաքած կոկորդը թրթիր... Նկատի ունեցիր՝ այդ ծանր բեռան տակից դուրս գալու համար միայն մի միջոց կա:

— Ի՞նչ միջոց, որինակի:

Սարդարյանն ընդհուպ մոտենալով Վոլկովին, մի սել և սառը բան խոթեց նրա դրավանը:

— Պահիր, այդտեղից ուղիղ կզմաս նրանց մոտ: Տուն, իհարկե, չես մտնի: Ուղարկի փողոցից, հասկանալի՞ յե:

Վոլկովը սարսափեց: Նրա գեմքը քաթանի դույն ստացավ: Զեռքը տարավ դրավանը յել յերբ կպավ սառն իրին, նրա մարմնով դող անցավ, ուզեց ինչ վոր բան խոսել, բայց Սարդարյանը նրա բերանը փակեց:

— Յեթե ուզում ես կենդանի մնալ, ապա միակ յելքն այդ ե:

Անկյունից յերաժշտախումբը նվազեց ոռոսական մի հին յեղանարկ: Յերաժշտության թախտոտ յելեւելների տակ նստածներից պատմանք թեքվում ելին մեկ աջ, մեկ ձախ, կարծես ինչպո՞ք մեկին հրամանով վողջ նկուղը մեղմ ալիքների նման որորվում եր ու աղմկում:

Շատ ուշ եր, յերբ Սարդարյանը յել Վոլկովն որորվելով դուրս յեկան, ուղղեցին դեպի տուն:

## V

Զնայած թղթի մյուս կողմին վոչինչ չեր գըրված, չեկայի աշխատակիցն այն շուռ տովեց, ուշադրությամբ նայեց, նորից շուռ տովեց:

— Այս թուղթը քեզ ամեն ինչ կասի: Ի՞նչ եւ:

կարծում ես, յեթե բան ըլխել, մենք նրան կպահեմ մի՞նք, բոլորովին վոչ:

Խոսելիս նրա աչքերի անկյուններում գծեր եյին առաջանում, վորոնք նրա դեմքին թե՛ քարի և թե՛ խորաթափանց մարդու արտահայտություն եյին տալիս: Կուլիյենին նա ճանաչում եր Փրոնտից: Նա մեծ ուրախությամբ կուլիյենին հասկացրեց Զատոնսկու գործի եյությունը: Գործերի միջից հանած այն նամակը ձեռքին բռնած, նա կարծես հարցնում եր՝ «ապա սրան ի՞նչ կատես, սիրելի ընկերս...»:

Այսուեղ գրությունը մի քիչ բարդանում ե: Մեր ձեռքի տակ համապատասխան վաստեր չկան, վոր այս նամակը Զատոնսկին չի գրել: Յեթե նա չի գրել, առա ո՞վ կարող եր գրել: Յեթե ուրիշն ե գրել, ապա վորտեղից դուավ նրա յեղորոբդու հասցեն: Այսուղ, աիդելի Զաֆար, կամաւալիամա պետք ե կասկածես: Կա յել ուրիշ յենթագրություն, վոր նա չի գրել, այլ հանձնաբարել ե մեկ ուրիշին դրելու:

Նա դադարեց խոսելուց և շեշտակի նայեց կուլիյենի աչքերի մեջ:

— Ի՞նչ ե, դու ծանոթ չե՞ս այս նամակի բովանդակությանը: Ինչո՞ւ հազար վոչինչ չես ասում: Այն ժամանարկ վերցրու կարդա, յես նորից եմ ուզում լսել: Զեկայի աշխատակիցը ծնոտը ձեռքին հենած պատրաստվում եր ունկնդրելու:

Կուլիյենը ցանկացավ ակզրում թղթի անկյուններում կատարած մակարությունը կարգավ, չեկայի աշխատակիցն շտափեցրեց:

Դու կարդա նամակի բովանդակությունը:

Կուլիյելը կլանված մեքենայի վրա առպաղբաված խորհրդավոր նամակով, սկսեց կարդալ:

«Թաճկապին Վլագիմիր:

Զափազանց զգացված հմ: Յեթե յես լիմանուի, վոլ հեղափոխությունն իր հետ բերելու յիշ այն, ինչ մենք չելինք սպասում, ապա յես վազուց կհեռանայի: Հիմա ահա յես մնացել եմ, ինչպես ասում են, հիմար դրության մեջ: Ի՞նչ անել, ո՞ւր գնալ: Յեթէ չկա, սիրելի Վլագիմիր: Միակ յելքն այն և — ծառայել նրան, ինչ առաջ պաշտել ես: Յես շատ բան կարող եմի անել, բայց հիմա վորհե գործ անելու տրամադրություն չունեմ: Աշխատանքի պահին մեջս ցանկություն և առաջանում, ամեն ինչ վոչնչացնել, փչացնել: Իմ ցանկությունն և յեղել ծովից մեծ տարածություն իւել, այստեղ աշխատել, աշխատել աղովորեն և անխոնջ, մինչև մարդիկ կղնահատմն իմ: աշխատանքը, միջոցներ կտան, վորպեսդի յես մի քանի հորի տեր դառնամ: Այն ժամանակ յես կատակեցի յերկրի ընդերքին՝ ինձ ավելի մեծ քանակությամբ նավթ տալ: Յեզ գիտես, յերկիրն այդ կաներ: Յերկիրը սիրում և մարդկանց, վորոնք հասկանում են նրա գաղտնիքները: Իմ բոլոր իդերը հաղաւապակությունն ավթ տալ:

Նատանը անոթների պես նրանց միջով իսկական սել արյուն և հոսում: Նրանք, այդ արյունաւասր անոթները, շատ խորն են ընկած: Մարդիկ սովորական աչքով տեսնել չեն կարող: Նրանք չգիտեն, վոր ծովախորշի ընդերքում նավթն ավելի շատ ե, քան վորեե տեղ: Ո՞վ կիմանա, յեթե բանամ վոչ այն չերտը, վորը հավթով ավելի յե հաղեցված, նավթարեր տեղամասերի վոխարեն ցույց տամ բոլորովին աներերի հողարմաս: Այստեղ ծիծաղս և գալիստ յերեսներ կորքան հիմար են մարդիկ:

Լավ, յես բարխական յերկարացը նամակս և յերեսի ձանձրացը: Հարցնում ես կատայիք մասսին: Վո՞չ, սիրելիս, վո՞չ, դեռ չի ամուսնացել: Հիմա նա յել սկսել և նավթով հետաքրքրվել: Ռեզում և մտնել համալսարան: Ի՞նչ պեսոք և սովորի՝ յես չեմ պատկերացնում: Մի՞թե այժմ կարելի յե խոսել կարգին գորոցի, տասանովների, զիտական աշխատանքների մասին: Ամեն ինչ շուռ և յեկել: Իմ ծանոթներից մեկը կաֆեղայի վարիչ և յեղել, հիմա նրան հասարակ ուսուցչի տեղ ել չենքնդունում: Պատճառաբանում են, վոր իբր նրա գաղափարները հին են: Ի՞նչ կընի վերջը՝ յես չեմ հսկանում:

Ի գեպ, շատ լավ ես արել, վոր ժամանակավորապես աղջանում վիտիւ ես: Կողով՝ հիմնալի մենք կկարծի, վոր այծի պոչի հետեւ թագընված և գրաֆ Զատոններ աղջականը: Ծիծաղելի յե:

Դե, մնասն բարուվ, տղաս: Դու ինչ-վոր քա-  
ղաքական պայքարի մասին ես գրում: Իհարկե,  
այդպես ել հարկավոր ե: Տվյալ դեպքում հպա-  
տակությունը դավաճանություն ե:

Գրիր, շուտ գրիր: Տեղեկացրու հորդ մա-  
սին:

### Ա. Մ. Զատոնսկի:

Կուլիյեվը կարդալուց հետո նամակը մի կողմ  
դրեց և ճեռքը վեր բարձրացնելով, ուսերը թափահա-  
րեց.

— Վոչինչ չեմ հասկանում:

— Իսկ յես յենթադրում եյի, վոր դու ինձնից  
ավելի շատ բան կհասկանաս, — խորամանկորեն ժըպ-  
տալով առաջ չեկայի աշխատակիցը:

— Ինքը հրաժարվում է:

— Այդտեղ կասկածելի մի կետ կա:

Չեկայի աշխատակիցը նորից ժարտաց: Այդ ժըպ-  
տով կարծեա ասում եր՝ «միւնույն ե, բայ դուրս  
չի գալու, ասա տեսնենք...»: Կուլիյեվը մտածում եր  
կասկածելի կետի մասին խոսելու: Դեռ վոչինչ չա-  
սած, նա տեղից վեր թռավ:

— Ինչպե՞ս այդ համկանազ:

— Ի՞նչը, — միայն աչքերը վեր բարձրացնելով հե-  
տաքրքրվեց չեկայի աշխատակիցը:

— Մի կողմից նա ծովախորշը ցամաքացնելու հա-  
մար ճիշտ ուղղություն ե ֆույց տալիս, նրա ցույց  
տված ուղղությանը համաձայն ե ակարտեմիկ Շես-  
տովը, մյուս կողմից նա գրում ե, վոր ցանկություն  
ունի ամեն ինչ փշադնելու: Վոչ մի կերպ գրուիս չի

մտնում, վոր մի մարդու մոտ այլնկիսի ծայրա-  
հեղ հակառակթյուններ լինեն, չե՛, դըռիխս չի մտնում:  
Ինքը սասանան այս գործից պլուխ չի հանի: Բայց  
և այնպես ծովախորշի բախտը վճռողը վոչ թե այդ  
թուղթն ե, այլ աշխատանքը, վոր նա պետք ե տանի:  
Փորձելու համար, դժոն, անհրաժեշտ ե նրան ազատել:

Վերջին առաջարկությունն ինքնին յեկավ,  
կուլիյեվը նրա վրա յերկար չեր մտածել: Բայց վո-  
րովհետուն առաջկություն չկար, նա ավելի ևս պըն-  
դեց.

— Դա նրա համար կվնի մի դպրոց, վորտեղ իր  
քաղաքական համոզմունքների մասին նա քննություն  
կտա: Գիտես այստեղ ինչ յուրահատկություն կա:  
Յեթե ակառեմիկ Շեստովը մեր մարդը չլիներ, կարե-  
լի յեթ և կասկածեն: Բայց նա մեր մարդն ե: Յեկ չե  
վոր մեր Միության մեջ նա միակ լավ մասնակետն ե:

— Ի՞նչ կհրամայես, ի՞նչպես վերաբերվեմ, — այս  
անդամ արդեն թեթեղ ժամանուի հարցրեց չեկայի  
աշխատակիցը:

— Ես քեզ լուրջ բան եմ ասում: Այդ նամակի  
վրա յես կասկածում եմ: Յեթե գաղտնի յե գրովել,  
ինչպե՞ս տպագրվեց: Ազա ո՞ս տպագրեց: Այս  
խորինները պարզեցու կարիք կա: Շատ հավանական  
ե, վոր այս նամակը սարքել են նրա հակառակորդ-  
ները:

— Այո՛, յես ել եմ արդարեա մտածում:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, այստեղ ինչ-վոր բան կա:  
Բայց դրանից, շատերն են պնդում, վոր Զատոնսկին

ազնիվ մարդ ե: Նա, չնայած իր ծագմանը, դեռևս  
մինչեւ հեղափոխությունը բանվորների տերն է  
վայելել: Դա ինչպես քեղալ, վոր իսկույն նա հակա-  
հեղափոխական դարձավ:

— Ինձ համար միևնույն ե, — ասաց չեկայի  
աշխատակիցը, — մենք առանց նրան եւ կարող ենք  
որարգել, թող դա աշխատի:

Մի վարծիր, թե մենք նրան չորս պատերի  
արանքում ենք սրահում: Վոչ: Իր ցանկությամբ նա  
աշխատում է քիմիական լաբորատորիայում: Հատ  
նրա առածների — այդ քիմիան նա շատ է սիրում:  
Ցանկանում է ճշտել Բերի-Հեյքաթի նավթի քիմիա-  
կան բաղադրությունը:

— Եթե դեմ չեմ, — նրան ընդհատեց Կուլյեյիվը, —  
բայց և այնպիս մեր մոտ նոր սահելի շատ ոգուտ  
կտա...

— Ասացի, վոր դեմ չեմ: Վաղի նա քիմիական  
մի քանի սրվակ հետո ցանկանում է տանել նստթա-  
յին վնասություն՝ վերջնական յելլրակացության  
դարլու: Նա այնքան լարված է աշխատում: Կարեմ,  
վոր համարսարանից հետո վնա տուն:

Այո՛, այդպես եւ պայմանավորվենք: Թող դա,  
իր ցանկացած կղզին ստեղծի, կառուցի վեշկան...  
Հետո կտարգիֆ, թե վորքան նա արդարացի յե յե-  
ղել... Համենայն դեպս մենք պարզելու յենք, թե  
այդ նամակն ում ձեռքով ե գրվել...

\*\*\*

Հետերակ որոց վաշ առավոտյան չեկայի աշխա-  
տակիցը հեռախոսով յերկու թե յերեք բառ բաժրուց  
հետո տեղի ունեցած հանկարծ սիեր թուալ:

— Լսում եմ, լսում եմ, հրավիրեցեք, լսում ե՞ք,  
հրավիրեցեք բժիշկներին, թող միջոցներ ձեռք առ-  
նեն... Միայն չո՛ւտ, չո՛ւտ:

Նա լսափողը կախեց, տագնապով դուրս յեկավ  
առանձնասենյակից: Միջանցքում պատահեց մի մար-  
դու, վլորի միայն վոտքերն եյին նշմարվում, իսկ ամ-  
բողջ մարմինը մթության մեջ եր գտնվում:

— Յեվ ի՞նչպես ե կուրացել:

— Ամբողջովին:

— Յերկու աչքո՞վ:

— Այո՛, յերկու աչքով: Գիտեք, աղքերը բաց են,  
լայց վոչինչ չի տեսնում: Յերբ նրա հետ խոսում եք,  
դեպի ձեզ մ նայում, բայց չի տեսնում...

Նա շտապ դրաբս յեկասի շենքից, մասեց  
մեքենան, ապա չոփերին հրամայեց.

— Քիր նավթային ինստիտուտ...

Այո՛ նույն ժամանակ Կուլյեյի ասլտոմեքենան,  
նույնպես սլանում եր դեպի նավթային ինստիտուտը:  
Այդտեղ, լաբորատորիայում աշխատելիս, քիմիական  
նյութերի համեմարժանիք պայմանավորված կուրացել եր  
հայտնի ինժեներ Զատոնակին:

Նրանից դեռ շատ քան եր սպառավում, բայց...  
կուրացել եր:

Առողջ դրությամբ նա գոնե կառպացուցեր իր  
արլարացի լինելը, յեթե միայն արդարացի յեր:  
ի՞նչ աներ հիմա: Այդ դրությամբ վատրո՞ղ եր աշ-  
խատելու: Այս հարցերի մասին մատածելիս կու-  
լիյնելը կտարգիմ մի բան կորցրած լինելը, ճանա-  
պարհի կետին թողած: Այնուամենայնիվ, նա վորոշեց

խոսել հենց իր՝ ինժեներ Զատոնսկու հետ։ Այդ բանը նրան հաջողվեց միայն չորս որ հետո։

Յեկարը հնարավորություն ունեցավ նրա հետ տեսնելուու, չգիտեր ինչից սկսել։ Զե՞ վոր այժմ նորովոր իրեղին այլ կերպ է նայում։ Ո՞վ կարող ե իմանալ, թե ինչպես կլիրաբերվի նա, յերբ լուսա, վոր Շետովն իր նախադին հավանություն ե ավել։ Կշարժվե՞ մասնագետին հատուկ փառասիրության զգացմունքը, թե՞ միանուային անոտարբեր կլինի դեպի այդ լուրին ու իր մեջ բոլոր տեսալիի նախագըծերի հեղինակներին կհայցոյի։ Վերջինս ավելի քիչ հավանական եր թվում։ Համենայն դեպս կուշեցիլը վորոշեց ամենից շուտ դիպչել այն լարերին, վորոնք ավելի զգայուն են։ Մասնագետները, մասնավանդ սիրով աշխատող մասնագետները, զուրկ չեն փառասիրության զգացմունքից։ Այդ բանը կուշեցիլը վաղուց դիտեր։ Նա ականատես է յիշել մի մասնագետի մահվան, վորն իր կյանքի սմբեռ նախերջին բոսեցին հարցրել է։

— Արտյոմիչը նախադիս հավանություն ուվե՞ց — դրական պատասխան ստանալով, այդ մասնագետը միայն կարողացի է ավելացնել։ ուրախ իմ նախադիսն անցավ, դա լավ է...

Կուշեցին իր խոսակցությունը վողջույնով սկսել չկարողացավ։ Վորքան հարմար էր վողջումնել մի մարդու, վորը նոր միայն դրկիվել է տեսողությունից։ Կուշեցիլը ցավակցություն հայտնեց պատահած գեղաքի առթիվ, առա զուշությունը հայտնեց ակադեմիկ Շետովի կարծիքը։

Երանք գոտնվում ելին մի լուսավոր սենյակում, վորի մի դուռը տանում եր դեպի փողոց նայող պատշտամբը, իսկ մյուսը — դեպի յերկար ու միշտ ելեկտրականությամբ լուսավորված դահլիճը։ Կուշեցինի հայտնած լուրը լսելով, Զատոնսկին վեր թռավ և արտիստի պես հայացքը ողում պատեցնելով, անաց։

— Դա ի՞նչ ե վոր, միայն մի թղթի վրա քաշած նախադիծ։

— Ուրիշ ի՞նչ կցանկանայիք։

— Յես կուզեցի իմ այդ նախադիծը գործ դարձնել։ Ա՛յս, ինչքան եմ ցավում, վոր կմ աշխատանքը կասկածի տակ եք առնում։ Հավատացնում եմ ձեզ, այդ բոլորն անհիմն ե...

Յես նպատակ եմ դրել պլանով նախադաշնամք մասը ծովից խըել, այն չահագործելու համար պիտանի դարձնել, վորպեսդի հետո, յերբ մարդիկ քայլեն այդ հողամասով, աշխատեն նրա վրա՝ հիշեն իմ մասին...

Ինժեները ձեռքն ողում բարձրացրեց, ապա բաց թողնելով, ավելացրեց։

— Ինչի՞ յեն պետք այն մարդիկ, վորոնք իրենց կյանքում վորեւ նպատակ չեն ունենում։ Ի՞նչի, — ասացեք ինդրեմ...

— Յես ձեզ հասկանում եմ։ Յեկարէ առանց նպատակի յել մարդ չկա։ Նայած թե...

— Այո՛, նայած թե ի՞նչ նպատակ։ Յես խոսում եմ իսկական, մարդկային նպատակի մասին... Յես

արդարիսի նովաստակ ունեցի : Յես ուղում ելի ռդատա-  
վիստ դարձնել իմ ընդունակությունները ... Հիմա...  
Կուլյյենը տեղից վեր կենալով, նայեց պա-  
տուհանից դուրս, շուրջ յեկալ և ձեռքն Ալեքսանդր  
Միխայլովիչի ուսին դնելով, ասաց :

— Այդպէս ել թող լինի, մի վհատվեք, մենք  
բոլոր միջոցները ձեռք կառնենք, վորպեսզի դուք  
կարողանաք ձեր առողջությունը վերականգնել :

## VI

Բայիսան խոհանոցում ըլացք եր անուամ :  
Լվացքի գոլործին անկանոն վեց եր քարձրանուամ և  
առաստաղին չհասած, անհետանուամ : Թեմիլը մինչեւ  
արմունկները քշտած, նա կրացել եր տաշտակի վրա :  
Աշխատելիս նրա ուսի ճերմակ մկանները, սեփ  
չժից կարած կիրճքակալի մեջ ամփոփված նրա հա-  
րուստ կուրծքը ցնցվուամ եյին : Եերեւամ եր, վոր Բա-  
յիսան կենտրոնացած մտածուամ եր ինչ-վոր կարե-  
վոր բանի մասին : Այդ դրությամբ նա մեկ կորչում  
եր լվացքի գոլորշու մեջ և մեկ եր կարծես ամպի հե-  
տեղից յերեսուամ : Նա այդ վայրկյանին ալելի գեղեցիկ  
եր, ավելի գրավիչ :

Եել յեթե լիներ մեկը, վորը Բայիսային յերբեք  
սիրել եր, տեսներ նրան այդ պահին, անշուշտ  
ավելի քան կտարվեր նրանով : Նրա բոլոր շարժում-  
ների մեջ ինչ-վոր նրբություն կար : Թեմիլը մկան-

նելը կարծիս յերաժշտական տակտի տակ եյին  
շարժվում :

Նա չըսեց, թե ինչպես նախասենյակի դուռը բաց-  
վեց և առա մի բան խուլ թոմվիաց :

— Յես քո...

— Նու, նու...

— Իսկ յես քո մոռւթը կջարդեմ...

— Փորձիր, տես յես ինչ կանեմ, տե՛ս...

Բայիսան թողեց կործը, դուրս յեկարլ : Նա իր հետ  
տարավ իրահարոցի սամանաջրի հոտը և գոլորշին :

Եերբ նա նախասենյակը մտավ, հանկարծակիի  
յեկած, մնաց կանգնած : Նա ցանկացավ հետ դնալ,  
մի չոր գցել ուսերին, սակայն ամուսինը, վոր հա-  
տակի վրա վայը եր ընկել, ճեռքը մեկնելով, դուաց .

— Սպասիր, Բայիսա...

— Ա՛, Բայիսա իվանովնա, բարե ձեզ, ինչ  
հրաշալի յեք դիմավորում, — ասաց Վոլկովը յեկ  
մտեցավ Բայիսային : Փոխանակ քաղաքավարու-  
թյամբ ճեռք տալու, նա ցանկացավ յերկու ճեռքով  
գրկել Բայիսային : Սա մի կողմ անցավ, յիշ Վոլկովն  
ուղը գրկելով, գետնին գլուխեց՝ վորդցային լուսանք-  
ներ շպրտելով :

— Դա՞ ինչ ե, իմ կնո՞ջն ես ուղուամ զիսչել,  
ահա քեզ, — և Վոլկովի գլխին մի բռունցք իջավ :  
Հարվածից հետո Վոլկովը մի հենարան եր փընտ-  
ուում, վորից կարելի լիներ բռնել ու վոտքի կանգ-  
նել... Սոլալով նա մտեցավ սեղանին, ապա բռնեց  
սիոսցի ծայրը, քաշեց... Սեղանի վրա դրված եյին  
գրաֆինը և ընթրիքից մնացած թեյի պարագաները :

Դրանք հաստակելին զարդվելով, զլնդոցով վշտվեցին: Զուբը, վոր գրաֆինից թափինց, անցավ Վոլկովի ու Սարդարյանի տակը:

Ռայխանն չվարել եր ու անողնական մի անկյուն քառակեց: Յեվ բնակ չեր միջամտում: Յերբ Վոլկովը թեյի պարագաները ջարդեց, Ռայխան միայն հեղմանքով առաց.

— Զարդեցեք, միւնույն ե, հիմարների համար որենք չկա դրված:

— Ո՞վ, յես Ե՞մ հիմարը:

— Նա, Ռայխան, հիմար չե, այլ վախկոտ ե, վախկոտ, կատովից ել վախկոտ... հա, հա, հա, — ասաց Սարդարյանը:

— Իսկ դու, ըստ յերեսութին, ամենամեծ հերոսն ես աշխարհիս վրա, — դեմքը ծովոելով պատասխանեց Ռայխան:

— Այո, ամենամեծը, իլյա Մուրոմցից ել մեծը... Զե՞ս հավատում, յես քեզ ցույց կտամ, նայիր մկաններիս, — այս ասելով Սարդարյանը ցանչ կացավ վոտքի կանգնել, սակայն Վոլկովը նրանից կախ լնկավ: Սարդարյանը ցեխի մեջ ընկած կենդանու նմանն վննչարտով նորից պետնին գլորովեց: Նրանք չարունակեցին իրար քաշքել: Ռայխան կանգնած նայում եղի այդ ինտելիգենտ մարտկանց, վորոնք հասել ելին փողոցային արարածների վեճակին:

— Ինչ զզվելի հոտ ե դաբիս, դա ի՞նչ եք իմել...

— Սխտորաջուր, յերդվում եմ արելովս, սխտութուր՝ խաչի հետ... Յերբեմն յես այդ հեղուկը գե-

րադասում են Փրանսիական չամպանից: Ա՛յ, հիւնակի, որ հանված հեղուկ: Նրանից հիմա չես գտնի, դա մինչ... վոչ, կարծեմ հետ... պատերազմյան ըրջանի հեղուկ եր... հա, հա... ի՞նչ ե, Անդրիյ Սերդեկիչ, դու արդելո՞ւմ ես ինձ... ինդրեմ, խոսքը պատկանում ե յերկրարանական բյուրոյի զեկավար Անդրիյ Սերդեկիչին... իւըն... իւըն... իւըն... Լսվում եր Վոլկովի խռպոտ ձայնը:

Ռայխան արադ անցավ սենյակը, հաղավ վերնազեսող և վերադարձավ:

— Նու, վոտ... այդպես իսկապես վոր կրկնակի զեղեցիկ ես, — այս ասելով Վոլկովը նորից փորձ արեց Ռայխային իր գիրկն առնելու: Սակայն աջ ուսին իջած ուժեղ հարվածը նրան հավասարակշռությունից զրկեց. նա դատարկ տոպրակի նման միջից ծալվեց, լնկավ հատակին... Սարդարյանն աջ ձեռքում բարձրացրեց կոտրած դրաֆինի կտորը և ցանկացավ իջեցնել Վոլկովի գլխին:

Ռայխան ծվվաց: Յերբ կուացավ ապակու կտորը իւզելու, նա կրկին զդաց քացախի սիրտ խառնող հոտ: Վոլկովը տեղից բարձրանալով վնաց դեպի Ռայխան և իր թե ծածուկ՝ քան եր ասում, բռնեց ու մի համբույր գրոշմեց նրա այտին: Սարդարյանը տեսավ այդ և գժվածի պես տեղից վեր թռավ: Սակայն յերկար ժամանակ նա վոտքի վրա կանգնել չկարողացավ: Որորից և սալածարդով հիվանդի նման ոկսեց գողացնել...

— Դու, վախկու, հավի պոչ... իմ կնոջն իմ տչքի առաջ խայտառա՞կ արիր, դե, ա՛ռ...

Նա վերցրեց ապակու մի ուրիշ կտոր, բայց

Ռայիսայի ձեռքը վրկեց մեկին մահից, իսկ մյուս  
մինչ ուղղիչ տնից :

Քիչ անց, յերկու հարբածները միմյանց ուսով  
ընկած, յերգում երին միայն իրենց հասկանալի, ան-  
դուժեկան մի յերգ : Այդքան շուրջ նրանք մոռացան  
հինգ լուսի առաջ պատահած գեպքը...

Ռայիսան զբաղված լինելով՝ ամուսնու տարորի-  
նակությունը դիտելով, բոլորովին չեր նկատել, վոր  
հաղի շորը արմտավել եւ: Վորտեղից եւ արյունը.  
վախցած տկաց զննել իրեն: Աջ ձեռքի արմունկի  
մոտ մի յերակ եւր բացվել, վորից անընդհատ հո-  
սում եր արյունը... Նրա ամբողջ մարմնով սարսու  
անցավ: Մի րոպէ թվաց, վոր արյունաքամ եւ լի-  
նում... Այդ մտքից սարսափիած, նա շտապ մտավ  
ներսի սենյակը և յերբ այնտեղից դուրս յեկամ,  
նրա դեմքը գունաթափել եր:

Նա շտապում եր ձեռքից հոսող արյունը կանգ-  
նեցնել: Նրանց տնից շատ մոտ ասլում մի մի  
բժիշկ: Զանցած հինգ րոպէ, Ռայիսան արդեն չնչա-  
սպառ ներս մտավ հարեւան չքաղոնից, տւղեց վեր  
բարձրանալ: Վերջին աստիճանների վրա վոտքիցը  
նրան չեցին հնարանդվում: Ի՞նչ սարսափելի յե: Սա-  
կայն Ռայիսան լացեց բոլոր ուժերը, հասավ բժշկի  
տան դուանը: Դրանից հետո դուռն դանդակին ընդ-  
հատվեց միայն այն ժամանակ, յերբ տան ծառայողը  
Ռայիսային գրկած տուն տարավ:

Բժիշկը—մաղատ դիմով, հաստ ասրակուց պինս-  
նյեն աչքերին, լիքը թշերով մի մարդ—կատակ անե-  
լով ոգնություն ցույց տվեց:

— Ինչո՞ւ այդքան վախենում եք, կանայք ուրիշ  
ժամանակ հինգ անգամ ալելի արյուն են կորցնում  
և ելի վոչինչ... այդպես եւ բնության որենքը:

Ռայիսան հաղիվ լսելի ձայնով պատասխանեց:

— Այսո՛, նա ուրիշ պայմաններում եւ վիճում...  
իսկ հիմա...

— Հիմա յել բնական որենքի դեմ վոչինչ չի  
կատարվել. ե՛, ի՞նչ կա վոր արյուն ե, հոսել ե,  
նորից կդա, կլցվի: Դուք յերեկ դիտեք, վոր սա-  
կավաջուր վայրերում գյուղացիները ավաղաններ են  
պահում, ջրով լցնում եւ հանկարծ, միանգամից բաց  
թողնում: Ա՛յ, այդպես ե, այդ ավագանի նման ե  
մարդու մարմինը: Սակայն բժիշկը տարվելով խո-  
սակցությամբ, անդամ չհարցրեց վիրավորվելու  
պատճառները: Վերքը կապելուց հետո նոր միայն  
հիշեց այդ մասին:

— Ինչո՞վ եյիք ծակել:

— Ապակու կտորով:

— Այսո՛, — զարմացած հարցրեց բժշկը: Նա  
թերահավատությամբ գլուխը միայն թեքեց... Այս-  
տեղ ել նա կուզեր բնության որենքի մատին կատա-  
կել, բայց հարմար առհիթ չկար:

Վերքը կտպելուց հետո Ռայիսան հանգստացավ:  
Շնորհակալություն հայտնեց բժշկին, սեղանի  
վրա դրեց մի քանի թղթադրամ ու հեղ քայլերով  
դուրս յեկամ: Տան ծառայողը, վոր Ռայիսային մին-

չեմ դուռն սւդեկցեց, պէտքադառնալով, բժշկին հայա-  
նեց.

— Պյուտը կարսիլէ, դուք իմացա՞ք դա ուժ  
կինն ե:

— Աստված պէտ, վլ'չ...

— Դա Սարդարյանի կինն ե, նա, վոր Մոսկվա-  
յից ե բերել:

— Ա՛, ահա թե ինչ:

Դա իհարկե, չեր կարող ոգնել բժշկին, վորակեա-  
լի նաև իմանա յերակը ծակելու պատճառը: Բժիշկն  
այդ յերեկո շատ մտածեց, բայց վորեւ յենթադրու-  
թյան վրա հաստատ կանգ չառալ: Զնայած Ռուբե-  
սան նրան ճշմարտությունն եր ասել, բժշկը դրան  
չեր հավատում: Նա չեր կարողանում պատկերացնել,  
թե ինչոր ապակու կտորով կարելի յե այդքան նեղ  
անցք բանալ: Կարծես մեկը դիտավորյալ ծակել եր  
նրա յերակը:

Հետեւյալ որը, յերբ բժիշկն իմացավ Լիզայի մոր  
սպանության մասին, նա մատու դրեց բերնին: «Աչա-  
թե ինչ», — մտածեց նա: Այստեղ ինչ-վոր բան կա:  
Բժիշկը վաղուց լսել եր Սարդարյանի ստեղծած  
սպատմությունը: Նա գիտեր և այն, վոր լիկան  
հղի յե: Ռայիսայի մասին շատ չնշին տեղեկու-  
թյուններ ուներ: Գիտեր միայն, վոր մի աղջիկ  
Մոսկվայից յեկել ե, քայլայել դեռևս չամրավնդ-  
ված մի ընտանիք, խոցել մի ուրիշ կնոջ առանց  
այն ել խոցված սիրտը: Միայն դա: Ռուբէ վոչինչ  
չտեսեր:

— Այստեղ մի բան կա...

Բժիշկն իր մոտ կանչեց տան ծառայողին և  
հարցրեց:

— Դու յերեվի լիմանաս, Լիզան ի՞նչ վերաբեր-  
մունք ուներ դեպի այն նոր կինը:

Ծառայողն այդ մասին միայն թուոցիկ տեղե-  
կություններ ուներ, բայց վորակապի բժշկին անպա-  
տասխան չթողնի, ասաց.

— Շատ, շատ վատ ելին նրանց հարաբերություն-  
ները:

Հենց այդ որն ել բժիշկը մեծ անկեղծությամբ  
եր բարեկամներից մեկին պատմում եր Լիզայի և  
Ռայիսայի հետ պատահած դեպքը և իրեն հասուկ  
շտապողականությամբ յեզրակացություններ հա-  
նում...

## VII

Արդումանյանը մեկը մյուսին հաջորդող դեպ-  
քերի մեջ խորանալու ժամանակ չուներ: Կյանքի  
ընթացանուր հոսանքում մարդիկ գետի վրայով քշվող  
տաշեղի նման մեկ բարձրանում են ալիքների կատա-  
րած մեջ ցած իջնում: Յերբեմն ջրապտույտներում  
նրանք ուղղությունը կորցրած, շուռ-մուռ են գալիս:

Արդումանյանն ել յերբեմն, յերբ նստում եր  
խորհում իր հետ կատարվածի մասին, շատ բան չեր  
հասկանում: Մի բան նրան հասկանալի յեր, նա դե-  
մեր, վոր Սարդարյանի ստեղծած կծիկը նոր - նոր  
բաց եր արակում: Յեն նա շտապում եր, վորքան կա-

ւելի յե՝ գովծը շտապ մինչև վերջ հասցնել : Մովա-  
խորչի ցամաքայցման դործի դանդաղեցումը նրան շտա-  
կը զբաղեցնում :

Նա չարունակում եր Զատոնսկու կարծիքը  
պաշտպանել : Յեմ գործն ավելի արդյունավետ դարձ-  
նելու համար կցանկանար, վիրապեալի Զատոնսկին  
նույնպես իր հետ լիներ, դործով ապացուցեր Զա-  
տոնսկու արդար լինելը : Կհաջողվի՞, արդյոք, թե  
ինքն ել վերջում պետք է մեղամիոր մարդկանց շարքը  
դասվի : Ինչելից, կյանքն ինքն այդ ցույց կտա : Յերկ-  
րաբանությունը քիմիա չե, վիրապեալի նախորոք իմա-  
նաս, թե տվյալ յերկու նյութի խառնությունը ինչ կըս-  
տացվի : Նաևթային հորը նա նմանեցնում եր խոնավու-  
ցած փամփուշտի, վորը կարող եր պայթել և չպայ-  
թել : Վորաբեազի աշխատանքն իոլուր չանցնե, պարզ  
ե, նախորոք վորոշ ստույգ հաշվներ հարկավոր են :  
Տվյալ դեպքում իր հաշիվները շատ նման ենին Զա-  
տոնսկու հաշիվներին : Այդ պատճառով նա կցան-  
կանար Զատոնսկու հետ միասին շարունակել աշխա-  
տանքը : Սակայն ինչն եր պատճառը, վոր նա չե յե-  
րեկում : Արդումանյանը վոչ մի կերպ չեր կարողա-  
նում հասկանալ այդ հակառակթյունը :

Կույիելի հետ հետ հանդիպելուց հետո նրան  
թվում եր, վոր իրերի դրությունը կփոխվի : Մեծ  
հույսեր եր տալիս մանավանդ Մուկվայում դումար-  
ված խորհրդակցությունը, վորտեղ ակադեմիկ Շես-  
տովը Զատոնսկու նախագծին հավանություն եր  
տվել ... «Դա ինչպիս բան ե նշանակում ...», —  
մտածում եր Արդումանյանը : Յեմ նրան թվում եր,  
վոր ահա շուտով Սարդարյանը ծուղակը կընկնի :

Թող չիմար նա դեռ կարծի, թե ինքը միակ մարդն է,  
վորը կարող ե աշխատանքները դեկամարեկ, փուլյթ  
չե : Հետո նա ստիպված կլինի Արդումանյանի հետ  
հաշվի նստել :

Արդումանյանի հայրն անդամ չեր իմանում այն,  
ինչով ապրում եր վորդին : Ավելի շուտ նա չեր  
կարող իմանալ, վորովհետեւ իր կյանքում բացի հրո-  
կայական կաթսաների կողերի մեջ հրացած աեպեր  
խիելուց, վոչնչով չեր դրազվել : Նա միայն  
հրճվում եր վորդու աշխատանքով, առանց  
խորանալու այլ աշխատանքի եյության մեջ :  
Վերջերս հայրն զգում եր, վոր վորդու հետ  
ինչվոր բան ե կատարվում, սակայն վոչ մի անդամ  
չհամարքրաբանեց, չիմացավ իր սիրելի Արամի տիրու-  
թյան պատճառը : Անսահման ուրախ լինելով, վոր  
վորդին բարձրադրույն կրթություն ե ստացել և իր  
նման վաթսաների կողերի մեջ աեպեր խիելով չե  
պարապում, նա համոզված եր, վոր իր կյանքն այդ-  
պես մինչև վերջ խաղաղ կանցնի ...

Սակայն մի որ նա այդ խաղաղ ընթացքը խախտ-  
ված տեսավ : Այդ որը տոթ եր : Յերեկոն ել իր հետ  
քիչ հով բերեց և Պատշաճը պատուհանները բացած  
նստել ելին Արդումանյաները :

Փոքրիկ սեղանի վրա հոր և վորդու միջև դրված  
եր նարդին :

— Շեշ ու բեշ տուր, ա՞ զառ ...

Յերբ ցանկացածը չեր լինում, հայրը վորդու  
ներկայությունից չեր քաշվում և բերանը յեկած

Հայհոյանքը բաց եր թողնում : Ընդհանրապես նա շատ սակավախոս եր, սակայն նարդի խաղալիս բարկանում եր քարերի վրա, բարձրածայն արտահայտում իր միտքը : Խոհեմության, թե՛ ուրիշ բանի համար բանվորները նրան հարդում եյին, նրա մոտ ընառանեկան շատ դարտնիքներ պատմում : Իրենց դադտնիքը պատմողների մեջ կային աղբեջանցիներ, լեզգիներ, թաթարներ...

Արամը գիտեր, վոր հայրը չի հրաժարվում ուրիշների գործերի մեջ խառնվելուց, սակայն վոչ մի հանդիմանություն չեր անում : Ընդհանրապես նրանց միջև շատ քիչ դեպքերումն եր խոսակցություն տեղի տևմանում : Պատահում եր, վոր շաբաթներով միմյանց հետ վոչ մի իրոք չեյին փոխանակում : Այժմ նրանք նստած խաղում եյին : Միայն զառի հետ եր, վոր Վարդանը խոսում եր.

— Զա՞ռ, փանջ ու դու, — մեծքով կորանակով բացականչում եր Վարդանը :

Արամը սեվ քարերը վստահությամբ մի տեղից մյուսն եր տեղափոխում, հաճախ հարցական հայցքով հորը նայում :

— Հը՛, դառ... Զհար ու յեկ, մի յեկ տուր...

Զառերը վեր եյին թռչում, գլորվելով՝ մի անկյունում կանգնում :

— Լսի՛ր, հայրիկ, յես քեզ մի պործ եմ ուզում հանձնարեկ, — հանկարծ չորը դիմելով ասաց Արամը :

Հայրը միայն խիստ հոնքերը վեր բարձրացրեց : Այդ պահին նրա քիթը կարծես հարցական նշան եր գեմքին դրած :

— Դու լսե՞լ ես, — շարունակեց Արամը : — Վոր ժամագործ Ավագի կնոջը սպանել են :

— Լսել եմ, ի՞նչ կա, ամա նպատակը չիմացա :

— Վոչ վոք չիմացավ : Ե՛, վոչ ինչ, միեւնույն ե, մեռնելու յեր : Յեթե կարող ես, հայրիկ, քո ծանոթ քարտաշներից մեկին դերեզմանաքար պատվիրիր : Աղջիկը տնկց դուրս չի դալիս, ինձ ե խնդրել, իսկ յես ել իավի ժամանակ չեմ ունենում : Գերեզմանաքարի ձեզը յես կղծեմ...

Վարդանը վոչինչ չասաց : Նրբազդաց մարդը կարող եր նկատել, վոր նրա հայցքի մեջ զարմանքի նշան կար : Լսու յերեռութիւն նաև դարմանում եր վորդու այդորինակ առաջարկության վրա : Այլևս չխտդացին : Վարդանը նարդին վերցրեց, տարավ հագուստի պահարանը դրեց : Վերադառնալիս, դեռ սենյակի խորքից, բարձր ձայնով ասաց .

— Դրա մասին ինչ-վոր բաներ են պատմում :

— Ո՞ւմ մասին .

— Եղ եղի, եղ աղջիւ, — ձեռքը դեպի մի անկյուն ուղղելով, ցնույց տվեց Վարդանը : Նրա ժեստից կարելի յեր կարծել, թե աղջիկը հենց այդտեղ, պատկ նստած ե :

— Ի՞նչ են պատմում, — հոր ասածին ուշադրություն չդարձնելով հարցրեց Արամը :

— Ի՞նչ իմանամ : Մեկ հայրաւալս դաշիս ե , մեկ չե : Յերեկ փողոցում բժշկին տեսա : Կանչեց պատի տակ , հարցեր եր տալիս : Ճիշտ ե , բժիշկը մի քիչ խելքից թեթել մարդ ե , բայց մարդ ե ելի , ասում ե ...

— Ի՞նչ ե ասում , — արդեն հետաքրքրությամբ և անհամ բերությամբ հարցրեց Արամը :

— Եղ աղջկա մոր սպանության մասին : Ասում ե , իբր թե խանդի հողի վրա յե սպանված : Իբր թե սպանողը սխալվել ե՝ աղջկա տեղ մորն ե սպանել , դրա մասին հաղար տեսակի լուրեր են պատկում ... ասում ե քո մասին ել են խոսում :

— Ի՞մ , — խիստ զարմացած հարցրեց Արամը :

— Հա՛ : Ասում են , ով դիտի աշխարհիս քանը , մեկի գործը վոր վերջանում ե , ուրիշների մասին խոսելով ե պարապում ... Բայց բժիշկը խորամանկ ե , եղանակ յերեսիս չի ասի : Նա պատմեց Սարդարյանի կնոջ մասին : Այն յերեկոյան , յերբ այդ աղջկա մորը սպանել են , Սարդարյանի կենը յերակը ծակած , բժշկի մոտ ե վաղ տոկել : Բժիշկն ասում ե , վոր ընդունելության որը սպանության մասին վոչինչ չի խմացել , թե չէ կհետաքրքրվել , յերկար կպահեր : Իր հարցին են կինը պատասխանել ե , վոր ապակիով ե ծակել : Ամեն ինչ կարող ե պատահել : Բայց քո մասին վոր ասում են , բոլորովին գլուխս չի մըտնում : Ասում են իբր թե դու մինչ եղ նամակ ես դրել , վախեցրել եղ աղջկան :

Արդումանյանը վոչինչ չասաց : Նա միայն ծիծա . զեց , ինչպես ծիծաղում են մեծահողի մարդիկ , յեր լուսում են իրենց հասցեյին շպրտված դատարկ ու անիմաստ վորեւ մեղադրանք :

Հոր ասածի մեջ պարզություն կասկածանք եր գլացվում , վորն ընդհանրապես նրա բնակորությանը հատուկ եր : Արամը չեր կարող անուշագիր թող նել Սարդարյանի կնոջ մասին տարածված լուրը : Մի անգամ ել իր ականջին եր հասել , վոր Սարդարյանը կիզայի հետ ապրել ե ... Այս արդեն ուրիշ աղբյուր իրից , սակայն ինչ-վոր ընդհանուր կազ կա այդ բորբիրի միջև : Բայց և այնպես վոչ մի կերպ այդ յերկու դեպքը—այսինքն՝ Սարդարյանի կնոջ բժշկի մոտ գնալը և Լիզայի մոր սպանությունը Արամը զուզոր կատարել չեր կարողանում : Եթե հաղել ու պատճառաբանել չեր կարողանում : Եթե հակառակը կատարվեր՝ վոչ թե Լիզայի մայրը , այլ Ռայիսայի մայրն սպանվել , թերեւ վորոշ չափով հասկանալի կիմներ : Սակայն ինչո՞ւ Ռայիսան պետք ե Լիզայի մորը սպանվել (թեկուզ , ասենք , Լիզային ինկատիտուր) : Ի՞նչ վատ քան ե արեւ Լիզան : Ընդհանունաց : Կամ իսայի կողմից :

— Յեվ դու վորին ես հավատում , — փորձելու համար հարցրեց Արամը :

— Զգիտեմ , ի՞նչ խմանամ : Կինո ենպես բան ե , վոր ամին ինչ ել կանի : Գուցե և կատարել ե , և չի կատարել ... Հազար ու մի կարծիք կարող ե վիճել ...

Մի՞թե հայրա ել ուրիշների պես կասկածում ե ինձ վրա : Գուցե նաև կատարել ե անում , — մտածում եր

Արամը և իր ներառում պատասխանուած։ — Չե, հայրս կառակասեր մարդ չե։ Ուզեմն այստեղ ինչ-վոր լուրջ բամբասանք ե սարքված։ Սակայն այդ բամբասանքի վրա Արամը միայն ծիծառել կարող եր։ Հիմարդիք, ինքը միայն յերկու որ առաջ մեկել Լիդայի մոտ, նրա հետ խոսել, հուսալըել, իսկ այստեղ իր մասին այդպիսի բաներ են տարածում։

— Իմ մասին քեզ ո՞վ ասաց, — ջղայնացած հարց-րեց Արամը։

— Մի մարդ, վորն իսկի դրա մեջ վոչ մի շահ չունի…

Միայն այն բանը, վոր բոլորվին կողմնակի մարդիկ են սկսել նրա մասին խոսել, բամբասել, Արամին համբերությունից գուրս բերեց։ Նա տեղից վեր թռավ, առանց զմիալիկ՝ առնից դուրս յեկավ։ Մինչեւ Լիդայի տունը հեռու չեր։ Նա պետք ե դուրս դար Բիբի-Հեյրաթից, մտներ Բայիլը։ Յերեկոն չափաղանց խաղաղ եր ու տիուր։ Ծովը նիրհում եր… Ընդհանուր խաղաղությունը խանդարում եյին հատ ու վենաս կառքերը։ Յերթեմն ել լընդհանուր խաղաղությունը խախտում եյին չորեկառուքերի հատ ու կենատ սուլոցները։

Արամը շուապ հասալ Լիդայի տունը։ Դուռը ծեծեց։ Ներսից լավեց խուլ ձայն։ Պատշգամբում, սեղանի մոտ, նստել եր Լիդան։ Նա միայն մի բոպէ թույլ ժալտաց։ Մոր սպանությունից հետո դա առաջին ժարիտն եր, վորն ավելի շուապ ծամածության

եր նման, քան ժալտի։ Նրա նախկին վարդապույն շրթունքներն այժմ կապտել եյին։ Աչքերի տակը՝ նույնպես։ Առաջին հայացքից Լիդան հոգեկան հիվանդի տպավորություն եր թողնում։ Այտերի կարմիրը բոլորովին անհետացել եր, տեղի տվել ինչ-վոր գորշության։ Ճերմակ ատամները դեմքի գորշության համեմ ատությամբ ավելի ուժեղացնում եյին աններդաշնակությունը։

Յերբ Արամը ներս մտավ, նրան թվաց, թե տնից խոնավության հոտ ե բուրում։ Լվացքի տոաշտակը, վոր առաջ միշտ ել թաղցրած եր լինում, այժմ լընկած ե սեղանից քիչ հեռու։ Իր և մոր շորերը նույնպես անհոգորեն թափած եյին տաճ այս ու այն անկյունում… Սեղանի վրա դրված աղամանի աղը վեսով չափ թափած եր, իսկ կեսը ծածկված թղթի կտորուվ…

Մի անկյունում աթոռի վրա զանազան իրեր եյին թափած։ Տանի ամեն ինչ շուռ եր յեկել, անորինակ քառոս ստեղծուել։ Լիդան առես փոքրացել եր, կուչ յեկել։ Նրա միհամին այնքան պարզ եր, վոր Արամն անդամ չհարցրեց, թե ինչպես ե նա իրեն զդում։ Ինչո՞ւ հարցնել, յերբ ամեն ինչ պարզ ե։ Անհրաժեշտ ե միայն հուսադրել նրան, վորպեսզի նա բոլորովին չմարի, ինչպես իսպաւը կնում մարում, յերբ փայտն ավելացնող ձի լինում։

— Դու քեզ չե՞ս խղճում, — ասաց Արամը և խորը շունչ քաշեց։

— Ինչո՞ւ խղճամ։

— Ինչպես թե ինչու:

— Շատ հասարակ: Ինչի՞ յեմ յեա ալետք: Ի՞նչ ոգուտ եմ տվել և ի՞նչ ոգուտ պետք ե տամ մարդկանց: Ո՞վ սրամից հետո ինձ կարդին մարդկանց թիվը կդասի: Ինչպես յերիտասարդ թռչունի թեվերը կտրեն, ինձ հետ ել այդպես վարվեցին. յես հիմա թեվատ եմ...

Խոսելիս նաւ կծկվում եր սեպ շալի մեջ: Նրա աչքերի աղջկական փայլը փոխարինվել եր անուժ վրեժինդրության ու ատելության փայլով, սակայն դեմքն այնուամենայնիվ հեզ եր ու քնքույզ, հայացքը՝ յերազային:

— Դու քոլորովին իզուր ես այդքան շուտ կյանքից հիառթափիվել: Յեթե ճիշտը կուզեա, մենք միայն նոր ենք սկսում ապրել: Այն, ինչ մինչեւ հիմա կար, դա անցավ, դրա տեղ նորն է դալիս:

Նրանք յերկար խոսեցին: Արդեն ուշ եր, յերբ Արամը սեղից վեր կացավ, հրաժեշտ տվեց:

Առավոտյան հայրը զննող հայացքով վորդում եր նայում: Նրա հայացքի մեջ կար և կասկած, և կարեկցություն, և ծնողական կշտամբանք: Յերեկվանից նա սպասել եր վորդուց հասուտ մի բան իմանալու: Սակայն վորդին հորը վոչինչ չասաց: Հայրը սպասեց առավոտյան: Արամը մտքում զարմանում եր.

մի՞թե նա լուրջ կերպով իր ազնվությունը կասկածի տակ ե դնում:

— Ամեն հիմար բանի հավատում ես, — դառնությամբ ասաց նա՝ հորը դիմելով:

Վարդանը մնաց շվարած:

— Ինչի՞ մասին ե խոսքու:

— Վարպետ Ավագի կնոջ սպանության մասին:

Հայրը յերեք չեր ցանկանում, վրախսզի իր վորդին այդպիսի մի վոճիր գործած լինի: Այդ իսկ պատճառով նա դատավորի նման մանրամասնությունների մեջ մտնելու, պրատեղու վոչ մի կարիք չուներ: Միայն իր կասկածը փարատելու համար այդ մասին հարցրեց և յերբ արդեն համոզված եր, վոր իր վորդու մատը խառը չե, դրանից հետո թուզ աշխարհը փլվի: Միայն նա կորպեր, վորպեսզի այդ անտեղի լուրերն ել չպատսվելին:

Այբակն ել յեղամ: Հետաքննական մարմինները հաստատեցին, վոյ մոր սարմատթյունը կատարել են անհայտ չարագործները, և դրանով Արգումանյանի չուրջը յեղած խոսակցություններին վերջ դրվեցին:

... Փոքրիկ մակույկում նստած, յերկու հոգի թիալարում եյին դեպի բաց ծովը: Ծովը լուռ եր, հանդիսաւ: Միայն թիերի ծայնն եր լամփում: Մակույկն արդեն ծովի ափից ահագին հեռացել եր:

— 87-րդ ծովային տեղամասի պատճեցը սա՞ չե, — հարցրեց Արամը և սկսեց շուրջը դիտել:

Բատ իս, այդ պատճեցը Շիլս գյուղին տվելի մոտեկ պետք ե լինի: Այնտեղ մի ժամանակ Ալեքսանդր Միխայլովիչն սկսել եր հետախուզական աշխատանք տանել: Ինչպես բանակում հաջող հետախուզությունը դորամասի հաղթանակների գրավականնե, այնպես ել այստեղ հետախուզությունը վճռում ե ծովային հողամասի ապագա բարխուը:

Ծովափին ամեն ինչ այնքան պարզ եր յերեվում, հասկանալի, վոր վորևե հարց տալու կարիք չկար: Բավական ե դուրս գալ բաց ծովը, ամեն ինչ փոփոխվում ե, այլ տեսք ընդունում:

— Յերեկակայեցեք, վոր ըստ քարտեզի 87-րդ ծովային տեղամասը սա յե, — վորևե կասկած չհարուցող տոնով ատաց Արամ Սահակովիչը:

Արզուանյանը փորձող հայացքով նայեց նրան, ապա բարձրացրած թին զարկեց ջրին:

— Իսկ հետաքրքիր ե՝ Զատոնսկու քարտեզով այդ տեղամասը վորտե՞ղ կլիներ: Անշուշտ դուք հասկանում եք, վոր առանց հին կառուցվածքային քարտեզի, մի քիչ դժվար ե կողմորոշվել: Ինձ թվում ե, այս նոր քարտեզի հիմնարկան սխալն այն ե, վոր նա ասիը համարում ե ներկայումս գոյություն ունեցող, վերջերս միայն տեղադշված յեղերքը: Յեթե այդ այդպես ե, դուրս ե գալիս, վոր նամակարեր շերտերը գտնվում են 100-200 մետր խորության

վրա: Եիծաղելի յե: Յեթե այդպես լինելի, կասկածում եմ, վոր «Սովորվու» ընկերությունը հանձն առնելլ գումարներ դնել և վորոշ աշխատանք ծավալել ցամաքացման համար:

— Մի հանգամանք քեզ շփոթության մեջ ե գցում: Դու լավ իմացիր, սիրեցիս, վոր «Սովորվո» ընկերությունը կապիտալիստական ընկերություն եր: Նրա համար միննույն եր՝ 300 մետր խորության մեջ այսառնել, թե՝ 20 մետր: Առաջինը նրա համար ձեռնորու մեր:

— Կասկածում եմ:

Կուզերեսի մոտ յեղած խոսակցությունից հետո հետախուզական բյուրոն չհրաժարվեց Շեստովի կարծիքները ստուգելու համար հետախուզական հոր կամոննեցնեց: Թո՞ղ, դա շատ ձեռնատու յեր: Ըստ նույն կառուցվածքային քարտեզների, այդ հորը կիանգնեցվեր այնպիսի մի տեղ, ովորեղ նամակի շերտը կամ բացակայում եր, կամ ել սակավաբեր եր:

Յերկրաբանական բյուրոն հակառակ իր սովորությամն, այնպես ալբատ տիսեց այդ աշխատանքը, վոր սպասելու կամ դատություն անելու ժամանակ չկար: Այդ աշխատանքը հանձնարկել եր Արգումանյանին և Արամ Սահակովիչին:

Արամ Սահակովիչը հաճախ կատակելով ասում եր:

— Մենք յերկու աղաջներս միմյանց չուտ գհաւկանանք...

Ծովում միայն սլարդվեց, վոր նրանք միմյանց շատ դժվար են հասկանում:

— Եթե 250-րդ հորիզոնականն անցնում է 51-րդ ծովային տեղամասով, վորն ահա այստեղ ե դանը-վում, ինչպես դա ասում ե Սարդարյանը, ասպա այստեղով, իհարկե, յերբեք չի անցնի, — լարձես ինքըն իրեն ասաց Արգումանյանը:

— Այն ժամանակ, յերբ հարկավոր ե աշխատել, դատողություններ չեն անում: Վերելից մեղ առաջարկել են հետախուզական հոր կանգնեցնել: Ել ի՞նչ խոսակցություն. ո՞վ թույլ կտա, վորպեսզի մենք ամբողջ տարին խոսակցությամբ զբաղվենք . . .

Արամը ձեռքի թին մեկ բարձրացնում, մեկ իջեցնում եր: Հստ յերեսույթին նրա միտքը զբաղված եր բոլորովին ուրիշ խնդրով: «Ինչքան գործնական են դատելք . . .»: Արամը չեր կարող հասկանալ այդ շտապովականության խկական խմասութ: Նա համոզված եր, վոր ծովախորչի կառուցվածքային քարտեղը փոխվել ե:

Արամը թին ամբողջ ուժով ջուրն իջեցնելով ասաց.

— Ես կցանկանայի, վորպեսզի այս հետախուզական հորի հիմնարդմանը մասնակցեր ինքը՝ Զատոննեկին:

Արամ Սահակովիչի դեմքն այլայլից: Նա շատ լավ եր հասկանում, թե ինչ կնշանակեր Զատոննեկու մասնակցությունը:

— Առանց նրան ել յուշ կդնանք:

— Ավելի լավ կլիներ, վորպեսզի նա յեվս ներկա

լինել, չե՞ վոր այս հորը հայացքների ճշմարտությունն ե ստուգելու:

— Անմիտ բան եք ասում:

— Վոչ մի անմիտ բան, յես այդպես ել հարցը կընեմ: Չեմ ասում, վորպեսզի մինչև քննելը նրան բոլորովին ազատեն, վո՞չ, թող դա, հետախուզական հորի հիմնարդմանը մասնակցի, իսկը հետո իրենց դորձն ե:

— Դուք ել նրա հետ կնսոեք:

— Դուք յերեխայի չեք սպանում . . .

— Ես յերբեք այդպիսի ցանկություն չեմ ունեցել . . .

— Ե՛, լավ, թողնենք, միևնույն ե՛ յես հարցը դնելու յեմ . . .

Ծովի մակերեսույթը ապակու նման հարթ եր: Յել այնպիսի ապակորություն եր ատացվում, վոր Արգումանյանը թիսավարելիս լայնածավալ մի ապակու յե խիռում . . . Ծովի վրա այնքան ողը թարմ եր, դուրսալի . . . Ասկայն նրանք յերկուսով ել այդ չելին գդրմ:

Արամ Սահակովիչը բոլորովին կուչ եր յեկել: Նա չեր սպասում, վոր դորձն այդպիսի ընթացք կարող եր ստանալ: «Այ քեզ լակուտ», — մտածում եր նա: «Պետք ե շտապել շուտ ափ հասնել, Սարդարյանի հատ տեսնվել . . .»:

Յել իսկապես՝ ափ հասնելուն պես նա առանց հրաժեշտ տալու, թողեց Արգումանյանին ու գնաց: Արզումանյանը կռահեց Արամ Սահակովիչի շտապելու դրսապատճառը:

— Շատապի՛ց, շատապի՛ց, միւսնույն եւ բան դուքս չե՞ դա:

Արզումանյանը նույնակես շտապեց: Նրան հարկավոր եր Կուլիյելին դեկուցագիր ներկայացնել: Սակայն դա համարյա հնի կրկնողություն կլիներ: «Վո՞չ, այս գեսլքում ուրիշ գծով պետք ե աղդել... Պետք ե դիմել կուսկաղմակերպությանը...»:

### VIII

Խճճված դեպքերի խմաստը բջի քարտուղար Մարգսյանը չհասկացավ: Նրան թվում եր, թե Արդգումանյանը ցանկանում է իր «յես»-ն առաջ մղել: Իրադարձությունների սխալ ըմբռնման մեջ նրան ուղնում եր Արամ Սահակովիչը:

— Յերիտասարդներ են, իրենց ուզում են ցույց տալ, — մի անդամ առել եր Արամ Սահակովիչը: Յեղայի բանը նրա վրա խոր ազդեցություն եր թողել:

— Հիմիկվա յերիտասարդներն այդպես են, մեծ, փոքր չեն իմանում. մենք կուվել ենք, պայքարել, իրենց համար գեղեցիկ կյանք ստեղծել, բայց ելի չեն ուզում մեր պատիվը պահել, մեր հեղինակությունը ճանաչել: Դրանց մի տանելիք նորելի ժամանակի, հորում զնեցիք, ենտեղ մի քանի որ աշխատելին, վոր աշխարհի բանը հասկանային: Հենց եղակես են վերաբերվել, վոր նորից տան տերը մնաց տան տեր, առետրականն առետրական... Դրանց բոլորին կարելի յեր վոչնչացնել, մեր ճեռքը վերցնել, չուղեցին... Զհանդամն ինչ... բոլորը ջահելների դորձն ե...

Բոլոր կուսակցականները չե, վոր Սարգսյանի կողմանակիցներն եյին: Շատ յերիտասարդներ, վոր սկզբում խոնարհ ու խոհեմ եյին թվում, հետո սկսեցին քննադատել բջջի քարտուղարին: Դրանց թվին եր սկատկանում յերիտասարդ Մարտիրոս Կյուքունցը՝ նա, վոր մի տարի առաջ լուռ եց, համեստ: Մարգսյանը նրան պիրում եր: Նրա հետ եր հաճախ խորհրդակցում: Ճիշտ ե, Մարտիրոսը ոյուղացի տղա յեր, բայց խելոք դատողություն ուներ: Ավելորդ խոսք չեր ասի, վոր ասածի վրա ծիծաղեն: Բացի իր անմիջական աշխատանքից, վոր կատարում եր մեծ բարեխզաղությամբ, նա ակտիվ մասնակցում էր կուսակցական ժողովներին, ամեն տեսակի հանձնարարություններ եր կատարում: Այդ բանը Մարգսյանին դուր եր գալիս:

— Աչքաբաց տղա յե, — ասում եր նա:

Արտադրության մեջ ել վարպետները Մարտիրոսին հավանում եյին:

— Գործը, վոր վերցնում ա, սրտավի ա վերցը նում: Խոկ նա, ով գործը սրտավի վերցրեց, միշտ գործին վհաղթի... Մեզ մոտ մարդիկ կան, վոր գործին վախելով են մոտենում, կարծես թե փուշը ձեւըները կծակի... Դա մարդու բնավորությունից ա կախված: Գործից վոր կա, մարդու արյուն ա, միտը... և մարդ, որինակի համար, պետք ա սրտով մոտենադործին...

Մանուկ հասակից Մարտիրոսը սիրել եր աշխատանքը, հեղափոխությունից առաջ յեփվել եր գյուղական ծանր աշխատանքի բովում: Քաղաք գալուց հետո աշխատասիրության չնորհիվ շատ բան եր սովո-

ըել: Այժմ ել բոլորից, համարյա բոլորից նաև սովորութեա:

Սարդարանը նրանն հաճախ պատմուամ եր բանվորների ողբության մասին հեղափոխությունից առաջ: Վերջին ժամանակները միայն նրանց հարաբերությունները տառածել են: Միասին ընտառմ եին, խոսուամ, սակայն նրանց առանձնելու մեջ նախկին ջերմությունը չկար: Վոչ - վոք բացարձակիրեն չեր արտակարտել իր միտքը, բայց և այնպէս յերկուան ել միմյանց շատ լավ երին հատկանուամ: Միայն մի փոքրիկ առիթ եր հարկավոր, վորապեսղի յերկու բարեկամները միմյանց դիպչելին, ինչպես հարկն ե: Նրանք կարծես զեմ հանդիման կանգնած, տարառուամ եին ինչպոր մեկի հրամանին յեզ բավական եր, վորապեսղի լավեր այդ հրամանը, նրանք միմյանց կողմելին:

Եեվ այդ առիթը շուտով գտնվեց:

Սարտիրոսն ապրուամ եր Բիբի-Հեյբաթում, սարի լանջուամ կառուցված տներից մեկուամ: Նրա հարեւան Ալի Սատթարի կինը մահացավ: Շուտով Ալի Սատթարը յերկուրդ անդամ ամուսնացավ: Զուլեյիսան-նրա յերկուրդ կինը — գեղեցիկ եր: Կարումիր այսերը միշտ պապուամ եյին, գրավուամ նայողների ուշադրությունը: Զուլեյիսայի հետ նույնիսկ առաջին անդամ խոսողն իսկույն կնկատեր, վոր նա դեպի տղամարդիկ անտարբեր չե: Մարտիրոսն Ալի Սատթարի հետ միշտ լավ հարեանություն եր անուամ: Շատ հաճախ ասեղ, թել եր ուղուամ, փող եր տալիս, վորպեսղի իր համար վորմե բան գմնեն: Պատահուամ եր, վոր իր ստացած կտորը բերուամ տալիս եր Սատ-

թարի նախկին կնոջը — Գյուլդյաղին:

— Գյուլդյաղ բաշի, յերեխաներիդ համար չոր կարի: Գյուլդյաղն ամաչելով վերցնուամ եր նվիրը և յերախտագիտությամբ ժամանուամ էր ինչպես քույրը յեղբորը: Ալի Սատթարի յերկու տարեկան աղջկան և յերեք տարեկան տղային Մարտիրոսը սիրուամ եր, յերբեմն նրանց համար խաղալիք եր գնուամ: Հայրը տեսնուամ եր Սարտիրոսի վերաբերմունքն իր զավակների նկատմամբ ու գոհունակությամբ գովուամ Մարտիրոսին:

Սակայն Մարտիրոսի և Ալի Սատթարի բարեկամությունը յերկար չշարունակվեց: Գյուլդյաղը մի յերեկո պառկեց և այլևս վեր չկացավ:

— Սիրտս երգուամ ե, մի ցուցատ բան և ուզուամ, — տենդի մեջ անընդհատ կրկնուամ եր նա: Ինչքան ջուր եյին տալիս, նա չեք հանգստանուամ: Վերջին բոպելին նա արցունքն աչքերին ասաց.

— Յես գնացի... Դու քո մուգաւողին հասնես, Ալի... Մուրազդ մինի՝ յերեխանութիւն մի տեղ հասցընելը... Ալի Սատթարը լաց յեղավ: Նրա ձայնը Մարտիրոսը բառ եր աենյակուամ:

Յերգ Մարտիրոսը գլխահակ, մտավ վր հարեվանի տենյակը, Գյուլդյաղը շորը յերեսին քաշեց յեկցկուր ձայնով կմկմաց:

— Կարդաշ... կարդաշ... ալլահն ինձ չթողեց մուրազիս հասնեմ, յես կուզեյի քեզ ել մի յերեխալիներ, նրան տեսնելի... — նրա ձայնը բոլորունին խօվեց: Ամեն ինչ վերջացավ...

Յերկրորդ ամուսնությունից հետո Մարտիրոսը

Դադարեց ընկերոջ տունը հաճախելուց : Զգիտես ինչու Զուլեյխան խուսափում եր դեմքը ցույց տալուց : Յերբեմն միայն աչքի անկյունով նայում եր հարեվանին և լուռ անցնում : Ալի Սատթարի տաճուր հաճախ եր պատահում, վոր յերեխաներն աղեկտուր լազերին լինում, մայլում, ինչպես կատալի ձագուկները : Զուլեյխան նրանց ծեծում եր :

Ի՞նչն եր պատճառը, ինչու այդ կինը հալածում եր խեղճ յերեխաներին : Մարտիրոսի սիրուր յերբեմն կծկվում եր ցավից : Ինքն ել յերեխայի նման տըխրում եր : Իդեալ, նաև մտածում եր իր մանկության մասին, հրճվում, վոր իր մայրն ել խորթ չե յեղել . ո՞վ գիտե, ինչպես դառը կլինեյին իր մանկության որերը : Չնայած իր մանկության մեջ յերանելի վորչինչ չեր գտնում, բայց և արյակես խորթ մայր չե ունեցել : Բակում ընդամենը վեց տնօվոր կար : Ցերեկը տանը մնացողներն ասում եյին, վոր յերբ գյուղից դաշիս և Զուլեյխայի յեղբայրը, նա ավելի շատ եծեծում իր յերեխաներին, տնից դուրս անում :

Բայտ յերեկութին ծեծն ու հալածանքը չտանելով, չուտով Ալի Սատթարի տղան մահացավ : Աղջիկը դիմացկուն դուրս յեկավ : Չնայած գունատվել եր, կորցրել դեմքի մանկական քնքությունը, այնուամենայնիվ նա դեռ կայտառ եր ու կենսունակ :

Մի գեղեցիկ որ ել այդ փոքրիկ, գանգրահեր աղջիկը, վորը նշաճե փայլուն աչքեր ուներ և վորեն մեկին պատահելիս իր թոթովով լիորիով համարձակութեն հարցել եր տալիս և փաղաքշանքի արժանում, յերեկոյան տուն չեկավ : Յերկար վորոնումները վոչ մի արդյունք չտվին . Ալի Սատթարը

շատ դես ու դեմք ընկալ, հայտարարություններ տվեց տեղակամն թերթերում, բայց վոչինչ չոքնեց : Աղջիկն անհետ կորել եր : Ալի Սատթարի տունը խաղաղվեց : Զուլեյխան չարունակում եր իր խաղաղ կյանքը : Նա հարեւաններից վոչ մեկի հետ չեր խոսում, հարեւանությունը չեր անում . վոչ մեկը նրանից չհարցրեց փոքրիկ աղջկա մասին :

Բայց մի ամիս անց՝ սարսափելի մի լուր տարածվեց :

Նալթահորերի արանքում մազութի մի լիճ կար : Ամուն տոթից հետո մաղութի տակ յեղած ջուրը վորոշ չափով գոլորչիացել եր : Յերեխաները փոքրիկ մակույկներ շինած առանց վախի լողում եյին այդ լճի մեջ :

Դեպքը պատահել եր այսպես . մի փոքրիկ տղայի նավակի տակից յերկաթալար եր կախված : Լճի ափի մոտ նրա նամակին այդ լարն ինչ-որ բանով եր ընկել : Փոքրիկն ուրիշների ոգնությամբ քաշել եր իր նավակը : Ափի մոտ մազութի տակից նավակն իր հետ գուրս եր բերել մանկական դիմակ : Յերեխաները վախեցել, վախել եյին չորս կողմ :

Ապա հետաքննությունը պարզել է, վոր դա Ալի Սատթարի աղջիկն է : Թե Ալի Սատթարը և թե նրա կին Զուլեյխան դատի արվեցին : Դրանից հետո Սարտիրոսը նրանցից և վոչ մեկին չտեսավ :

Ուրիշ տարածվեցին, վոր Զուլեյխան սիրեկան և ունեցել և նրա հետ աղստ տեսակցություն ունենալու համար աղստվել և յերեխաներից : Ո՞վ կարող եր լինել այդ սիրեկանը : Յերկար ժամանակ այս հարցը մութ մնաց : Վոմանք ասում եյին, թե իբր

այդ սիրեկանը Շիխ գյուղից եր գալիս, վոմանք ել՝  
թե ինչու հեռու գնալ, սիրեկանը հենց Մարտիրոսն  
ե:

Այս յենթադրությունը Մարգարանի ականջին ել  
հասալ:

— Կուսակցական մարդ ես. բա քո մասին եղ-  
պես բաներ են պատմում, — մի որ Մարտիրոսին  
ասաց Մարգարանը:

— Ուրիշ բան ասա, եղ նոմերդ անց չի կենա, —  
պատասխանեց Մարտիրոսն ու թեվերն ավելի վեր  
քշտեց: Նա ցանկանում եր գործը շարունակել, բայց  
հանկարծ ասես մեջքին մի ծանրություն դրին, վորր  
պետք և դեն նետվեր:

— Զե՞ն, դու են կողմը չես ծոսամ, կոնսասմանտ դա-  
յի, դու գիտում չես, թե հարցն ինչպես առարկավոր  
լուծել, յեկել ես իմ յախիցն ես բուռում...

— Դե՞ն, զե՞ն, պասալ շանը քուչի-քուչի սովորեց-  
նել չի հարկավոր, նա ինքը բավ գիտի...

— Վերջավորությունն ասա, վերջավորությունը,  
ի՞նչ ես ուղղում առել: Քու եղ նոմերդն անց չի կենա:  
Իմ բոլոր հարեանները գիտեն, թե յես ինչպես եմ  
վերաբերվել եղ մարդկանց հետ, առաջինին աղիղ  
քրոջից չեմ տարբերել, իսկ յերկրորդի հետ ողի  
չեմ ել խոսել...

Այդ բողեյին բարի ժայիտը դեմքին նրանց մո-  
տեցալ հորավոր Ալի Բարա ողին:

— Եղ ի՞նչ զուռնա յեք փչում, համա յերկոր  
բայաթի ահա:

Մարգարանը վոչ նրա հարցին պատասխանեց  
վոչ ել վիճաբանությունը շարունակեց:

Աշխատանքից հետո նա Մարտիրոսին մի անկյուն  
քաշեց, ապա թե՝

— Յես քու վատը չեմ ցանկանում: Յես մեռնեմ,  
թե քեզ իմ յերեխաներից տարբերեմ... Մարտիրոսին  
ելի, վոր ականջներիս մի խոսք և համում, ասում  
ենք՝ սա յե, պրատիվ: Ճիշտ ե... յես ել քեզ տվում ի  
ստուդեմ... Անջախ դու ավելպահաս դուքս ես տա-  
լիս... Զհանգամն, ինձ ինչ, թե Ալի Մարթարը նա-  
մարդություն ե արել... յերեխոցը վիշացրիլ, դրա  
համար հո աշխարհս պաժար չենք տալու...

Մարտիրոսը զարմանում եր, վոր Մարգարանն  
այրեքան շուտ համաձայնվում է: Գոնե հարցը դներ,  
յեթե մեղամոր մարդ կար՝ պատճեր նրան: Իր մասին  
նա բոլորովին չեր մտածում: Պրեմոնիլը և նրա կի-  
նը, վորոնք միենույն բակում եյին ապրում, կարող  
եյին, վորաքես կուսակցականներ, հաստատել, վոր  
Մարտիրոսը Ալի Մատթարի կնոջ հետ յերբեք հանդե-  
պում չի տնեցել...

Մարտիրոսին թվաց, վոր Մարգարանը վկաների ուժն  
դպալով, վոր մեղադրամնք չբարդեց, հակառակ  
դեպքում վերակռնելին: Սակայն միայն այն փաստը,  
վոր Մարգարանն իր մասին նման յենթարություն-  
ներ ե անում, Մարտիրոսին վիրավորում եր: Միե-  
նույն ժամանակ նա մտածում եր, վոր յեթե ար-  
անգամ փորձն անհաջող անցավ, ապա ուրիշ ան-  
գամ նա կարող ե նույնը կրկնել՝ այլ առիթով:  
ինչքա՞ն լավ կարծիք ուներ նա Մարգարանի մասին,  
ինչքա՞ն ուժեղ եր սիրում նրան և ինչպե՞ս արագ  
սկսեց հիասթափել նրանից: Իսկ հետո այդ հիաս-  
թափությունն ավելի ու ավելի խորացավ:

Վարպետ Դմիտրին՝ թավ ունքերով մի ժարդ, յերկար ժամանակ միեւնույն հորի վրա աշխատեց: Յերբ պլանային խորության հասան, հորը ջրի շատը լվան իսկեց:

Մի ուրիշ հոր վարպետը հասցրեց 500 մետր խոռության: Շուտով շատրվան պետք ե խփեր: Նրա համար այնպիսի խողովակներ ուղարկեցին, վորոնցով, վարպետիք ատելով՝ միայն ծովից խևցինելով կարելի յեր հանել: Խողովակները չդիմացան: Նրանց հետ հորի հատակը զնացին և դործիքները:

— Անիծվա՛ծ և այսուեղի աշխատանքը, — դարձացած ասաց Դմիտրին ու մի գիմում ձեռքին յեկավ հորափորման բաժնի զբասենյակը: Այնտեղ եյին Սրամ Սահակովիչը, Սարգսյանը, Մարտիրոսը, Սփառա ողլին և Դմիտրու հետ աշխատող բանվորները:

— Յես յերկար տարիներ եմ դործ արել, բայց այսպիսի անիծված աշխատանքի յերեք չեյի հանդիպել, — իբր բարիությունը դսպելով ասաց նա:

Նրա ցառումնալից աչքերը հրո չիթեր ելին արձակում:

— Այլևս չե՛մ ուղում այսուեղ աշխատել: Մենք ազնվորեն աշխատում ենք, իսկ ինչ-լոր մեկը մեր աշխատանքը ջուրին ե ածում: Ի՞նչ ե, ուրիշների արյունը մերից մո՞ւդ ե, նրանց արած դործը, թափածքրտինքը մերից լա՞զ ե... Գիշեր-ցերեկ աշխատում ես, սպասում ես արդյունքին՝ արդյունք չկա:

Զեմ հասկանում: Կամ մենք ենք վատ աշխատում, կամ եղինչություն մեկը չի թողնում, վոր կարգին աշխատենք...

— Մի կարգին ասա, ի՞նչ է պատահել, ի՞նչ ևս կրակ թափում, — ձեռքն որում բարձրացնելով ասայ Արամ Սահակովիչը:

— Վո՛չ մի կրակ, Արամ Սահակովիչը, վարպետը ճիշտ ե առում, աստանան տամին, ո՞ւր մ նախթի, չկա՞... Իսկ մենք աշխատում ենք..

Բանվոր Աբասովի վատ ռուսերենով ասած խոսքին ուշադրություն չդարձնելով, Արամ Սահակովիչը նորից դիմեց վարպետին:

— Կարգին պատմիր՝ տեսնենք ինչ և պատահել...

— Մեզ մոտ ի՞նչ կարող ե պատահել, բոլորը պարզ ե, չեմ ուզում աշխատել, տվեք իմ աշխատավարձը, գնալու յեմ ուրիշ հանքում աշխատեմ... Ցալալի յե: Մարդ ձգտում ե մի բան շինել, դուրս չի դալիս: Մի տեղ ջուր դուրս յեկավ, այստեղ ել ենպիսի խողովակներ ուղարկեցիք, վոր չդիմացան, դործիքները թափինցին հորի մեջ...

Վարպետը սպասում եր, վորպեսզի իրեն պատասխանեն: Արամ Սահակովիչը պատասխանելու համար յերկար խոսքի ման չեկավ:

— Զի՞ կարելի շտակ յեցրակացություններ հանել, չի՞ կարելի... դա փոքրողություն ե, ուրիշ մոշինչ...

— Փոքրողություն...

— Սպասի՛ր, սպասի՛ր, — վարպետի խոսքն ընդհատեց Սարգսյանը. — Արամ Սահակովիչը ճիշտ ե

սատամ... Մենք հեղափոխությունը միանդամից չենք  
կատարել... Յեթե ամեն վոքը դեպքի համար ընկըճ-  
մես, ի՞նչ վկանի մեր հայր... Սպասիր, հին վարպետ-  
ես, բայց չգիտեմ, մոր մեր գործում յերբեմն անհա-  
ջողություն է լինում: Արամ Սահակովիչը ճիշտ և  
ասամ, լոկամել չե կարելի:

— Այդ յերգը մենք վաղուց ենք լսել: Յես խո-  
սում եմ մեր աշխատանքի մատին: Ինչու հորի այն-  
պիսի տեղ չեն կանգնեցնում, վոր նավթ տա: Ահա  
մեր հարեւան Արշակի հորն ել ջուր և տուել: Մի՞՛՛  
կարծում եք, թե Բիթի-Հերաթում ուրիշ հոգածու-  
չկար, վոր նավթարեր լինի...

— Вот правильно, нефтяной земля давай да... — а-  
սաց Մարտիրոսը, մեկ նայելով վարպետ Դմիտրուն,  
մեկ Արամ Սահակովիչին:

Խուսերեն խոսելիս Մարտիրոսը կմկմում եր: Գի-  
տեր, վոր սխալներ և անում և այդ պատճառով ել  
մի քանի բառ ասելուց հետո կարմրում եր, շփոթ-  
ված չորս կողմը նայում: Նա նախանձում եր Արամ  
Սահակովիչին, Սարդոյանին, վորոնք ազատ խոսում  
եյին ռուսերեն:

Արամ Սահակովիչը համբերել չկարողացավ:

— Դու ի՞նչ ես խաւալում: Յերբ խոսքը ձեր հո-  
րի մասին կլինի, քո մասին կլինի, այն ժամանակակ  
խնդրեմ...

Մարտիրոսը զգաց, վոր յեթե խոսակցությունն  
ռուսերեն շարունակվի, պարտվելու յե, բոլոր կանգ-  
նածներին և նստածներին ցույց տալով, նա հայերեն  
ասաց:

— Դա մեր գործն ե, վոչ թե մենակ քոնը...

— Ե՛, լավ, դու յել վիճարանելու տեղ գտար:

— Մարտիրոսը գործով են յեկել, իսկ դու ինչ-վոր  
վիճարանություն ես սարքում, — մեծին հատուկ տո-  
նով խրատեց Սարգսյանը:

Մարտիրոսը համբերեց, տեղից վեր թուավ,  
ձեռքն ողում թափառելով բարձր ձայնով ասաց.

— Неправильно да, неправильно, не туда буришь,  
нефть нет да, нет... Вот работа, человек пропал, инст-  
румент пропал... все, все пропал... Мы говорим давай  
нефтяной земля...

Բոլորն ել համականում եյին նրան: Վարպետ Դմի-  
տրին գրուխը տմբամբացնելով վրա յեր բերում.

— Ճի՛շտ ե, ճի՛շտ ե, այ կեցցե՛ս:

Մարտիրոսը մինչեւ վերջ այդտեղ մնալ չկարողա-  
ցավ: Նա գուրս յեկավ և զգաց, վոր հուզմունքը խեղ-  
դում և կոկորդը:

Իր ապրումները մեկն սրամելու մեծ պահանջ  
զգաց: Նա վերավորված եր Սարգսյանից: Այլին Սարգսյանի արթեհեր մազերը, յեւանկյունի փոքրիկ  
միրուքը Մարտիրոսի մեջ պատկառանքի զգացմունք  
չեյին առաջ բերում: Նա գտնում եր, վոր չնայած  
Սարգսյանը հին բանվոր ե, բայց և այնպես մարդ-  
կանց չի կարողանում ճանաչել, ախալներ ե անում: Մի բան պարզ ե. Արամ՝ Սահակովիչը նավթահանքում  
չափապանց կասկածելի դեր և խաղում: Սարգսյանը  
կուրորեն նրան պաշտպանում է: Ի՞նչ կերպ լմանար  
գաղտնիքը: Նա չգիտելու արյալիսի միջոցներ, վո-  
րոնք հնարավորություն տային կմանալու Արամ  
Սահակովիչը Հովսեվյանի խականան նախատակը.  
ձեռքի տակ բացահայտ փաստեր չկային:

Գյուղից գալու առաջին տարին Արամ Աւհակովի և Մարտիրոսի վրա բոլորովին ուշադրություն չեր գաղրձել: Հետո, յերբ քահե եր, վոյր Մարտիրոսն աչքաբաց տղա յե, հասարակ բանվորությունից նրան փոխել եր պետքառվոյն որաշունեն: Այդ որաշունենում Մարտիրոսը ցույց տվեց իր չնորհքը: Աշխատանքի ժամանակ վոչ մի հապաղում չեր լինում: Ենթան արագ եյին շարժվում նրա ձեռքերը, մերսները լարվում... Այդ պաշտօնումը ընդամենը մի տարի մնաց: Դրանից հետո նրան հորափորի պաշտոն տվեն: Մյուս ել Մարտիրոսի յավ հատկությունների մասին եյին խոսում: Բայց հենց վոր նա սկսեց խստել վարչության թերությունների մասին, վորոշ մարդիկ նրան չսիրեցին: Գումարեցին և այնպիսինները, վորոնք ըստ տարածեցին, թե իր Մարտիրոսը դաշնակցական և յեղել, բոլշևիկների հաղթանակից հետո փախել են, յեկել Բագու: Այդ լուրերն այժմ անկյուններումն եյին պատվում: Դեռ այն ժամանակն եր, յերբ ամեն ինչ «նեղ շրջանում» եր ասկում... «գաղտնիքի» ձեռվ:

Մարտիրոսի ականջին դեռևս այդ լուրերը չեյին հասել:

## IX

Ուրբաթ որ եր: Առավոտյան Մարտիրոսը դուքս յեկավ, նայեց յերկնքին: Յերկինքը մշուշապատ ելր, դժբույն, ծածկված ամպի ցաք ու ցրիվ ծվեններով: Նրանց միջով արևի ճառագայթները ծուլորեն յերկիրն եյին հատումում: Շուրջն ամեն ինչ մոխրագույն եր:

Մարտիրոսը կարգին լվացարան չուներ: Մի թառ

ջուր առած նա լվացվում եր պատշգամբում: Այդ պահին նրա մոտով անցնող Պրեսնովան (նրանք նախկին առնից այստեղ եյին տեղափոխվել): Հարդիմոց.

— Բան չի՞ հարկավոր, թե չետո չես առանի, լավ թուղ են ծախում...

Մարտիրոսը Պրեսնովային ժամանակով չնորհակաւություն հայտնեց, հետո թէ՝

— Յես եւ դրա մասին մմ մատածում, ուզում եւ շուկա գնալ:

Պրեսնովան նրան առաջարկեց միասին շուկա գննալ:

Մարտիրոսն լնդհանրապես շուկա գնալ չեր սիրում, դա համարում եր կնոջ գործ: Այդ որպ նա ցանկանում եր զինվորական բուզ գնել: Վաղուց նա յերազում եր բնկույզագույն բլուզի, կապույտ անդրավայրակիկի և յերկարածիտ կոշիկների մասին: Վերջին յերկուսը ձեռք եր բերել: Մնում եր բուզը:

— Գալիս մմ, մի քիչ սպասի:

Պրեսնովան գլխով արեց:

Մարտիրոսը ձեռքի թասը շտամ գրեց տանը, մաշկինակով յերեսը սրբելով զուրս թռավ:

— Ի՞նչ ես ուզում գնել:

— Ռուբաշկա, վոյեննի ոսւբաշկա...

— Ահա՛ թե ինչ... բացականչեց Պրեսնովան: Բաշկական և վորքան ամուրի ապրել ես, ամուսնացիր, մի կին բեր, միմյանց հետ կարգին ապրեցեք...

մանաւմանող վոր ծնողներ չունես, քեզ հարցիալոր և  
ամուսնանալ...

— Աղջիկ չկա ե՛, յես ցանկանում եմ ամուսնա-  
նալ...

— Ե՛, պատճառ գտամ, աղջիկները սնկի սրբս են  
աճում, ուր ել նայես՝ նրանց կտեսնես... իսկ դու  
ասում ես աղջիկ չկա:

— Լուրջ եմ ասում, չկա:

— Թո՛ղ, թող կատակներդ, աղջիկ ինչքան  
ուղում ես կտանենք: Սիրուն, բոյով, խեղոք արդա յես,  
քեզ համար վոր աղջիկ չդտնի, ել ո՞ւմ համար կը-  
դրտնի: Հիմա յել յերեվի մեկը կա, վոր քեզ համար  
մեռնում ե, միայն թե դու տեղը չես իմանում...

Պրեսնովան չեր կեղծում: Մարտիրոսը դրայիչ  
տղա յեր: Ենի Պրեսնովան նրան իր վորուու տեղ ըն-  
դունելով, ազատ խոսում եր հետը:

Ճանապարհը յերկար եր ու խոսելու համար ժա-  
մանակ շատ կար:

Ճանապարհի կեսին ինչ-վոր մի ձայն կանգնեցրեց  
նրանց:

— Ընկե՛ր Պրեսնովա, ընկե՛ր Պրեմովա:

Պրեսնովան հետ նայեց: Մի յերիտասարդ կի՞ն  
մոտեցավ, բարեվեց: Յերիտասարդ կնոջ վերնա-  
զգեստը թափանցիկ եր: Տակից յերեվում եր նույր  
կրծքակալը: Աչքի յեր զարնուամ կնոջ առողջ կուրծ-  
քը, վզի մկանները նուրբ եյին, գերող: Յերիտասարդ  
կի՞նը գլուխն դարչնագույն լայնեղը գլխարոկ ուներ,  
վոր նրա դեմքը ծածկում եր արեվից:

— Ա՛խ, Ռայիշա, ինչպե՞ս են գործերն:

— Վա՛տ, շախաղանց վատ: Յես մինչեւ հիմա

ձեզ մոտ չեմ կարողացել գալ: Յեթե իմանայի՞ք իմ  
դրությունը... չափազանց ծանր եր:

— Ինչո՞ւ:

— Թեվս արակիով ծակել եմ...

— Վո՛ր տեղը:

— Ա՛յ, ուղղակի այս արյունատար անոթը, մեծ  
ցավ պատճառակց, վախենում ենի, վոր մի բան կպա-  
տահի, բայց վառք աստծո, վուշինչ, ազատվեցի:

— Ախր ի՞նչ գործ ունեյիր ապակու հետ:

— Ա՛խ, զբա պատմությունը յերկար մ:

Ռայիսան խորհրդավոր հայացքով նայեց Մարտի-  
րոսին, ազա Պրեսնովային: Այդ հայացքով նա հարց-  
նում եր՝ կարելի՞ յե արա մոտ առնեն բան առել:

— Սա իմ հարեւանն ե, հրաշալի տղա, լավ կո-  
մունիստ, ինդընմ ծամեթացեք...

Անակնկալ այդ առաջարկությունից Մարտիրոսը  
քիչ շփոթվեց: Սակայն իսկույն ձեռքը մեկնեց: Նոր  
միայն նկատեց, վոր այլքան նուրբ կնոջ մատները  
դեմքի նման վոչ ճերմակ են և վոչ ել նուրբ: Ձեռքը  
մեկնելու հետ Ռայիսան այնպես ժպտաց, կարծես  
Մարտիրոսը վաղուցվա իր բարեկամը լիներ:

— Մի յերեկո լվացք եյի անում: Մեկ ել առենեմ  
ինքն ու վորվովը ներս մտան: Իրենց տեղը բոլորու-  
ինչն չեյին իմանում: Զարմացա: Մինչև հիմա յել  
չեմ համկանում, թե նրանք ինչպես են տունը գտել:

Ներքան մատան, սկսեցին միմյանց հետ կովել։ Աեղանի վրայից գրաֆինը գցեցին, ջարդ ու փշուր արին։ Մեկը մյուսի վրա ջարդված գրաֆինի կտորները չպրտեցին։ Ուզում եղի բաժանել, վակա... Ե՛ս, դեռ շատ բան կա, յօրը եք կին-բաժնում լինելու, կգամ, առանձին ձեզ կաղատմեմ... հիմա յես գնում եմ այս կողմ, ցտեսություն...

— Սպասի՛ր, Ռայխաս։ Դու Լիլայի մոտ գնացել ես, ինչպես ե նա։ Ինչդը յերեմիկ մոր մահից հետո շատ ե տանջվում։

— Սարսափելի հյուծվել ե։  
— Խեղճ աղջիկ։

Ռայխայի հետանալուց հետո Մարտիրոսի սիրտն սկսեց անհաճամշախի խիել։

— Ո՞ւմ կինն ե դա, — անհամբերությամբ հարց-րեց նա։

— Ինժեներ Մարդարյանի։  
— Բայց շատ գեղեցիկն ե։

— Ամուսինը ձեր գնահատուամ, հետը լավ չի վար-դում։

— Եկոթե, — զարմացած հարցրեց Մարտիրոսը։  
— Այո՛, այո՛, չափեցի՞ր, եղի դանդասալեց։ Գեղե-ցիկ ե, ինչոք աղջիկ, բայց հարմար մարդու ձեռք չի ընկել։

Մարտիրոսը նորից հետ դառավի, նարյեց հեռացող կնոջ հետելոց։

— Կին-բաժին մի՞շտ ե գալիս, — շինծու անտար-բերությամբ հարցրեց Մարտիրոսը։

— Այսաջ չեր գալիս, վերջերս սկսել ե գալ... Մարդարյանից գանդատվում ե, ասում ե՝ պատահ-մամբ եմ նրա հետ ամուսնացել, չլացել եմ նրա ճա-նապարհորդություններով, նրա հեռավոր բնակավայ-րով...»

Մարտիրոսն այլևս վոչինչ չհարցյալեց։

Նա նաև տակով թաղուն Ռայխային ուղեկցեց մինչև նրա անհետանալը։

Շուրկայում յերկար չմնաց։ Վերաբարձին Բայի-լի մոտ տեսավ Արդումանյանին, վորն իրենից մի քանի տասնյակ քայլ առաջ եր գնում։ Մարտիրոսը նրան բավ եր ճանաչում։ Ուստի քայլերն արտագաց-րեց և վաթենթը մի թեվի տակ հուպ տալով, մյուսը տարավ դեպի գլուխարկը։

— Բարե՛վ։

— Ե՛ս, կյուքունց, բարեալ, բարեսլ։ Դա ի՞նչ գնումներ են կատարել։

— Ե՛ս, ինչ եւա, վոր՝ ինչ գնումներ կատարեմ։ Յես լճկուրի գույնի առուրաշիա ի ուղում, նա յել չդուա։

— Եւ ինչպե՞ս ես։

— Սակ, սալամաթ ենք։

Փոքր պատվայից հետո Մարտիրոսը չորս կողմը  
նայելով, ցածր ձախով ասաց .

— Ընկեր Արամ, յես ուզում եմ քեզ մի բան  
ասեմ... Յերեկի խևական մրոխվ եր: Քեռի Դմիտրին  
յեկավ գրասենյակ, յես ել եյի ենտեղ. դանգատվեց:  
Չի ուզում դորժ անի. բանվորներն ել դժուհ են,  
վորովհետեւվ նախթ չի դուրս գայիս: Ես ինչի՞ց և,  
վոր մի տեղ նախթ կա, իսկ մի ուրիշ տեղ չկա...

— Ասում ես յեկան կովեցի՞ն:

— Հա՛, կարգին կոխվ եր:

— Քեզնից բացի ել ո՞վ կար:

— Մարգարյանն ել եր ենտեղ:

— Նա ի՞նչ ասաց:

— Ե՛կ, նրա ասածն ալիք ինձ դուր չի գալիս:  
Խաղաղացնում եր, դե՛ նրանք մեջ ակիտ չեն խաղաղ-  
վում... Յերկու հոր են քանդել, պոչ մեկի մեջլ նախթ  
չի յեղել, բա կոխվ չի անի՞...

Արգումանյանը հայհոյեց:

Մարտիրոսը չկարողացավ հասկանալ, թե ում և  
նա հայհոյում:

— Նրանք ուզում են ծովն այնպիսի ուղղությամբ  
ցամաքացնել, վորտեղ նախթ չկա: Հորը քանդում են,  
բայց կամ լավ չեն քանդում, կամ հարկավոր տեղի  
չեն կանգնեցնում...

— Ո՞վ ե եղաքես անում:

— Հետախուզական բյուրոն, Մարտարյանը:

Մարտիրոսի դեմքին մեկն ասես մի բուռ ափակ  
գցեց: Նա համեկարծ հիշեց Ռայիսային, այդ ուսինե  
մարմնով կնոջը: Բայց նա մի ակնթարթ միայն այդ  
մասին մտածեց:

— Եես կարծում եմ, վոր Արամ Սահմանվիչն ել  
պակաս գեր չի խաղում... Մարգարյանը շատ թույլ ե  
վերաբերվում: Մի անդամ հարցը չի դնում ժողո-  
վում, չի խոսում...

Արգումանյանը կարծես Մարտիրոսի հետ խոսե-  
լուց հետո հասկացավ, վոր ինքը մինչ այդ համարյա-  
հաշվի չի նատել կազմակերպության հետ: Նա հիշեց,  
թե ինչպես իր դեմ ուղտագործվեց այդ կազմակեր-  
պությունը: Այն ժամանակ սահմանները բռնորովին  
այլ երին, իսկ այժմ ուրիշ: Այն ժամանակից հետո  
վոչ մի խնդրով չեր դիմել կազմակերպությանը,  
կարծելով, թե հին վերաբերմունքը կլինի: Հիմա յեր  
կարծելով, զի հին վերաբերմունքը կլինի: Հիմա հոգ  
դգում, վոր այն, ինչ իրեն վաղուց եր հուզում,  
ոկան ե հուզել և շատ շատերին: Մարտիրոսի պարու-  
մածն այդ եր հաստատում:

Նրանք ահագին տեղ միասին գնացին: Մարտիրոս-  
ուը չեր քաշվում իր մտքերն ազատ արտահայտելուց:  
Գյուղից նոր յեկած ժամանակ նա ամաչում եր մարդ-  
կանց մեջ իր կալործիքը հայտնել: Իսկ հյումա նա հա-  
մարձակ խոսում եր նույնիւկ ինժեններների հետ:

Յեղանակն ալելի գորշացավ, վողոցներում քա-  
մու առաջին ալիքները յերկրի յերեաը լիզելով, շտա-  
պում երին դեպի ծովը: Արգումանյանը ճեռքը մեկ-  
նեց Մարտիրոսին:

— Դու մեկմեկ արի մեզ մոտ, ա՛յ, տեսնո՞ւմ ես  
յերկու արկանի տումը, ա՛յ, վոր ուարքասը վահաչ  
ներկած, ենտեղ ենք տալրում:

— Յեթե ժամանակ լինի, կդասմ:

Ամեն որ մի նոր դեպք եր պատահում և Մարտի-  
րոսի համար ալելի ու ալելի պարզում իրերի դրու-

թյումը : Յեզլ նաև յուրաքանչյուր առիթով իր կարծիքն եր հայտնում այս կամ այն հարցի մասին :

Արամ Սահակովիչը տանել չեր կարողանում այդ : «Սա պետք է մեղ ուղղություն ցույց տա» : Յեզլ հարժար մարդութե յեր հարկացը, վերաբերելի նա իր մեջ կուտակված լարձկությունը թափի :

— Եղ տղան աչքիս կասկածեցի յերեւում, մի գուցե դաշնակցական և, թողել ե հայրենիքը, փախել . մի լավ հետաքրքրվիր, — Արդոյանին նախազգուշացրեց Արամ Սահակովիչը, նույնիսկ ասաց, թե ամենց պետք է իմանալ :

Մի անդամ եղլ նա յեկավ Արամ Սահակովիչի մոտ : Յերկուսով փակվեցին առանձնատեխնիկակում յեզլ յերբ դուռը բացին, սեղանի վրա մի զբություն եր դրած, վորի վերջի տողի թանաքը դեռ չեր չորացել :

— Եղակես ստացվեց, — ասաց Արամ Սահակովիչը յեվ կարդաց .

#### «Հրաման № 84.

Իմ կողմից մի շարք անդամ ավարիաները վերացնելու մասին ցուցումներ են յեղել : Զնայած դրան, անցյալ ամսում մենք մի շարք ավարիաներ ենք ունեցել : № 2 հորում հորավոր կյուքունցի հերթում պատահան այլարիան բուլորովին աններելի համարել : Անփութության համար կյուքունցին դործից հետացնել : Վարպետներ Շուստովին, Սմիբնովին նույն բանի համար նկատողություն անել :

Ծովախորչի ցամաքացման գործերի և հորավորման բաժնի վարիչ Ա. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ» :

— Վոչինչ, — համաձայնվեց Սարդսյանը :

Հրամանն իր խստությամբ շատ-շատերին զարմացրեց :

— Տղեք, լավ հիշեք, հո 1918 թվից ավարիա բան չունենք, հանկարծ նկատողություն կատանաք, — կատակեց մի առև բանվոր :

— Յեղբայր, այսուեղ տապահներով վոյս կարող են պահել, սա հո Սարդառովը չէ, մոր մարդկանց ըարկությունը լայն դաշտերում ցոլի, ևսուեղ սարերը չեն թողնում, — կատակեց մի ուրիշ բանվոր :

Մարտիրոսը բառերը միացնելով կարդաց հրամանը : Ակզրում նա վատ զգաց իրեն :

— Ի՞նչ ես նայում եղ թղթին, գնա շրջկոմ՝ բովոքիր, ամեն տեղ զբա նման մարդիկ չեն նստած, խորհուրդ տովեց Պրեսնովան :

Մարտիրոսը յերկար չմտածեց : Նա գնաց կուսչրջկոմ : Յեզլ դնում եր յել մարդում վորոշում, թե ինչի մասին պետք ե խոսի, ինչպես պետք ե ակսի : Կուսչրջկոմի շենքի մոտ, փողոցի անկյունում, նրա դեմ դուրս յեկավ դեղեցիկ մի կին և Մարտիրոսին թեթև բարելոց : Մարտիրոսը շփոթվեց : Նա չկարողացավ կարգին պատասխանել այդ կնոջը, վորին յերկրորդ անգամն եր տեսնում : Բարեկեց, բայց դա բարեկի նման եր : Նրան թվաց, թե իր բարեր զառանցանքի նման մի բան դուրս յեկավ : Այնուամենայնիվ նրա բերանից մի բառ թուավ, բայց թե ինչ, ինքըն ել չհասկացավ : Յերխասարդ կինը Ռայդիան եր : Մարտիրոսը կանոնեց, նայեց կնոջ հետեից : Կինը չտապում եր : Նրա ձեռքերն այն որպա նման նուրդ

չեյին շարժվում : Այժմ կարծես ցնցվում ելին : Եին  
ապելի շուտ վազում եր, քան գնում :

Քիչ հետո, ուղիղ կուշը կոմի դռան մոտ, նա  
հանդիպեց յերիտասարդ մի մարդու, վորը նույնպես  
վազում եր : Մարտիրոսը վազողի խորն ընկած աղվե-  
սային աչքերից իսկույն ճանաչեց : Մարդարյանն եր :

Շրջկոմի քարտուղար Ալիքենը, վորին բան-  
վորները շատ ելին հարգում, նատած եր կարմիր  
ափողոցով ծածկված սեղանի հետևը : Մարտիրոսին  
նա չափազանց ուրախ ընդունեց :

— Կյուքունց, կյուքունց, համեցեք, նատիր,  
պապիրոս քաշիր... Պատմիր, պատմիր տեսնեմ սա  
ի՞նչ բան ե...

Մարտիրոսն այլ ընդունելության եր սպասում :  
Տեսնելով վոր սիալվում ե՝ քաղցր ժպտաց ու նըս-  
տեց :

— Վո՞ր թվից ես կուսանդամ :

— Քսան :

— Կուտումմը մո՞տե ե, տուր մի տեսնեմ : Պատ-  
միր, յես լսում եմ : Այսպես... Կյուքունց Մարտիրոս  
թավադի... ինչպես սրատահեց...

Կուշը կոմի քարտուղարն այն մարդկանցից եր,  
վորոնք իրենց խոսքի ձևն ամեն կերպ կարող են փո-  
խել և ունկնդրին հպատակեցնել : Իր աշխուժու-  
թյամբ քարտուղարը վարակում եր և դիմացնին, չս-  
փազանց նուրբ, հուղիչ հարցերը զարմանալի հոդա-  
տարությամբ վորոշում :

— Նու, ասա՝ գյուղում ո՞վ ունեմ :

— Վոչ վոք :

— Վոչ վո՞ք :

— Այո՛, վոչ վոք :  
— Իսկ ծնողներդ ինչո՞ւ յեն մահացել :  
— Ե՛հ, յերկար պատմություն ե...  
— Ասում են ծնողներիդ դու յես ապանել...

Մարտիրոսը գլուխը խոնարհեց : Կարծես մի բո-  
պեյում բոլորովին ուրիշ մարդ դառավ :

— Դու դաշնակցական յեղե՞լ ես :  
Մարտիրոսը գլուխը բարձրացրեց և ուղիղ քար-  
տուղարի աչքերի մեջ նայեց :

— Ինչո՞ւ յես քաշվում, պատմիր, սպասիր,  
կուսանդմադ թող մնա... ինչո՞ւ յես գնում, պատ-  
միր... .

— Ընկել Ալիքենը, ճիշտ ե, վոր ծնողներիս յես  
եմ սպանել, բայց... ուրուք ինձ չեք ճանաչում, իմ  
պատմությունը դժվար ե, շատ յերկար : Դրա համար  
չեմ ուղարկ պատմել :

— Վոչինչ, ինչքան յերկար լինի, կլսեմ...

Մարտիրոսը դժգոհեց, նա փորձեց թողնել քար-  
տուղարի առանձնասենյակը : Յերեք, յերեք նա չեց  
յենթաղբում, վոր իրեն կհիշեցնելին իր անցյալի մա-  
սնին : Նա գյուղից փախազ, վորաբեզի չհիշի այն,  
ինչ իր հետ պատահեց : Անցյալը հիշելիս նրա  
սիրու և տառչում եր, և ջերմանում : Այսուեղ, հեռու  
այս վիշկաների արանքում, նա հույս ուներ ապրել  
միայն ներկայով, յերեք չանդրադառնալ անցյալին :  
Մինչդեռ գտնվեցին մարդիկ, վորոնք տոփարում են  
պատմել այդ բոլորի մասին :

— Յես լավ դրագեստ չեմ, ինդրում եմ մի մարդու ասեք, վոր իմ ասածները դրի առնի և ձեզ ցույց տա:

Ալիյելլը կամչեց ակնոցավոր մի յերիտասարդի:

— Գրող մարդ ես, ընկերոջ ասածները դրի առ, հետո կներկայացնես ինձ: Դիմելով Մարտիրոսին ավելացրեց. — Ընկերոջը պատմիր, նա գրածն ինձ կտա:

Դրանից հետո այն ընկերը կուռշդկոմում ճիշտ մի շաբաթ չերեվաց:

## X

— Յեվ մեր դրությունն այնքան ել լավ չե, ընկ Ալիյել, այստեղ անհարմար ե, կմտնենք իմ առանձնասենյալը, յես ձեզ կպատմեմ դրությունը...

— Հա՛, հա՛ հա՛...

— Արամ Սահակովիչն Ալիյելի շուրջը հոյի նման պտտվում եր, լուրջ հետեւում վոչ միայն նրա բառերին, այլև դեմքի յուրաքանչյուր շարժմանը: Ալիյեվը բառում եր այնպէս, կարծես այն, ինչ Հովսեփյանը պատմում ե, վաղուց իրեն ծանոթ ե: Նա ձբդուում եր հասնել մի այլ բանի, վորին դեռ չի հասնել, բայց չուսով կհասնի:

Եերբ Ալիյեվը հանք եր գալիս, նրանից շատերն եին քաշլում: Սեվ բանվորից սկսած մինչև հանքի ինժեները Ալիյեվի հայացքից չելին վրխապում: Նա բոլորին ել տեսնում եր, հարցեր տալիս և ինչ հլ վօր նրանք ասելին, անպատճառ հավանության նշան եր անում:

— Հա՛, հա՛, հա՛...

Ի՞նչ եր դա նշանակում: Արդյոք ա՞յն, վոր նա համաձայն ե, թէ նա ուղղակի ասում եր՝ «ասա, ասա՝ լսում եմ...»: Դժվար եր վորոշել, մանավանդ վոր նրա աշքերի արևկորմներում մի հարաստ ժպիս եր խաղում: Իր առվորության համաձայն Ալիյեվը, յերբ հանք եր գալիս, իսկույն գրասենյալ չեր մըունում: Պատահած բանվորներին հարց ու վորձ եր անում, նոր միայն վարիչի հետ խոսում: Այդ որը, յերբ նա հանք յեկավ, դրսում բանվորներ շատ կային: Աշնանային արեվը ջերմացնում եր մարդկանց մարմինը: Ով ազատ եր գործից, ով հերթի յեր սպասում, նստել եր լրատենյակի առաջ՝ յերեսով դեպի արեվը: Նստածները զրուցում եյին իրենց հետաքըրքը ըստող խնդիրների մասին:

Ալիյեվը նստածներին բարեվեց, ապա հորակոր Սահակից, վորը վոսներն անձոռնի մեկնել եր, հարցը լեց.

— Հը՛, ինչպե՞ս ես, գործերդ վո՞նց են գնում, եղ ի՞նչ ե, վոտներդ արեկի՞ն ես տալիս:

— Ե՛, ընկեր Ալիմ, բա ի՞նչ անեմ, արամատիդ մով պաշարխած եմ:

— Հա՛, հա՛ հա՛...

Կողքի նստած բանվորը խառնվեց խոսակցությանը:

— Խի մենակ դու յե՞ս, ատղել բուրենում մի մայդ չկա, վոր արմատիդ չունենա...

— Հա՛, հա՛, իսկ դու ինչպե՞ս ես, Ալիմով, — հարցը Ալիմը թաթար բանվորին:

— Վոչինչ, դեռ գետինը վորում ենք, չետո ինչ-  
պես կլինի՝ չենք իմանում :

- Գործերդ վո՞նց են գնում :
- Ի՞նչ գործեր :
- Եստեղի, ել ի՞նչ գործեր կարող են լինել :
- Վա՛տ :
- Ինչո՞ւ :
- Ավարիայում ենք նստած :
- Հա՛, հա՛...
- Յեկ ընդհանրապես...

Այստեղ մի քանի հոգի միմյանց գեմքի նայեցին : Նրանց հայացքների մեջ կար անհամարձակության շեշտ : Այդ հայացքներն առանց վորեենուսքի յել շատ բան եին առում : Այլինելը դրան սկատչած ուշադրություն չդարձրեց : Նա միայն հայացքը մեկի գեմքից մյուսի վրա փոխադրեց :

— Մեր գործից խելքներս բան չի կտրում, ընկեր Ալիյեվ, — մեջ մտավ մի փոքրահասակ, սեկ գեմքով, զարմանալի պապղուն աչքերով բանվոր :

- Հա՛, հա՛...
- Ես գործից մարդու դլուխ բան չի մտնում :
- Ուրիշ տեղեր պլանը գերակատարում են, իսկ մեզ մոտ վոչ քանդածն ե հայտնի, վոչ չքանդածը : Քանդում ես, քանդում, նոր հանկարծ իմանում, վոր նավթ չի լինելու... ջուր ե դուրս դարիս...
- Նո՛ւ, նո՛ւ :

Բանվորների խոսակցությունը մի ակնթարթում ընդհատվեց : Ալիյեվն Արամ Սահակովիչին բարեվեց, հետո նույն բանվորներին նայելով, գլուխը դրակունութափահարեց .

— Նո՛ւ, նո՛ւ :

— Դե եղ եր ելի, ել ինչ ասեմ, մեր գրությունը պարզ ա...

Արամ Սահակովիչն խկույն գլխի ընկավ, թե խոսքն ինչի մասին ե : Ալիյեվին ինչ-վոր մի բան ասաց : Հետու նստածները չհասկացան, իսկ մոտ նստածները միայն այնքան իմացան, վոր հանքի վարիչն այսեղ այդ նյութի շուրջը խոսելն անհարժար մար ե դանում ե կանչում ե իր առանձնասենյակը : Ալիյեվն այլևս չշարունակեց խոսակցությունը : Արամ Սահակովիչն առանձնասենյակի դուռը փակելով, ներդամտաբար ասաց :

— Փափուկ աթոռ ել չունենք, ինդընմ այստեղ նստեք...

Ալիյեվն շտապ նստեց մատուցած աթոռին :

— Նա ի՞նչ տրամադրություններ են բանվորների մեջ :

— Շատ անառողջ տրամադրություններ : Աշխատելու ցանկություն չի մնում : Յեկ այդ բոլորի պատճառը ձեղ քաջ հայտնի Արզումանյանն ե, նրա «ոգնական» կյուքունց Մարտիրոսը : Իդեալ՝ այդ Մարտիրոսի մասին : Հեղափոխությունից անմիջապես հետո նա գյուղից փախել ե, այսեղ յեկել : Յեկ հետաքրքրվել եմ նրա անցյալով, բանից պարզվում ե, վոր նա իր հորը, մորը սպանել ե :

— Հա՛, հա՛ : Յեկ այդ գլխում...

— Բայց դա գործի կեսն ե... Նա կարմիրների դեմ, առում են, ակտիվ պայքար ե տարել : Յեկ ահա այդ մարդը հանք գալով, սկզբում իրեն շատ լավ ցույց տվեց, հետո արդեն պարզեց իր գեմքը...

Արինակ, բարնվորների մեջ այս բոլոր խոսակցությունը նա յե ստեղծել: Աշխատանքային դիսցիպլինան ցանկանում են խախտել, բայց այդ նրանց յերբեք չի հաջողվի: Բացի դրանից, չե՞ վոր մեր աշխատանքը թեորետիկական մեծ խնդիրներ ե լուծում, ծովախորշի լինել չլինելու հարցն ե վորոշում... Մենք միջոցներ ենք ձեռք առնում, վորպեսզի պետության վոչ մի կոստեկն ել չկորչի:

— Հա՛, հա՛ ... Լսիր, լսիր. վակ Կյուքունցի մասին ո՞վ ե քեզ ասել:

— Հենց իր հայրենակիցները: Այսեղ Աշոտ անունով մի տղա կա, նրանից եմ հարցրել, դյուլից ել են նամակ գրել նրան, այդ նամակն այժմ ինձ մոտ ե... Ուզո՞ւմ եք կարգամ:

— Հետաքրքիր ե, հետաքրքիր ե:

— Նամակը գրում ե Աշոտի ընկերը. և ինչպես յերեսում ե, չատ անկեղծ ե գրում:

### «Սիրելի Աշոտ.

Նախ, յեթե մեզանից հարցանես, վողջ ենք, առողջ, գործով աջողակ: Միայն քիչ պակասություն ենք քաշում, ապա քո առողջությունը կցանկանանք: Դու հարցնում ես, թե իսկ յես Բագու չեկա, վորպեսզի մարդ դառնամ: Եստեղ ել մի կերպ յոլա կդնանք: Դե բոլորս չենք կարող գալ: Մենք չենք գալիս, ամամեր թշնամիները գալիս են, կարգին մարդ դառնում: Աշոտ, բա ամոթ չի՞ քու բանվորական նամուսին, դու գյուղում չե՞ս յեղել, բա չե՞ս լսել եղ Մարտիրոսի արարքները: Բա չե՞ր

իմանում, վոր նա իր հորը, քրոջը սպանեց... ենքան բոլուսիկիներ կոտորեց, վերջը թողեց դյուղը, յեկան հիմա եղտեղ դործի էդլուխ ականդնել... Զե, Աշոտ, անջախ մեր թշնամիներն են կարգին տեղ բռնում... Յեթե յես լինելի կառավարության տեղ, եղ Մարտիրոսների նմաններին միայն ծակում կազահելի... անջախ ձեզ մոտ ուրիշ ա, ասես եղտեղ մեր կառավարությունը չիմի: Մարդ յերբ նստում եւ և մտածում, չի կարողանում աշխարհի տակն ու գլուխը համականալ: Ենքան արյուն թափվեց, ենքան կրվեցինք, ինչի՞ համար: Դուքս ե գալիս, վոր կենցաղը ստեղծել ենք ուրիշների համար... մեր թշնամիների համար, Կյուքունց Մարտիրոսի համար...

— Դե, ինչ վոր ե, մնաս բարով: Աղաջան»:  
— Այդ Աշոտն այստեղ ե: Մի բոլեյով կանչեցեք:

Կանչեցին: Աշոտը ներս մտավ ու չեմքին մնաց կմնդնած:

— Դու յես այսպիսի նստմակ ստացել:

— Հա՛, յի՛ս:

— Եղ Աղաջանն ի՞նչ մարդ ե:

— Կուսակցական: Կարմիր սպարափան ա յեղել, գաշնակցականների գեմ կռվել ու...

— Հա՞ հա՞...

Աղիւն աչքերն ավելի մեր կկոցել: Նա բազմիցն անդամ համոզվել եր, վոր այն, ինչ յերելում ե

մարդկանց դեմքին, լսվում նրա շուրջերից, դա դեռ  
միայն արտաքինն է: Նրանց հասկանալու համար  
խորը թափանցող հայացք եւ հարկավոր: Նա ավելի  
յեր կկոցում աչքերը, գլխի թափահարելն արագաց-  
նում: Մարտիրոսի ասածներն ուրիշ կերպ ելին հրն-  
չում, այսուղ լսածներն ուրիշ:

— Լա՛վ, լա՛վ,—Աշոտին դիմեց Ալիեր, — կարող  
եք գնալ, ազատ եք:

— Տեսնո՞ւմ եք, վորքան լիբրն եւ յեղել այդ  
Կյուքումցը: Խնչուած առևս ու փուս աշխատում եր  
ակզրի որբերը, խնչպես գալլ դրառամ, յերբ զգաց, վոր  
մի քիչ տեղն ամրացել եւ... Այդպես սրիկաներ են  
մարդիկ:

Ալիյեվը մի քոսի միայն լուց: Նա վոչ հավա-  
նության նշաններ եր անում, վոչ ել շարժվում: Եեվ  
այդպես նա լուս տեղից վեր կացավ: Սենյակի մեջ-  
տեղ կանգնած, մի ծխախոտ վառեց: Ծուխն ոճի  
պես գալարումներ կատարելով, վորոշ տեղ բարձրա-  
ցավ և պատուհանի փոքրիկ անոցքին հավասարվելուն  
պիս ուղիղ գծով դուրս սողաց:

— Դա՛, — բացականչեց Ալիյեվը և հրաժեշտ  
տալով, սենյակից դուրս յմկավ:

Արամ Սահակովիչը մնաց հիմար դրության մեջ:  
Այնպիսի տպավորություն ստացվեց, վոր Ալիյեվը  
յեկավ նրան քաելու, դրամից դրամիանորմն թափահա-  
րելու: Զարմանալի յե: Արամ Սահակովիչը հան-  
կարծ դգաց, վոր մի բան չի ասվել, նա վազեց դե-  
պի գուռը, կանչեց.

— Բնիկը Ալիյեվ ընկեր Ալիյեվ...

Ալիյեվը սպասեց: Հովսեփյանն իր գեր մար-  
մինը քարշ տվեց մինչև նրա կանգնած տեղը:

— Ընկեր Ալիյեվ, ինչպես ձեզ ասացի, այդ յեր-  
կու հոգին մեզ շատ են վնասում, կամ մեզ վերցը-  
րեք այստեղից, կամ նրանց: Նրանց, իմ կարծիքով,  
հարկավոր ե այնտեղ տանել:

Արամ Սահակովիչը բռութ մատն ուսի վրայով  
դեպի հետ եր ցույց տալիս:

— Այնտեղ ե հարկավոր տանել, ինչքան դրանք  
ազատ մնան, այնքան ավելի վաստ...

— Հա՛, հա՛...

Այս անդամ «հա, հա»-ն հնչում եր դժկամու-  
թյամբ և շտապողավանությամբ: Դարձյալ Արամ Սա-  
հակովիչն Ալիյեվի միտքը չհասկացավ:

Ալիյեվն շտապեց շրջկոմ:

Կուսըրջկոմի տեխնիկական աշխատողը նրա հա-  
մար մի թուղթ եր բերել: Ալիյեվը թուղթը վերցնե-  
լով մի կողմ հրեց.

— Կանչեցեք այստեղ այդ Պրեբոյնուն: Հաղա-  
րից մեկ հանձնարարություն տվեցինք, նա յել կար-  
գին չկատարեց: Ա՛, ահա նա, լավ, դուք ազատ եք...

— Ի՞նչ արիր այն տղայի գործը:

— Ի՞նչ տղա, ընկեր քարտուղար, յես որական  
հազար տղա յեմ «պահպան» իմ գրվածքներում:

— Ե՛, կատակը մի կողմ, յես կյուքունցի մա-  
սին մեմ խոսում: ստուգիցի՞ր պատմածներուն,  
ի՞նչ պատմեց, ընդհանրապես ո՞վ և նա:

— Նա դասակարգային թշնամի յեւ, — ասաց  
Պրիբոյնին ու հանգիստալորությամբ նստեց:  
— Այսօ, ահա թէ ի՞նչ...

— Սպասիր, ընկեր քարտուղար, բնակորության  
հարց կա, հարցը ու յերկրորդ անդամ, խմայիր՝ ան  
այս անտեր վեպունի վճչովես և պատովամ...

— Դու գլուխ մի ցալացնի, մի քան զիմու՞ս,  
հայտնիր :

— Շատ բան դիտեմ, բայց ըստ քո առաջին  
կարգագորության, գրավոր կերպով վհայտնեմ: Ախր,  
ընկեր Ալիյեվ, դու ուզում ես, վոր Կյուքունցի  
ասածները մի բոսիցում պատմեմ, դուրս չի գա,  
յեթե վմանաս վճչութեան է ստացվուամ...

Ես գրավոր եմ ուզում հայտնել և այն ել ի՞նչ  
գրավոր, ընկեր Ալիյեվ: Նու, ճիշտ ե, գրավոր, բայց  
վեպի նման:

— Դու թող քո վեպերը, այսոր յես քաղենմ եմ  
զնուամ, այդ բոլորը վորակեսդի յերկու ժամից հետո  
պատրաստ լինի:

— Ի՞նչ, ի՞նչ... յերկու ժա՞մ... ընկեր Ալիյեվ  
ախր... լավ, լավ, յես միայն...

— Հիմա նստիր և աշխատիր, նստիր...  
— Ե՛, ընկեր Ալիյեվ, ուրեմն հեղինակությունս հեշ  
ելի... Բայց չե, յես հեղինակությունս կմշակեմ,  
հստեղ մի զրոյ կա, նրան կտամ, նա յել կնայի,  
հետո կտեսնես, թե ինչ հրաշալի բան դուրս կպա,  
իսկ այժմ խորեն կարդացեք:

Պրիբոյնին Ալիյեվի առաջ մի տետր փոեց:  
— Ահա՛, կարդա՛, առաջ մարդն ի՞նչ կյանք ե  
նեցել...

Ալիյեվը վերցրեց տետրն ու ոկտեց կարդա՛...

## XI

«Այդ հին գյուղն ընկած եք խոր ձորում: Թաղե-  
րից մենով, վոր չի կատես ինչու. Զահլուկ եք կոչվում,  
շատ հման եր կոտրված գալաթի: Յերկու կողմից  
խոր անդունդներ են, յերրորդ կողմը՝ ժայռն ե,  
մայր ժայռը, վոր ուրեմն շարունակ իր անմատչե-  
լիությամբ վտանգի ժամանակ պատսպարան ե յեղել  
այդտեղ ապրողներին: Նրա մեջ մարդիկ փորել են  
իրենց տները, դոմերը: Թաղի չորրորդ կողմից մի  
արահետ բարձրանում ե դեպի գերեզմանատուն, իսկ  
այնտեղից ել՝ դեպի դաշտերը, դեպի բարձրաբերձ  
լեռները: Այդ արահետով բեռնած եցերը հագել ելին  
կարողանում անցնել: Բավական եր, վորպեսդի  
արահետով անցնողը, լիներ մարդ, թե կենդամի,  
փոքր ինչ սայթաքեր — նա պետք ե գահավիժեր  
ահավոր անդունդը: Այդ թաղում առաջին  
ձյունից հետո բեռնատար անասուններին նո-  
րից պայտում ելին: Մյուս կենդամիները գետի-  
նը սառչելուց հետո լույս աշխարհ չելին տեսնում:  
Ձմեռն եղին գոմից համելիս, տերը յերկու ձեռքով  
հենվում եր նրա դավակին, վորպեսդի սայթաքամն

Ժամանակ կարողանա պահել։ Եշերն ել գոմերից հանում եյին ծայրահեղ կարիքի ժամանակ — խոտ կամ հարդ բերելու համար։ Յերբեմն բեռնավորված եշի վոտքերը սառույցի վրա կանդնել չեյին ուղում — սայթափում եյին։ Լեզապատառ դյուղացիք ձեռքի և վոտքի ուժով ջանում եյին դեպի անդունդը սայթաքող կենդանուն փրկել։ Չե՞ վոր Չահլուկում մեկից ավելի եշ քշերն ունեյին, իսկ ճիերի մասին խոսք անդամ չեր կարող լինել։

Թոքը՝, թոքը՝... զգուշությամբ քաշելով կենդանուն մի կերպ վտանգավոր տեղն անց եյին կացնում։ Շատ դեպքեր են պատահել, յերբ մարդիկ իրենց միակ կենդանուն փրկելու ցանկությամբ, նրա հետ միասին անդունդ են գլորվել։

Թաղում մարդիկ առանց փայտի քայլ անդամ չեյին անում, ասենք՝ ձմեռ ժամանակ գնալու տեղ ել չունեյին։ Վաղ առավտոյան գոմի հատակը մաքրում եյին, աղբը դռան մոտ հավաքում և անատուններին ջրում... Յեթե մեկին անհրաժեշտ եր գյուղ գնալ, նա փայտին հենվերով՝ արահետով ժայռից իջնում եր, անցնում ձորը և նոր միայն գյուղ մտնում։ Չահլուկեցիք գյուղի հետ շատ քիչ եյին չփոխում։ Յեկեղեցի գալիք եյին տոն որերին։ Մնացած ժամանակ գյուղն իջնող արահետը միշտ ձյունով ծածկված եր լինում։ Դյուղից յերեսում եր չահլուկեցիների յերդիկներից կամ ուղղակի տան գոներից բարձրացող աթարի թանձը, ծծմբագույն ծուխը։

Սովորական որերը նրանք հավաքվում եյին Դյուշունց Սիմոնի գոմը, զրույց անում, լսում աշ-

խարհի նորությունների մասին։ Դյուշունց Սիմոնի գոմը դարերի խորքից մնացած մի քարտանձավ եր։ Թիկից, զախավելից և դռնից բացի գոմում վայրտե վոչինչ չկար։ Թաղի աները գոմերից վոչնչով չեյին տարբերվում։ Ծների պատերը աթարի ծխից սևացել եյին։ Գոլուրշին նստում եր նրանց վրա և սեպ թանաքի նման կաթկթում։ Լույսը ներս եր մտնում դուրս դիմում թողած փոքրիկ անցքով, վորը ձմեռը կանայք գոմաղբով ծեխում երին։ Գարնամը, հենց վոր դաշտում հողը ճաքվում եր և առաջին ծիլը դուրս գալիս, կանայք այդ ծեփը քանդում եյին, պղինձը հանում դուրս՝ ձմեռվա կեղտն ու մուրը մաքրելու։ Յերեխաները դեղնած դեմքերով, տներից դուրս եյին թափկում, վազում դեպի գերեզմանատուն — մտիսեղ կոչված գարնանային անդրանիկ բույսը քաղելու։

անդամ կծու խոսք չի ասել, չի հայհոյել...

— Դեռ հեղափոխությունից առաջ նրա հետ բուխ-  
տում աշխատել եմ: Վոչ միայն յես, այլև քոլորը նրա-  
նից մի վատ բան չեն տեսել, չեն լսել... Յեռ սկի չեմ  
հականում, թէ ինչո՞ւ նրան բանտարկեցին:

— Ե՛, ենքան խռացին, ասացին, զու ելի դը-  
վար ես հականում, — նորից մեջ մտավ յերբորդ  
բանվորը, վորի համար կարծես աշխարհում անհաս-  
կանաբի վոչինչ չկար:

— Յեթե եղանակ լավ հասկանում ես, ասա, ինչի՞  
համար բանտարկեցին:

— Ասում եմ ելի, վնասարարություն ե արել:

— Ի՞նչ վնասա...:

— Դա յել հասկանալի չի՞:

— Զե՛, կարդին եմ ուղում հասկանալ:

Այսպիսի խռացակցություններ եյին տեղի ունենում  
հանգի տարբեր անկյուններում: Բայց ամենահետաքրքր-  
քիր ու լարված խռացությունը տեղի ունեցավ  
Արամ Սահակովիչի և Սարդարյանի միջև: Դեռ վաղ  
տառվառյան, յերբ Արմեն Սահակովիչը դրասենյակ  
քեկան, տեխնիկ Աթայանը շինձու ամոթիսածությամբ  
հայտնաց.

— Արամ Սահակովիչ, զուք չի՞ք իմանում, վոր  
ինժեներ Զատոնսկին բանվոր ազատվել ե:

Արամ Սահակովիչը, վոր, ըստ իր սովորության, Հետք խոսողներին կենորոնացած չեր լսում, այս անդամ Աթայանին ասածը կրկնել տվեց :

— Ուրեմն այդպես, նրան ազատել են, — մտախոհ կրկնեց Արամ Սահակովիչը :

— Իսկ քեզ ո՞վ ասաց :

— Բոլորը գիտեն :

— Հա՛, բոլորը...

— Բայց գիտեք, Արամ Սահակովիչ, ասում են նա կուրացել ե :

— Կուրացե՞լ :

— Այս', կուրացե՞լ :

— Այ տղա, մի կարգին պատմիր : Խոսքը վո՞ր Զատոնակու մասին ե, նա յե՞րբ կուրացալ, հը՛, այ տղա, մի կարգին խոսիր տեսնենք :

Արամ Սահակովիչն Աթայանի ոճիքից քաշում եր, ինչպես հանցանքի մեջ բոնվածի : Տեխնիկ Աթայանը չեր հասկանում, թէ ինչո՞ւ Զատոնակու ազատվելու լուրն այդքան հուզում եր Արամ Սահակովիչին :

Մի քանի անկատ հարցեր տալուց հետո վարիչը դժկամությամբ ասաց :

— Այբաես, այդպես : Աստ ինդընք կանչի՛ր իմ կառապանին :

Աթայանի հետևից Արամ Սահակովիչը դուռը փակեց և իսկույն հեռախոսի մոտ վագեց :

— Ինուրիմ միացրեք գեղողիքական բյուրոն : Ալ-  
լո՛, ալլո՛... Անդրեյ Սերգեևիչն ե, հա՞...

— ...

— Բարեկ, բարեկ, ինչպես ես զկում քեզ... Նո-  
րովովուն չե՞ս իմանում... Հը՛, չե՞ս իմանում :

— ...

— Այս. չե, այն մասին չե : Ինձ թվում ե, թե  
այն հավետանու մոռացության կտրիի : Ուրիշ, ուրիշ  
բան : Զատոնսկին ազատվել ե :

— Ալլո՛, ալլո՛, ալլո՛, մի՛ իմանդարի... չտա զա  
չորտ, մի՛ իմանդարի, ալլո՛, խոսում ենք... Անդրեյ  
Սերգեյևիչ, ե՛, լավ, հեռախոսով բան չե դուրս  
գա, յետ կդամ . հինգ բոսկը չի քաշի, կլանմ : Զե՛, չե՛,  
չենց կառքո յեկավ, գարիս եմ :

Հեռախոսի լսակողը նու ալմուկավ վայր զցեց,  
տաղնապով լսակեց ընկապ կառքի մեջ : Դրաւմ ուժեղ  
քամի յելք : Արամ Սահակովիչի վառքն անընդհատ ճոճ-  
վում եր մեկ աջ, մեկ ձախ : Կառապանի հետեւ կուչ  
յեկած, նա մի ձեռքով բռնել եր գլխարկը, իսկ մյու-  
սով ծնկներին դրված թղթապանակը : Կառքի անկա-  
նոն ճոճումներն Արամ Սահակովիչին ավելի ելին  
ջղայնացնում, տաղնապն ավելի ուժեղացնում : Նա  
շուրջը չեր նայում : Ավահաստակի քարերը հերթով  
դալիս, անց ելին կենում, յերբեմն ել կապույտ ջրի  
սիև հոսում : Նրա միասը միայն մի ինդրով եր զրադ-  
ված ինչպի՞ս ե պատահել, վոր Զատոնսկուն աղատ  
են արձակել : Յեթե Զատոնսկու արդար լինելու հան-  
գոմանքը պարզվել ե հետաքննության ժամանակ,  
ապա կարող ե պարզված լինել նաև զործի եյությունն

սամբուղջովին։ Բայց կուցե և նրան ազատել են հիվանդության պատճառով։ Ջե՞ս վոր խոսակցություններ են պատճեմ նրա կուրանալու մասին։ Զնայած վերջին հանգամանքն ավելի քիչ էր հաշվանական թվում, այնուամենայնիվ նա համբած էր արդպես մտածելու։ — «Դժվար թե չեկայի աշխատողներին հաջողված լինի քանդել այն իծիկը, վորն այնքան զգուշությամբ փաթաթել են իրենք՝ ինժեներ Սարգարյանի դեկավարությամբ»։ Այդպես էր իրեն հուսաղբում ծովախորչի ցամաքացման գործերի կառավարիչ Արամ Աահակովիք։ Այսուամենայնիվ մերկացման սպառնալիքը դեմոկրայան սրբ պես կախած էր նրանց զրին։ Այդ լավ էր հասկանում նոր։ Յեզ հենց արդ սպառնառով էր կառավի մեջ ծփարած Արամ Աահակովիչի առամերն ամբողջ թափով իրար երին զարնվում, ինչպես դա լինում է ուժեղ դոզերոցքի ժամանակ։

Վերջապես, կառը կանգ սռամ։ Վայր կայով, այդ վեր մարդն աշխանային վերարկուի մեջ փաթաթված, ներս մտավ յերկրաբանական բյուրո։ Ծառայողներին անեշմարելի և անլավելի բարեկց և ուղիղ գնաց վեպի Անդրեյ Սերգեյինիչի առանձնասենյակը։ Սարգարյանն անհամբեր սպասում եր նրան։ Յեզ հենց վոր գուռը վակրեց, նա արագ վեր թռավ, հարցրեց։

— Յե՞րբ ե նա սպասվել։

— Կարծեմ մի քանի որ տռած։ Կուրացել ե, գիտե՞ս։

— Ինչպե՞ս թե կուրացել ե, — անտարբեկ հարցրեց Սարգարյանը։

— Աճապե՞ս, վոչինչ չի տեսնում, ուր սպիտակից չի չոկում…

— Սպասի՛ր, սպասի՛ր։ Նրա կուրացյունը ժամանակավոր ե, թե…

— Յես Հո նրա մտախց չեմ գալիս. տառմ են Ասում են կույր և վերջացավ։ Խակ կույրերն, ինչպես հայրնի յե, վոչինչ չեն տեսնում, հետևաբար, վոչինչ չեն կարող անել, — խորիմաստորեն ամելացրեց Արամ Աահակովիչը։

— Ահա՛, ուրեմն նրա համար ծովախորչն այսուհետեւ յեղիստական սֆի՞նքը դարձավ։

— Բայ յերեսութին։

Սարգարյանը, վոր մինչ այդ սռես ասեղների վրա յեր նստած, մեղմացավ։ Այլևս նրա դեմքը չեր իրութում, չեր կծկվում։

— Յեթե ոչխարհի բոլոր սատանաներին լծելու լինեն, մինուոյն ե, մեր գրած կախարիչը չեն կարող բարձրացնել։ Այո՛, թող հայաքին աշխարհի բոլոր խորամանկները, ելի չեն կարտանալ այն, ինչ մենք ենք իմանում։ Վհասպիլու, վախենալու կարիք չկա, մենք զանում ենք, վոր Զատոռնակին սրիմա յե, հակահեղափոխական։ Ասում ենք այն, ինչ յուրաքանչյուր արզինիվ քաղաքացու պարտքն ե։ Ահա արյանը։ Յեթե մինչ այս անհանդատացել ես, հիմա զնա յեւ հանդիսան շարունակիր աշխատանքի։ Վոչ վոք քո դորրը խանդարելու իրավունք չունի, այո՛, վոչ վոք։ Նա կուրացել ե, ամելի լավ փորտերի համար։ Այլևս նոր ծովախորչի հողը չի կռիի, չի տեսնի այն, ինչ կատարվում է մեր ոլլանդների և թղթերի մեջ։

— Ո՞վ գիտե, գուցե այդպես ե։

— Բոլորովին մի կառածի։ Հոգով արփացիր։

Մեր դարս թուղամորթների դար չե, հաղթում և նա, ով ուժեղ է, ում դենքն ամելի սուրճ է:

Սարդարյանը հայրածի պես եր խոսում: Հայացքը մի կետի հառած, նա բառեց եր վարոնում, ձեւի երարում իր միտքը, նոր միայն հայտնում զիմացնին: Արամ Սահակովիչը խորասուրբինց մտքերի մեջ: Հաճախ մատներով շոյելով յեռանկյունի վորքիկ մոռուսը, արքի մենքը խուսի, խակ մյուսը բաց, նա քում եր Սարդարյանին: «Ինչ կտասցին, մեթե հանկարծամեն ինչ պարզվի...», — մտածում եց նա և այդ մտքերի հետ նրա ներառում կուտանիում եղին ամելի հուզող բազմաթիվ այլ մտքեր:

— Իսկ լա՞վ չեր իինի, վորաբեազի թողնելինք արսքաղաքը և ամենքս մի կողմ գնայինք:

— Ո՞ւր:

— Ո՞վ և իմանում, թեկուզ դժողք:

— Սկսած գործը յերթեք չի կրտելի կիսարտ թողնել: Թեկուզ մեռնեմ, սակայն այս գործը մինչև վերջը պետք է տանեմ: Ծովախորշը կցամաքացին, բայց վոչ այն ուղղությամբ, վորք ցանկանում են Խորհուրդներն ու Զատոնակին: Դու այսուր դրաստենյակում գործ չունե՞ս:

— Ի՞նչ գործ:

— Անձնական: Զե՞: Ապելի լավ, արի գնանք ինձ մոտ: Եերկու որ առաջ չումայից թթի ողի յեմ գնել: Գնանք հանուն մեր գործի վերջնական հաղթանակի՝ միմի բաժակ իմինենք:

— Դեմ չեմ, յերբ գործ պեսոք և ունենամ այն-

ովովի նուրբ, հրապարակի բամել հետ, ինչպիսին թթի ողին է:

Ճանապարհին Սարդարյանը հեգնամքով պատմեց կուսցրվկոմի քարտուղարի մասին, վորք հետաքրքրութեալ եր ծովախորչի ցամաքացման աշխատանքներով:

— Այդ մարդը վործից շատ քիչ բան և հասկանում: Յես նրան պատմեցի, վոր յերեք շաբաթվա ընթացքում մի զեյյատին տարածություն ենք ցամաքացրել: Նա ուրախացավ, գովեց մեզ: Յես մտքում ծիծաղում եյի, բայց նա հանկարծ սկսեց մանր մոռնք հարցիք տալ, մեկ ալ թի՝ «բայրոյում հարկավոր և ճեր հաշվեալությունը լսել»: Յես հանկարծակիի յեկա նրա այդ մտքից: Նա ձեռքս բարեկամաքար մեղմելով, զնաց ԵՇ, կանդնեցքու, սրանից դենք մենք վուտքով կդնանք, — կառապանի մեջքից քաշելով առաց Սարդարյանը:

Սարդարյանն իջուլ և դառնալով վարապանուն, հրամայեց:

— Կարող ես գնալ, աղասի ես:

Քիչ հետո Սարդարյանի սենյակից լավում եր մի խոպոտ ու անդուրեկան ձայն, վորք ինչ-վոր տիսուր յերդ եր մոմառաւ:

Ա՛յս սլաքտեղ, դու խմ պարտեզ  
Պարտեղ կանաչ ու փարթամ,  
Ինչու վաղ ես ծաղկում այդպես  
Տերելիները բացում քո թավ...

Այս ռեալքից յեղկու որ հետո ծովախորչ յե-

կաւլ ինքը — Զատոննոկին։ Նրան առաջնորդում եր  
մի պատահի։

— Վահյուշա, սա վո՞ր վողոցն է։

Տղան ուրախությամբ պատասխանում էր։

— Այս վողոցի ծայրի հին տները որպես քանդե-  
ցի՞ն, հա՛ ինչքա՞ն շուտ փոխվում ե կյանքը։

Քիչ հետո նա զգաց նավթի, դադի հոտ, հիշեց,  
վոր այդպիսի հոտ եր դպում, յերբ անցնում եր ծո-  
վափի մտու գտնվող նավթի լճի, դադի խողովակների  
մտուվ։ Այժմ նա ախտոսում եր, վոր առողջ ժոմա-  
նակը չեր ուստւմնասիրել յուրաքանչյուր քարը, զբ-  
ջապատում ընկած յուրաքանչյուր երը։ Նա իր ուղեկ-  
ցի հետ առաջ չարժիկեց և կանգնեց ծովախորշի նախ-  
կին ափին, հետո մտքում ինչպուր հաշիվներ արեց։

Ծովը պսալդում եր ջինջ հայելու որես։ Ողը հըս-  
տակ եր։ Շրջապատում ամենուրենք չտեսնաված յեռ-  
ու դեռ եր տիրում։ Վերջին տարիների լնիմացքում  
այս քաղաքի բարձմաթիվ անկյուններում ամբողջ թա-  
վով ծովալուն շինարարական աշխատանքներ երին  
զնում։ Յերեամնի կեղասոս, ալազի, ծիփ ու մազութի  
մեջ կորած վեռլոցներն ու նրբափողոցները մի խռամ-  
քում ձեռքով մաքրվում ու հարգարվում երին։ Զո-  
րացման աշխատանքներից բացի, մի քանի տասնյակ  
քայլ տարածության վրա, ծովափին շինանյութներ երին  
կուտակում։ Խոսում ելին այն մասին, վոր ծովի ամ-  
բողջ ափով մնալ մտամակա տարիներին ձգվելու յեն  
մերձարևագրձային և ղեկորսութիւն բույսերի հրաշտ-  
իւ պուրակներ։

Արթասանոր Միւսայրովիչին լոելի յեր միայն  
չըլապատի աղմուկը։ Նրա հոգու աչքերն ելին միայն

ակնեում այն, ինչ կատարվում եր իբ չորս լուրջը։  
Տարիներ շարունակ իր փայտիայած լույսալույն հույ-  
սերը՝ սահղծաբործական աշխատանքի իրկախ թափչը-  
ների մասին՝ որավուր շոշափելի երականություն ե-  
լին դառնում։ Յել նա լսում եր ու զգում վերաշին-  
վող քաղաքի մեծ սրաբ կարյուն բարախումները։  
Մոտիկից անցնող ավտոմերի սուլոցները, շարախո-  
րյակի շտապող բանվոր յերխասարդության վառ-  
վուն յերպերը, շինարարության չոփներ, այլ կենուա-  
վուն յերպերը, կեղեցիկի հարմոնիան կույր ինժեների հո-  
գու խորքից վողեվրության նորանոր պոռթիկումներ  
ելին խղում։ Աշխատելու, անօտագար աշխատելու  
անիսոնն ու անողուսող ցանկությունը յեռում եր նվա-  
սորյան յուրաքանչյուր կաթիլի մեջ։ Յել նա վորոչել  
եր՝ աշխատել։ Զատոններու ծովախորչ զալու մասին  
առաջինն իմացավ Արտօն Ամհակովիչը։ Նա շոտու-  
կեկան, բարեկեց և սպասում եր, թե ինչ կասի Զա-  
տոննուկին։

— Բ՞ո՞չ է, ուզում եք աշխատե՞լ, Աղեքսանդր Մի-  
խայլովիչ, — մի ներքին սարսափով հարցրեց Արամ  
Արհակովիչը։ Նա ապելի սասկաց, յերբ ուսուվ  
Զատոններու բաց աչքերը։ «Ո՞վ ասաց, վոր նա կույր  
ե»՝ լեզն իրեն հարցցրեց Արտօն Ամհակովիչը։

— Իհարկե, իհարկե, — Արտօն Ամհակովիչի հար-  
ցին պատասխաննելով, Զատոններին ուռւյեսի ծայրը  
առվեց փոքրիկ տղային։ Կանյուշա, վերցրու ուռվյեսի  
ծայրը, վաղին, առեմաներ ինչքան մն ցամաքացրել։

Պատանին վերցրեց մեսաղե ժաղափինի ծայրըն  
ու թուլութով առաջ չարժիկեց։

— Հասար, Վանյուշա:

— Այս':

— Այսպես, մե՛կ:

— Առաջ զնա, այդ ինչո՞ւ դեպի աչ ես զնում,

Հասար:

— Յելիու:

Պատահին չափելուց հետո սպասում եմ, մինչեւ  
Զատոնալին կհանի լրին և յերք նա հանում եր,  
ժողովում եր իր տեղը, առաջ չարժուում: Արամ Սա-  
հակովիչը, վոր ակնապիշ դժուում եր այդ աշխատան-  
քը, չքիսեր ինչ անի, ուր զնա: Նա հիմար դրու-  
թյան մեջ եր: «Ուրեմն մեղ խարեցին, ուրեմն նա  
նորից մտավ ծովախորչը, ինչո՞ւ յեն ասում, թե  
կույր ե»: Նույնիսկ այն պահին, յերք փոքրիկ ու-  
զան գեղի աջ ծովեց, Զատոնալին գլուխը բարձրաց-  
նելով առաջ նայեց, նկատողություն արեց: Հանկար-  
ծակիի յեկած, հուսախարված Արամ Սահակովիչը  
ցանկացավ հեռանալ, սակայն տեղից չարժվել չէր  
կարողանում: Ի՞նչ ե լինելու վերջը:

— Առաջ չարժվեր, Վանյուշա, — նորից կանչեց  
Զատոնալին:

— Ել տեղ չկա, ծալին ե:

— Ինչպես թե տեղ չկա, առաջ չարժվեր:

Վանյան ծիծաղեց: «ա՛յ քեզ դարձանալի մարդ,  
կարծեա չդիմուե, վոր ծովում առաջ դնալ չի կարելի»:

— Ապասիր, հետ յեկ ի՞նչ ե, ընդամենը հիսուն  
մե՞տր ե չորացվել:

Այդ պահին մոտեցավ Արամ Սահակովիչը և ամ-  
բողջովին ուշադրություն դառած լսեց նրանց խո-  
սակցությունը:

— Ապա մի տեսնենք դեպի աջ ինչքան ե ցամա-  
քացվել: Մեկ, յերկու... տասներկու... Ապասիր,  
սպասիր, այս ուղղությունը ինձ շա՞տ ես քարշ տա-  
լու:

— Դեռ չաս կա, քեռի Ավելքսանդր...

— Ինչքան կլինի, մեկ, յերկու վերջուն, թե  
արկելի:

Փոքրիկն ըստ յերեսվութիւնի իր կյանքում առա-  
ջին անգամն եր տարածությունն աչքի չափով վորո-  
շում, ուստի զժվարացավ:

— Զգիտեմ:

Վանյուշայի միամիտ պատասխանը Զատոնակուն  
ջղայնացրեց: Նա ավելի քան ձգվեց և ցանկանում  
եր ինչ-մոր բան ասել: Արամ Սահակովիչը այսուղ  
լսուակցությունը խանգարեց:

— Այս ուղղությամբ ցամաքացվել ե լնդամենը  
մեկու կես գերատին:

— Այս': Լավ, լավ, յեթե չեմ սխալվում, մենք  
Հյուսիս արևելյան կողմքը չափեցինք:

— Այս', Հյուսիս-արևելյան, — հեղությամբ պա-  
տասխանեց Արամ Սահակովիչը:

— Այս ժամանակը սոր ինչո՞ւ հակառակն ե տաց-  
վում: Զե՞ վոր ծովախորչը հարավ-արևելյան կողմը  
պետք ե ցամաքացվել:

Այս հարցն Արամ Սահակովիչին կարծես վերջնա-  
կանապես զամեց իր տեղում: Նա ամեն ինչի սպա-  
սում եր, սակայն վոչ այդ հարցին: Նա նույնիսկ  
մտքում ծիծաղեց Զատոնակու միա: Ծիծաղում եր  
վոչ այնպես միամիտ, ինչպես Վանյուշան: Ծիծա-  
ղում եր կծու, թունոտ ծիծաղով: Յերկու որ սոսաջ

Սարդարյանի հետ միասին նրանք յեկել եյին այն համոզմանը, վոր Զատոռնակին այլևս անելիք չունի: ԶԵ՞ վոր նա ներկայումս այլ մարդ և դասել: Նախ՝ նրան այլես բացակայում եւ մարդկային ամենանուրբ, ամենաթանկապին դպայտքանը՝ տեսողությունը: «Յեսվ ո՞վ եւ յեղել դրա պատճառը—ասել եք Սարդարյանը—իհարկե, այն մարդիկ, վորոնց ձեռքին նու բանին եւ Յերեկի մինչև կյանքի վերջ նա չի մոռանաւ այդ տանջանքները: Նրա առամեների տակ ըստ յերեսիութին այժմ այնքան թույն եւ կոտակիկի, վորքան չին ունենաւ ամմարդաբնակ անապատմանըրի թունավոր ոճերը: Յենլ բավական եւ, վորագետիք նաև մենքին խայթելու հնարավորություն՝ ունենա...Ռ, ինչքան խորը կլինի նրա թողած վերքը... Իսկ դրանից հասող կդա՞ւ, արդյոք, աշխատելու...»:

Այսպես եր մտածում նաև Արամ Սահակովիչը: Բայց այսոր նա կրտարված միաստի առաջ եր կանգնած: Այսոր նա յեկել եւ առաջին հերթին ցանկանում եր իմանալ այն, ինչ ամենից արինչի անցամերակի յե: Ի՞նչ պատասխանի: Սակայն Զատոռնակին համառում եր:

— Ինչպե՞ս մատացվում, չե՞ վոր ցամաքացումը պետք է շարունակիեց հարավ՝ արևելյան ուղղությամբ:

— Մի՞թե միմնույն չե:

— Ի՞նչ հիմար պատասխան: Ի՞նչ ե, Արամից նո՞ր եք իջել, չգիտե՞ք, վոր հյուսվառարկելյան կողմի չերտերը ջրաբեր են: Մի՞թե փորձնական № 2 հորը ձեղ դասեր չտալից:

— Յեթե չեմ սխալվում, դա հենց ձեր, Ալեքսանդր Միխայլովիչ, հաստատած ուղղությունն է:

— Ի՞մ:

— Այսուհետեւ:

— Ստում եք, յես այդպիսի ուղղություն յերբեք վոչ մի տեղ ցույց չեմ տվել:

Ալեքսանդր Միխայլովիչը ոկտեադ տվելի արագ գես ու գեն նայել: Նա կարծեաւ վնասուած մը մի ուրիշ մարդու, վորքանու նրան դիմի:

— Դրա համար վրաստաթղթեն վաճռ, — ստումների միջից նեմողուեն բացականչեց Արամ Սահակովիչը: Այս պատասխանից Զատոռնակին ավելի բորբոքվեց, ձեռքի փայտը բարձրացնելով, ասաց.

— Վո՞չ մի փաստաթուղթ: Յես միայն տեսողությունից եմ դրկիել, իսկ հիշողությունս դեռ շատ լավ ե: Յես ինձ վրա չեմ վերցնուած այս հանդապործության պատասխանատվությունը: Գնանք, վահյուշաւ, ոքանք, մինչև այս բանը չպարզվի, յես այսուեղ այլեւս վոտք չեմ դնի:

Արամ Սահակովիչը դեպքի նման ընթացքի չեր սպասում: Նրա գեմքն ավաղի գույն ստացավ:

— Ալեքսանդր Միխայլովիչ, մի՞թե ձեղ համար միմնույն չե:

— Ո՞վ ասաց, վոր ինձ համար միյենույն ե: Յես յերբեք թույլ չեմ տա, վոր իմ հասցեյին այդպիսի խռովեր ասեն: Միմնույնը, միմնույնը: Սրիկաներ են նրանք, վորոնք իմ մասին այդուհի կարծիք ունեն:

— Հըմ, բայց չե վոր ձեր մասին այնտեղ մել այդպիսի կարծիք յին:

— Վորսե՞ղ:

— Զեկայում:

— Ստում եք, ստում եք: Ինձ հնարավորությունն են տվել աշխատելու, ինձ հանձնարարել են ծովախորշի ցամաքացումը: Իսկ դուք... Ձեռքի վայրութում արտորելով նա չուռ յեկասի:—Գնանք, Վահյուշա:

Ձեռքը վորքիկ տղայի ուսին, զրած՝ Զատոնսկին հեռացավ: Զավիրոց բուլոս ջղայնանալուց նրա ճակատից քրոնքի կաթիլները մնելիրիկ — մնելիրիկ գլորվում ելին, հասնում թագ ունեքերին: Վորքերի տակ առես կրակ մր վասված: Նա ակսեց ասլելի արագ շնչել:

Այդպես ել Զատոնսկին հեռացավ ծովախորշեց:

Արամ Սահակովիչը քիչ հետո գլխիկոր վաղեց Սարդարյանի մոտ: Հարկավոր եր խորհրդակցել, իմանալ իր վերաբերմունքի գնահատականը:

— Դու դոյժը բոլորովին փշացրել ես: Զգիտելիր ինչպես պատասխանել, գոնե չիտուելիր, — բարիբացայ Սարդարյանը: Նա ձեռքով տեղանին խպիեց, վեր թռուալ, տիրեց քայլել, թքեց հատակին, մազերը քըլ-քըլեց:

Արամ Սահակովիչը մեղամլորի պես կանգնել եր ու չեր ուզում այլևս վորեմ խոսք առել, ըստ զգաւով, վոր դրանով Սարդարյանին սպելի կրորոքոքի:

— Սարդարյանց հետ խոսելու յեղանակը պետք է իմանալ: Միշտ չե, վոր թշնամուն քայլահայտ քարկոծելով կարելի յե նրան պարտության մատնել: Հաճախ փաղաքանքները, հաճոյախոռոչյունն ու

յերմ համբույրը կարող են փոխարինվել թշնամու ձականին արձակված թեժ դնդակների:

— Յես այդ գիտեմ, կրոնում արդարիսի մի վեպքի մասին պատմվում ե՝ անհույս, բայց չարանենող ծիծաղը տեմքին, պատասխանեց Արամ Սահակովիչը:

— Ահա՛, ամենի լավ, վոր կրոնը կարդացել ես: Նշանակում ե՝ թշնամու հետ տարրեր ձեռվկ կարելի յե պարզաբերել: Դու մեծ մարդ ես, մարդերոր մեջ ձերմարկներ կան, բայց երի այլպիսի տարրական բաներն անհրաժեշտ ե լինում ուստրեցնել: Մինչ դեռ կյանքն ինքը մեծ դպրոց ե, պետք ե սովորել: Այո՛, կյանքը, յեթե ուզում ես ճիշտն իմանալ, չափմատային իրավ ե, կարողացար նկուն շարժմել, նախառնենել հատկառակորդիդ համարական շարժումները՝ կհաղթես:

Սարդարյանը մի քիչ հանդարասվեց: Նրա ունքերն իջան, փակեցին առանց այն ել մանր ու խորն բնկած աչքերը: Արա մի սրոհ մտածելուց հետո նա վրա բերեց:

— Ինչպե՞ս հասկանալ Զատոնսկու այդ մերաբերմունքը: Նա կորցրել է այն, ինչ կյանքից հետո ամենապետակադինն ե մարդու համար և երի շարունակութե իր հին զիծը... Անհրաժեշտ ե նրա հետ խոսել:

— Ինձ ել թվում ե, վոր ըստ կրինեց:

— Բայց դժվար է նրան առանձին տեղ սեսները: Կկմնչենք այստեղ:

— Արամիսի գործի համար նրա մոտ պետք է վնալ: Բայց ինչպե՞ս գնալ, նա անշուշտ լուած կլինի, վոր յես իրեն մերավորել եմ:

— Հազիվ թե սուած լինեն : Ո՞յլ սկաք և ասեր :  
— Իսկ յեթե լսած լինի՞...

Արամ Սահակոսիլիչն ուսերը վեր քաշեց : Սարդար-  
յանն Արամ Սահակոսիլիչին մի կողմ քաշելով ասաց —  
ինձ թփում ե , պոր մենք չպետք ե նրա հետեւից  
յերկար քարշ գանձք : Զատոնսկու հետ կարեցի յե յեր-  
կու լեզվով խոսել : Մեկ լեզուն , հակառակ դեպքում  
ահա և մյուաը . և նա մոխրադույն բաճկոնակի առ-  
կից ցույց տուեց ատոբճանակի փողոյ : Բայց . . . արի  
պարզ խոսենք . . .

Սարդարյանը ձայնու ավելի ցածրացրեց յեվ հա-  
մարյա շշուակով սպիտացրեց .

— Յես կդնամ նրա մոտ , միայն մի քիչ թույն և  
հարկավոր :

— Ի՞նչ , — ապշած հարցրեց Արամ Սահակոսիլիչը :  
— Նա կո՞ւյր ե , չե :

— Այո' :

— Բոլորովի՞ն :

— Բոլորովի՞ն :

— Ուրեմն մի քիչ թույն և հայրեալոր , թույն ,  
վոր խակույն ներքործելու ուժ ունենա . . . Կիոքճեմ  
համոզել , վակ յեթե չհամոզվեց . . .

Սարդարյանը վորոշել եր Զատոնսկուն տախակել ,  
վորակեսդի նա ընտրություն կառասրի — իսամ զավա-  
ճանություն , կամ մահ : Այլ ուզի չի կարող լինել :  
Ինչպես բարմամյա մորթինեասոն իր կրանքը յեր-  
կարացներու համար որսուրո սովելի ու ամելի մե-  
ծացնում ե դոդան , այնուհետեւ Սարդարյանը , պերջա-  
պիս , պահանջ եր զբում , չհայմած թանու գիտ , բայց  
յեվ այնարես հառնել զբան , դուցե և կհաջող-

Սարդարյանը և Արամ Սահակոսիլիչն երենց պարզ հա-  
շիվ ե յին տավիս , վոր մահով կարելի յե խոսապիել  
դավաճանությունից , բայց զավաճանությամբ մա-  
հից՝ մերեք : Սակայն վո՞ր մահամերձն և միջոցների  
ու նրանց քանակի մեջ խորություն դնում :

Արամ Սահակոսիլիչը վախենում եր , վոր այդ  
այցելությունն , այնուամենայնիվ , կարող ե հզեկ-  
տամբոր չկենաւ և քանուել իսձնիմած կծիկը :

Մաքերը կապարի ծանրությամբ ճնշում ելին  
նրա զլուխոր : Ականջների մեջ ինչպոք անախորժ ժխոր  
եր , ամբողջ մարմնուվ նա հենվել եր սեղանին , սմուր  
բունել սեղանի անկրուներից մեջը , կարծես հենց այդ  
վայրիլյանին նրա վրաների տասկից մի առնելի չառը-  
վան եր ապասվում , վորը կուլ և տարու նորան , միշտ-  
ուու յե նրա կողքերը շիկացած քարերի հարվածների  
տակ , իսկ հեղձուճիչ դարձ խեղիւլու յե նրան :

Հանկարծ հեռավխոսք դանուը զնուայ : Սարդարյա-  
նը անստարբեր վերցրեց հեռախոսի փողը : Առաջին  
իսկ մամենախից նրա գենմքի արտահայտությունը փոխ-  
վեց : Նա վոտքի յելամլ , բախտազն ամելի սրինտ հպեց  
ականջներին : Սարդարյանը հսկվագեալ եր այլպես  
ըարված լսում : Նա պատասխանում եր հեղ , ընկճված  
ձայնու : Յուրաքանչյուր բառի վրա կեղծ հպատա-  
կության չեցու եր դնում : Յեկ ժպառում եր մի տե-  
սակ ծամբագած , անբնական ժպառու : Այս , ինչ գուրս  
եր գալիս նրա շրթերից , դեմքի արտահայտությանը  
բնակի չեր համապատասխանում : Հետո , յերբ խոռը  
վերջացրեց , կախեց լսափողը և արար շունչ քաշեց :  
Սովորաբար մարդիկ արյակես են անում , յեզր ակառո-  
վում են ձանկ ընսան տակից , կամ հետու տեղ վաղե-

լուց հետո կանգ առնում : Հետով խոսում եր հանրապետության նաևթային արդյունաբերության կոմիտեյի նախագահը :

— Դու հասկացա՞ք քանին ինչումն եւ, — վերջապէս հարցրեց նա Արամ Սահակովիչին :

— Ամենեավին :

— Ավելի, լա՞վ, ամելի լա՞վ : Թողլ յես ել չլսեյի : Զատոնակուն ծովախորշի ցամաքացմարդ աշխատանքների ղեկավար են նշանակել :

— Զի կարող պատահել :

— Արոտին պատահել եւ : Վաչինչ, վլոչինչ, յես այսուց, ուղղակի այսոր նրա հետ բայցեիբաց կիսումն : Իակ միթե չահամաճայնիեց, այն ժամանակ հաշվեհարդար կլինի, ծանր հաշվեհարդար : Միայն թե կուզեյի կատյայի յերեմը նորից չտեսնել : Նա ամեն ինչ կարող ե խառնել : Ինչևիցեմքած, վորոշված ե :

Քիչ հետո Սարդարյանը դուրս յեկալ և վնասց դեպի նամիթահորերը : Գնում եր և չրջապատին ուշադրություն չեր գարձնում : Ահա սունկի ձև ունեցող նամիթամբարից յերկաթե ժանգտուած խողովակով չուրի թափվում ե զերկ գետնին, փոքրիկ առավակ կազմած անաղմուկ պնուած, խառնվում լճակին : Այս քանի քայլ հեռու խողովակով գարշնագույն նամիթը փրփրալով լցովում ե ամքարի մեջ, վորպեսողի այնունից մղի մնկածն նամիթամբարը, այնտեղից ել՝ ո՞վ գիտե ուր : Ամբարուամ նամիթի փրփուրն որորվում եր, յերբեմն մի տեղից ճեղքվուամ, ապա փրփուրի նոր քուլաները կրկին ծածկում են ճեղքն ու փքվում ավելի : Այդ փրփրին նայելիս մարդու մէ՛ ատամներն են միմյանց սղմվում, և մատները մի բան չոշա-

վելու ցանկությունից կծկվում : Ինչքա՞ն դուրսկան ե այդ հեղուկը, վորով այնքան հարուստ և ծովախորշը : Մի ուրիշ կողմում ժեղունկան յերկրի ընդերքից դուրս դարով, աղմկալի արտաշնչում եր, ամկայն նրան յերկաթե թոքերից ողի փոխարեն դուրս եր ժայթքում ու նամիթը : Նամիթը ծփում ե, աղմուկով չորս կողմաց ցրմում, բայց յերկաթե անոթների կողերը սղմում են նրան, հրում դեպի կենտրոնական հոսանքը : Ժելունկան հառաջելով, նորից դեպի յերկրի խորքն ե գնում : Նրաց հետանից լավում են յերկաթի զնդոցներ, չըխկցներ յել ինչքան խորացնամելի խուլ : Մի ուրիշ հորի մոտ նախկին նամիթապահեստից թափվող ջուրը հետը յերկաթի ժանդե բերել, զետնին քսել ու այնուն ներկել, վսր յամադույն ներկարացների նախանձը կշարժի : Այսուղի, ուր ջուրը թափվում ե, զետինը ներկած ե դարչնադույն և ծծմբագույն խառնությունը : Զրի խողովակի կողքով ձգմում ե մեկ ուրիշ՝ կիսով չափ զետնին խրված : Յերկար ձգված այդ խողովակը մեկ բարորոտին ծածկվուամ եր հողի մեջ, մեկ յեր բարձրանում ու վերջուամ միանում մի ուրիշ խողովակի :

Ամեն ինչ, ամեն առարկա ու իր՝ անելիք ունի : Մեկը առաջայն անընդհատ վերելքներից ու վարեջքներից մաշվուամ ե, փչանուամ, այն փոխարինուամ... են, նույով, մի այլ իր կոտրման ուժեղ հարվածից կամ դիմադրությունից : Նամիթը յերբեմն լուռ ու հեղ հոսանքով առաջ ե պարուամ, յերբեմն ամեկի աղմուկով պատուամ հողի կուրծքը և ահաղին ուժով բարձրա-

նուամ վեր, ասրա ուռում ցրվելով՝ վերսպառնում դեսպի մայր հողը:

Ո՞ւր ե գնում յերկարանական բյուրոյի վարիչ Սարդարյանը: Ահա, վեճքապես, նա կանգնուում է: Նա դեմ և առնում խորանարդի ձեռով մեկը մյուսի վրա դարսված մի քանի սյուների: Այդ սյուները հիշեցնում ելին տարինեմք առաջ այստեղ յիրկնասլաց բուրզը, վորը ասկայն այժմ չկա: Նրանից մի հիշատակ և մնացել սյուների ասակ գանձող նավթի ու կավացեխի ինչ-վոր խառնուրդ: Սարդարյանը յերկար նայեց այդ հորին, վորը նրա մեջ հին հիջողություններն եր վերակենացնում: Այդ հիշապություններն սիմավեցրին նրան: Նա գլխիկոր հետ գարձափ: Կարծեա յեկել եր հրաժեշտ տալու հին հողամասի նավթահորերին, խառնիխուռն ընկած, ժանդուված, վազուց կործածությունց դուրս մնացած ժեղոնկաներին, գունավոր, պղոսոր ջրերին:

## XIV

Արամ Սահակովիչը չանանած հուզմունքի ու իրարանցման մեջ եր: Տանը նրան մոտեցալ փոքրիկ աղան և ներքին ըրթունքը կախելուի, գանդառվեց:

— Հայըիկ, կատաւն մեղք չի՞:

Հայըր վորդուն չհամեցափ:

— Ի՞նչ կատաւ:

Մինչ փոքրիկ կրացատրեր իր միոքը, մայրը սենյակից վորդուն սաստերով, կանչեց:

— Սուրիկ, արի ձեռքերու թվա: Շուտ, չուտ, քիչ խոսի:

Սուրիկը ցանկացամի միոքը սպարզել, բայց մայրը նորից կանչեց.

— Սուրիկ...

Սուրիկը վաղեց մոր մտու և ձեռքերու լիանալուց հետո մոր հետ յետ յեկավ:

— Կեղառուի մեկը, փողոցումն ել կեզատ բաներ չկա, վոր ձեռք չտա:

Բայց Արամ Սահակովիչը կնոջ խոսքին ուշադրություն չդարձնելով, վորդուն հարցրեց.

— Ի՞նչ կատու յե, Սուրիկ:

Սուրիկի վորդարեն մայրը կշուամբանքով պատաժանեց:

— Առ ե՛, զբողը քեզ տանի, զետ խոսում ել ե: Եսոր տանը նասած եմ, մեկ ել տեսնեմ փողոցում աղմուկը բարձրացալ: Դուրս գամ և ի՞նչ տեսնեմ ես վոչ միսիթարածը բանել և մեր հարեան Սաքոյի տղին, ծեծում ե: Ծեծում ե, ինչպես և ծեծում: Նա յել նրան և խիում: Վազում ես ենտեղ՝ «Ի՞նչ և պահել»:

— Շատ լավ եմ անում, իսկ կատային սպանում ե, մեջ մտավ Սուրիկը:

— Լոի՞ր, վերցրու հացի կեր, — նորից սատաց մայրը: Հա, հարցնուած եմ՝ «Ի՞նչ և պատահել». մեկ ել տեսնեմ տա, վոր մինչեւ լոմ դնարս քաջ հերտա եր դառել, ականց րալ: Արցունքենք ե, վոր թամիում ե: Խոսացնում եմ, մի խառը չի կափողանում տակե, հեկիտամ ե: Վեցջի վերջո խմանում եմ, վոր Սաքոյի

սողան սրա ներկայությամբ մի կատու յև սպանել։ Սա  
յէլ բարիացել եւ։

— Բա մեղք չի՞, — նորից մեջ մտավ Սուրբիկը։  
— Իսկ Սաքոյի տղան մեղք չի՞, վոր դու ծեծուց  
ես։

— Բա ինքը կատային սպանել եւ։  
— Իսկ յեթե քեզ սպանե՞լ, — հարցուեց հայրը յել  
նայեց վորդու ուրիշ աչքերի մեջ։ Սուրբիկը քիչ մտա-  
ծեց։

— Են ժամանակ Աշոտին եւ, իր հայրիկին եւ, իր  
մայրիկին եւ բանու կնասանեցնելին։ Թող սպանի։

Սուրբին այլևս վոչինչ չասաց։ Նա բորչի մանի-  
շակաղուցն ջրալի հյութը գլացավ խաւուում եղր, ճա-  
կընողեղը մի կողմ հափառում, կարտոֆիլին ու միայլ  
մյուս կողմից։ Բորչի անուշարուցը գուլուրչին ափսայից  
անջատալելով դեպի վեր եր բարձրանում։ Սուրբիկը  
գլուխը բարձրացնում եր և հետազոտողի պես լըրջ-  
միտ նայում դուրս ընթացքին։ Մայրը, վոր այդ  
յերեկո տրամադրված եր վորունք կշտամբելու, նորից  
իրատական տրնով ասաց։

— Իսկ յեթե Աշոտի աչքին վալչելիք՝ թակիվեր,  
ականջատակին խորելիք՝ մեռներ, հետո գային հայրի-  
կիդ տանելին բանուարիելին, ի՞նչ կանելիր։

Սուրբիկը խորամանկորեն ժարուց։ Նա գլուխը  
ծոելով, աջ ամիս վողորմություն հայցողի պես առաջ  
մեկնեց։

— Յես ել այն ժամանակ վողորմություն կիմուր-  
րելի, կառելի՝ «քեռի, այտաս մի կոպեկ տպեր իսկո-  
հիս, անոթի յեմ, մի կոպեկ տվեք...»։

Մայրը թափավ խմեց Սուրբիկը ձևոքին։

— Լոիր, անպիտան։

Սուրբիկն աչքի մի անկյունով նորից հորը, ժըղ-  
տաց։ Սուրբ Սահակովիչը, վոր միշտ ել սիրում եր  
սրամիտ վորդուն, նրա կառակիները, վոչ մի բառ  
չասաց։ Նա ճաշը կիսատ թողեց, վեց կացավ տեղից,  
մտքում կրկնելով վորդու վերջին բառեցը՝ «անոթի  
յեմ, մի կոսքեկ տվեք...»։ Սուրբիկը կատակ և անուամ,  
իսկ յեթե հանկարծ այբովես պատահեց թեկուղ հենց  
վաղը։ Ո՞վ և իմանուամ, ինչ կերպ կշարժվի Սարդար-  
յանը։ Հանկարծ զործը կրացիի, զառո կընիր։ Դատի  
ժամանակ Սարդարյան անշուշտ կասի։ — «Ահա թույ-  
նը նա մասուցեց...»։ Ինչո՞ւ, հանուն ինչի՞ ինքը  
սեատք և տանջանքներ, զորկանքներ կըրի։ Մի՞թե այլ  
կերպ խնդիրը չեր կարելի վճռել։ Թումալորել մի  
մարդու, վորի վյանքի կիսն այլմա չկա, մորը, յեթե  
անզամ վտանգամլոր եղր, ապա թումավոր լիժի պես  
առամբնահան եր արզել։ Ինչո՞ւ նրան թումավորել,  
յերբ նոր ևս ուրիշների պես ապրելու իրավունք ունիր։  
Յեկ հետո, ի՞նչիոր եւ հարկավոր, ի՞նչ կարող և տալ  
նրա մահը»։

Արամ Սահակովիչն այս ձնչող մտքերի տակ  
մտավ խոհանոց, գուրա յեկալ, բացեց պատուհանը,  
փակեց։ Նըան թումամ եր, թե առան ողը հաղեցած  
վասած ծաղկի, նեխած ձմի հոտոս։ Սիրուր խոտ-  
նում եց, գլուխը ցալլում։

Թող Սարդարյանն իրեն մեղադրի համովմունքի  
դրժման մեջ, թող։ Զե վոր այդ զեպքում չի քայրացի  
իր ընտանիքը...«Ո՛, ապրափելի յե...», — ինքն իրեն  
ասաց նա և տնից շտապ գուրս յեկալ։ «Վոչ, վոչ,  
չպետք եւ թողնել, վորպեսպի Սարդարյանը թումավո-  
չպետք եւ թողնել, վորպեսպի Սարդարյանը թումավո-

ըլք Զատոնսկիում, վորը վոչնչով մեղավոր չէ»։ Միւսին նշան մի միտք եր տանջում—«արդյոք չի ուշացել»։ Յեկամ վորքան վորքան վորքելում ուժ կար, վորքան ձարպկություն ուներ, դրժառդրում եր, միայն թե Զատոնսկու տունը համեմ այդ չարագուշակ պահից առաջ, միայն թե համեմ։ Գնալիս նա հեղում էր, մինչեւ թոքերի խորքը ող ծծում և փնչացնում։ Երագեր, կարճահասակ մարմինը դնդակի պես առաջ եր դժողովում։ Նա յերեսն կազում եր յերթելեկողների թելերին, կըրունելերին, սակայն վոչ մեկից ներություն չեր խնդրում, վոչ մեկի զիմքին չեր նայում։ Միայն թե համեմ և հենց տան պատշտամբի տակից բղայի՛ «թույն...»։

## ХV

Լիդայի համար կյանքը կորցրել եր իր քաղցրությունը։

Որվա մեջ չկար մի վայրկյան, յերբ նա կարողանալ մոռանալ իր հետ պատահածը։ Յերեկը հաջորդում եր գիշերվան, դիշերը ցերեկլան, և միշտ նույն մնչող, հոգնատանջ մտքերը, տիրությունն ու տըրտմությունն ելին պաշտում Լիդային։

Լիդայի համար գիշերներն առանձնապես անսանելի ելին։ Նա վախենում էր։ Մահ ցանկանալով, մահվան համար հարմար առիթ մինուսելով հանդերձ, նա մահից սարսափում եր, սարսափում եր, ինչպես մուկն և սարսափում կատվին տեսնելիս։ Այդ սենյակները Լիդայի համար բանտ ելին թվում։

Դեկտեմբերի 10-ին, անքուն, տանջող վիշերներից մեկը նու լուսացրեց։ Դրսում անձրես վր։ Անձրեին կաթիլներն առասործն թափում ելին գետնին, փոքրիկ աղբություն։ Հետո լճերը միմյանց ըստ գետում եր, իլ հետելին միանում ու ողբուրը ջուրը հոսում եր, իլ տանձրելով վողոցներում կուտակված փոշին, կեղուը։ Անձրեսի կաթիլները յերթեմն զարնում ելին տանձրետունին, խուլ ձայներ հանում։ Այդ ձայների սրատուհանին, խուլ ձայներ հանում։ մեջ ել նա ինչ-ուոր խորհրդակուր բան եր նկատում։ մեջ ել նա ինչ-ուոր խորհրդակուր բան ել նրան անմիերջ նրան թմբում եր, թե այդ ձայներն ել նրան անմիերջ նախառում են, բամբասում։

Լիդան կանոնեց սենյակի մեջ տեղը։ Այդուեղ եր, վոր մայրն արնուսված վնկավ, արդարեղից եր, վոր մայրին արնուսված հուսական ձիչը։ Այդուեղից բայից նրա վերջին հուսականական ձիչը։ Վոր մասին հշելիս Լիդան այլիս վաց հայիսյան։ Մոր մասին հշելիս Լիդան այլիս վաց լինել չեր կարողանում։ Առաջ նրա աչերից այսորված լինել պես առաստ կաթիլներ ելին թափում, իսկ անձրեսի պես առաստ կաթիլներ ելին թափում չեր կալիս։ Նա նահետ մի կաթիլ արցունք անդամ չեր կալիս։ Առաստաղից ելեկտրական լույսի ջահն եր յեց վեր։ Առաստաղից յականու դերեն առաստ կախած։ Լիդան մի բան դասձ մարդու պես շտապ կախած։ Լիդան մի բան դասձ մարդու պես շտապ կախած։ Վարդարացալ աթոռի վրա կանդնեց։ Ուզում եր թոկի բարձրացալ աթոռի վրա կախած ջահն։ Ջեռքը ծայրը կապել առաստաղից կախած ջահն։ Նա սեղանը քաշեց ջահն տակ, իսկ սեղանի չհասավ։ Նա սեղանը հապաղելու բարձրացալ վրա, թուլի ծայրը կապեց ջահն սրբառին աթոռի վրա, թուլի ծայրը կապեց ջահն սրբառին համար շղթային։ Նրա մարմինը դողում եր, աչքերը համար պղթային։ Ահա, վերջապես, թուլի սրություն ծայր չողողուում ելին։ Ահա, վերջապես, թուլի սրություն ծայր ողակը ըղակ դարձրեց, ահա շուտով այդ մահվան ողակը

կհաղցնի իր կոկորդին և իր մահվան վերջին հառաւ չանքը ևս կլավի այսուհետ, վորտեղ իր հարազատ մոր վերջին ճիշտ չնչեց... Բայց ինչո՞ւ յեն գողում իր ձեռքերը, մի՞թե նա գերադասում եւ կրանքը...

Շմածի պես նա հայացքը տան մի իրից մյուսն եր փոխարքում: Նրա աչքերին յերելում եյին կանաչ, կարմիր, դեղին կայծեր, վորոնք ընկնող աստղի առագությամբ սենյակի մի ծայրից մյուսն եյին թլուչում, միմյանց իստանվում, ստեղծում չտեսնված քառոս: Մի բողե կիղային թմբաց, թե ինքն անհատակ անդունդի մեջ և լնկել և հրեշտավոր արակությամբ գլորվում և ներքեւ, իսկ շուրջն ամեն ինչ՝ պարսկում է: Այդ պահին նա թոկի ստորին ծայրի ողակը շանկացավ հաղցնել վղին, սակայն ծովաց...

— Կիրա', կիրա', — կանչեց մի ճայն, միաժամանակ ուժեղ թափառարեց դուռը և համարյա բունցքի հարվածով ջաղվեց դուռն ապակիներից մեկը: Ապակու կտորտանկքներն ազմկով հատակին ցրիլ յեկան: Կիզան թողեց թոկն ու թուլացած ընկապ:

— Կիզա', կիզա', — նորից լսվեց ճայնք:

Հանցարության մեջ բոնված մարդու պես կիզան գողում եր: Հային նա կարողացակի չարմուկ դեպի դուռը:

Հեղախով ներս մտավ կատյան, գրկեց ընկերուչուն:

— Դու գժմե՞լ ես, դու հիմարացե՞լ ես... Ի՞նչ ես անում, մի՞թե կարելի յե այդպիսի բան անել:

Պատասխանի վրասրաբեն կիզան ակաց հմկեկալ: Գայնը նրա կոկորդում խեղդվում եր, մարդինը

յնյվում: Նորից նրա աչքերից ոկուցին արցունքի կաթիլներ թափկել...

Կատյան դրկելով ընկերուհու գլուխը, փնը ևս ոկուց լալ: Լալիս եր և չոյսում կիզային:

— Դու գժմե՞լ ես, մի՞թե ձանձրացել ես կյանքից... ինչո՞ւ, ինչո՞ւ յես այդպիսի հիմար քայլ անում:

Պատասխանի տեղ կիզան շարունակում եր հեկեկալ:

— Ի՞նչ անեմ: Յես բուի պես մտել եմ այս սենյակը, մի բարեկամ չունեմ, վոր գուռու բանա, մի հարազատ չունեմ, վոր արովանքի խոսք ասի: Կարծես բոլորն եւ գտնում են, վոր այս աշխարհում յես ավելորդ մարդ եմ, մի մարդ, վոր միայն սպականում և իր ըլքապատի ուղը, մի մարդ, վոր վորենի մեկին ոգտավետ լինել չի կարող: Զիշո՞ւմ ես մեր սպառանեկության որերը: Մենք այն ժամանակ կյանքի և մահվան մասին չեցինք խորհում, այն ժամանակ մենք անհոգ թռչուններ եցինք, այնպիսի արարածներ, վորոնք աշխարհում միայն անփուլթ ապրել գիտեն...

— Բայվակա՞ն ե, բայվակա՞ն և, — շշնջաց կատյան: Դու այնպիս ես խոսում, այնպիս արտասանում այդ բառերը, կարծես գերը սերտած դեբասանուհի վիճես: Ինչի՞ յեն պետք քո այդ փիլիսոփայությունները կյանքի և մահվան մասին: Զի հարկալոր: Մենք յերկուսս եւ պատ փիլիսոփաներ ենք:

Մենք քեզ հետ միասին վո՞նց վոր հետ մնացած, հոգնած, չփոթված զինվորներ ենք: Բայց, հավատա լինձ, մեր շուրջն ուրիշ բան և կատարվում, մարդիկ ինչ-վոր նոր կյանք են ստեղծում, ինչ-վոր նոր խո-հեր են նրանց համակում... իսկ դու, փոխանակ բայց աչքերովդ այդ կյանքին նայելու, վզիր հարցնում եռ մահվան ողակը:

Կատյան թաց աչքերը սրբելով նայեց իր շուրջը: — Ինչքա՞ն փոխվել է անյակիդ տեսքը, ամեն ինչ իրար և խառնվել:

— Ինչ անեմ, այս անյակն ինձ համար զիոդք և դառել. այսուեղ յուրաքանչյուր իր ինձ տառը և թվում, դրանցից վոչ մեկն չեմ կարողանում հան-գիտ սրտով մոտենալ, շարժել, ժամի տալ փոշին: Այս, իմ սրտում ել այս բոսկին արդպիսի խառնա-շիռթություն և: Դու քեզ ել ուշ զայիր, այդ բոլոր դազաների կերպարանք ստացած՝ կքրքջային ինձ վրա...

— Ո՞չ, թո՛ղ, այդ մասին մի խոսի, և ինչպես չես սմաջում: Յես քեզ հասկանում եմ, ծանր և հարա-զատ մոր դին տեսնել, քեզ շատ անհանդացնում և նայեմ այն երակը, վոր շուտով լույս աշխարհ պետք ե դա: Դու տաճնում ես, սրատկերացնելով այն փոք-րիկ ելակին:

— Դա յել քեզ չե, — արդան անտարբեր սրատա-խանեց լիդան:

— Այո՛, քեզ ամենից շատ այդ և անհակստաց-նում: Բայց, մի՞թե դու չգիտես, վոր մեր որերում

որպեսի կանանց կարեկցում են, ողնում յեկ վոչ թե անառակության ոյունին գամում: Մի՞թե դու գրալետ կին լինելով հանդերձ, չես կարող աշ-խառնել և անեցնել քո հաբազատ վորդուն: Թող նո հայր շունենա, բայց չե՞ վոր հետազայում ձեռք եռ բերում մի մարդու, քո հաբազատի անսահման սերը, ովհերվածությունը:

— Ե՞ս, թո՛ղ, ինչի՞ո և պետք: Յեթե յես խմանայի, վոր այլպիսի բովեներ եմ սովորու, նրա հետ վա-դուց հաշիվներս կմաքրեյի:

— Սրիկա՛, — ատամները միմյանց հսկելով, դպրու-քով բացականչեց Կատյան, — յես կդնամ նրա մոտ յեկ ուղղակի խայտառակ կանեմ: Այս, սրիկա՛, սրիկա՛: Ինչպես նա խիզճ չունի, ինչպես նա չի տմաչում... Ծոտապեց մի ուրիշի հետ կապվելու: Զիմա յել արդեն լուրեր են սրտում, վոր այս մեկի հետ ել չի հաշո-վում:

— Կինը մեղավոր չե, — շնչաց կիդան, — նրան ել և խարել, ասել, վոր իր անդրանիկ գգացմունքները նվի-րում և նրան, նրա հետ առաջին անգամ կապում իր կրանքը:

— Յես կնոշ հետ զործ չունեմ: Նա յե ինձ հար-կավոր, նրա հետ կխոսեմ, անշուշտ կխոսեմ: Դու կտաքանես, յես հետ կդամ, դիշերս կմնամ քեզ մոտ, կդամ, կպատմեմ...

Կատյան թողեց ընկերուհուն, զուրս յեկայի, հաս-տառ համողված լինելով, վոր այս խճճած դրու-թյան մեջ վորոշ պարզություն կիմացնի: Նա ճանա-պարհին մոքում ձեղակերպում եր իր խոսքերը, կծու կշտամբաների համար հատուկ բառեր ընտրում:

Յերկրաբանական բյուրոյում ամենաբյու միասնակալ, միապաղար աշխատանքի մթնոլորտն եր տիրում։ Ելի սեղանների շուրջը նստած աղամարդիկ և կանայք զանագան գծեր ելին քաշում, շշուկով միմյանց հետ խսում։ Կանանցից վոմանք չառ հաճախ աչքի տակով նայում ելին հարեւանուհիներին և, ըստ յերեսութին, նրանց նվաստմամբ իրենց առավելությունը տեսնելով, ավելի վրայում, գաղտաղովի ուղիկուլի մեջ զրված հայելուն նայում։

Դուռով մանողի ուշագրավյանը գբամբում եր յերիտասարդ մի կնոջ չափից դուրս ներկած շրթունքները, յուղած թարթիչները, լաքած ցեղունդները։ Նա մի զիծ եր քաշում, աղա խորամանկորեն նայում իրենից վոչ հեռու նստած, յերիտասարդության մայրամուսն ապրող մի աղամարդու։

Սեղանների շուրջը նստածների մեջ կային յել այնպիսիները, վորոնք խոր մտածմունքների մեջ ելին և անտարբեր դեպի իրենց շրջապատը։

Կատյան այդ սենյակով պետք և անցներ Սարդարյանի մոտ։ Սարդարյանի մասին նա տեղեկացրով շրթունքները ներկած կնոջից։

— Նա այսուղ և, բայց չգիտեմ կընդունի՞ — ծրումը կընկելով սրատասխանեց կինը և դնաց դեպի Սարդարյանի կարինեալը։ Դեռևս Սարդարյանի կարինեալը չհասած, նա հետ դառնալ։

— Իսկ յեթե հարցնի ձեր աղջանո՞ւնը։

— Զատոնսկայա Կատյա։

Լաքված կինը «ՀԱՅ» արեց, աղա նորից շարժվեց դեպի Սարդարյանի կարինեալը։

— Թող դա, — լալեց կիսաբաց դռան միջից։ Կատյան առաջ չարժվեց, իբր վրա զրամելով զծագությունների սենյակում աշխատողների զննող հայացքները։

— Բարեկ ձեղ, — հաղիվ նկատելի հեղամեքով վաղջունեց Սարդարյանը և նստելու համար ուղղ ցույց տվեց։ Համեցեք, վաղուց և, վոր միմյանց չենք տեսել։

— Այնքան ել վլազուց չե, բայց յես կուրելի ուսոնձին խոսել, — ողատափանեց Կատյան, լուսնի նայելով։

— Խնդրեմ, խնդրեմ — ասաց կինը և քամու արագությամբ դուրս գնաց։

— Մեզ վոչ վոք չի խանդարի, կարող եք սկսել, — ասաց Սարդարյանը։

Սարդարյանն իրեն չառ աղաս եր զգում։ Նրա խոսքի, ժամփի տակ թաղնված եր մի չուսնախած հետաքրքրություն։ Փորձված մարդը կարող եր նկատել, վոր այդ դեմքն ասում է. «Հետաքրքիր մե, թե ինչ կատարի»։ Բայց Սարդարյանն այնուամենայնին չեր չտասպում Կատյայի ացելության պատճառն իրանալու։ «Միմնույն և, ասելու յե» — մտածում եր նա։

Կատյան հուզմունք եր, չդիտեր ինչից ական, վորպեսպի կարողանա սրտի մազձը լիովին թափել։

— Լսում եմ, — տեսնելով, վոր Կատյան իր խոսքը չի սկսում, ասաց Սարդարյանը։

— Դուք սրիկա յեք, ուրիշ վոչինչ։

Կատյան իսկույն գունատմից։ Նա զգաց, թե ինչ պես իր կրծքի տակ սիրու կծկվում է։

— Հայրս հակահեղափոխականը չեւ, ուստի ասաբանկալեց և առանց խոսքերի վնասակու խակույն պատսառամենց Սարգարյանը:

— Դուք ասորաբար հորս մասին եք ակնազիում. յես իմ հոր մասին չեմ խոսում, հայրս ինքը կարդաւանա, ամեն ինչ կապազիլի:

— Ձեր հայրը միայն գնդակահակության և արժանի և վոչ թե աղասության:

— Գարշելի՛, յես հորս մասին չեմ խոսում, արդ նպատակով չեմ յեկել և խուզ ես ինձ չփոխում, թույլ տաւր, վոր յես խոսքս ասեմ, թույլ տաւր...

Կատյան ջղահությունից կրծում եք վիրին ըրթունքը, վորպեսպի ըրդավի: Սարգարյանը միայն "Կարողանում" եր ցուցամասով սեղանին խմել, ինչպես անում են ժողովների անուշագիր նախադաշները:

— Ի՞նչ եք ուզում ինձնից:

— Զեղնից վոչինչ չունեմ ինդուկտու, յես յեկել եմ հայտնելու միայն այն, ինչ այսոք յես տեսն եմ, ինչ տակն ու վրա յե արել իմ ամքողջ ելությունը:

— Բոլոր կանայք ել նրբակալմ են և նրանց ելությունը տակն ու վրա անելը, ինչպես դուք եք ասում, դժվար չե, ինդուկտ, ասացեք:

— Յեկ գուք համարձակվում եք կատակե՞լ:

— Առանց կատակի, լսում եմ:

— Յես զարմանում եմ, թե ինչորե՞ս կարելի յե այդքան սառնաբուն լսել այն, ինչ պետք ե ասեմ, ինչ համարյա ասել եմ:

— Դուք միայն ինձ հայհոյել եք և ուրիշ վոչինչ:

— Վո՞չ, յես ճշմարտությունն եմ տաել, իսկ ճըշմարտությունը հայհոյանք չե:

— Ուրիշ ի՞նչ խոսքով յես կարող եմ վորակել ձեր վերաբերմունքը դեպի այն խեղճ աղջիկը: Նրան անդամալույթ եք դարձրել, վասկել սենյակում, կտրել աշխարհից:

— Յերբեք արդպիսի ցանկություն չեմ ունեցել:

— Գուցե ավելի վատ ցանկություն եք ունեցել, յես այդ չփխում...

Սարգարյանն այսուղ այլես համբերել չկարողացավ:

— Գուք, ավելի լավ ե, ասացեք, թե ի՞նչ եք ցանկանում, ո՞վ և թույլ ավել խցկերու ձեր գլուխն այսեղ, ուր հարկավոր չե: Ի՞նչ միջնորդություն ն այս, յեմ հասկանում... Յես այլես չեմ ցանկանում լսել ձեզ:

— Բոլորովին ել հարկավոր չե, յես իմ ցանկացածն ասացի: Արածի համար դուք պատասխան կտաք գատարանում, դատարանը կպարզի, թե ինչպիսի ստորություն և ձեր արածը: Յես վերջացրի: Իսկ յեթե ձեզ մոտ մնացել և խզի դեթ մի չնչին հյուրէ, ապա մտածեցեք ձեր արածի մասին...

Կատյան դեմքն այնպես եր ծոմուել, ինչպես ծըռմովում ե մարդկանց դեմքը, յերբ նրանք վորեն բանից զգվում են: Նա մատների ծալքելույ տրորում եր Սարգարյանի գրասնկանին փուծ կտօպուր թղթի ծալքը, ատամները միխմանց մեղմում:

Կատյան զարմանում եր, վոր փր կոպիտ, սոսորացնող խոսքերը Սարգարյանին համբաւականությունից չեն հանում: Կարծես այդ մարդը հարյուր անդամ լսել եր նույնամասն խոսքեր, հարյուր անդամ

Կատյայի նման հաճախորդներին նույն սառնարառությամբ ճանապարհ գրել: Վերջում, յերբ կատյան հիշեցրեց դատարանի մասին, Սարդարյանը չամաչելով հարցրեց.

— Ինչ է, Լիզան ուզում է գործը դատարան տալ:

— Վոչ թե Լիզան, այլ հասարակությունն ինքը ձեղ դատի կտա: Այսոր յես ականատես եմ յեղել զարհուրելի տեսաբանի: Նա ցանկանում ելլ կախվել: Մի քանի ըստե յելս, և նա կարող եր վերջ տալ իր կյանքին:

Ո՛, այդ պահին Կատյան ինչպես կցանկանար կոխվածել Սարդարյանին, այդ կարիքին, այդ սովունին: Ինչու ինքն այնքան ուժ չունի, ինչու մարդում դատավոր չէ, վոր այդպիսիների դատն իր ձեռքով կատարի:

Կատյայի դնալուց հետո Սարդարյանը գլուխը յերկու ափի մեջ առնելով, խորը մտածում եր՝ «Ինչով ե մեղախոր Լիզան, վոր յես նրան այդ որին հասցըրի»: Իր հիշողության մեջ նա մի գեղք չեր դըստնում, վորը միունք կերպ նսեմացներ Լիզային: «Ի՞նչ ե արել», — ինքն իրեն հարց եր տալիս Սարդարյանը և Լիզային վարդարեկող վոչ մի գեղք չեր հիշում: Լիզայից նա միայն տեսել ե անչափ նվիրվածություն, բյուրեղային սեր: Ինքը վայելել ե նրա աղջկական թարմությունը և միշտ ել հողնած ըստելին զլուխը դրել Լիզայի կրծքին, համոզված լինելով, վոր նրա մեջ խիստ է իրեն նվիրված մի սիրտ: Ինչու, ասկա ինչու նրան թողեց, կապվեց Ռայխայի հետ, վորը յուրաքանչյուր քայլափոխում ամեն կերպ հասկացնել ե տա-

լիս, վոր ինքը միայն կին չե, այլ աղատ քաղաքացուհի, վոր վոչ վոր իրավունք չունի ստուգելու, թե ինչով ե ինքը պարապում, ինչի մասին ե մտածում: Նա համեմատեց յերկուսին իրենց արտաքին տեսքով, յերկուսին պատկերացրեց այն պահին, յերբ տարիներն իրենց դրոշը կղենեն նրանց վրա: Ռայխայի այժմվածարմ, շառադրունած դեմքը նրան պատկերացավ զեղնած, այսունիները դուրս ցցված, աչքերի տակը վոս ընկած: Իսկ չպիտես ինչու Լիզան այդ ժամանակամիջոցում, բայ նրան, ավելի քան կգեղեցկանա, նրա արեելյան աչքերը կիտայեն իրենց վառվառուն, գերող վայլով: Ռայխան մյուս կողմից իր մեջ պարունակում ե հյուսիսի մարդկանց հատուկ հատկություն—պայություն: Ամուսնության առաջին որերը Սարդարյանն այդ չգլաց, բայց հետո նա սկսեց գժկամությամբ մոտենալ իր կնոջը, չնայած վոր սիրո մասին ամենապեղեցիկ խոսքերն եր ըստելով: Յեկ այդպիսի ըստեներին նա սովորաբար հիշում եր Լիզային:

Այս մտքերի մեջ եր, յերբ ներս մտալ վոլկովը՝ իր հետ բերելով իրենից անբաժան ծխախոտի հոտր: Նա ծխամործը լցոնելով, դիմեց Սարդարյանին:

— Տիսուր ես յերեւում, չինի թե վերից ելի նեղում են:

— Վո՞չ, չեն նեղում: Կուլիկը հաշվետվություն պահանջեց, կազմեցի:

— Մե՞ծ եր:

— Ինդամենը չորս եջ: Տպագրեցի, հետի ել ուղարկեցի հետախուզական տեղամասի քարտեղը:

— Լավ, հապա ինչու յես տիսուր:

— Գիտես ինչ կտ ,— ափսոսանքով ասաց Սարգարյանը ,— յես իմ թղթերի արանքում գտել եմ հիշատակարան :

— Ի՞նչ ես ասում :

— Այս , աստանան տանի : Գտել եմ , քրքրել . ա՛յ , շատ ախուր եջեր կան : Յեվ դիմե՞ս ինչ , յես այն այրեցի , վորպեսդի կարդալով նորից շտանջվեմ :

— Բայց դա հրաշք ե , մի՞թե նա քեզ մոտ եք :

— Այս , հրաշք . . . հա՞ , հա՞ , հա՞ . . . Կյանքում հրաշքներ չեն պատճենում : Յես սովորակե մոռացել եյի , վոր մի շաբք զրքերի հետ հիշատակարանու ևս վերցրել եմ . . . Մարդ շատ հաճախ այնպիսի բաներ ե մոռանում , վորոնց մասին յերբեք չել կարելի մոռանալ : Յրիածությունն իմ դժբախտություններից մեկն ե :

— Բայց , ափսոս ,— աչքերը խորհրդավոր կերպով չընելով ասաց Վոլկով :

— Վոչինչ , անցածի մասին քիչ են մտածում . . .

— Այդ ճիշտ ե , բայց և այնպես . . .

— Բայց և այնպես ամեն ինչ անցողիկ ե այս աշխարհում :

— Եսիր , ասում են , վոր Կուլիեի մոտ լայն խորհրդակցություն ե բինելու ծովախորշի ցամաքացման մասին : Ասում մն , վոր իրու Արդումանյանի նախաձեռնությամբ ե այդ ժողովր զումարվում :

— Զգիտեմ , այս անգամ վորտեղ ուզում ե ժողով լինել , յես Արդումանյանին ահա , այսպիս , մաղելներու մեջ կարծիք կարուի :

Յերեկոյան , յերր Սարգարյանը անից դուրս յեկայի հանաւալիքները դիմու Զատոռնակու տունը , չգիտես ինչու , նրա մտքում պատվում եր Բիբի — Հերաթի պատկերը : Յեվ մինչեւ ճանապարհի կեսը նա նույնիսկ մատկերը : Յեվ մինչեւ ճանապարհի մատկերը : Բայց հետո , քանի մուշտածեց իր անելիքի մասին : Բայց հետո , քանի մուշտածեց եր Զատոռնակու տանը , այնքան ալելի յեր կենարոնանում իր գլխավոր նաբառակի շուրջը , նորից վեր հիշում այն , ինչ վաղորոք մտազրուել եր ասելու : Նա սպասում եր մութն ընկնելուն : Յեվ այժմ յեր կընքում վոչ սոսոյ կար , վոչ ել լուսին : Քաղաքը ըրջապատել եր անթափականցելի խավարը : Միայն քաղաքի կենարոնանում ելեկարական բաղմաթնով լապտերներ ծակուածում ելին խավարը :

Մարգարյանը դիմումի սպասել եր մութն իջնելուն , վորպեսդի ծանոթներից և վոչ մեկը չտեսնի , չխսուեցնի իրեն :

Միայն նրա մատներն ալելի ելին սղմուռում , յերր հիշում եր , վոր կարող ե պատահել Կատյային :

... Իսկ յեթե հանկարծ Զատոռնակին համաձայնի իր հրեշտային պլանների հետ : Այն ժամանակ ինչպիս նայի կատյայի աչքերի մեջ , արդարացման ի՞նչ խոսնայի թե Կատյայի դեմքը չտեսներ , յերանի թե նա այդ պահին ուրիշ տեղ զնացած լիներ : Այդ ժողովրի մեջ խորսութված , նա առաջ եր շարժելու , թուզ , թող , թող Կատյան տանը լինի : Ծայրագույն : Ե՞ս , թող , թող Կատյան տանը լինի : Յայրագույն պետքում կասի , վոր ինքն ուրիշների կարծիքը հայտնեց , ներողություն կիմութիւն :

Վերջապես, ահա և Զատոնսկու բնակարանը: Ես  
ասուիմներով շտագ բարձրացավ ու դուռը ծեծեց:  
Կանացի մի ճայն նրան արձադանքեց:

— Կարելի՞ յե:

— Խնդրեմ:

— Յես Արքանդը Միխայլովիչին եմ ուղում, —  
դուռը բանալով առաց Սարդարյանը:

Կին ոտարուի կերպով նայելով հյուրին, հրավի-  
րեց նրան մյուս սենյակը:

— Ո՞վ ե — լավեց սենյակի խորքից:

— Յերկրածական բյուրոյի վարիչ Սարդարյա-  
նը:

Զատոնսկու մոտ նստած եր մի յերիտասարդ: Սարդարյանն իսկույն ճանաչեց իր ախոյանին՝ յերկրու-  
թան Արզումանյանին: Նա նստած եր դիմանել վրա,  
հայցքը հասած դիմացի պատից կախած դունեղ դոր-  
դին: Սարդարյանը սեղմեց Արքանդը Միխայլովիչի  
ձեռքը, թեթելիքի բարելից Արզումանյանին ու նրա-  
տեց: Նա չղիսեր ինչից սկսի խոսակցությունը: Ար-  
զումանյանի ներկայությունն անշուշտ խաճարում  
եր. անհրաժեշտ եր մի կերպ աղասիվել նրանից: Բայց  
ի՞նչ կերպ: Ինչի մասին ել խոսելու լիներ, վերահսո-  
վանդից աղասովել դժվար եր, անհրաժեշտ եր զգու-  
շություն, այնպիսի զգուշություն, ինչպիսին հարկա-  
վոր ե լինում ուղեղի վիրահատություն կատարող  
բժիշկն: Մինչ նա խոսք բանալու ուղիներ եր վորո-  
նում, աիրեց անհարմար լուռթյուն: Միայն այդ լուռ-  
թյունը խախտելու և իրեն անհարմար դրությունից  
հանելու համար Սարդարյանը հարցրեց.

— Խնդրե՞ս եք...

Զատոնսկին դժկամությամբ ոլատարիստեց:

— Ձեր աղոթքներով աղբում ենք:

«ինչո՞ւ այդպիսի անմիտ հարց տվի, միթե՞ պարզ  
չե, թե ինչպես ե նա», — ինքն իրեն կշտամբեց Սար-  
դարյանը, բայց և այնպես ասաց:

— Յես միայն սրբերին եմ աղոթում, — և միտյի  
ինքը ծիծառեց իր ասածից:

Եթի տիրեց լուռթյուն: Սարդարյանի ծիծառը  
ցանցառ մարդու քրքիչի տպավորություն թողեց: Այդ  
անհարմար գրությունից հանեց Արքանդը Միխայլո-  
վիչը:

— Այդ ինչպես ե, վոր ծովախորշի ցամաքացումն  
այդպիս և ընթացել:

— Յես չենց գրա համար ել յեկել եմ այստեղ: Բայց  
ավելի լա՞վ չեր լինի, վոր այդ մասին առանձին  
խոսելինք:

Արզումանյանը հանկարծ գլուխը բարձրացրեց,  
խոժոված հայցքով նայեց Սարդարյանին, սակայն  
չունիչ չափացավ: Նա իսկույն հասկացավ, վոր Սար-  
դարյանն իրեն ե գուրս հրավիրում: Այս բանից քիչ  
կարծէս շիռթվեց, սակայն փոկույն ձեռքը դրեց Արք-  
անդը Միխայլովիչի աղբքին և ասաց:

— Յես շտապում եմ, Արքանդը Միխայլովիչ,  
բայց մի հեքիաթ կա, վոր լսել եմ մի գյուղացի  
մարդուց: Ինչե՞ր ասես չի հորինում ժողովուրդը: Յես  
անպայման ուղում եմ այն պատճել, այնքան ել  
յերկար հեքիաթ չի:

— Խնդրեմ, ինդրեմ, հեքիաթները խորիմաստ են  
լինում, գեղեցիկ:

— Դուք եւ յսեցեք, հարկավոր իրա, — զիմեց նոս Սարդարյանին: — «Եխում ե չի լինում, մի թաղավոր և մինում: Այդ թաղավորը զվսին մի յեղջուր և ունենում, վորի մասին թաղավորության մեջ վոչ վոք չի իմանում: Թաղավորը մեծ հոգս և տանում, վորպեսզի իր յերկրի ժողովուրդը, դորքը, սրալատականները, մերձավորները չիմանան դադանիքը: Յեղջուրը թաղուն պահելու համար նա թակը յերբեք դվիսից չեր հանում: Այսպիս ապրում եր թաղավորը, և պարատականներից վոչ մեկը չէիտեր, վոր նրա գեղեցիկ թաղի տակ թաղանաձ և անձունի մի յեղջուր: Որերից մի որ դժբախտություն պատահեց, վոր հողին հայտառարեցրեց թաղավորի վրաքը, խորտակեց նրա վող թաղասլորությունը: Մի անգամ, յերբ թաղավորը սակրովում մը, մի անգամուշ շարժում կատարեց յեղ թաղը դետին զլորվեց: Վարսավիլը յեղջուրը սեսայի թե չե, իսկույն բացականչեց: — «Ներիր տեր... Ո՛ սա վ՞նչ ե...»:

— Լո՛յ, — դոռաց թաղավորը: Նա վարսավիլին կարաներ, բայց վախենում եր, վոր վարսավիլը մահավան բոպեյին կորող և դադանիքը բանալ: Թաղավորը յերկար մտածեց, թե ինչպես վարվի այդ անպիտան վարսավիլի հետ, վերջը շատ մտածեց, հետո նա փորչեց վարսավիլից հաստատ խոսք վերցնել:

— Ե՞յ, վարսավիր, — ասում մ նա, — դու իմացել ես այնալիսի գաղտնիք, վոր աշխարհում վոչ վոք չիտե: Դու ինձ խոսք պետք ե տաս, վոր վոչ մի տեղ, վոչ մեկին չես ասի այդ դադանիքը, ապա թե վոչ քո ամբողջ ընտանիքը քեզ հետ միամին հրապարակում խարույկի վրա կայրեմ:

— Յերդպլում եմ, թաղավոր, վոր ականջներո խուլ են յեղել, աչքերո կույր, յես վոշինչ չեմ տեսել, չեմ լսել... Յեկ թող լեղուս սրաբաննալիք, յեթե համարձակվեմ թուչունի ականջնն անդամ առել...

Թաղավորը վստահանալով, վոր գաղտնիքը վոչ վոք չի իմանա, նորից շարունակում ե իր զեղիս կյանքը: Հրամաններ ե տալիք, խնջույքներ սարքում...

սել Ոգնյովը Զատոնակու հետ վերջին տեսարկցության  
ժամանակի :

## IV

Ծովում, կատույա ջրերի մեջ, ալիից մի կիլո-  
մետր հեռավորության վրա, վորքիկ մի կղզի յեր  
ստեղծվել :

Աշխատանքները դեկավարում եր Ալեքսանդր Մի-  
խայլովիչը : Նրա ցուցումով Եյին դատարկում հըս-  
կայական բարժանեցը : Ծովն առանցությամբ կուլ Եր  
տամիս բարժաներից թափած քարը, ավաղը և թնդում  
եր, թե ի՞րքե՞ք նա չի հագենա : Վորքան մեջ դժվար  
լիներ ծովի հատակը մակերևույթին հավասարեցնելը,  
այնուամենայնիվ, Ալեքսանդր Միխայլովիչը չվհատ-  
վեց : Կղզին անհրաժեշտ եր, ինչպես որդը, ջուրը :

Մի անգամ, յերբ Ալեքսանդր Միխայլովիչը զրու-  
ցում եր Մարտիրոսի հետ, ատաց .

— Հիմա մենք հարցն այլ կերպ պետք ե դնենք :  
Հետախուզական աշխատանքը կընթանա ցամաքացման  
աշխատանքի հետ զուգընթաց : Կստեղծենք այդ փոք-  
րիկ կղզին, յեթե նաև գտնենք, ապա ծովը կցամա-  
քացնենք... Յեւ, գիտե՞ս ինչ, յես ճիշտ ե, կույր եմ,

իւրից դիտեմ, վոր ծովում նարվթ կա : Յեթե սուս  
դուրս յեկայի, յես ինձ ալելի չուտ ծովը՝ կնետեմ :  
Եյո՛, այո՛, թույլ չեմ տա, վոր իմ վերաբերմամբ  
կասկածեն...

Ամեն առավոտ փոքրիկ հավակ նառած, նա դնում  
եր կղզում աշխատանքը ղեկավարելու : Տեղ հասնելուն  
պես միշտ հարցնում եր .

— Մենք վո՞ր կողմից մոտեցանք մղղուն :  
— Հյուսիսային, — պատասխանում եյին նրան :  
— Հատակը քանի՞օ մետր է բարձրացել : ...  
— Քիչ է մնացել, վեց մետր...

— Քարերը, քարերն անկանոն թափել չի կարելի,  
հետո նրանք վորմանը կիսանգարեն, քարերը պետք է  
թափել միայն քառակուսի ձեռով...

Մատով նա ծովի վրա քառակուսինք եր ծրում,  
հայացքը մեկ գցում ծովին, մեկ լաղուր յերկնքին :  
Յերկնքում նա վոչինչ չեր տեսնում : Սակայն մարդ  
զգում եր, վոր ծովը նա տեսնում է . տեսողությու-  
նից ընդամենը դրիված նրա աչքերը թափանցում են ջրի  
հատակը, տեսնում, թե ինչպես որեցոր այն վեր է  
բարձրանում : Նա դիտեր յուրաքանչյուր քարի տեղը,  
դիտեր, թե ինչպես է թափիլում ավաղը :

Մի քանի ամսից հետո կղզին արդեն պատրաստ  
եր : Անհրաժեշտ եր հետախուզական հորի բուրգը կա-  
ռուցել, սկաել փորման աշխատանքը : Ալեքսանդր Մի-  
խայլովիչը սրտատրոլի սրբառում եր դրան : Աշխար-  
հում նրան այլևս վոչինչ չեր հետաքրքրում : Թող № 4  
հորը նաևթ տա, նրանից շատրվան խիլի, այն ժամա-  
նակ Ալեքսանդր Միխայլովիչի ուրախությունն այդ  
շատրվանից ել ուժեղ կհորդի... Այն ժամանակ կհեղա-

շրջվելին բոլոր տեսակի թեռիւաները, վորոնք պնդում էն, վոր ծովախսորչի հետազա ցամաքայտումն անողութեան ե, վոր իբր թե մինչև ծովի կենտրոնն ել նոսվթառատ շերտը Բիբի-Հերբաթում արդեն իսկ շահագործվող հորերի շերտի հետ միացած է : Ցնզարանությունն ե, նրանք յերկրաբանությունն այնպես են լիմանում, ինչպես յետ անասնաբուժությունը, —ասում եր Ալեքսանդր :

Սակայն, յերբ կղզու վրա սկսել ելին հորը փորել և արդեն հասել ելին 50 մետր խորության, հորավոր վարպետ Բարայինը հեալով մտավ հորափորման քամնի մարիչ Արամ Սահակովիչի առանձնասենյակը :

— Ի՞նչ անենք, ախր են անտերը ծծում ե...

— Ի՞նչն ե ծծում :

— Հորը :

— Զեմ համանում, հորն ի՞նչ ե ծծում:

— Ա՛, չե՞ս համկանում, ծովից ելի, ծովից ջուր և ծծում, ջուր :

— Ա՛...

— Մի ճար ասա յե՛, ախր մեր աշխատանքն ելի ծովին ե ընկնում :

— Հա՛, հա՛, —հեղնորեն ճայնեց Արամ Սահակովիչը, — բա ի՞նչ եյիք կարծում: Մարդին վոր դցում եա ջրի մեջ, կաշվով ջուր և անցինում: Հիմա մի կոռոր հող են կանգնեցրել՝ թե հոր վորի: Կույրի շենած գործն ել եղագես կլինի: Ընդունված բանն ե, վոր կույրին ճանապարհ ցույց կտան, իսկ եստեղ կույրն ե մեզ ճանապարհ ցույց տայիս... Հիմա յես ի՞նչ անեմ, բան չեմ համկանում :

— Դե՛ եղ կույրին մի կամչիր գա, մի զուցե մի բան ասի, իրա շինածն ե:

— Սատանան ե լիմանում, թե նրան հիմա վորտեղ կլունես :

Հենց այդ բովելին ներս մտավ Մարտիրոսը: Նա Բարայինի այլայլված դեմքից խուռաց համկացավ, վոր մի արտակարդ բան և պատահել:

— Բարե՛վ, ախրես, գույնդ թանի գույն և դառել:

— Թանի գույն կղառամ, բա ինչ, հորը ջուր և ծծում:

— Հորը ջուր և ծծում:

— Հա՛, բա ինչ:

— Ալեքսանդր Միխայովիչը չի տեսել:

— Դրա հսմաք եմ յեկել, Արամ Սահակովիչն ել ասում ե, նրան հիմա չես գտնոի:

Մարտիրոսը դարձավ, խեթ նայեց Արամ Սահակովիչին և առանձնասենյակից գնդակի պես դուրս թռավ:

Արամ Սահակովիչն ստիպված հետևեց Բարայինին: Տասնհինգ բոպե չանցած, Ալեքսանդր Միխայովիչը և Մարտիրոսը յեկան ծովափ:

Ալեքսանդր Միխայովիչի ներքին ծնոտն ինքնաբերաբ շարժվում եր: Դժվար եր վորոշել ցրտից եր շարժվում, թե՞ ջղայնությունից: Յերբ Մարտիրոսը և Բարակը, բոլոր ուժեղը լարած, վորքիկ նաև կը թիւվարում եյին դեպի կղզին, վորի վրա բացի մի բուրգից և չորս բանվորից վոչինչ չկար, Ալեքսանդր Միխայովիչը ձեռքի փայտով միշտ խփում եր նավակի մայմին:

Այդ պահին հյուսվածքը փշում եր ստում, բայց մեղմ քամի: Ամպերը մոռայլ և խորհրդավոր քարավաններով զալիս, քաղաքի վրայով թուչում ելին ով գիտե ուր: Ամպերի ծվենների արանքից յերկնքը յերգեմն ցույց եր տալիս իր դժույն, անհապույք դեմքը: Թվում եր, թե քաղաքի վրա յերբեք լազուր յերկնակամար չեղել: Քաղաքի գործարանների ծուխը ծխնելույղներից արագությամբ գուրս եր գալիս, շտապով դեմով նման մոխրագույն յերկնքով քիչ տեղ հոսում, իսկ հետո յերկնքը տուչորված անապատի նման ծծում եր այն, անհետացնում... Փողոցներում թղթի կտորանքները քամու թեվերին նստած՝ թուչում ելին, կտքում տների պատերին, այնտեղից հարված տտացած՝ հետ դառնում ու գետնին չհասած՝ աղավնիների նման պտտվելով, բարձրանում կտորներից ել վեր: Այդպես ե լինում հյուսիսային հողմի նախորյակին:

Իսկ ծո՞վը, ծովը փոթորկից սռա՞ջ: Այդ պահին նրա կապտկապույտ ջրերը պողպատի գույն են ստանում: Թեթեվ քամու ալիքները համբուրում են նրա վողորկ մակերեսույթը և գերված նրա բյուրեղային հստակությամբ ու մեղմությամբ, ջուրն իբենց դիրկն առած, տանում ե հեռո՛ւ, հեռու: Յեվ խաղաղ ծովը խանդելով առաջին այդ ալիքին, սկսում ե սկզբում մեղմ որորվել, հետո միայն կարծես հիշում ե, վոր քամին իրենից մի ալիք դրկած՝ փախցրեց հեռո՛ւ, հեռու... Աչա մի ուրիշ ալիք շտապում ե առաջինի հետեւից: Ծովը մի պահ հանգստանում ե, կարծես սպասում ե զնացող ալիքների վերադարձին: Նրանք չեն վերադառնում: Ծովը հուղվում ե, ուղարկում ե մե-

կին, նրա հետեւը մյուսին... Ծովը մանչում է, փըրփըռում և չուտով ամբողջ մակերեսույթը ճերմակ փըրփուով ե պատում...

Այդ ժամանակ միայն լսվում է.

— Թըըջջ...

Այդ որն ել ծովը սպասում եր հողմին:

Տեղ հասնելով, Ալեքսանդր Միխայլովիչը Մարտիրոսի թեփց բռնած՝ իմկույն առաջ անցավ: Ալեքսանդր Միխայլովիչը հորին մոտենալով, Բաբայեվին ասաց.

— Խնդրում եմ մի չոր խողովակ հորի մեջ դժել:

Դա այնքան ել դժվար չեր: Մի քանի բոպեյից հետո խողովակն իջեցվեց հորը:

— Հանեցեք:

Բոլորն սպասում ելին Ալեքսանդր Միխայլովիչի խողին: Խողովակը հանելուց հետո, այս անգամ դիմելով Մարտիրոսին, նա հարցցեց.

— Վ՞ո՞ր կողմն ե թաց:

— Զեր:

— Ի՞մ: Ահար... Զիշո՞մ ես, յերբ մակերեսույթը տասը մետք խորության վրա յեր: Այս քարը, վոր շմփացըին, այս քարի տակից ե ծուրը ծծում...

— Համկանում եմ, համկանում եմ, — բացականչեց Բաբայը, — իսկ յես մոտ մի վերպա՛մ՝ ինչ պատահեց, նավակը, նավակը... Նրանից մոռացել ելին նավակն ափին կապել...

Մի ակնթարթում յերկու սոսկալի դեպք պատահեց: Բաբայը խոսում եր Ալեքսանդր Միխայլովիչի հետ, յերբ հանկարծ մի ալիք նավակն իր դիրկն ա-

ոսով, բաց ծովը տարակ: Յեզլ յերբ Բարսելը մէկենաս-  
բարսը դուրս յեկասլ բուրդից ու գնաց դեպի նարվակը,  
մի ահռելի ալիք կղզու արից մետք ու կես բարձրա-  
նալով, խիեց նրա կղծքին: Դրա հետևից մի ուրիշ ա-  
լիք: Քամին կայծակի արագությամբ յեկամ, հետք  
բերելով բարձաթիվ ալիքներ: Ալեքներն այնքան եին,  
վոր վողովում եյին ամբողջ կղզմն: Առաջին իւկ ա-  
մաները կղզու վրա գտնվողներին վոտից դլուխ թըր-  
չեցին: Բարսելը տեղից վեր թռչելով, ահարեկ ձայ-  
նով կանչեց.

— Վա՛յ, կորա՞նք...

Մի ուրիշ բանվոր սկզբում անհասկանալի աղաղակ  
բարձրացրեց, հետո ապշած, չգիտեր ինչ անել:

Արամ Սահակովիչը քայժանի գույն եր ստացել:  
Աղեքսանդր Միխայլովիչը գմիտրկի ջուրը թափ տո-  
ւով, գոչեց.

— Պաշտպանեցեք հորը, ի՞նչ եք բղավում:

Մարտիրոսը վաղեց գեպի հորը, բայց չգիտեր ինչ  
անել:

— Քամու դեմ պատճեշ չինեցեք, չո՛ւս, չո՛ւս...  
Շուտով ստեղծված շփոթությունն անցակ:

Բանվորներն ալեքների դեմ դլուխները թեքած,  
մինչ այդ վոտքերի տակ յեղած տախտակները քան-  
դում եյին, քամու դեմ տանում: Ալեքները խփում եյին  
նրանց, հետ տալիս: Տախտակներն առաջ բռնած,  
նրանք դլուխները բեկում եյին, ինչպես այդ անում են  
ծխի կամ ձյունախառն բուքի ժամանակ: Աղեքսանդր  
Միխայլովիչը ջրե հարվածից ընկնելու համար մեջ-  
քով կորացել եր: Վորքան Մարտիրոսը ինդրեց նրան  
հեռանալ՝ չեղամ, վայտի ծայրով չոչափելով դե-

ախնը, զգուշությամբ, այսպես, վոր ծովը ընկնել, ա-  
ռաջ եր զնում ստուգելու համար, թե վայրու պարհա-  
պը վո՞նց են շինում: Զուրն արդեն թրջել եր նրա  
մարմինը... Բայց նա կարծես իր սովորական աշխա-  
տանքն եր կատարում:

— Այդպես չի պահի, չի պահի, ի՞նչ ե, բախչայի  
համար եք շինուամ... Շուտ յերկու գերան որեմ տովեք...  
Մարտիրոսն ել իր հերթին եր բարկանում:

Քամին ալելի յեր սատոկանում: Քաղաքը դեռ  
այլպիսի հողմ յերբեք չեր տեսել:

Արամ Սահակովիչն ուրիշներին չխանդարելու հա-  
մար բուրգի մի անկյունում հարմար տեղ գտնելով,  
կուչ եր յեկել...

Հանկարծ նաև տարսափահար դուրս թռավ և լա-  
ցակումած բղավեց.

— Բո՞ւրգը, բուրգը խորտակվում ե...

Մարտիրոսը նայեց բուրգին:

— Ակեքսանդր Միխայլովիչ, բուրգը թեքվել ե,  
հիմա կընկնի...

— Ի՞նչ սատանայություն: Խողովակներն ինչպես  
են դրված:

— Ուղղահայաց, ուղղահայաց:

— Ինչ խենթերն են այստեղ, չե՞ք հասկանում,  
վոր այսպիսի հողմի ժամանակ խողովակները բուրգի  
մի կողմի վրա չի կարելի դնել... Միթե այդքանը  
չեք հասկանում:

— Ո՞վ ե վերխովոյը:

— Յես եմ, — աչքերը ծածկելով, կանչեց յերի-  
տասարդ մի ձայն:

— Բարձրացիր բուրգի դադաթըլ, — հրամայական տոնով ասաց Մարտիրոսը:

— Ի՞նչ ես անում, ցանկանում ես վիշտայի հետ տղին ծովը զցե՞լ, — հաղիվ իրեն դապելով ասաց Արամ Սահակովիչը:

— Յետ չեմ բարձրանա, — վարիչի առաքելությունից տիրտ առած, պատասխանեց յերիտասարդ բանվորը:

— Բայց բուրգը պետք է փրկել:

— Փրկե՞լ, փրկե՞լ. այս բոլորն ահա ձեզ դորձն ե, այս բոլոր մարդկանց կյանքը դու յես խորտակում . . . Կո՛ւյր, կո՛ւյր . . . Յոթ մարդ, այսքան սարքանիորում ես խորտակում, — կատաղությամբ վրա բերեց Երամ Սահակովիչը:

— Եսի՞ր . . . հեռացի՞ր, յես ինքս կը արձրանամ:

Մարտիրոսն Ալեքսանդր Միխայլովիչի տեղ պատասխանելով, գնաց գեղի բուրգի աստիճանները:

Քամին խանդարում եր բարձրանալ: Մարտիրոսն ամբողջ ուժով կրչում եր աստիճաններին: Այդ պահին ով ել նրան տեսնեմ, կարսափեր . . . Բուրգը բարակ ծառի նման ճոճվում եր: Այդ գրությամբ Մարտիրոսը բարձրանում եր նրա դադաթըլ: Գորդաթին կանդնած նա պետք է ուներ խողովակները քամուն հակառակ դնելու: Դա կիրկեր բուրգը, գործիքները:

Ալեքսանդր Միխայլովիչը վոչինչ չեր տեսնում: Նա միայն զգում եր այդ վտանգը: Յեթե նրա աչքերը տեսնելին, թե այդ բոպելին ինչ եր կատարվում իր շուրջը, կարսափեր, անշուշտ կարսափեր: Մարտիրոսի կյանքն ահա մի մաղից ե կախված: Ո՛, նրա մի

վոտքը . . . նա յի՞նչ ե, ողում կախվե՞ց: Ինչ սարսափեն-լի քամի յե . . . նա հաղիվ ե բարձրանում:

Ներքեւում ալիքները շարունակում եյին թափով դալ դեսի կղզին: Բանվորները տախտակի մի ծայրն ամրացնում եյին, սակայն մյուսը հանկարծ ալիքի ուժեղ հարվածից գետնին եր դարձվում . . Յուրան արդեն իրեն զգացնել տվից: Մինչև վոտները թքչելով, րանվորները դողում եյին: Ալեքսանդր Միխայլովիչը կապտել եր: Նա շարունակում եր զանազան ցուցումներ տալ:

Նույն բուգեյին Արամ Սահակովիչի միտքը դբաղված եր իր փրկության ինդրով: «Գոնե մի չչակ, կամ մեծ զանդ լիներ՝ աղետի մասին քաղաքին հայտնելինք: Իսկ հիմա ո՞վ դիմե մեր տեղը . . .»:

— Շուտ արեք, շուտ արեք . . . անընդհատ դուռում եր նա:

Մահվան տագնատի մեջ լինելով, նա մտածում եր միայն ու միայն իր փրկության մասին: Հողմածեծ այդ կղզում աղետի դեմ պայքարող յերկու ճակատ եր ստեղծվել . . .

Մարտիրոսը հաղիվ բարձրացել եր բուրգի դադաթըլ: Այնտեղից նա բարձր ձայնով կանչում եր Բարձրայելին, ուղղություն տալիս: Բուրդն առաջվա նման ճոճվում եր և բոլորն ել սպասում եյին, վոր ահա նա կմեկնիլի ծովի մեջ, իր հետ տանելով Մարտիրոսին:

— Ե՞ս, լսիր, Բարայիվ, են մյուսը միացրեք . . . Բարայիվը մի խողովակ միացնում եր բանալուն ու ցանկանում, վորպես հենագան, քամուն դեմ դնել:

Բայց այդ պահին ջուրը խփում եր նրան, չնչասպառ  
ամուռմ:

Նա դեպի Մարտիրոսը միայն ահով եր նայում: Մարտիրոսը չեր դադարում կամքել.

— Շուտ, շուռ առուր...

Քամին նրա շրթից բառերը խլում եր, մտնում նրա կոփորդը, խեղդում...

— Ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ, ... — լավում եր քամու վոռոցը:

Ալեքսանդր Միխայլովիչը մյուս չորս բանվորի հետ ջանում եր պատճենչել միզու ափը, արգելվել ջրի ներխուժումը... Ամեն անգամ նոր ալիքի տակ մնաւ լուց հետո, նա շտապ արրում եր գեմքը, շունչ քառում, ձեռքերն ողում շարժելով, բացականչում...

— Վոչինչ, վոչինչ չի լինի... խփեցեք, ծայրը տվեք յես պահեմ...

— Ալեքսանդր Միխայլովիչ, հեռու գնացեք, մենք զոնե տեսնում ենք զրի և ցամաքի սահմանը... ախր չեք խնայա, բոլորովին կիսորտակվեք... — ասաց բանվոր Ալիյեվը:

— Հիմա բոլորս, բոլորս կիսորտակվենք... — կերկերուն ձայնով նրան պատասխանեց մի ուրիշը:

— Վոչինչ չի լինի, նոր տախտակ բերեք... Այնպես, յես ծայրը կպահեմ, դուք մյուսը խփեցեք...

Փոքրիկ, արհեստական կղզու վրա կույր ինժեներ Զատոռնակու զեկալարությամբ հորափորական խումբը այդպիսի գերմարդկային ճիգերով մարտնչում եր ու դետի դեմ:

## V

Գարնան առաջին որերն եյին: Հողն արբեցած պարնանային արևի չերմությամբ, կարոտից տուրտված սիրուհու պես բաց եր անում իր չուրթերը, փափկանում, փփրուն դառնում: Կանաչի անդրանիկ ծիլերը հեղությամբ բարձրացնում եյին իրենց դիլիրիները, թեթև հովից որորվում, ինչպես միակերպ հագած աղջիկները խմբային պարի ժամանակ: Ո՛, կենարաբ դարուն... ինչե՛ր ասես, վոր նա չի գեղեցկացնում, ի՞նչ հույզեր, նուրբ դղացմունքներ ասես, վոր նա հետը չի բերում:

Նալիթաշխարհն ել իր ուրույն, գեղեցիկ ու գրավիչ գարունն ունի: Նալիթահորերի արանքում, լայն ձանապարհների յերկու կողմով կանաչի դուռի յեկապվում: Ասավուներն իջած ցողն արշալույանի պլաստիկալիզում ե աղամանդի պես: Այդ ցոլքին կարծես համակերպվում է վուգրիկ լներում գոյացած նարիթի ծիտածանուման մասը: Ինչպոք տեղից թռչում, գալիս են ճերմակ աղամանիներ, ճանապարհների վրա հացի կտորտանք — հատիկ կտցահարում... ձնձղումները յերամ կաղմած աղմկով մի տեղից մյուսն են թռչկոսում, անհոգ յերգում, ծլլլում... Ո՛, այդ կենարաբ պարունք, դարուն:

Յել ահա, գարնան այս գեղեցիկ որը Լիովային վիճակված եր նոր հարվածներ դդալ, շատ դատն ճշշմարտություն խմանալ, նոր միայն լիովին հասկանալ, թե ինչպիսի կարիճի հետ ե կապել փր կյանքը... Ո՛,

ծանր եւ իմանալ այդ ճշմարտությունը, բայց և այնպես... ամեն ինչ անցել եր:

Մինչ այդ նա բոլորովին չեր հասկանում, թե ինչու ահա չորս որ ե, ինչ Սարգարյանը տուն չի դաւիս: Նա արդեն վճռել եր, վոր նորից Սարգարյանը խաղաց իր սրտի լարելի հետ, կոխվածեց նրան ցեխի մեջ ու հեռացավ: Բայց չորսորդ որը նա մի փոքրիկ տոմսակ ստացավ, վորի մեջ սոսկումնալի խոսքեր ելին դրված ...

«Դուք սիրում եք մի սրիկայի, մի լսիրչ արարածի, մի մարդու, վորը միայն անարդահերթի յե արժանի:

Ուժեղ խոսքեր են պետք, վոր այդ մարդու խօսկան պատկերը տան: Ի՞նչ անուն տալ այն մարդուն, վոր ցանկացել ե ձեզ գնդարկահարել, վոչնչացնել, իսկ հետո վայթակեղցը ել, ախրացել ձեր նվիրական զգացմունքներին: Ի՞նչ անուն տալ այն մարդուն, վոր ձեր հարազարա մորը զերեզման ե դրել և նրանից հետո այդ մոր աճեցրած աղջկան...

Լրան այլևս չկարողացավ այդ թղթի կտորին նայել... Երա աչքերը մշուշիցին, գլուխը պատվեց... Ո՛, ի՞նչու ինքն արդ ճշմարտությունն առաջուց չդիտեք, վորպեսպի թեկուղ յեղունդներով պատուի այդ սրիկայի, այդ արյունոտ ալազակի կոկորդը:

Ինքն ել չիմացավ, թե ինչպես անից գլուխս նետվեց...

Այլևս նա չեր զլում արելի ջերմությունը, ողի թարմությունը, չեր տեսնում ձնձղուկների ուրախ ծլվոցը, մանուկների թուլոցը... Ահապէն տեղ եր

անցել, յերբ հանկարծ մի բան հիշելով, սկսեց քայլերն արագացնել: Նա մարդկանց կողքով անցնում եր, առանց զգալու նրանց կոյությունը, չեր լսում բազմաթիվ կառքերի, սայլերի անխմերի ճոխնչը, կտուապահների բացականչությունները ... Այդ անորինակ եքստազի մեջ նա հասավ մի նրբանցքի, սպա մտավ մի շքանցք, վորի յեկեռ կողմն ել բժշկի ցուցանակն եր վիակցրած: Դուռը բանալով, նա ինչ-վոր քեկին ընդունեց բժշկի տեղ:

— Պատուեցե՞ք, ուստուեցե՞ք:

Հանդիպողը մետքել իւ ապշած:

— Ի՞նչը:

— Ահա, պատուեցեք, այստեղ իժի ձագ կա, սպատուեցեք...

— Քնկեր, ի՞նչ ե պատահել, հանդատացեք, խնդրում եմ:

— Ո՛, պատուեցե՞ք...

Աղմուկի վրա մյուս սենյակից դուրս յեկամի բժիշկը և պենսյեն ուղղելով, ունքերը խոժուած, հարցուց:

— Ի՞նչ ե պատահել:

— Բժիշկ, բժիշկ, յես չեմ ուզում նրան ծնել, նա ոճի ծուտ ե, նա կարիճ ե... աղատեցեք ինձ նրանից...

VII

Ռայիսան սովորություն ուներ աշխատանքից հետո  
Մարտիրոսի հետ տուն գնալ: Փոթորկի որբ նա ըստ  
իր սովորության յեկավ հորակորման բաժնի պրոֆ-  
եռմի գրասենյակը, վորպեսդի այնուղից միասին  
դնան:

Ալդուեղ մի խումբ բանվորների հետ նստած եր և  
վարպետ Ռահմատուլիմը:

— Աղջի, քարի սիրո ունես, չե՞ս վախճանում քա-  
մուց...—առաց նա ժպտալով.

— Ինչի՞ վախճնամ:

— Կատանի, ծովը կողիք: Ես անտեղն արդեն յերեք  
բուրգ կոտրեց, իսկ մարդը հո խաղալիք է նրա ձեռ-  
քին:

— Մարդու յերեսը պինդ է, կողիմանա,— մեջ  
մտավ Ռումոյը:

Դրսում քամին ավելի ուժգին եր վոռնում, դեռ-  
նից պոկում չոր ավաղը, մոռչու ամպեր ստեղծում ու  
քում դեպի ծովը:

— Իսկ Մարտիրոսն ո՞ւր է,—կամացուկ հարցրեց  
Ռայիսան:

— Ո՞վ դիտե, դեկավար մարդ է, տեսնես վորտեղ  
ե պտույտ դալիս:

— Այս զեկավար:

— Բա՛, կուսրջիջի քարտուլար է: Յերեկ չե մյուս  
ո՞ն ընտրեցին:

— Իսկ հմա վորտե՞ղ կլինի:

— Տղերը, Մարտիրոսը վորտե՞ղ կլինի,— հարց-  
րեց նա հայլաքվածներին:

— Ասում են գնացել ե № 4 հորը,— պատասխա-  
նեց մի բանվոր:

— Դե վոր զնացել ե ենտեղ, ես քամով վո՞նց է  
դալու, չե կարող:

Ռայիսան պղոփկոմից դուրս յեկավ ու հայացքը  
ծովին, ցանկանում եր մենակ դնալ: Սակայն նրա ու-  
շաղովությունը գրավեց մի հանգամանք: Նա տեսավ,  
թե ինչպես հենց ծովի ավելից հսկա ալիքներ են գոյա-  
նում, գնալով՝ խոշորանում և առա չարժվող բերդի  
նման վլվում նորաստեղծ կղզու վրա: Թվում եր, թե  
ալիքները հասնում են բուրդի գաղաթին: Ռայիսան իր  
աչքերին չհամատաց: Վաղելով դնաց դեպի ծովափ,  
վորպեսդի մոտիկից ավելի պարզ տեսնի: Յեկ քանի մո-  
տենում եր ծովին, այնքան ավելի յեր սարսափում:  
Ահա նա տեսնում է, թե ինչպես յերբեմն ալիքները  
ծածկում են այն փոքրիկ հողամասը, վոր ստեղծել են  
հետախոսական հորի համար: Տագնազալից մի ճիշ  
գուրս թուալ Ռայիսայի բերնից, բայց ո՞վ եր նրան  
լսողը: Հարկավոր եր հետ գալ, հայտնել: Վորքան հեշտ  
եր գեպի ծովափ գնալը, այնքան դժվար եր այնու-  
ղից վերադառնալը: Վաղելու մասին խոսք անդամ չեր  
կարող լինել: Ռայիսան բոլոր ուժերը լարեց, վորպես-  
ով մոլեզնած հողմը նրան գետնին չգլորի: Սակայն  
կարծես մի վիթիսարի ուժ, կազելով նրա վերարկուի  
փեշերից, նրան հետ եր քաշում, արգելում առաջ  
դնալ:

Յեղանակն ավելի վատթարացավ: Մինչ այդ քա-  
մին եր միայն վոռնում, իսկ հետ բերելով անձրեխ հատ  
ու կենտ կաթիլները, իսկ այժմ սկսեց ձյուն տեղալ:  
Սակայն ինչ ձյուն եր այդ: Ավելի չուտ հողմն իր հետ  
սառն սաեղներ եր բերում ու նրանցով անխնա ծակո-  
տում մարդկանց դեմքը: Ռայիսան ձեռքերով յերեսը

հողմից ծածկելով, հասավ պրոֆեսուր և կիսարայ դռան միջով, զորքան ուժ ուներ, կանչեց.

— Խեղդվո՞ւմ են...

Նրա ահարեկող ձայնը բոլորին վոտքի կանգնեցրեց :

Արդուլը, վոր նոր եր յեկել և սպասում եր հերթակոխության, առաջինը վարեց դեպի Ռայքասան :

— Ո՞վ ե խեղդվում :

— Կղղու վրա դառնվողները... Կղղին ջրով ծածկել ե...

Խրամոյը ձեռքի ծխախոտը դեն շպրտեց :

— Պետք ե հայտնել նավատորմին...

— Ի՞նչ նախատորմ՝ առաջիկեց մեկը :

— Յեղայր, նաև և հարկանոր ուղարկել :

— Հենց քեզ կլսեն, փորձիր մի...

Արդուլը վաղեց դրասենյակ, վերցրեց հեռախոսի փողը :

— Ալո, միացրեք ընկեր Ռգնյովին. ընկեր Ռոյմին տվեք...

Նա հեռախոսի փողը թողեց, ցանկացավ վաղել ծովափ, բայց ի՞նչ կարող եր անել: Նորից գանգահարեց: Վայրէյանները ժամեր եին թվում, հեռախոսի կենտրոնում աշխատողների հարց ու փորձը ջղայնացնում եր:

— Ասում եմ շտապ տվեք ընկեր Ռգնյովին, ի՞նչ հորանջում...

Մի անգամ ել հեռախոսը դնացաց, և ահա խոսում ե ինքը, ընկեր Ռգնյովը: Արդուլը կարճ, անկառ խոսքերով պատմեց պատահածը:

— Ինչ միջոցներ կարող եք, ձեռքառեք մինչև իմ գալը: Յես մի նավ կուղարկեմ, իսկ ինքս մի քանի բոպելից հետո այդտեղ կլինեմ:

Այդ պատասխանը ստանալով, Արդուլը վարդեց ընկերներին հայտնելու: Նրան պատահեց Արդուլանյանը, իմացալ Արդուլի խոսակցության մասին:

— Այդ լավ ե, պետք ե մտածել, գուցե մինչ նավի գալը մենք փրկենք տղաներին:

Խրամոյն այն կարծիքը հայտնեց, վոր ձովախորշում դտնվող նավակներ ել կարելի յե ոգտագործել:

— Յեթե մեր կողմից պատնեշ ստեղծեն, մոչինչ չի լինի, պետք ե գնալ ոգնության, ենտեղ քիչ են: Արդուլը առաջինը համաձայնեց գնալ:

— Գնանք, —դիմեց նա իր ընկերներին:

Յերկու հոգի, վոր դուխներն ուսերից ել քաշեցին պահում, ասացին.

— Ինչու շտապել մահվան հետեւից, նա ինքը մեզ ժամանակին կղանի...

Այս տատանեց և յերկու ուրիշի, վորոնցից մեկը իրաղաղ ժամանակ ել ջրի յերեսին նավակով ման չեր դալիս:

Արդուլանյանը դեռ չեր խառնվում, ըստ յերեւալութին հուսալով, վոր առանց իրեն ել հարցը կվճռովի: Դեռ ևս վոչինչ չվճռված, հանկարծ լսվեց Ռոնյովի ծանոթ ձայնը: Կարելի յեր կարծել, վոր նա թուել ե և վոչ թե ավտոյով յեկել:

— Քանի՞ հոգի կա այստեղ, —դիմեց նա:

Ակսեցին թվել աղղանուններով:

— Բարակն ե, Մարտիրոսը, Զատոնակին, Արամ Սահակովիչը:

— Իսկ Զատունսկին ինչո՞ւ յեւ զնացէլ . . .

— Ենտեղ հարկավոր եւ յեղիլ, ընկ. Աղմյով, հորը  
ջուր եր ծծում: Աւզում ելին պատճառն իմանալ, վո-  
րովհետեւ ջուրը կարող եր մեծ վնաս տալ . . . — պատ-  
մեց Խրամոյը:

Արդուլն Աղմյովի թուացիկ հարց ու փորձը լսելուց  
առմիջապես հետո կանչեց.

— Ցես զնացի, ով գալիս ե, թող դա:

— Ո՞ւր ես զնում, — նրա հետեւց հարցրեց Աղ-  
մյովը: Դուան մեջ կանող առնելով, Արդուլը պատմեց,  
թե ինչ ե ուզում անել:

— Կանաս, մինչեւ հասնելու կիսեղդվես . . .

— Մենք ել եղ ենք ասում, — համարյա միարե-  
րան գոչեցին մի քանի հոգի:

— Չե՛, ընկեր Աղմյով, յեթե նավը խորացակի,  
լող կտամ, չըի յերեսին ցուցա կլինի, չըի տակով  
կլողամ . . . Անջախ եղպիսի բան չի լինի, նայիր կորա-  
հչե՛ . . .

Յերկար խոսելու ժամանակ չկար: Նրան հետե-  
կեցին Խրամոյը, Ասկերովը, Ռայխան և Արդուլան-  
յանը: Արդուլը ծովափին նայեց իրեն հետեւզներին,  
հաշվեց, մեկն ամելորդ ել: Ցանկացան Ռայխային  
հետ տալ, բայց Խրամոյն ասաց, վոր Ռայխան բժշ-  
կությունից բան ե հասկանում, գուցե կարիք լինի:  
Գտան, վոր Արդուլանյանն այնտեղ անելիք չունի:  
Արդուլը մինչեւ սրումքները ջրում խրվելով, նավակը  
կապից ազատեց, ինքը դեկի մոտ նստեց:

Չտեսնված հանգժնություն եր այդպիսի փոթորկի  
պահին փոքրիկ նավակով գուրս դալ մրրկահույլ ծո-  
վը: Սանձարձակ, ահեղնազոչ մրրիկն այդ փոքրիկ

նավակը կարող եր իր պիսկն առնել ու քչել բաց ծու-  
վը, այն ժամանակ և վոչ մի հզոր ձեռք չերկ փոկի  
նավակում զտնվողների կյանքը: Բավական եր, վոր  
քամին չեղեք, դեպի նորաստեղծ կղզին չուաներ, ա-  
մեն ինչ կորած եր:

Ծովափին քամն քայլի վրա դժվար եր առարկա-  
ները նշմարել: Զյունի փաթիլները սոսկալի հողմից  
սառչում ելին, կարկուտի վոքրիկ գնդակների ձև  
ստանում, խփում մարդկանց դեմքին:

Փոքրիկ նաովակն արդեն պատրաստվել եր ճանա-  
պարհ ընկելու, յերբ Աղմյովը քամուն հոկտեմբերի  
կանգնելով, սասաց:

— Թողեցեք, դա ավելորդ ոխոկ ե:

Արդուլը ցանկացավ համոզել, վոր վոչինչ չի լի-  
նի, վոր տեղ կհասնեն և անհրաժեշտ ոգնություն ցույց  
կտան:

— Հարկավոր չե, չուտով նրանց ափը կհանի մո-  
տորային նավը, վոր իմ կարգադրությամբ պետք ե  
ծով գուրս գա . . .

Արդուլը նեղասրտած նավակը հետ քաշեց:

Ծովափին հավաքվածները քամուց թաղնվելով,  
փայտից պատրաստած վոքրիկ պահակատեղի հետո  
սպասում ելին — հայացքները հառած ծովին:

\* \* \*

Այդ նույն պահին Զատունսկու տանը շատ անհան-  
գիստ ելին: Աննա վասիլեևնան նկատելով յեղանակի  
հանկարծակի փոփոխությունը, սկսեց ինքն իրեն խո-  
սել.

26—Ծովախորշում

— Զեն թողմում, վոր տեղիը հանդիսաւ մնաւ, ո՞ւր մնաց այս յեղանակին, ի՞նչ յեղալ... Կատյա, Կատյա, աղջկու, վաղիր մի տես ի՞նչ յեղալ...

— Ո՞ւր գնամ, մայրիկ, — զարմացած հարցրեց Կատյան:

Կատյան փաթաթիկեց տաք շարում, փողցում մասնավոր կառք վարձեց և ուղեվորվեց ծովախորշը: Այն ժամանակ նա հասավ, յերբ մոտորային նավակը ծովափ եր հանել կղզու վրա դժուլողներին: Առաջին հայացքից դժվարացավ հորը ճանաչել: Նրա շորերը թրջվել ելին, դեմքը կապտել: Թիվում ելու, թե խեղդվելուց են ազատել, արհետուական չնչառության միջոցով կյանք տվել: Հայրը մի ձեռքով առաջ ցույց տալով, անընդհատ առում եղ.

— Տարեք ինձ մի տաք տեղ, մի տաք տեղ տարեք:

— Գնանք, դնանք, — շտապեցնում եր Մարտիրոսը, վոր կույր ինժեների հետ միասնին, նրա թեսից բոնած, իջել եր նավակից:

Հերթափոխական տնակի մոտ Մարտիրոսը Զատունսկուն հանձնելով ուրիշներին, մոտեցավ Ոգնյովին:

— Բարե՛վ, ընկեր Ոգնյով, ինչ չենք տեսել, տեսնում ենք:

— Ուրեմն հորը լեցվեց ելի...

— Ի՞նչ եք առում, ի՞նչ եք առում, — մեջ մտավ Բարայիկը, — մենք մի պատնեշ ենք շինել, վոր ել չեմ կարող ասել...

— Իմկանան բարրիկադ, — ավելացրեց Մարտիրոսը, — նոր հերթը վոր գնա, կարծելու յե, թե տան մեջ ե...

— Ուրեմն կարելի՞ յե աշխատանքը շարումակել:

— Իւարկե, իւարկե...

Ոգնյովը Մարտիրոսին և Բարայիկին չթողեց յերակար խոտել:

— Շուտ, չուտ զնացեք շորերներդ փոխեք...

Ռայիսան այնքան մարդկանց մէջ անհարմար դտավ Մարտիրոսին մոտենալ: Յերբ Մարտիրոսը դադարեց Ոգնյովի հետ խոսելուց, նա Մարտիրոսին զուգահեռ մի քանի քայլ զնալուց հետո, մոտեցավ նրան:

— Մարտ...  
...

— Իսկ դու ի՞նչ ես անում, — հանկարծակիի յերած հարցրեց Մարտիրոսը:

— Դու նույնիսկ ինձ չե՞ս տեսնում:

— Այնիմի խոսք, չեմ տեսել... Ո՛չ, ինչ սարսափերի քամի յե: Անցյալ տարի յել քամի կար, բայց ես քանիու նման վոչ յեղել ե վոչ ել կլինի:

Նրանք ել յեկան հերթափոխության սենյակը, բայց ներսից մի ձայն կանչեց.

— Կանանց արգելվում ե:

— Լավ, դու կմրտես, Մարտիրոս, առ իմ շալը, չոր ե, փաթաթիկիր, յես պլովկոմում քեզ սպասելու յեմ, շուտ, շուտ, դե...

Յերախտապարուվթյան ժպիտը դեմքին, Մարտիրոսը վերցրեց Խայրսայի առաջարկած շալը, մտավ այնտեղ, ուր «կանանց մուտքն արգելվում եր» և վորտեղ դադի վարությանն առատությամբ ջերմություն եր տալիս:

Քիչ հետո այդ սենյակը մտան Ոգնյովը և Աղումանյանը: Կուլիկն ել արդեն յեկել եր: Ոգնյովը ձեռքերը շփելով մոտեցավ վառարանին, ապա կրակին նայեց ու ժպտաց.

— Այս լավ ե, պոր կրակ ունենք: Ապա մի փոքր նպասելուց հետո նա նստեց յերկար նստարանին ու չարունակեց: Յես մի պատմություն հիշեցի: Հարավային ճակատում վաղ առաջոտյան զորամատերն էր յինք գնացել, ուզում ելինք տեղում տուգնել տղաների տրամադրությունը: Գումարատակներից մեկը գտնվում էր բաց անապատում, ասենք լուղովը համարյա բաց յերկնքի տակ ելին գտնվում: Գալիս եմ հարցնում, —ինչպե՞ս եք սուրբք: տեսնում եմ՝ մարտիկները մեկմեկու դեմքի յին նայում, մի բան ուզում են առել, չեն համարձակվում: Մեկը չինելի մեջ կուչ գալով, ասում եւ ցուցում ե, ընկեր Ռույով, այ, յեթե թույլ տային այս մոտիկ գյուղում կրակի վառելինք, լավ կլիներ:

— Այս ինչպե՞ս, ենտեղ սպիտակներն են:

— Վոչինչ, —պատամխանում ե կարմիր-բանակայինը, —մենք ձեռք կրերենք: Նրան միացան ուրիշները, այդ գումարտակին ուրիշ գումարտակներ, թե՝ մենք ենտեղ ենք ուզում իջևանել... Յեկ լի՞նչ, առյուծների պես դրոհեցին, ահապին զինամթերք վերցրին, փայտ դաշն, տաքացան տղաները...

— Դե վոր խաղաղ կերպով չեն տալիս, պիտի խլես ելի: Թե չե մեկը դյուզի մեջ տաք նըստի, իսկ մյուսը տափաստանում սառչի, եղ լի՞նչ արդարություն ե... — կոշիկները հագնելով, առաց Զատոնսկին:

Կղզուց յեկածները ճակատից վերաբաժած զինվորների պես և չոր չորեր եյին հազնում, և աշխուժ գրույցում...

Արամ Սահակովիչը միայն չեր խառնվում խոսակցությանը: Նա մինչև վոսկորները մրսած լինելով, ինչպես յերելում եր, իր մեջ գեռևս կենացար ուժ չեր գտնում:

Դառնալով № 4 հորի փորման աշխատանքներին, Ոգնյուղը հետաքրքրուեց, թե յե՞րբ կհասնեն նայթի շերտին:

— Մի շաբաթ չի քաշի: Յեղանակը լավանալուն որես պետք ե մտածել նայթատար խողովակների մասին: Այժմ լավ կլիներ, վոր № 4 հորի և ծովափի միջև յեղած ջրային տարածությունն ամեն կերպ կըրճատվի: Յամարացման աշխատանքները միայն արդուզությամբ պետք ե տարվեն: Ինձ ջղայնացնում ե փորման դանդաղկոտությունը ... Այդ հորն այժմ պետք ե ոգտագործվեր, սակայն մենք շատ հետ ենք մնում, — ասաց Զատոնսկին, հայացքը սենյակի մեջ սլսուելով:

— Այդ մենք շուտով կվերացնենք: Արգումանյանը այս ամսի վերջին ճանապարհություն և Ամերիկա՝ մի շաբաթ սարքավորումներ գնելու համար, — պատասխանեց Կուլիմը:

— Դա լավ կլինի:

— Մենք ինքներս եւ այդպիսի գործիքներ, սարքավորումներ կպատրաստենք, թող միայն իլյիչի պլանը կատարվի, մեր յերկիրը չտեսնված տեսնիկայով կզինվի...

Այսուղ Զատոնսկին կրկին լսեց, վոր նախատեսված և շատրվանից հետո իրեն ևս արտասահման ուղարկել...

Այսպես զրուցեցին, մինչև լուլորն արդեն տաք հազնված դուրս յեկան և վոմանք կառքով, վոմանք ավտոմեքենայով ճանապարհվեցին տուն:

Մարտիրոսը չթողեց, վորակեսզի Ռայխան դնա:

— Արի մտնենք մեր տուն, հետո կընաս...

— Քո վառարանդ կարո՞ղ ե յերկուսիս տաքացնել:

— Իմ մտսին մի մտածիր, իսկ քեզ տաքացնել կարող եմ:

— Զիդ այն կողմը չե՞ս քշում, — հարեց Ռայխան, հասկանալով Մարտիրոսի ակնարկը:

— Դե՛, դե՛, յես ի՞նչ ասացի վար, արի, — թե՞լ քաշելով, հանդիմանեց նա:

Զյունախտառն քամին չեր թողնում, վորակեսզի նրանք յերկար խոսեն: Խոսքերը նրանց բերնից կամ թռչում, կամ կորչում ելին ուժեղ հոսանքի տակի:

Ռայխտան հեռամ եր յերկար տարածություն վարդած մարդու սիս: Վերջը՝ նրանք տուն հասան:

Յերբեք Ռայխտան վերաբերուն հանեց, Մարտիրոսը նրան գրիած տարավ դեսպի վառարանը:

— Այստեղ ել ե տաք, ահա այստեղ ել վառարան ե, — իր կուրծքը ցույց տայով ասաց Մարտիրոսը, — տաքացիր, վորքան ուղում ես:

— Իսկ քանի՞ որով այդ վառարանը ինձ կտաքացնի:

— Համբայան:

— Ո՛խ, ինչ խորամանկն ես դու, — մատը թափ տալով, նկատեց Ռայխտան:

Այդ յերեկո Մարտիրոսն իրեն՝ յերջանիկ պատց, ինչպես յերբեք:

## VII

— Եստեղ մի բան կա, Մարտիրոս, — ասաց Արդուլը, — դու բայլ մտածիր: Ռայխտան եղ ինչո՞ւ իր ինժեներ ամուսնուն թողած, քո հետեւիցն ե ընկեր: Լավ իմացիր, վոր թշնամին վոչնչի առաջ կամոց չի առնում:

Այս խոսակցությունը տեղի յեր ունենում ծովալիին, աշխատանքի դադարի ժամանակ: Մարտիրոսը մերթ ծովին եր նայում, մերթ պարծառ յերկնքին, մտքում կշւարդասում ընկերոջ խոսքերը: Արդուլն, իհարկե, վաստ նստառակով չեր առում: Նա Մարտիրոսին հայրազար յեղբոյ պես սկզբում եր, ուստի անկեղծ խորհուրդ եր տրախիս:

— Կանայք չառ դործեր են տեսնում... դու դրանից խելք չես տեսնի, քանի շուտ ե, հեռացիր:

Ահա թփից պղկած մի վարդ, վորի անուշ բուրմունքից դեռ չես կշտացել, իսկ քեզ առաջարկում են այն նետել: Ահա քեզ հասած կարմրաթուշ մորի, դու նոր միայն ախորդավից կերել ես այն, ծծել նրա համեղ հյութը, իսկ քեզ ասում են, վոր այն թունավորված ե: Այդպես ելին վարդում ե Մարտիրոսի հետ: Ի՞նչ անի նա: Խեղոք բան ե ասում Արքունը: Այդ ինչո՞ւ չուղեց ասկրել ինժեների հետ, թողեց... Այստեղ մի բան կա: Մի՞թե ինքը մի խտղալիք ե դարձել, մի մարդ, վորին, սակայն, ոգոսադործել են, կամ ցանկանում են ոգտագործել թշնամական դործի

Համար : Այս մտքից Մարտիրոսի մարմինը վիշաքաղ-  
վում եր, սառը քրտինքը պատում նրան : Նա վորոշեց  
յերեկոյան Ռայխսայից բացառություն պահանջել :  
Կտա՞ , արդյոք, յերեկոն :

Մինչև յերեկո սակայն այնպիսի բան պատահեց,  
յոր Մարտիրոսը մոռացալ Ռայխսայի հետ խոսելու  
անհրաժեշտության մասին : Դեպքը պատահեց հետեւյալ  
կերպ : Ժամը յերեկո մոտերքն եր : Հանկարծ ծովում  
№ 4 հորից խվացուցիչ մի գլուխուն լսվեց, ապա  
դրան հետեւյաց ահեղ մի պայթյուն, վորից ասես ամ-  
բողջ աշխարհը ցնցվեց : Պայթյունի հետ միաժամանակ  
գեպի յերկինք բարձրացան սեղ նաև միթքի ձիթերը : Վոչ,  
սա նաովի սովորական չատրվան չեր, վորի նմանն  
այս քաղաքում ապրողները հաճախ են տեսել :

Հեռվից դիտողին թվում եր, վոր բաց ծովում մի  
վիճ եր բացմել, վորից ժայթքում եւ այդ մոռնչացող  
մե հեղումիը : Կամ դա հեքիաթային այն ջրասյունե-  
րից մեկն եր, վոր սովորաբար դոյսնում են ովկյան-  
ներում զաժմն հողմի ժամանակ : Այդպիսի բարձրու-  
թյամբ չատրվան ո՞վ եր տեսել իր կյանքում : Զկար  
քաղաքում մեկը, վոր հիշեր արդ բարձրությամբ,  
այդ ուժնությամբ խիստ չատրվան : Ի՞նչ յեղան նո-  
րաստեղծ կրգու վրա աշխատողները, վորապես փայտի  
տաշեղ չատրվանի հետ մինչև յերկինք բարձրանալով  
հետ իջա՞ն, ծովին կուլ գնացի՞ն, թէ՞ հենց կործան-  
վեցին իրենց դիրքերում այդ դեռևս դժվար եր տ-  
սել . . .

Գուցե նքանք հենց այդ պահին հեռանալով կըդ-  
գուց, դիտում եին այդ հրաշապեղ տեսաբանը :

Ո , արեի մայրամուտի չաղերի տակ յերկինք ուա-  
ցող չատրվանը չքնաղաղեղ, հմայիչ մի տեսաբան ե :  
Նալթի շիթերը վեր սլանալով, մի ըուպե ասես յեր-  
կընքից կախվում են, ինչպես խաղողի վողկույզներ,  
զունագեղ գոհարի պես փայլում : Իջնելով ծովի վրա,  
նալթը փայլում ե հալբար յուղի փայլով :

Սուաջին նալթային չատրվանն ահեղնագուչ ձայնով  
աղբարարում եր ծովախորչում գտնվող հարստու-  
աղբարարում եր ծովախորչում գտնվող հայտնում  
թյան—սեպ վոսկու անսպառ պաշարի մասին : Յերկինք  
սլացող շիթերն իրենց բարձրությունից հայտնում ե-  
ր յին մի փառապահն հաղթանակի մասին :

Հանքի կազմակերպությունները բոլոր ուժերը  
լարել ելին՝ փրկելու առասությամբ գուրս ժայթքու-  
հարստությունը : Մի խումբ բանյողների հաջողվեց  
կղզու հյուսիսային կողմից մոտենալ և մինչ այդ ձըգ-  
ված խողովակների մեջ նաև մասին ուղղել :

Արդուն ու Մարտիրոսն ել այդ բանյողների հետ  
միսսին աշխատում ելին : Պատահում եր, վոր մար-  
դիկ սայթքում ելին, ընկնում ջրի մեջ և ջրից գուրս  
ելին դալիս, ինչպես կուպրի կարսուի մեջ լուկածներ :  
Յերկու, յերեք ժամ այդ պիճակում աշխատողն ար-  
դեն սպառում եր իր ուժերը : Յեկ այդ պատճառով ել  
նավակներն ափից նորանոր խմբեր ելին տանում գեպի  
կղզին :

Աշխատանքից հետո ուժապառ, ափ վերադաս-  
նալով, Մարտիրոսն Արդունին իր մոտ կանչեց :

— Դու դիտես չե՞ , վոր Ալեքսանդր Միհայլովիչը  
հիմնող ե :

— Գիտեմ :

— Դե մի չի գտիր :

— Ինչի՞ համար :

— Արար պիտի տանենք, — ժամալով ասաց Մարտիրոսը : — Շուտ, Արդուշ ախպեր, շուտ արտ մի չի գտնիր . . . Սուտ եմ ասում ե՞ , արար չենք տանելու, առ դիմի յենք տանելու, — նավթը ցույց տալով, ամելացրեց նա:

— Հա՛ , ճի՛շտ ե , ճի՛շտ ե . . .

— Իհարկե, ճի՛շտ ե , վերջը մի որ խնամախոս պիտի գնա՞նք, թե չէ : Գիտեմ, վոր Կատյաւշայի վրա աչք ունես :

— Դե՛ , դե՛ . . .

Արդուշն ականջների ծայրը կարմրում եր, յերբ խոսում ելին արդ աղջկա մասին : Նրա հետ մի քանի խոսք եր փոխառակել ծովախորշում և իր ասելով, այդ որպանից սրտում մի տեսակի վորդ եր ծընվել, վոր կրծում եր ներսը . . . Բացի Մարտիրոսից վոչ մեկն, իհարկե, վոչինչ չեր ասել . . .

Արդուշը վաղելով դառալ չիջը, խողովակով յեկող նավթով լցրեց : Հետո ականջին սիհնել, քանզիրական շորերով, արդյոք, զնան Զատունսկու մոտ : Արդուշը դրան դեմ եր, իսկ մինչ զնալու տուն գալ՝ զիշեր կրառնար : Վորոչեցին զնալ Մարտիրոսի մոտ, յերկուսով ել չորեքը փոխել : Մարտիրոսի չորեքն իր վրա չափելով, Արդուշը կատակում եր :

— Ախպեր, մարդ ել եսպիսի թեղեր կունենա՞ . . .

Ի՞ի կերպ նա իր համար հարմար չորեքը ընտրեց :

— Դե , ել ի՞նչ ես դահլա տանում, այ , եսակես, այ , եսպիս . . . հիմա վոր իսկապես . . . կապից փախած հորթի նման ես, — ընկերոջը վոտից մինչև դլուխ նայելով ծիծաղեց Մարտիրոսը :

— Շուտ արտ ե , յես ելի պիտի հետ զնամ . . . տեսնեմ ինչ դառամի, ամբարները պատրաստեցի՞ն, թե վոչ :

Հայտնի վոթորիկից հետո ինժեներ Զատունսկին իրեն լավ չեր զդում : Նա հիվանդացավ և հիվանդանոց չփոխադրվեց իր խոկ կամքով : Բժիշկները դաշխելին, ձեռքները թափահարում, զնում : Դա նշանակում էր, վոր Զատունսկու դրությունը անհուսալի յեր յնվերես նա իր կյանքի վերջին որերն եր ավրում : Կատյան անընդհատ լալիս եր : Հիվանդի՞ն պարկերակը բուգե առ բոսկ նվազեցնում եր զարկերը :

Դեկտեմբերի վերջին Ալեքսանդր Միկայլովիչն ավելի վատացամի : Վոչինչ չեր ուտում : Կողքին կանգնած մարդը նրա ձայնը հաղիվ եր լսում :

Յերեկոյան մոտ յերեք հոգի մտան Ալեքսանդր Միկայլովիչի լուսակրանը : Երանցից մեկի թեկի տակ մի մեծ շիշ կար : Դուռը բանակով, հյուրերն անվատահորեն ներս մտան : Մարտիրոսը կատյայի թեկը բըռնելով, հարցրեց :

— Ինչպե՞ս ե :

— Վոչինչ . . .

— Ասա հյուրեր են յեկել, նա կուրախանա : Մենք նրա համար նիներ ենք բերել, այ , — և նա ցույց տվեց թեկի տակ բըռնած շիշը :

— Ուկան եք դուք, ի՞նչ անի :

— Տվել մի յերիտասարդի, թող վորը տաքացնի, — մեջ մտավ մի կին, վարին Մարտիրոսն առաջին անդամն եր տեսնում :

— Կուրեք ձեզ տամ , սա հո դիմի չէ , նամի՞ ե : Անծանոթ կինը զրվանքով մի կողմ նայեց :

— Ել ինչո՞ւ յեք հիվանդին բերել:

Մարտիրոսն առանց թույլտվության ներս մտավ հիվանդի սենյակը, նաևթով միքը շիշը ձեռքին բըռնած, մոտեցավ:

— Ալեքսանդր Միխայլովիչ, ձեղ համար նվեր եմ բերել, այսոր № 4 հորը նաևթ տալեց:

— Ի՞նչ, նա՞վթ, նա՞վթ տպեց...

— Այո՛, ամենալավ, թեթև նաևթ... Ահա նվերը, մի մեծ շիշ լցրած:

— Մի թաթախի՛ր մատու, թաթախի՛ր:

Ալեքսանդր Միխայլովիչն ակրում շոշափեց շեշտո մատը թաթախելով, տարավ դեպի քիթը:

— Ո՛, իսկական, բարձրորակ նաևթ... Կատյա, կատյուշա, ո՞ւր գնաց... Ուրեմն յես ճիշտ եյի, ուրեմն յես չեմ սխալիլ... Կատյուշա, կատյա...

Աղջիկը ներս մտավ:

— Յես այստեղ եմ, հայրիկ:

— Կատյուշա, հոգիս, առա մորդ, վոր յես չեմ մեռնելու: Կանչիր յես ասեմ, կանչիր... Նաևթ, հանկանո՞ւմ ես, նաևթ № 4 հորից: Յես արդարացի յեմ, յես ճիշտ եմ... Դակի ինչպես եյին մեղադրում... Վոչ, յես ապրելու յեմ...

Ալեքսանդր Միխայլովիչը հանդիսաւ պառկեց յեղ աչքերը նորից հառեց առաստաղին:

### VIII

Արդումանյանը պարաստվուամ եր Ամերիկա դնաւու:

Վերջին որերը նաև շատ անհամբեր եր դառնել: Ամեն ինչ կատարուամ եր շտապելով, ներքին անհուն

կոռհումակությամբ: Միշտ ապօտում եր, վայր ահա կույլելը կպահպահարի, կասի՝ շորերու հավաքիր, կայլան արի... .

Մարտիրոսը նկատեց նրա շտապողականությունը և զգուշացրեց:

— Եհե՛, ախալեր ջան, եղալես անց չի կենա: Մինչ գնալով մի անդամ պետք եւ նստենք: Բոլոր կանոններով դու պետք եւ մեղ հյուրասիրես: Բայց վոչինչ, մեր նոր տանը վոչ դու յես յեղել, վոչ ել ընկ: Կույլելը, ուրեմն մեր տանն ենք նստում:

Արգումանյանը չհակածուեց: Վորոշեցին հավաքվել ուրբաթ որը, յերբ բոլորն ել գործից ազատ են լինում:

Ուրբաթ որը, յերեկոյան, Արգումանյանն, ինչպես պայմանավորվել եյին, գնաց Մարտիրոսի տունը: Շենքը նոր եր կառուցվել: Արգումանյանը բարձրացավ յերկուորդ հարկը և ծեծեց առաջին պատահած դուռը:

— Պա՛հ, պա՛հ, ես ինչ լավ դառնավ, վոր ինքը յեկար, թե չեմ մեղնից չնորհք չեր մինելու... — դուռը բանալով, ուրախացած առաց հորափոր Ռահմատուիլնը:

— Յես Մարտիրոսին եմ ման գալիս, նա վորտե՞ղ է ապրում:

— Այ մարդ, իսի Մարտիրոսի տունն ել իմի նրմանը չի՞, մի մտի տես ի՞նչ պալար եմ ստացել ե՞: Միի հասխաս չի գալիս, վոր նորելն եսպիսի տան ապրուծ լինի... Մի մտի, ներս մտի...

Արգումանյանը ներս մտավ, բայց չնստեց: Դիտեց սենյակիները և շատ գոհ մնաց:

Առաջ, վլոր դպայիլը մեր տուն, սիրութ կխառնեք:  
Շունը տիրողը չեր ճանաչում: Համ ուտում եյինք,  
համ քնում, համ ել լվացք անում: Հիմա ես հաց ու-  
տելու սենյակն ե, նա քնելու, են ել խոհանոցը, ջուրն  
ել միջին...

Ռահմատուլինը տրամադրված եր իր սենյակի  
յերկար դովքն անել, բայց Արդումանյանը կրկին  
հարցրեց.

— Իսկ Կյուքունց Մարտիրոսը վորտեղ և ապ-  
րում:

— Ես կողքի սենյակը Ռաշիդով Արդուլինն ե, են  
մյուսն ել նրանը:

Արդումանյանը ժպիսը դեմքին դուրս յեկավ:

— Լով չես անում, լավ չես անում, հաղարից  
մեկ անդամ յեկել ես, են ել չես նաստում...

Արդումանյանը այս անդամ արդեն բացեց Մար-  
տիրոսի դուռը և դուն միջից կանչեց, —ընկեր Ռահ-  
մատուլին, մի քանի բոտելից հետո զու յել եստեղ  
կդառ: Նրան դիմավորեց Ռայխան, ժպտալով:

— Արքայական տներ են, — հայտացքը պատելով  
նկատեց Արդումանյանը: Նա ավելի շատ Ռայխային  
նայեց, քան տան պատերին, ուստի թվաց, թե այդ  
դովասանքն անուղղակի կերպով ուղղված ե և նրան:

Տան յուրաքանչյուր անկյունում զգացվում եր  
կնոջ նուրբ մատների ջանասեր աշխատանքը: Ճերմակ  
վարդույրները, զանազան զործվածքներն այնպես  
եյին զարդարում տունը, վոր մարդ ներս մտնելիս մի-  
այն ցանկանում եր նստել ու հանգստանալ:

Մարտիրոսը, կապույտ բլուզը հազին, ընթերցա-  
նությամբ եր զբաղված: Արդումանյանին տեսնելով,

նա չափաղանց ուրախացավ:

— Այ մարդ, դե արի ե'լի...

— Եղ ի՞նչ ես կարդում, —հատաքրքրվեց Արդու-  
մանյանը:

— Ճիշտն ասած վոչինչ չեմ կարդում, մի քանի  
խնդիր կար, ուզում եյի լուծել: Բա չես իմանո՞ւմ,  
վոր սովորում ենք...

— Այ, եղ մեկը վոր շատ լավ եք անում...

— Սալամ Արամ, սալամ... Եղ ի՞նչ ա, եսքան  
ժամանակ չես դամիս մեր ես նոր տները տեսնես: Ներս  
մտնողը Արդումանը:

— Լավ տներ ունեք, —ասաց Արդումանյանը:

— Մենք ել լավ մարդիկ ենք ելի: Ամեն մեկն իր  
արժանի պատրիան ու տեղն ունի աշխարհում:

Ռայխան դրադված լինելով սեղանի պատրաստու-  
թյամբ, խոսակցությանը չեր խառնվում: Նա ստեղ  
ստեղ մտնում եր խոհանոցը, դուրս դալիս, յուշա-  
քանչյուր անդամ հետը բերելով նոր ուտելիք: Նա սե-  
ղանի կենտրոնում դրեց մի մեծ ափսե լիքը սոսուս,  
վորից դուրեկան գոլորշին համպիստ դեպի առաստա-  
ղըն եր բարձրանում: Ավելի չորս կողմը գարնանա-  
յին թարմ կանաչեղեն եր դրված: Յերբ Ռայխան  
վերջին անդամ խոհանոց դնաց և վերադարձավ դինու-  
ցերը ձեռքին, Արդումանյանը բացականչեց.

— Այ քեզ բան, սկի քո հարսանիքն եղակես չի  
յեղել....

— Հարսանիք վորտեղից ե յեղել, վոր այլպիսէ  
բան լինի: Մարտիրոսը Ռայխային այնպես չի խել,  
վոր հարսանիք անի: Փախցրածին ի՞նչ հարսանիք, —  
նկատեց Արդումանը:

Մարտիրոսը, վորովեսպի վերջ տա այդ խոսակցությանը, դիմեց Ռայխսային :

— Ծերուկին ասա, թող զա եստեղ :

Քիչ անց Ռահմատուլինն ել ներս յեկալ :

— Այս, հասկանում եմ, նավթի Փանտանից հետո գինու Փանտան, սկի ենքան ել վաս բան չի : Լավ որեւրի հասանք, — անկեղծ ու զբայիմծ առաց ծերունի վարպետը :

— Սա ջրի Փանտան ե, վոչ թե նավթի, — Ռահմատուլինի մի ժամանակվա տատանումներն ակնարկելով, նկատեց Արզումանյանը :

— Եղ ել կարող ա ճիշտ լինի, մի գուցե աչքերս չեն տեսնում : Ծեր մարդկանց հետ եղակիսի բաներ պատահում են : Յես ուշում եմ մի առակ ասել : Գարնանը վոչխարի հոտը սար բարձրանալիս ամենից առաջ գնացող լիքը, քյոք զոչին հարցնում են՝ «այ զոչ, ո՞ւր ես գնում» . նա դլուխը հսկաբառությամբ բարձրացնում ե, թե՝ «սար եմ գնում, սար» : Ասում ե և հոտի գլուխն անցած, առաջ գնում : Հետո զայլիս զոչին տեսնում են ամենալերջում, վոտքերը հազիվ շարժելիս : «Այս անգամ վորտեղից ես դալիս», — հարցնում են : Նա հազիվ լեզուն շարժելով պատասխանում է՝ «սարից եմ դալիս» . . . :

Վերցրեք բաժակները, յես կենաց եմ խմում : Խմենք առաջին հերթին մեր ես աշխարհը մեզ համար լուսացնողների, մեզ համար նոր արել բերդների կենացը : Կյանք մեր իմլիչին, յեկալ կյանք, առողջություն և հաղողություն իսութի վեսսարիոնովիչին : . . .

— Խմենք, խմենք, — բացականչեց Մարտիրոսը :

Արգելն ուշ գիշեր եք, սակայն աշխատանքի ու պայքարի ընկերները սերտ բարեկամուկան, հարազար ու անկեղծ միթնոլորդառում ուրախանում եցին իրենց հաղթանուկի, մեծամեծ հաջողություններով :

— Յես ուշանում եմ, պիտի դնամ Զատունսկու մոտ, մի զարդարությունն կա, նայենք . . . — Ժամացույցին նայելով, ասաց Արզումանյանը :

— Ի՞ե վոր եղակն ե, գուք ջահելներ եք, սեղանի կարգը չեք խմանում : Յես ես բաժակը բարձրացնում եմ Մարտիրոսի և Ռայխսայի կենացը, — վրա բերեց Ռահմատուլինը : — Ռայխսան լավ սրաի տեր կին գուրույնելով :

Արգուլը զլուխը խոնարհեց : Դժվար եր համեմալ, թե ինչպիս և նա ընդունեամ այդ խոսքերը : Նա միակ մարդն ե յեկել, վոր այլ միացմանը դեմ ե խոսել : Ուրիշները միայն բամբասել են, իսկ ինքն առել ե, ինչ մտածել ե, ինչ իր զբացմունքներն են թերագրել : Հետո չեր ել հետաքրքրվել, թե Մարտիրոսն ինչ ե խոսել Ռայխսայի հետ, նրանից ինչ պատասխան ստացել : Մարդարյանի ձերբակալությունից հետո նա մի անողամ ել ցանկացավ խոսել այդ մասին, բայց թողեց մտապերությունը : Այժմ, յերբ մոտիկ հարևաններ եյին, նա Ռայխսայից վոչ մի վաս բան չեր տեսնում : Ճիշտ ե, նրա հետ խոսում եր շատ զսպված, բայց և այնպես խոսում եր : Ուրիշ յերք չերպար, նա յել բաժակը բարձրացրեց և շեշտամած բառերով ասաց :

— Աղնիով բնկերության կենացը :

Արգումանիանը չսպազանց գոհ, առելից քարենիուց  
յաղ:

— Դե, յես շտապում եմ Զատոննիութ, մոտ, մի դո-  
յե վաղը գնում եմ, եսոր պետք է գծապության մա-  
սին խոսենք:

— Դա ի՞նչ գծապություն է, հետաքրքրություն  
Մարտիրոսը:

— Հորսկորման: Շատ հետաքրքր է լինելու ձո-  
վախորշը: Նայեցիք, մի նայեցիք: Նա գծապությու-  
նը վուեց սեղանի վրա: Եսպես ե լինելու, տեսնո՞ւմ եք  
այս կետը, սա № 4 հորի տեղն է: Այս կիսալուսնի  
նման տարածությունը ծովն է, վոր պետք է չորաց-  
վի: Չորացվելուց հետո ամբողջը ծածկվելու յե վեշ-  
կաներով: Յուրաքանչյուր 50-60 քայլավոխի վրա մի  
բուրգ է կառուցվելու: Բա յես ձևություն չե՞մ  
տաել: Ո՛, շատ հետաքրքր նորություն: Բա չե՞ք ո-  
սի, պետական արխիվում դաել են մի պայմանագիր,  
վոր մինչ եք կարծում, ի՞նչ պայմանագիր կլինի...  
Դժվար է բառ, պատկերացնել: Բանից պարզվում է,  
վոր Սարգարյանը և Արամ Սահակովիչը պայմանագիր  
են ունեցել ծովախորշը ցամաքացնելու համար բաժին  
վերցնելու: Այս տեղամասը, վորտեղ № 4 հորի և  
գրված, բառ պայմանագրի պատկանում էք Սարգար-  
յանին:

— Ի՞նչ ես ասում:

— Այդ սրիկա՞:

— Ահա թե ի՞նչ, — բացականչեց Ռայխսան:

— Այս, պետք է սովորել թշնամուն բարեկամից  
նոարդերել: Իսկ յերբ ճանաչեցիր նրան, վաչնչացը  
անհապաղ:

ԱՅՐԱ ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅՏՆԵԼ ԶԵՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ԿԱՄ ԿԱՐԾԻՐՆ ԱՅՍ ԳՐՔԻ ՄՈԱՒԻՆ:  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՍՑԵՆ,—

Բակу, ուլ. 9-го Января № 25, դօմ Պիսատելեյ

Сдано в производство 10/XI-37 г.  
Разрешено к печати 3/II-38 г.  
Количество печатных листов - 13<sup>1</sup>/<sub>8</sub>  
Колич. печатных знаков - 760.860

ՀՀ Ազգային գրադարան



NL0314019

54844

Գլուխի 7 թ. 50 լ.

Դամպ 75 լ.